Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

MICHAL AJVAZ

DRUHÉ MĚSTO

Do arménštiny přeložil
Vardan Fereshetyan

MICHAL AJVAZ

THE OTHER CITY

Translated into Armenian by
Vardan Fereshetyan

Vogi-Nairi

Միխայլ ԱՅՎԱԶ

ԱՅԼ ՔԱՂԱՔ

Թարգմանությունը ռուսերենից՝
Վարդան ՖԵՐԵՇԵԹՅԱՆԻ

Ստեփանակերտ 2021

ՀՏԴ 821.162.3-31 Այվազ
ԳՄԴ 84(4Չ=415.1)-44
Ա 551

«Գեղarm» հանդեսի մատենաշար

Մ. Այվազ
Ա 551 **Այլ քաղաք / Միխալ Այվազ**
Թարգմ. ռուսերենից՝ Վարդան Ֆերեշեթյան:
Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հրատ., 2021, 224 էջ:

Միխալ Այվազը արդի չեխական գրականության ակնառու դեմքերից է, որի ստեղծագործությունները նոր թեմատիկայով, հայեցումով ու ընդգրկումներով են հարստացրել իր հայրենի բանարվեստը: Նրա առավել հայտնի ու նշանակալից գործը «Այլ քաղաք» ֆանտասմագորիկ վեպն է՝ իրականի ու երեւակայականի, առասպելականի ու փիլիսոփայականի սերտ ու գրավիչ միահյուսումներով:

Վեպի հետ հայ ընթերցողին է ներկայացվում նաեւ հեղինակի «Զենոնի պարադոքսները»՝ նույնպես զարմանահրաշային պատումով վիպակը:

This publication has been supported by
the Ministry of Culture of the Czech Republic

Հրատարակությանն աջակցել է Չեխիայի Հանրապետության մշակույթի նախարարությունը

ISBN 978-9939-1-1389-0

ՀՏԴ 821.162.3-31 Այվազ
ԳՄԴ 84(4Չ=415.1)-44

© Michal Ajvaz, 1993, 1997
© «Ոգի-Նաիրի» (թարգմանության համար), 2021

Հեղինակի առաջաբանը
հայերեն հրատարակության առթիվ

Հարցերից մեկը, որից այսօր չի կարող խուսափել ոչ մի գրող՝ հարցն է այն մասին, թե ինչ չափով նրա գիրքը կարող է ընկալվել եւ ընդունվել աշխարհագրորեն հեռավոր միջավայրի ընթերցողների կողմից: Իմ ստեղծագործության վրա ազդել են ֆրանսիական սիմվոլիզմն ու սյուրռեալիզմը, գերմանական ռոմանտիզմը, Խորխե Լուիս Բորխեսի, Լյուիս Քերոլի եւ շատ այլ գրողների ստեղծագործությունները, այդ թվում եւ՝ հեղինակներն արկածային գրքերի, որոնք ես կարդացել եմ մանկության տարիներին, բայց ես դեռեւս մտածում եմ, որ իմ ստեղծագործությունն առավելագույնս սերտ կապված է կենտրոնական եվրոպական տարածաշրջանի ոգու հետ, որի տարածքը սովորաբար կոպտորեն նույնացվում է Հաբսբուրգների նախկին կայսրության տարածքին: Կենտրոնաեվրոպական գրականությունը, որի մեջ են մտնում այնպիսի հեղինակներ, ինչպես Ֆրանց Կաֆկան, Բրունո Շուլցը կամ Յարոսլավ Հաշեկը, ունի իր յուրահատուկ առանձնահատկությունները՝ այն բնութագրվում է անվստահությամբ առ գաղափարախոսությունն ու մեծ պատմության պաթոսը, հեգնանքով, մտահոգվածությամբ, անհեթեթությամբ, ֆանտաստիկայով եւ, միաժամանակ, հարգանքով առ իրական աշխարհի աննշմար մանրամասներն ու առօրյա կյանքի անեկդոտները:

Թեեւ երեւակայությունը մեծ դեր է խաղում իմ գրքերում, դրանք բոլորն աճում են իրական վայրերի մթնոլորտից: Ինչ վերաբերում է «Այլ քաղաքին», ապա դա Պրահան է, որտեղ ես ապրել եմ իմ ողջ կյանքը. իմ մյուս գրքերի պատմությունները սերում են նաեւ մի քանի մայրցամաքների քաղաքների մթնոլորտից, որոնց ես հաղորդակից եմ եղել իմ ճանապարհորդությունների ընթացքում: Պատկերներն իմ գրքերում նման են երազների, բայց ես կարծում եմ, որ դրանք ինչ-որ բան են բացահայտում քաղաքների իսկական հոգիներում: Իմ գրքերը ռեալիստական չեն բառիս սովորական իմաստով, բայց ես կարծում եմ, որ դրանցում ուղերձ կա իրական ժամանակի եւ տարածության մասին, որոնցում ես ապրել եմ իմ կյանքը: Իմ կյանքը, ինչպես եւ իմ սերնդի յուրաքանչյուր չեխի պատմությունը, նշանավորվում էր մշակութային վերելքով 1960-ական թվականներին, երբ ես հասուն տարիքի հասա, իսկ այնուհետեւ Վարշավյան դաշնագրի զորքերի կողմից երկրի բռնազավթումով, ինչին հետեւեցին անազատության քսան տարին եւ ազատ

մշակույթի ճնշումը: Այդ քսան տարվա ընթացքում ես սովորեցի գրել, որեւէ բան հրատարակելու հնարավորություն չունենալով եւ չունենալով հնարավորություն գնելու այն հեղինակների գրքերը, որոնք ինձ դուր էին գալիս: Ես սկսեցի հրատարակել իմ գրքերը «թավշյա հեղափոխությունից» հետո՝ 1989 թվականին: Առաջին երկու գրքերը բանաստեղծությունների եւ արձակի ժողովածուներ են, որոնք ես գրում էի 1980-ական թվականներին միայն ինձ համար: «Այլ քաղաքը» առաջին գիրքն էր, որը ես գրեցի արդեն ազատ երկրում: Այնուհետեւ, երեսուն տարվա ընթացքում, որ անցան «թավշյա հեղափոխությունից» հետո, ես գեղարվեստական գրականության եւ տեսական աշխատությունների մոտ քսան գիրք հրատարակեցի:

Եկեք վերադառնանք նախասկզբնական հարցին, որ վերաբերում է հեռավոր շրջանների միջեւ փոխըմբռնման հնարավորությանը: Ամենից առաջ, արդյո՞ք այդքան տարբեր են Կենտրոնական Եվրոպայի եւ Հայաստանի մշակույթները, չնայած աշխարհագրական հեռավորությանը: Այս հարցին կարելի է պատասխանել միայն մշակույթների երկխոսության շարունակությամբ, միմյանց հետ ավելի լավ ծանոթանալու ուղիով: Բայց ես կարծում եմ, որ մենք արդեն տեսնում ենք, որ երկու մշակույթներն էլ շատ ընդհանուր բաներ ունեն: Դրանց մտերմությունը բացատրվում է որոշակի նմանությամբ պատմության մեջ երկու հարաբերականորեն փոքր երկրների, որոնք իրենց պատմության երկարատեւ շրջանի ընթացքում ապրել են մեծ տերությունների հարեւանությամբ: Չնայած իր աշխարհագրական հեռավորությանը, Հայաստանը նույնպես երբեք անհայտ երկիր չի եղել Կենտրոնական Եվրոպայում. նրա ճակատագիրը հայտնի էր եւ անկարեկից չէր Կենտրոնական Եվրոպայի համար: Ես կարծում եմ, որ կարիք չկա հիշատակելու պրահացի հեղինակի, Կաֆկայի ընկեր Ֆրանց Վերֆելի անունը, բայց Վերֆելը միակը չէր այստեղ, ով հետաքրքրվում էր իրադարձություններով այդ աշխարհի հեռավոր շրջանում եւ հաղորդում էր դրանց մասին: Այսօր երկխոսությունը ցանկացած երկու մշակույթների միջեւ դառնում է մոլորակային երկխոսության մաս: Այսօր, ինչպես երբեք, մենք բոլորս մի աշխարհի բնակիչներ ենք, մենք դառնում ենք ողջ մոլորակի քաղաքացիները, եւ անհնար է ապրել մեր ընդհանուր տանն առանց երկխոսությունների եւ առանց հանդիպումների, առանց մոլորակի մոտիկ եւ հեռավոր համաքաղաքացիների փոխադարձ իմացության: Եւ երկխոսության մեջ մենք իմանում ենք ոչ միայն այլ մարդկանց եւ անհայտ իրադարձությունների մասին, այլ նաեւ՝ մեր մասին. լոկ երկխոսության մեջ ենք մենք իմանում, թե ով ենք մենք:

Միխայլ ԱՅՎԱԶ

ԱՅԼ ՔԱՂԱՔ

Գլուխ 1
Մանուշակագույն կազմով գիրքը

Ես թափառում էի գրակազմերի տողանների միջով, Կարլովի փողոցի բուկինիստական խանութում եւ ցուցափեղկի պատուհանի միջից դուրս էի նայում՝ այնտեղ սաստիկ ձյունատեղում էր. գիրքը ձեռքիս ես մեկ նայում էի ձնափաթիլների հողմապտույտին՝ սուրբ Սալվադորի տաճարի պատերի մոտ պտտվող, մեկ դարձյալ վերադառնում էի առ գիրքը, ներշնչում նրա բույրը, հայացքով սահում էի էջերի վրայով, առանձին նախադասությունների պատառիկներ որսալով՝ անկապակից, դրանք շողում էին շլացուցիչ ու խորհրդավոր: Ես ոչ մի տեղ չէի փութում, ես ուրախ էի, որ գտնվում եմ հաստատությունում, որտեղ հաճելիորեն հին գրքեր են բուրում, որտեղ տաք եւ լուռ է եւ լսելի լոկ էջերի շրշոցը, ասես գրքերը շունչ են քաշում քնից արթնանալով. ես ուրախ էի, որ ինձ պետք չէ գնալ դեպի խավարն ու բուքը:

Ես դանդաղորեն մատս տանում էի գրադարակի կազմերի ալիքների վրայով, եւ հանկարծ այն գահավիժեց մթի մի անցքի մեջ՝ քաղաքական տնտեսագիտության ֆրանսիական հատորի եւ գրքի միջեւ, որի հնամաշ կազմի վրա գրված էր «Geburtshilfe bei Rind und Pferd»/ «Մանկաբարձություն տավարի եւ ձիու հետ»/: Խորացման հատակին մատս շոշափելով դեմ առավ արտասովոր փափուկ մի կազմի: Առանց դժվարության ես գրադարակից հանեցի մանուշակագույն թավիշով կազմած գիրքը՝ առանց վերնագրի եւ հեղինակի անվան, եւ տեղնուտեղը բացեցի այն. էջերը ծածկված էին անհայտ տառերով, ես սկսեցի մեխանիկորեն թերթել, հայացքով կանգ առա արաբանախշերի պարուրագծերով կրկնաթերթի վրա՝ նման պատուհանից անդին ձնահողմին, հետո գոցեցի գիրքն ու խրեցի այն գիտական տրակտատների միջեւ, որոնք այդ ընթացքում շունչ քաշել եւ գրավել էին հատորյակի ազատած տեղը: Ես գնացի գրադարակների երկայնքով, բայց, տատանվելով, վերադարձա դեպի մանուշակագույն կազմով գիրքը, բռնեցի դրա վերնամասից եւ կիսով չափ դուրս բերեցի մյուս կազմերի շարքից: Ամենից հեշտը կլիներ այն իր տեղը դնելն ու այլ

գրքերով զբաղվելը, իսկ այնուհետեւ քայլել դեպի ծյունամրրիկ, քայլել փոողոցով, վերադառնալ տուն: Չէ՞ որ ոչինչ չի պատահել, հիշելու բան չկա, մոռանալու բան չկա: Բայց ես հանկարծ հասկացա, որ այդ գրքում տպված տառերը չկան մեր աշխարհում գոյություն ունեցող եւ ոչ մի այբուբենում: Դեռ կարելի էր շրջանցել ճեղքը, ուրկից ինձ վրա առինքնող տագնապ փչեց, եւ թույլ տալ այդ անցքին ձգվել այլ, մշտապես նորոգվող իմաստների սարդոստայնով: Այդպիսի բան ինձ հետ արդեն պատահել էր. ինչպես մեզնից յուրաքանչյուրը, ես բազմիցս տեսել էի կիսաբաց դռներն այլ աշխարհի՝ օտար տների պաղած միջանցքներում, գյուղական կալվածքներում, քաղաքային ծայրամասերում:

Մեր աշխարհի սահմանն այնքան էլ հեռու չէ, այն չի ձուլվում հորիզոնի գծին եւ չի թաքնվում անհայտ խորքերում, բայց աղոտ շողում է բոլորովին մոտիկ, մեր նեղլիկ տարածության ծայրամասերի մթնշաղում. աչքի պոչով մենք մշտապես տեսնում ենք այդ այլ աշխարհը, բայց դրան նշանակություն չենք տալիս: Մենք անդուլորեն թափառում ենք ափի եւ թավ անտառեզրի երկայնքով, մեզ թվում է, թե մեր ժեստերը ծնվել են միեւնույն միասնությամբ, որին էլ պատկանում են այդ նվիրական տարածությունները, եւ որ այդ ժեստերը զարմանալի կերպով պարզաբանում են դրանց մթին կյանքը, բայց, ընդ որում, մենք չենք լսում ալիքների աղմուկն ու գազանների ձայները, սեփական խոսքերի այդ անհանգիստ ուղեկցումը /եւ հնարավոր է՝ դրանց թաքնաթաքուր ակունքի/, չենք նկատում թանկարժեք բաների շողանքը մութ անկյուններում եւ, որպես կանոն, ոչ մի անգամ կյանքում ճամփից չենք շեղվում: Ի՞նչ ոսկե տաճարների մենք կարող էինք հասնել ջունգլիներում: Ի՞նչ կենդանիների եւ հրեշների դեմ կմարտնչեինք ճանապարհին, ո՞ր կղզիներում կմոռանայինք մեր ծրագրերի եւ նպատակների մասին: Արդյո՞ք ծյունե ուրվականների պարը պատուհանի ետեւում, թե՞ հեգնական սերն առ ճակատագիրը, ծագած ձախորդությունների շատ տարիներից հետո, պատճառն էին այդ բանի, բաց սահմանը հատելու վաղեմի վախն իր մասին վկայեց հազիվ լսելի, ասես պարտավորությամբ, եւ տեղնուտեղը սկսվեց, այնպես որ՝ ես հանեցի գիրքը եւ կրկին բացեցի այն. ես նայում էի անտարբեր տառիկներին, կլորավուն, սակայն, ընդ որում, սուր փշերով պատված, դրանք ներփակ էին, կամ էլ ձգտում էին ինքնամփոփության, դրանք ջղաձգորեն կծկվում եւ փշոտում էին, դրանցից ոմանք ասես շամփրել էին սուր դաշույնները՝ դրսից քշված դեպի դրանց ներսը, որոնք, ընդհակառակը, ասես փքվել եւ սպառնում էին պայթել ինչ-որ դրանք համակող ներքին ուժերի ճնշման տակ: Ես վճարեցի գր-

քի համար, այն գրպանս խոթեցի եւ խանութից ելա: Այդ ընթացքում փողոցում մթնեց, փաթիլները պտտվում էին լապտերների լույսերի ներքո:

Տանը ես վառեցի պատուհանի մոտի լամպը, նստեցի եւ սկսեցի ուշադիր զննել գիրքը: Ես դանդաղ թերթում էի այն, լույսի շրջանակում դուրս էին լողում, ասես սպրդելով մթին հորձանուտի խորքերից, էջը էջի ետքից, ասես խորհրդավոր մանյակներ, էջերի վրա ընկած էին կլորավուն եւ սուր տառերի շարքերը: Տառերի շնչառության մեջ, որ համբառնում էր էջերի վրա, ինչ-որ խորհրդավոր պատմություններ էին նշմարվում, որոնք պատահում էին ջունգլիներում եւ մեծ քաղաքների փողոցային լաբիրինթոսներում, երբեմն ես ասես տեսնում էի դրանց առանձին կադրերը՝ առեղծվածային աղանդի անհաշտ մոլեռանդի չարկամ դեմքը, գիշատչի կամացուկ քայլերը գիշերային պալատի խորքերում, ձեռքի խռովահույզ շարժումները ընդարձակ մետաքսի մեջ, կիսակործան քարե պատվարը այգու թփերի ետեւում: Ես գրքում մի քանի փորագրանկար հայտնաբերեցի: Դրանցից առաջինը պատկերում էր լայնարձակ դատարկ հրապարակը՝ կտրուկ դեպի հորիզոն գնացող եւ ճատրակային կարգով սալարկված: Հրապարակի մեջտեղում կոթող էր հառնում, որի պատվանդանը ճիշտ բազմանիստի ձեւ ուներ եւ կառուցվել էր կոկած քարից, կոթողի երկու կողմում գեղափայլում էին եռահարկ ցայտաղբյուրները, եւ ջուրը, թասից թաս թափվող, որ նկարի վրա ամուր եւ անշարժ սուբստանց էր թվում: Փորագրանկարի վրա երեւացող բոլոր տեսանելի երեք կողմերից հրապարակը շրջապատում էին աստիճանների վրա բարձր միապաղաղ սյունաշարերով պալատների ճակատամասերը: Կարճլիկ եւ կտրուկ ստվերներից կարելի էր հասկանալ, որ հիմա տապտ ամառային կեսօր է ինչ-որ տեղ հարավում: Սկզբում ես մտածում էի, թե հրապարակը լիովին դատարկ է, բայց հետո նկատեցի մի քանի փոքրիկ կերպարանքներ, որոնք անհամատեղելի փոքր էին համեմատած վիթխարի կառույցների հետ, դրանց ուրվագծերը կորչում էին հոծ ստվերագծում, որ պատկերում էր ստվերը երկու դեմ-դիմաց կանգնած պալատների սյունաշարերում: Մարմարյա հատակի վրա, ձախակողմյան պալատի պատի մոտ մեջքի վրա պառկած էր տարածած ձեռքերով մի երիտասարդ եւ նրա վրա հակվում էր վագրը՝ իր ուժեղ թաթով պահելով՝ կրծոտում էր նրա կոկորդը: Անհմուտ պատկերված մուգ արյունը, վերքից հոսող, բացված հովհար էր հիշեցնում: Սյուներից մեկի գետնախարսխի մոտ տեղավորվել են մի քանի տղամարդ, որոնք ծխամորճ էին ծխում եւ թղթախաղով էին զբաղված, քանի որ նրանք չգիտեին այն մասին, թե ինչ է կատարվում դիմացը, քանզի այդ նրանց չէր հուզում:

Փոքր-ինչ հեռու, սյուների միջեւ տղամարդ ու կին էին կանգնած՝ մարդը ձեռքի թափահարումով մատնանշում էր անմարդ, արեւով ողողված հրապարակի մյուս կողմը, որտեղ իր զոհին էր պատառոտում վագրը, իսկ կինը տարածում էր ծռած ձեռքերը դեպի սյունաշարի կամարները: Երկրորդ փորագրանկարի վրա խեցի-գաղտակուրն էր կտրվածքում՝ այն ընկած էր տղմոտ հատակին, երրորդ նկարազարդումն ինչ-որ մեքենա էր պատկերում՝ բարդ փոկավոր շարժակներով եւ միմյանց միակցված անհավանական քանակի ատամնանվակներով՝ մանրակրկիտ նկարված անվատամիկներով:

Ես գիրքը բացված թողեցի պատուհանի մոտի սեղանի վրա եւ գնացի քնելու: Երբ ես աչքերս փակեցի, իմ առջեւ առկայծեցին կլորավուն եւ սուր տառերը, դրանց շարքերը պտտվում, գալարվում, վեր էին նետվում ծնամրրիկով փողոցային լապտերի լույսի ներքո: Ինձ վախեցնում էր այն անհայտ եւ անկանխատեսելի առարկան, որը ես բերել էի իմ տուն, ասես՝ սեւ հավի ձու: Բայց ես կարծում էի, որ իմ անհանգստությունը զուր է, որ գիրքը, համանման շատ տագնապեցնող բաների պես, որ ընկնում են մեր աշխարհ, հանդարտ ու աննկատ կներաճի ընտել եւ ծանոթ տարածությունում եւ կներսնվի դրա հյութերով:

Գիշերվա կեսին ես արթնացա՝ նայելով խավարին, ես բացած գրքի վրա աղոտ կանաչ լույս տեսա: Ես ելա ու մոտեցա սեղանին՝ ճառագումը գալիս էր տառերից, դրանց աղոտ շողանքում կանաչին էին տալիս պատուհանի ետեւում դանդաղ տեղացող ձյան փաթիլները:

Գլուխ 2
Համալսարանի գրադարանում

Ես որոշեցի մտնել համալսարանական գրադարան եւ գրքի մասին հարցուփորձել որեւէ մասնագետի: Գիտաշխատողը, որի մոտ ինձ ուղարկեցին, աշխատում էր հենց կտուրի տակ, ցածրաման առաստաղով երկարավուն սենյակում, որտեղ լույսի շեղ ժապավեններում պտտվում էին փոշեհատիկները, իսկ սեղանի եւ հատակի վրա բարձրանում էին գրքերի անհավասար եւ երերուն կիտուկները: Ես անցա արահետիկով ձգվող արանքում այդ բլրակների, որ ցնցվում էին քայլերիս համաչափ, եւ տեսա, գրասեղանի վրա հակված, քառասունին մոտ տղամարդու հարթ լիքը դեմքը:

Ես նրան ցույց տվեցի բուկինիստական խանութի գիրքը: Նա երկար ու մտազբաղ զննում էր այն, իսկ հետո վերադարձրեց ինձ այս խոսքերով.

-Ավաղ, ես չեմ կարող կարդալ այս տառերը եւ նույնիսկ չգիտեմ, որ ժողովուրդն է դրանք գործածում: Բայց ինձ արդեն վիճակվել է դրանք տեսնել: Երբ ուսման ավարտից հետո ես եկա համալսարանական գրադարանում աշխատելու, ինձ հանձնարարեցին զբաղվել գրքերով, որոնք մեզ ընծայում կամ ժառանգում էին: Մի անգամ աշնանն ինձ ուղարկեցին գլուխ հանելու մի պատկառելի գրադարանից՝ բնակարանում, որի տերը մահացել էր, ժառանգորդներ չթողնելով: Ինձ ասացին տան համարը Սմետանայի առափնյա փողոցում եւ անունը, որը ես պիտի գտնեի դռան վրա: Ես այնտեղ գնացի երեկոյան, աշխատանքից հետո:

Բանալիով, որ ինձ տվել էին, ես բացեցի կողպեքը եւ մտա դատարկ բնակարանը. արդեն նախասրահում ես ինչ-որ մգլած պերճանքի հոտ առա, ես քայլում էի վիթխարի սենյակներում, որտեղ բազում պստլիկ արձանիկներ կային՝ մերկ կանանց, որսաշների եւ ձիերի, որոնցում դեսուդեն էին նետված հին բարձեր եւ ամենուր երեւում էին հակված վոլաններ ու ծոպեր եւ ցցվում էր պոկված պաստառը: Սենյակներից մեկի պատերի երկայնքով շարված էին բարձր, մինչեւ առաստաղ ապակեպատ գրադարակները: Բաց պատուհանի միջից երեւում էր ծաղկած սպիտակ ծառերով, մթնշաղում մգացած Պետրշինի լանջը, հենց ցուցահրապարակով աշտարակի ետեւում արեւը մայր էր մտնում, գրադարակների ապակիներում արտացոլվում էր բաց-մանուշակագույն երեկոյան երկինքը: Պատուհանի դիմաց տեղադրված պահարանում մի փոքրիկ չապակեպատ որմնախորշ

կար, որտեղ ինչ-որ մեկը մոդեռն ոճով փոքրիկ հայելի էր տեղադրել արտասովոր դրվագավոր մետաղյա պատվանդանով՝ հայելու ձվածեւությունը բռնել էր ձգված ձեռքերի վրա, ծիծաղող, վավաշոտ կռացած մի կին՝ տարբեր կողմեր ցցված ծածանվող մետաղյա վարսերով: Կինը նստած էր կորված դելֆինի մեջքի վրա, որ դուրս էր լողում պաղած մետաղյա ալիքից: Հայելու կողքին, փոքրիկ եռոտանու վրա, դրված էր թափանցիկ հեղուկով ապակյա տարա:

Գիտաշխատողն իր պատմությունն ուղեկցում էր լայնաթափ շարժումներով, որոնցից երերուն գրաավազաթմբերը սեղանի վրա վտանգավոր հուզվեցին: Երբ նա խոսում էր դելֆինի վրայի կնոջ մասին, ապա փորձեց վերարտադրել նրա դիրքը, բայց մատների ծայրերով դիպավ գրքերի կիտուկին՝ կիտուկը տարուբերվեց, փափուկ դիպավ հարեւան կիտուկներին եւ դրանց մեջ արթնացավ հույլ տարուբերումը՝ բարեբախտաբար, գիտաշխատողին հաջողվեց հանդարտեցնել կենդանացած սեղանը:

-Արեւի վերջին շողերում, ապակու տակ, սենյակի կիսախավարում շողշողացին կաշվե կազմի կռնակը զարդարող սուտակները: Երբ ես դիպա ապակուն, արեւը հենց թաքնվել էր Պետրշինի ետեւում, եւ աղոտ փայլփլող պահարանը մգացավ: Ես կողմ տարա բարալիկ փողրակի վրայով սահող ապակին եւ հանեցի սուտակներով դրվագազարդված գիրքը: Էլեկտրականությունը բնակարանում անջատված էր, եւ այդ պատճառով ես մոտեցա բաց պատուհանին, որպեսզի որսայի օրվա վերջին շողերը: Գիրքը փակված էր շուլալված օձի տեսքով ձուլածո մետաղյա փականով: Ես բացեցի այն, եւ տեղնուտեղը Պետրշինի մուգ լանջի վրա, ծառերի մեջ վառվեց վառ կանաչ լույսը: Դա երեւի թե պատահականություն է, մտածեցի ես, եւ փականը տեղը դրեցի՝ եւ լույսը ակնթարթաբար մարեց: Ես կրկին անհանգստացրի օձին, եւ լույսը դարձյալ բռնկվեց: Դրա կանաչ շողը փայլփլում էր սենյակի կիսախավարում, ինչպես հակված հուրհրատող գեղարդ, այն անթիվ անհամար անգամ արտացոլվում էր գրապահարանների ապակիներում՝ պաղած եւ տարտամ կորված կանաչ գծերի տեսքով, սենյակի խորքում ընկնում էր ձվածեւ հայելու կենտրոնը, որը բռնում էր դելֆինի վրայի մետաղյա գեղեցկուհին, ելնելով դրա խորքերից, հայտնվում էր ապակյա անոթի ուղիղ մեջտեղում, որն այժմ վառվում էր թունականաչ լույսով: Ինձ այն է թվաց, որ անոթի մեջ կամացուկ ճողփյուն է հնչում, բայց գիրքը, որ ես բռնել էի ձեռքիս, այնպես էր ինձ գրավում, որ ես բացարձակապես չէի խոհածում անոթի մեջ կատարվածի մասին: Այո, ես տեսա հենց այն տառերը, որ տպագրված են ձեր գրքում: Ես ապշանքի մեջ թեր-

թում էի անհայտ նշաններով էջերը, ուշք չդարձնելով քաղցրավուն գարշահոտին, որը լողաց սենյակով մեկ: Ծուտով տառերի հետ սկսեցին ինչ-որ տարօրինակ փոփոխություններ տեղի ունենալ: Դրանց ուրվագծերում ավելի ու ավելի սաստիկ ինչ-որ հոսք էր զարկահոսում, տառերը դրան համընթաց այրվում ու մարում էին, ասես շիկացած ածուխներ, որոնք ինչ-որ մեկը ջանադրաբար փչում է: Ամեն անգամ, երբ դրանք վառվում էին, ինձ համակում էր նախկինում անհայտ եւ ավելի ու ավելի սաստիկ երանությունը, բաբախումը գլխապտույտ հաճախանում էր, բայց հետո շողանքը հանկարծ մարեց, սեւ տառերն այժմ ընկած էին գրքի էջերի վրա, ինչպես նողկալի սատկած բզեզներ, երանությունը վերածվեց նողկանքի եւ սարսափի: Ես խուլ թնդյուն լսեցի, եւ տեսա Պետրշինի ետեւում, մոտ մեկ կիլոմետր բարձրությամբ ցունամիի ալիքը: Այն դանդաղ մոտենում էր, ահա այն արդեն անցավ պետրշինյան բլրի միջով, ընդ որում՝ տապալելով տեսածիր աշտարակը: Ես փակեցի աչքերս սարսափելի ջրերի հարվածի սպասման մեջ: Թնդյունը չէր ահագնանում, եւ հետո անսպասելիորեն ընդհատվեց: Որոշ ժամանակ ես դեռ կանգնեցի փակ աչքերով, ունկ դնելով տարօրինակ մեռյալ լռությունը, իսկ հետո աչքերս բացեցի եւ տեսա՝ մթին ջրապատը քարացել էր պատուհանի ետեւում մեկնած ձեռքի տարածության վրա: Ես դուրս ցցվեցի եւ մատներս թաղեցի զովասուն ջրի մեջ:

Գիտաշխատողը պատկերեց՝ ինչպես էր նա ձգում ձեռքը, եւ կրկին դիպավ գրքերի կույտին. այս անգամ դրանք սահուն իջան վար, ընդ որում՝ որոշները դժվարիմաց հետագծով ճախրասավառնեցին սեղանից եւ, ցնորական օդում թափահարելով ճերմակ էջերով, խուլ թրմփացին հատակին: Գիտաշխատողը չսկսեց դրանք բարձրացնել եւ շարունակեց իր պատմությունը.

-Ցրե պատի միջից գլուխը դուրս ցցեց սեւ ձուկը, նա երկար խռպոտ ծիծաղում էր, իսկ հետո չարախինդ ազդարարեց. «Դու ողջ կյանքում փորձում էիր մոռանալ այն մասին, թե ինչպես էիր նստել մենության մեջ, կեղտոտ կինոթատրոնի սրահում, Ռադլիցի ծայրամասային նրբանցքում եւ նայում է իր կինոակնարկը, որտեղ ցուցադրում էին ծովի հատակին նկարած կադրերը, որոնցում փափուկ ավազի վրա լողում էր փոքրիկ շողշողացող ձկների վտառը: Հանկարծ ձկները կուտակվեցին եւ երերուն քանդակ արարեցին, որ պատկերում էր, թե ինչպես էիր դու համբուրվում Յեզերի վրայի Բոկովի մերձկայարանային ռեստորանում գեղեցիկ արհեստական աղջկա հետ /քեզ միշտ գրավել են հենց այդ կանայք, դու խանդաղակաթում էիր նրանց ատամիկների թխթխկոցից, երբ նրանք պառկում էին քո

կողքին, գիշերային լռության մեջ/, որ ապրում էր՝ երկար նամակներում հաղորդելով իր ստեղծողի մասին, որ գտնվում է Իսթմայի ճանապարհին,- զանազան անբարետես հանրակացարաններում չեխական սատանաների հետ, որոնք թխվածքաբլիթ էին ճռթճռթացնում եւ գլխով էին անում, երբ նա պարզասիրտ պատմում էր նրանց վարդագույն լամպերի մասին՝ լուսավորվող լճակի սառույցի տակ՝ գիշերային դաշտերի մեջ, որպեսզի հետո հիշելու բան լիներ հեռավոր մթին աստղերի վրա, բայց գաղտնի պայմանավորվում էին այն մասերի բաժանել եւ դրանցից կազմել Իր Մոր քանդակը, ավելի ճիշտ՝ նույնիսկ ստեղծել հենց այդ Մորը: Կինոթատրոնի ճեմասրահից լսվում էր ինչ-որ մեկի հազը: Դա ավելի վատ էր այն մռայլ նոյեմբերյան օրից, երբ դու զբոսնում էիր Պրահայի տակի ինչ-որ գյուղակի ամայի հրապարակում եւ հանկարծ ձայն լսեցիր սյան վրայի բարձրախոսից՝ հեգնորեն կարդացող քո ուսումնասիրությունը գյուղական փոստերի Գրաալի մասին, որն ընկած էր քո գրապահարանի արկղիկի հատակին եւ որը դու ոչ մեկին ցույց չէիր տալիս, որովհետեւ միայն այստեղ դու բացահայտ անվանել էիր /գործածելով նույնիսկ այն ամենանողկալի բաղաձայները, որ ծնվում են լեզվի ծույլ եւ արատավոր շարժումներից, բերանի տամուկ խավարում/ այն, որ չպչպոցով ելնում է խորը փոսից քո բնակարանի մեջտեղում: Սուրբ Վիտայի տաճարի պես մի բան, միայն թե ավելի մեծ այն բանից, որ Գրադչանայի վ-ա է, շարժվում է Սոբեսլավյան երկրամասով ժամում երկու հարյուր կիլոմետր արագությամբ, եւ Իսթմը հառնում է երկու ծովերի շողշողացող հարթության վրա: Դաշնամուրը վերածվել էր խեցգետինների եւ ցրիվ էր եկել սենյակով մեկ, դեռ վրա չէր հասել համապատասխան պահն այն բանի համար, որպեսզի հնչեր երաժշտությունը, ոչ, դեռ ժամը չէ, աստվածուհիները արծաթե տուփերում դեռ չէին գահավիժել առաստաղի միջից ուղիղ դեպի հրեշների խորհրդարանը: Որպեսզի բարձրաձայն ընթերցես մեջտեղում պարուրագծով պատկերագիրը, որը նկարված է տուշով՝ աշխույժ դաշնամուրային խեցգետինների մեջքերին, հարկ է արտաբերել հնչյուն՝ նման բետոնե զետեղարանում փոշտոցին եւ նշանակող՝ մոռացեք ձեռքի գլխավոր շարժումների մասին, կանաչ օղակներով ծածկված, դրա վրայի տան չլուսավորած սենյակում: /Գոյություն ունեն բազում տարբեր Չինաստաններ, որոնց ծայրամասում մենք ապրում ենք, հարեւան բնակարանի բոլոր սենյակներում տարածվում են բրնձի դաշտերը/: Դու ուզում էիր փախչել սրահից, բայց դռները փակ էին, երբ դու սկսեցիր բռունցքով դրանք թակել, քարշ եկավ ծեր տոմսավաճառուհին եւ դռան արանքից ասաց քեզ, ծիծաղից խեղդվելով, որ դու կանցկաց-

նես մթին կեղտոտ դահլիճում հազար տարի եւ անընդհատ կվերանայես քո կյանքի ամենատանջալից տեսարանները, որոնք էկրանի վրա կվերարտադրեն քեզ համար շարժուն ձկնիկների կուտակումները»:

Այլեւս ես ոչինչ չեմ հիշում: Ես արթնացա հիվանդանոցում. պարզվեց, որ ապակյա բանկայում ինչ-որ քիմիական նյութ էր, որը լույսի ազդեցության տակ ալիքների որոշակի երկարությամբ ինչ-որ գազ է արձակում՝ ուժեղ հալյուցինոգեն թմրանյութ: Բախտս բերեց, որ հարեւանները զգացել էին տարօրինակ հոտն ու մտել էին բնակարան. ինձ գտան գիտակցությունս կորցրած՝ գորգի վրա: Բժիշկներն ասացին, որ եթե ես փոքր-ինչ էլ ծուխը ներքաշեի, ապա երբեք չէի արթնանա սարսափելի երազներից, կապրեի ինձ համար Պրահայում, որին մշտապես սպառնում է ցունամին՝ ծագող Պետրշինի եւ Գրադչանի ետեւում, եւ ինձ կնախատեին սեւ ձկները: Սուտակներով զարդարված գիրքը անհետացել էր սենյակից եւ այդպես էլ չգտնվեց: Եւ մինչեւ այսօր ինձ չէր վիճակվել նայել այդպիսի տառերով գրված գրքին: Սակայն տառերը ես ինչ-որ կերպ տեսնում էի՝ դրանք փորագրված էին տղամարդկանց զուգարանի պատի վրա, Լանդյենի տակի Հին քաղաքի գարեջրատանը, պատկերի կողքին ծովահրեշ էր՝ իր շոշափելիքներով վագրին խեղդող:

Որոշ ժամանակ մենք երկուսս էլ լռում էինք. գրադարանավարը, ձեռքերը տարածելով, փորձում էր հանդարտեցնել գրքերի հուզումը սեղանի վրա, բայց նրա հպումներն էլ ավելի էին գրգռում դրանց, վերջապես նա հանձնվեց եւ պարզապես լուռ նստել էր սեղանի մոտ, նայելով վար՝ ծյունապատ բակին:

-Դուք երբեք չե՞ք փորձել բացահայտել այդ գաղտնիքը,- հարցրեցի ես նրան:

-Իհարկե, փորձել եմ, սկզբում ես ամենուր հարցուփորձում էի գրքի մասին, յուրաքանչյուրին նկարում էի տառերը, այնպես, ինպես ես դրանք հիշել էի: Ոչ մեկը ոչինչ չգիտեր ոչ գրքի, ոչ էլ անհայտ այբուբենի մասին, բայց համարյա յուրաքանչյուրի մտքին գալիս էր ինչ-որ մոռացված պատմություն, տարօրինակ հանդիպում, պատահաբար առ այլ աշխարհ դռնակ բացող, նա սկսում էր պատմել այդ մասին, բայց սովորաբար կարկամում էր, կեսից ընդհատում էր պատմությունը եւ ինչ-որ այլ բանի մասին էր խոսում: Ինչ-որ մեկը գտավ իր սենյակում խոնավ գորգի վրա կենդանի գալարվող ծովաստղ, ինչ-որ մեկը գիշերով սպասեց փոքրիկ կայարանում գնացքին, մտավ վագոն եւ հայտնվեց պաղ գոթական ժամատանը: Ես լսում էի այդ, եւ իմ մեջ ամրանում էր վստահությունը, որ հենց մեր կողքին

գոյութուն ունի ինչ-որ զարմանալի աշխարհ: Ես չգիտեմ՝ ինչ տեսք ունի այն եւ ով է այնտեղ ապրում, չգիտեմ՝ ինչպես են վերաբերվում մեզ նրա բնակիչները. գուցե մենք նրանց հետ անտարբեր հարեւանություն ենք անում, գուցե մեր սահմանափակ աշխարհիկն ինչ-որ մեկի գաղութն է, իսկ գուցե պատի ետեւում պատերազմի նախապատրաստություն է ընթանում: Եւ ես սկսեցի ավելի ուշադիր ունկ դնել պատմություններին, որոնք պատմում էին ճաշասենյակում գրադանավարները, եւ որոնք ես նախկինում լուրջ չէի ընդունում. դրանք սարսափազդու պատմություններ էին տարօրինակ էակների հետ հանդիպումների մասին գրադարանի անհայտ վայրի անկյուններում: Այդժամ ես առաջին անգամ խնդրեցի ինձ ուղեկցել այդ մռայլ վայրերը: Ես նայում էի միջանցքներին, որոնք տանում էին դեպի խավար, եւ մտածում էի՝ վաղն իսկ ճամփա կընկնեմ, կհասնեմ միջանցքի վերջին եւ ավելի առաջ կգնամ, բայց մշտապես ետ էի գցում իմ ճամփորդության սկիզբը: Ամեն օր ես մտածում էի՝ վաղը, վաղը՝ մինչեւ այն ժամանակ, մինչեւ որ ընդհանրապես մոռացա գրադարանային գաղտնիքների մասին եւ սուտակներով դրվագազարդված գրքի, եւ սեւ ձկան չարախինդ ծիծաղի մասին: Այժմ ես համարյա թե ամեն օր անցնում եմ գրադարանի խուլ ծայրամասերի երկայնքով, նույնիսկ չնայելով այն չարագույժ միջանցքներին եւ աչք չդարձնելով առեղծվածային ոռնոցին, որ հասնում էր դրա խորքերից: Ես այլեւս չեմ ձգտում սահմանը հատել, ինձ համար արդեն ուշ է արշավի ուղեւորվելը:

Բայց ես դեռ աշխարհի գաղտնիքներն իմանալու ցանկությամբ լի եմ, որից էլ դուրս լողաց մանուշակագույն կազմով գիրքը, եւ գիտաշխատողի պատմածը լոկ սադրեց ինձ, այնպես որ՝ ես ճանկեցի նրա խալաթի թեւքն ու սկսեցի համոզել.

-Ոչ, դեռ ուշ չէ, հիմա հենց այն ժամանակն է՝ ճակատագրի հանդիման պարտության եւ խոնարհման ժամը, որից ծնվում է հաստատակամությունը, եւ ձյունը, ամենուր փռված՝ արդեն համարյա անհրաժեշտի սկիզբը, այդ էլ մեզ կոչում է ճամփա ընկնել, մենք երեւի թե դրա վրա հեքիաթային էակների շատ հետքեր կգտնենք, որոնք մեզ կբերեն դեպի գաղտնի որջերը քաղաքի խորքերում, թողեք ամենը եւ գնանք ինձ հետ, միասին ճանապարհ ընկնենք: Դե, կտեսնեք, մենք կտեսնենք թանկարժեք բաներն ու կհանդիպենք հիանալի հրեշների: Իսկ ամենագլխավորը՝ ես գլխի եմ ընկնում, որ այնտեղ՝ արտասահմանում, թաքնված է մեր աշխարհի գաղտնիքը, մենք կկարողանանք իսկապես ապրել միայն այնժամ, երբ կլինենք այն կողմում: Ինձ արդեն վաղուց թվում էր, որ սովորույթների

սխեման, որով կազմակերպված է մեր աշխարհը, նման է Կնոսում խճանկարե հատակի նախշազարդին, չէ՞ որ այդ գծերն իբր թե կրկնում էին ծիսական պարերի մասնակիցների շարժումները, դիմակներով կերպարանքների, որ վաղուց արդեն չքացել էին. կարելի է հուսալ, որ այնտեղ՝ արտասահմանում, մենք վերջապես կտեսնենք հենց այն պարը, որի հետքն էլ հենց ողջ մեր աշխարհն է:

-Ոչ, ինձ թվում է, որ գնալու մեջ ոչ մի իմաստ չկա,- կամացուկ պատասխանեց նա: - Ոչ թանկարժեք իրերը, ոչ հրեշները արդեն ինձ չեն գրավում: Հնարավոր է՝ արտասահմանում իրոք թաքնված է մեր աշխարհի սկզբնաղբյուրը, բայց մենք, միևնույն է՝ երբեք չէինք կարողանա հասկանալ այն, այն մեզ անիմաստ կթվար: Գիտակցված եւ հասկանալի է մեզ համար լոկ այն, որ շարժվում է մեր աշխարհի ուղեծրերով, այն, որ հետեւում է մեր կնոսյան նախշազարդի գծերին, եւ կարեւոր չէ, թե հատկապես ինչու է այն ծագել՝ արդյո՞ք դա հիշեցում է վսեմաշուք աստվածների կամ հարբած դեւի անզուսպ պարերի մասին: Միեւնույն է՝ մեզ չէր հաջողվի պատմել աշխարհում առաջին պարի մասին, քանզի մեր խոսքն ունակ չէ արտահայտելու այն, ինչ կար նախշազարդի ծագումից առաջ, մենք նույնիսկ չէինք կարողանա տեսնել այդ պարը, որովհետեւ հանդիսատեսային ընկալումն անբաժան է ընտել իմաստների ցանցից եւ այն, որ չի սնվում դրանցով, մեզ համար անտեսանելի է մնում:

-Իսկ ինչպե՞ս ծովաստղը գորգի վրա, իսկ ինչպե՞ս վագոն-ժամատունը, դե, ինչպե՞ս տարօրինակ տառերով գրքերը,- հիշեցրի ես:- Դրանց մարդիկ մեր աշխարհից, այդուհանդերձ, հանդիպել են:

-Դրանք բաներ են՝ պատահաբար մեր ափ նետված, եւ մենք, հիմնվելով մեր նախկին փորձի եւ այդ առարկաների կեղծանմանության վրա, սխալաբար դրանք ինչ-որ նշանակությամբ ենք օժտել: Մեզ վրա իր ձեռքն է տարածում քերականության հոգատար եւ նենգադավ աստվածությունը, որը մեզնից թաքցնում է հրեշների մռութները. մենք ասում ենք. «Այս բանը առեղծվածային է» եւ «այս իրադարձությունը խորհրդավոր է»- եւ, ինքներս էլ այդ չնկատելով, հանդերձավորում ենք դրանց վախեցնող ներկայությունը, դրանց սեւ գոյությունը՝ ոչ մի բանի վրա չհենվող եւ հայացքի համար նողկալի առ ածականը, ինչպես առ մաշված կոստյումը, եւ այսպիսով դրանց տեղ ենք հատկացնում մեր աշխարհում: Ոչինչ չես անի. ով էլ որ նկարած լինի երկրաչափական կերպարանքները խճանկարե հատակին, դրանք վերածվեցին մեր զնդանն ու մեր տունը: Շատ հնարավոր է, որ այդ գարշելի եւ սարսափազդու պարը հետքն է ինչ-որ խելագար աստծո,

բայց նույնիսկ եթե մենք համոզվենք դրանում, մենք, միեւնույն է՝ ստիպված կլինենք հաշտվել այդ խելագարության հետ. ճշմարտացի եւ գիտակցված է մեզ համար լոկ այն, որ պարփակված է այդ խելագարության սահմաններում: Մոռացեք տարօրինակ գրքերի մասին, որոնք ձեզ հիշեցնում են մեր աշխարհի սահմանի մասին, ես չեմ կարող ձեզ այստեղից դուրս բերել, ես ի զորու եմ միայն աստիճանաբար կործանել այն ներսից: Մեր աշխարհի սահմանը բաց է լոկ մի կողմի վրա, ոչ մի ճանապարհ ներսից դուրս չկա եւ չի կարող լինել:

Գլուխ 3
Պետրշին

Այն ամենից, ինչ ասաց ինձ Կլեմենտինումի աշխատակիցը սահմանի մասին, շատ բաներ, հավանաբար, արդարացի էին, բայց ես չէի կարող նրա հետ լիովին համաձայնվել: Ինձ չէր լքում զգացողությունը, որ մենք էլ երբեւէ պարել էինք աշխարհի երեսին առաջին պարը, որ մենք էլ մասնակցել էինք տոնախմբությանը, որ մենք էլ հենց այն պարող աստվածությունն էինք կամ դեւը եւ որ մեր ներսում հնչում են հինավուրց հիշողությունների արձագանքները եւ մեր մեջ ապրում է բնազդական ընկալումն այն բանի, որը մենք հետո մերժեցինք եւ տարանք արտասահման: Աշխարհը ճանաչելու ցանկությունը, որտեղից էլ հայտնվեց անձանոթ տառերով գիրքը, ինձ չէր լքում: Հենց նույն օրը ճաշից հետո ես ուղեւորվեցի ձյունապատ Պետրշին՝ հուսալով, որ վրա կհասնեմ խորհրդավոր կանաչ լույսի ինչ-որ հետքի: Ես գայթում էի սառցակալած ճանապարհներին, ես ընկնում էի, ես դեգերում էի ծառերի արանքով, եւ դրանց ճյուղերից ինձ վրա էր թափվում ձյունը, ես անցնում էի ձնաթմբերի միջով: Ես նայում էի թփուտի թավուտին, կոտրված ապակիների եւ փակ փեղկերի արանքներից նայում էի տնակների եւ փակ տաղավարների խավարին՝ կեցած զառիթափի վրա, բայց տեսնում էի միայն դեսուդեն նետած այգու գործիքները, ներկով թիթեղատուփերը եւ ճղված թղթե տոպրակները, որոնցից թափվում էր ինչ-որ բացագույն փոշի: Երեկոյան կողմ ես հանձնվեցի. արդեն լիովին պատրաստվելով իջնել դեպի արահետը, որ տանում էր Ուեզդի տրամվայի կանգառը, փոքրիկ հեղեղատում, ձյունապատ ծառերի մեջ ես դեմ առա գոտկատեղիս հասնող մի գլանի, որի գլխին ընկած էր ձյան բարձր գլխարկը: Մտքումս առկայծեց հիշողությունը, երբ մենք մանկահասակ Պետրշինում պահմտոցի էինք խաղում, ես մի քանի անգամ թաքնվում էի հենց այդ գլանի ետեւում. այն ժամանակ ամառ էր, եւ գլանը խիտ խոտերով էր պատված: Ես հիշեցի, որ անընդհատ փորձում էի բացել ժանգոտած մետաղից պատուհանը, որը գլանի վերնամասում էր եւ վառարանի դռնակ էր հիշեցնում, բայց ինձ դա այդպես էլ չհաջողվեց: Երեւի այստեղ ավազ կամ խարամ են պահում՝ մտածեցի ես: Այս անգամ լուսամուտը, ի զարմանս ինձ, տրվեց, հազիվ էի ես բռնակից քաշել, եւ երկարածիգ ճռռոցով բացվեց: Ես կռացա եւ գլուխս ներս խցկեցի: Երբ աչքերս ընտելացան կիսախավա-

րին, ես հայտնաբերեցի, որ գլանը գմբեթի կույր լապտերն է, ներքնամասում ընդլայնվող եւ պսակող տաճարային նավը, որի հատակը կորչում էր մթին խորքում: Նավը շրջանակում էին տասներկու ժամատները, եւ յուրաքանչյուրի կենտրոնում բարձրանում էր ապակյա քանդակախումբը: Ներսից դատարկ, քանդակները ջրով էին լցված, որում զանազան ծովային կենդանիներ էին լողում, դրանցից ոմանք աղոտ շողում էին. այլ լուսավորություն, այդ դալուկ առկայծումից զատ, տաճարում չկար, եւ դրա արտացոլքերը դեսուդեն էին ընկնում անթիվ պարուրագծերում ոսկեզօծ նախշերի ինչ-որ ծանր, ստորգետնյա բարոկկոյի ոճով՝ խոպոպվող պատերի վրա եւ մթին նկարների լայն շրջանակներով: Ինձ թվաց, թե քանդակային խմբերը ավարտված կոմպոզիցիա էին կազմում, ապակյա կոմիքս, որ ժամանակագրական հաջորդականությամբ պատկերում են տեսարաններ ինչ-որ հերոսի կամ աստծո կյանքից: Դրանք ներկայացնում էին ինչ-որ դաժան մարտեր, մեկուսացված մոլեգնության պահերը եւ պայծառատեսության հիվանդագին նոպաները: Եւ քանդակների ներսում տիրում էր խուճապը, եւ ծգվում էր հավերժական մարտը, ծովային կենդանիները անխոնջ հետապնդում էին միմյանց եւ գործի էին դնում իրենց սուր ատամները: Ես տեսա, թե ինչպես վախեցած շողշողացող ձկնիկը, որի ետեւից ընկել էր արագ սեւ ստվերը, թաքնվեց քանդակի գլխում, եւ ապակյա դեմքը, խեղված առեղծվածային ջղակծկումով, շողաց տաճարի խավարում, ասես թե անբացատրելի հիացմունքից, սակայն հաջորդ պահին աշխույժ գիշատիչը վրա հասավ ձկնիկին եւ կառչեց նրանից, դանդաղ հոսող մուգ արյունը մարեց լույսն ու լցրեց ողջ քանդակի գլուխը: Գլխավոր զոհասեղանի ետեւում կանգնած էր տասներեքերորդ քանդակը՝ այն պատկերում էր ինձ ծանոթ տեսարանը՝ պառկած երիտասարդին խժռող վագրին: Վագրի մարմնի ներսում ծուլորեն տարուբերվում էր մենավոր, վարդագույնով լուսավորվող մեդուզան:

Հանկարծ իմ տակ վառվեցին լամպիկները ջահի հյուսված եղջյուրիկների ծայրերին՝ կախված երկար ճոպանից, որը ամրացված էր գմբեթի լապտերին հենց իմ գլխի մոտ: Քանդակների ձկնային շողանքը լամպերի լույսի ներքո դժգունեց, բայց տաճարի մեծ մասը առաջվա պես կիսախավարում էր մնում: Տաճար մարդիկ էին մտնում /հավանաբար, օգտվելով ինչ-որ ստորգետնյա միջանցքից/ եւ նստում էին նստարանների վրա: Զոհասեղանի ետեւում հայտնվեց քահանան. դա հիսունին մոտ մի տղամարդ էր՝ թուխ, հարթ սեւ մազերով եւ բարալիկ բեղիկներով, նրա կանաչամանուշակագույն հանդերձանքը ոսկե ասեղնագործությամբ ծանր, անշարժ

ծալքերով վար էր իջնում: Որոշ ժամանակ նա սեւեռուն լռում էր գլուխը հակած, այնուհետեւ սկսեց քարոզը.

-Այսօր մենք հիշում ենք Աքսորյալլի թափառումների տասնհինգերորդ օրը, հենց այն, երբ նրա նավակը իրիկնային խավարում գետով հասավ քաղաքին, գործարաններն ու խարխլված պալատները ուղղված էին առ գարշահոտ հոսքը բարձր պատերով եւ անսվաղ աղյուսով, դրանցից ելնում էին, ցցվելով ջրային հարթության վրա, երկաթյա գերաններն ու լայն խողավակների ծայրերը, որոնցից կեղտոտ ջուր էր հոսում, տնակների ետնաբակերից դեպի գետ էին տանում ջարդված աստիճանիկները, որոնց դեմ էին առնում ամենայն փտածություն եւ թխաթույր փրփուր. փոքրիկ բակերի վրա պատերին էին ծեփվում մթին դարավանդները, ճառաքում էին խոհանոցների լույսերը: Այդ մասին խոսվում է «Ամայացած այգիների գրքում», արիշտայի ապուրի յուղոտ բծով էջի վրա, գրչի վաղեմի վախի հետքով, վախի՝ հարուցված այն բանից, որ թերթի վրա, շլացուցիչ շողացող արեւի շողերի տակ անսպասելի ընկել էր հրեշի պոզավոր ստվերը, որը միջօրյա տապին շրջում էր քնատ եւ ամայի անկյուններում, այն բանից հետո, որ արեւով շամփրած քաղաքային պատերի վրա այն ճատրակով հաղթել էր ծերացող արքային, որը խաղում էին կայծկլտող սառույցից խաղաքարերով. լռության մեջ լսվում էր լոկ կարմիր ու մանուշակագույն թանկարժեք քարերի բեկորների քնքուշ շրշյունը՝ ճատրակի տախտակի կողքի ավազե ժամացույցի մեջ շաղ եկող: Դա հրեշի վրեժն էր վաղուց տանուլ տված մենամարտի համար ամրոցի բարձր քարե պատի տակ, որին խփվում էին գիշերային ծովի ալիքները՝ հեքիաթները ողջ ճշմարտությունը չեն ասում, հրեշները մշտապես վերադառնում են: Եւ ձեր դուռը մի անգամ կթակի հրեշը ճատրակի տախտակը թեւատակին, եւ նա կհամոզի ձեզ նրա հետ պարտիա խաղալ եւ կպնդի, որ տախտակի վրա անպատճառ ներկա լինի վագրե գլխով փորագրովի զինվորը, եւ այդ խաղաքարը քայլում է անճիշտ, նենգադավ պարուրագծով ու կարող է լքել ոչ միայն ճատրակի տախտակի սահմանները, այլ՝ նույնիսկ եւ բնակարանի: Հրեշները վերադառնում են, իրենց ճիրանը մեզ համար ամենաթանկարժեք թավշի մեջ, որ ճանկռում է նախասրահի հայելու վրա գծանկար՝ պատկերող, թե ինչպես կինը, որին դուք սիրում եւ պաշտում եք, հպարտությամբ մասնակցում է մունջ ու մռայլ գինարբուքին վեց թարշամ տղամարդկանց հետ, ստորգետնյա ռմբակոծիչի նավակողին, համառորեն անցնող կավի ու քարերի միջով, այնպես որ՝ ի վերջո դրա սեւ քիթը, վիթխարի դաշտամկան մռութի պես, սպրդում է ուռած ասֆալտի տակից Ազ-

գային պողոտայում, «Սլավիա» սրճարանի պատուհանների առաջ, ընդ որում՝ հնց այն րոպեին, երբ երիտասարդ բանաստեղծը, նստած այնտեղ մի գավաթ սուրճի առաջ, անվերադարձ որոշում է չշարունակել այլեւս իր պոեմը Ներքին Ասիայի քաղաքների փառավոր տիրակալների մասին, որովհետեւ նրան զզվացրել է գրամեքենայի վրա տպելը, որի ստեղները, այն բանի փոխարեն, որ կարգաբերված իջնեն թղթի վրա, մեկ էլ տեսար ծռվում են հոդերում, ծգվում եւ շրմփացնում են դեմքին թունավոր փշով, որ դրանց ծայրին է, եւ այդ պատճառով հարյուր քսաներորդ հեկզամետրից հետո նրա գլուխը, որով դեռ մի ամիս առաջ հիանում էին կանայք եւ որը նրանք շոյում էին, ուռել եւ գնդի էր վերածվել, եւ ծգված ու բարակած մաշկի տակ երփներփում է թարախապալարների կանաչ շարավը: Ինչո՞ւ նա ուրիշ գրամեքենա չի ճարում: Դե, այն պատճառով, որ մնացած գամեքենաները վերացել են. դրանց մի մասը Կովկաս է տարել մորեխապարսը /ապացուցված է, որ մորեխապարսը, ջանքերը միավորելով, ունակ է բարձրացնելու եւ փոխադրելու շատ կիլոմետրեր նույնիսկ ձիուն/, գրամեքենաների մի մասը գործածվում է ինչ-որ նոր խեղաթյուրման համար, որով ավելի ու ավելի շատ են տարվում քաղաքներում, իսկ մի մասն էլ վերածվել է ճերմակ շողի՝ հիասքանչ գազանակերպ հրեշտակի անդրին լուսավորող: Նավակում նստած, Աքսորյալը երկար խոհածում էր այն մասին, թե ինչու մեծ աղյուսե պալատները քաղաքում, որի միջով նա նավարկում էր, այդքան նման են կայարանների, եւ առաջին անգամ կյանքում նրան այցելեց գայթակղությունը՝ թողնել սրբազան գրքերը նոճիների կղզիներում բախտի քմահաճույքին, որպեսզի թզուկների տաղտկալի նշագրումները հետզհետե գրավեին բոլոր գրածայրերը եւ սկսեին ծածկել տեքստը, որպեսզի այնտեղ հայտնվեին կասկածելի մեկնությունները, որոնցում կխոսվեր միայն գյուղական պանդոկների դատարկ փակ պարասրահների անձկության մասին, որտեղ աթոռների ոտքերը սեղանների վրա հառվեին տամուկ բծերով աշխարհագրական քարտեզներով սպիտակ առաստաղին, հենց այն սրահների, որոնք իբր կարեւոր դեր կխաղան հետմահու տուրիզմում. նրան համակում էր ամենը լքելու եւ աղտոտ քաղաքային գետի դեւը դառնալու գայթակղությունը. ամեն երեկո բարձրացնել գլուխը ջրային հարթության վրա, նայել խոհանոցային պատուհանների լույսին, սնվել այն բանով, ինչ տանտիրուհիները կթողնեն նրա համար ճաշամաններում, գետի մոտի սանդուղքի վերջին աստիճանին, մոռանալ ընդարձակ հրապարակների սպիտակ մարմարի մասին՝ գիշերով այրող եւ առ պաղ օրը սպրդացող, ինչպես անամոք հուսահատությունը հանդարտ ամառա-

յին օրերին դեպի այգի նայող ընդարձակ սենյակներում: Նրան գայթակղությունը հաղթահարելուն օգնեց ջրի վրա լողացող ծառի փտած կտորը. նա դրանում ճանաչեց փոքրիկ տնային զոհարանի բեկորը, որ քնավագոնի միջանցքում է, գիշերվա մեջ դղրդացող, գրկվելով գնացքների կատաղի Սինոտավրոսի հետ: Նա առաջին անգամ մերկացրեց ճակատն ու ցույց տվեց հին սպին. դա սպի էր հարվածից, որ հասցրել էր նրան հայելիներում դեգերող պողպատյա կտուցով թռչունը, երբ ճակատով հենվել էր պաղ ապակուն, որպեսզի հանդարտեցներ ջերմությունը, որ այրում էր նրան այն պահից, երբ երկար դատարկ միջանցքում՝ շողշողուն լինոլիումով ծածկված հաստատություններում, տեսավ ֆլամինգոն, որը հետապնդում էր սատանային. այժմ հայելիներից մեր աշխարհ են ներթափանցում միայն մետաղյա կտուցները չար թռչունների եւ վիթխարի, մի մետր երկարությամբ կրետի խայթոցները, որ ծակծկում են մեր դեմքերը, քանի դեռ մենք սափրվում ենք. կրետի խուլ բզզոցը լսվում է հայելու ապակու տակից, երբ երեկոները, պառկած թախտի վրա, մենք գիրք ենք կարդում, երբեմն բզզոցը փոխվում է խոսքերի, իսկ հետո հնչում է ձայնը, որ հիշեցնում է մեզ հին հայտնության մասին, որին մենք դավաճանել ենք: Դա հայտնություն էր, որ հասել էր մեզ սֆինքսներից, որոնց մենք տեսել էինք մահճակալի պոկոտված մետաղյա հենքի վրա՝ կեցած դատարկ ձյունապատ դաշտի մեջտեղում, Խուխլյայի վրա, երբ մենք տասնութ տարեկան էինք, մեր սովորական զբոսանքի ժամանակ. սկսում էր մթնել, եւ մռայլ ու թունոտ հարթավայրի ետեւում, սլիվենեցկյան ճանապարհով սահում էր ավտոմեքենաների լուսարձակների լույսը. ի վերջո մենք մոռացանք հայտնությունը, որը շամփրել էր մեզ, ինչպես սրի շիկացած սայրը. այժմ դրա մասին երբեմնակի հիշեցնում է լոկ ձայնը, որը ծնվում է վիթխարի կրետների խորհրդավոր գվվոցից՝ անխոնջորեն ու չարակամ խփվող մթնշաղի հայելու հակառակ կողմին: Ի՞նչ տեղի կունենա, եթե նրանց հաջողվի հայելին ջարդել: Այդժամ հարկ կլինի դուրս թքել ադամանդները բերանից եւ փորձել գտնել կրակը, որը մենք մի ժամանակ թաքցրել էինք մեր գրադարանում: Ցավից ծնվում են թափանցիկ կենդանիների նոր տեսակները, լամպերը շողում են մեղրածոր, մթին եւ պաղ սպասասրահում առաջվա պես լսվում են ճչոցները, թեեւ տղամարդն ու կինը, որոնց շուրթերից մի ժամանակ դրանք հնչել էին, արդեն պառկած են ճերմակ Հինդուստանում, խճանկարե հատակին, եւ դողացող ձեռքերով քնքուշ շոյում են միմյանց մարմինները՝ փայլկտուն, բծավոր մորթով ածող: Ջրի վրա տեսնելով ծանոթ զոհարանի բեկորը, Աքսորյալը հիշեց հարազատ պալատի ճերմակ

աստիճանների վրայի ընձառյուծների մասին եւ համարձակվեց խրվել տան տաք ու կպչուն զազրելիության մեջ, որը երբեք մեզ բաց չի թողնում եւ որը մենք ողջ կյանքում թոթափում ենք մեր վրայից վառ լուսավորված հյուրանոցներում: Որոշ մեկնիչներ պնդում են, իբր նրան հարկ է տրվել գայթակղությանը, դառնալ աղտոտ գետի դեւը եւ ամեն երեկո երգեր երգել փայլկտող խոհանոցային պատուհանների տակ՝ մեքենաների դեմ՝ կենտավրոսների անվերջանալի մարտերի մասին: Ամեն դեպքում որոշումը, որը նա ընդունեց, միանգամայն անկարեւոր է՝ սա այսօրվա քարոզի գլխավոր միտքն ու թեման է, որը ձեզ հարկ է քննել այս շաբաթ:

Միապաղաղ զնգոց լսվեց. դա, հավանաբար, երաժշտություն էր: Քահանան տարածեց ձեռքերը. այժմ կարելի էր տեսնել ոսկեկար պատկերները նրա հանդերձանքի վրա՝ դրանք վագրեր էին. նա ձայնը բարձրացրեց.

-Եւ մենք երբեւէ ստիպված կլինենք ընտրելու մարմարի պաղության եւ տրտում երգերի միջեւ, որոնք հասնում են պահածոյի տուփից՝ պիտակի վրայի ձողածկով: Եւ մեր ընտրությունը, որքան էլ այն դժվարին լինի, բացարձակապես կարեւոր չի լինի. ինչ էլ որ մենք ընտրենք, մենք, միեւնույն է՝ ստիպված կլինենք քայլել շան երկաթյա դիմակով, անձայրածիր բետոնե դաշտի վրայով...

Հավատացյալները նստարանների վրա բացեցին աղոթագրքերն ու պրկեցին երակարածիգ երգն առանց խոսքերի, մեղեդին, որում ես չկարողացա ռիթմ գտնել եւ որն ավելի շուտ պատահական հնչյուններ էր հիշեցնում, որ անում էր քամին ձմեռային իրիկուններին, երբ այն տարուբերում է պատուհանների թիթեղյա պնդացուցիչները: Երգին ինչ-որ կամացուկ զնգոց էր միախառնվում: Ես տարօրինակ երգ էի լսում, սպասում էի, թե ինչ տեղի կունենա հետո, բայց ինձ էր հասնում միայն անկանոն երգը, մեն-միակ տոնայնության անվերջանալի զարկահոսքը, այնուհետեւ մեղեդին հանկարծ ելնում կամ իջնում էր, եւ կրկին ընդհատվում էր, եւ նորից երկար հնչում էր մի տոնայնության մեջ: Երգեցողությունը ննջեցնում էր, ես ցուրտ զգացի, եւ ես գլուխս անցքից դուրս բերեցի՝ արդեն մթնել էր, իմ տակ, սեւ ճյուղերի արանքում առկայծում էին քաղաքային լույսերը, անհունչ վեր էր ընթանում լուսավորված ֆունիկուլյորը: Ես վազեցի խորունկ ձյան վրայով՝ Ուեզդով վար եւ տրամվայ նստեցի, որը եկել էր Մալոստրանյան հրապարակից: Վագոնը համարյա դատարկ էր. ես նայում էի վառ լուսավորված տրամվայի սալոնի դալուկ արտացոլանքին մթին ապակիներում եւ խոհածում էի ստորգետնյա տաճարի մասին: Ես այդպես էլ չհաս-

կացա՝ ում հանդիպեցի Պետրշինի վրա: Ես ինչ-որ գաղտնի աղանդի՞ դեմ առա: Նոր կրոնի ծնունդի վկա՞ եղա: Գուցե թե այն կտարածվի պետրշինյան գետնատակից ողջ աշխարհով մեկ եւ կգրավի այն: Կամ, ընդհակառակը, ստորգետնյա ժամերգությունը՝ մահացող հինավուրց հավատալիքի վերջին ջղաձգությո՞ւնն է: Գուցե թե տաճարի այցելուներն օտարերկրացիներ են, որոնք չգիտես թե ինչու հենց Պրահայում են նշում իրենց կրոնական տոները, կամ էլ այդ մարդիկ բյուրավոր տարիներ աննկատ ապրո՞ւմ են մեզ հետ: Իսկ գուցե ես հայտնվեցի անծանոթ քաղաքի սահմանին, որը դրկի՞ց է մեզ: Արդյո՞ք այդ քաղաքն աճել է թափոններից, որ չի մարսել եւ որձկացել է մեր աշխարհը, թե՞ այն հիմնել են անդրենաձինները, որոնք բնակվել են այստեղ մինչեւ մեր գալուստը եւ որոնց համար մենք այնքան անտարբեր ենք, որ նրանք նույնիսկ չեն նկատի, թե մենք երբ կչքվենք: Այնտեղ նրա ծառուղիները, հրապարակներն ու այգինե՞րն են, որտեղ շողշողում է թագավորական պալատը:

Գլուխ 4
Մալոստրանյան սրճարանը

Ես եւս մի քանի անգամ եկա Պետրշին, բայց գմբեթի լապտերի վրայի լուսամուտը նորից փակել էին. ես ողջ ուժով քաշեցի բռնակը, բայց ինձ այդպես էլ չհաջողվեց այն բացել: Մանուշակագույն գրքից ես ալեւս չէի բաժանվում՝ տրամվայում, խանութի հերթում, երբեմն եւ փողոցում քայլելիս, ես բացում էի այն եւ նորիցնոր ուսումնասիրում անծանոթ նշանները: Ես արդեն ճանաչում էի առանձին տառեր, թեպետ եւ չէի հասկանում, թե ինչ հնչյուններ են դրանք նշանակում. ինձ ապշեցնում էր, որ նշանները յոթանասունվեցն էին, այդ գիրը կամ պիտի տարբերեր առանձին հնչյունները, որոնք մենք ընկալում ենք որպես մեկի այլացումները, կամ գծագրորեն նշանակում էր բազում հնչյուններ, որոնք արմատապես տարբերվում են մեր գրերից: Ես փորձում էի պատկերացնել այդ հնչյունները, երբեմն քայլելիս փորձում էի դրանք բարձրաձայն արտասանել, եւ անցորդները զարմացած շրջվում էին:

Ժամանակի ընթացքում ես հասկացա, որ այն մի քանի տասնյակ հնչյունները, որոնք մենք կիրառում ենք, շրջապատված են այլ հնչյունների անհայտ ջունգլիներով. եւ քանի որ բառերի նշանակությունները խորհրդավոր կերպով ծնվում են հենց հնչյուններից, ապա այդ ջունգլիները վխտում են ինչ-որ ցնորական իրերի, էակների եւ գործողությունների անհանգիստ սաղմերով: Ինչո՞ւ նրանք, որ գործածում են այդ գիրը, հնչյունները գծագրորեն տարբերելու այդպիսի պահանջ են զգում: Նրանց դրան է դրդում հաճույքը ձայների իմաստային հարստությունի՞ց, հաճույք, որ կամենում է տեքստը պարտիտուրի նմանեցնել՝ կենսական ուժերով լիացող, որ զարկահոսում է լեզվում,- կամ, ընդհակառակը, այդ բազում նշաններն այն բանի վախի դրսեւորումն է, որ ժամանակի ընթացքում նշանակությունները, չափազանց կիպ կապված հնչյունների բացառիկ երանգներին, անպայման կանհետանա՞ն: Դատելով տառերից սերող լարվածությունից, դրանք աճում էին վախի աշխարհում: Մի կողմից, նշանների բազմաքանակությունը կարող էր լինել առ մանրախնդիր նկարագրողականությունը հակման արտահայտություն, մտածում էի ես, իսկ մյուս կողմից՝ անհստակ, հինավուրց բացականչությունն արտահայտելու հուսահատ ցանկության դրսեւորում՝ մինչեւ այժմ լեզվի մեջ գաղտնի ապրող, որպեսզի հաս-

նի անհայտ գալիք աստվածության ունկին: Ես նաեւ խոհածում էի այն մասին, թե ինչ են նշանակում առանձին բառերի վրա հառնող փոքրիկ ոլորագրերը՝ երկայնությունը, մեղեդին, ժեստը կամ ծամածռանքը, որը պիտի ուղեկցի արտաբերվող հնչյո՞ւնը: Իսկ գուցե հենց այդ աննշմար աղեղներն ու հանգույցները հաղորդում են տեքստի գլխավոր իմաստը, իսկ իրենք՝ տառերն ընդամենը զարդանկար կամ խաբուսակ են, որ պիտի շեղեն օտարականին: Կամ եթե այդ նշանները՝ հինավուրց սրբազան գրի մնացուկներ են Ծանուցման ծայրամասում, համանման կործանված կայսրության պալատների ավերակներին նոր քաղաքների ծայրամասերում,- եւ դրանցից գլուխ հանել կարող է այժմ միայն շնորհառուների հերձվածը, որոնք ընթերցում են գրքերում այն մանրատառ ու քամահրվող տեքստը եւ, երեւի, սպասում են, որ հին աստվածների վերադարձից հետո այն նշանները կրկին կաճեն եւ կշողան նորոգված տաճարների ճակատներին:

Ես հասկացա, որ ամենամեծ վախն ու տագնապը հարուցում է ոչ թե նշանների քարացած գոյութունն առանց նշանակության, այլ ավելի շուտ ցնցող գիտակցումն այն բանի, որ ոչինչ չի կարող բացարձակապես անիմաստ լինել, առեղծվածային նշանակության առկայությունը, որը դողում է տառերի վրա, ինչպես սուրբ Էլմի կրակները՝ նշանակությունները, ինչն որ այդ գրի հետաքրքրաշարժ առանձնահատկությունն էր այնքան, որքան իմաստը, որը շամփրում էր ողջ գոյը եւ հանկարծ տեսանելի էր դառնում այդ էջերի վրա, որովհետեւ այն չէին ծածկել, ինչպես երբեմն պատահում է. մեզ ընտել նշանակությունները, որոնք, ինչպես աղբյուրից, քաղում են իրենց գաղտնիքները այդ թաքուցյալ իմաստից, այդ նախածանուցումից, եւ նորոգվում են դրանում իրենց կյանքի շարունակության համար, եւ միաժամանակ աննշմար լուծվում են դրանով, եւ կործանվում են դրանից, ինչպես խորհրդավոր հիվանդությունից: Արդյոք ես իրավունք ունեի՞ պնդելու, որ բացարձակապես այդ գիրքը չեմ հասկանում: Միահյուսումից բառերի, որոնք արթնանում էին անծանոթ նշաններով ծածկված էջերին նայելիս, ամենաուժգինն ու ցնցողը վախն էր՝ ծնված կռահումով, որ հասկանալու բան չկա, հարցնելու բան չկա, վախը՝ ծնեցյալ զգացողությամբ, որ մեզ հանդարտ ու համբերատար հետեւում է ինչ-որ սարսափազդու հաղթանակ, որից մենք ավելի շատ ենք վախենում, քան ամենադաժան պարտությունից:

Ես նստել էի կիսադատարկ մալոստրանյան սրճարանի պատուհանի մոտ, որի ետեւում երեւում էր ձյունապատ հրապարակը, իմ առջեւ դրված էր բացված գիրքը: Սեղանների գորշավուն մարմարի վրա շողում էր պաղ

ցերեկային լույսը: Նոր այցելու մտավ՝ ցրված հայացքով ու պոռթկուն վտիտ տարեց, մեկն այն անդադրում պերսոնաժներից, որ հայտնվում են ետմիջօրյա ժամերին Փոքրիկ Երկրի սրճարանում. անցնելով կողքիցս, նա նկատեց բացված գիրքը՝ մի պահ քարացավ, տատանվելով՝ արդյո՞ք առաջ գնա, իսկ հետո երկյուղած շուրջբոլորը նայեց, արագ հակվեց դեպի ինձ եւ հարցրեց՝ որտեղից է ինձ մոտ այդ գիրքը: Ես պատմեցի՝ ինչպես այն ձեռքս ընկավ: Նա նստեց դիմացս դատարկ աթոռի եզրին, ասես խամաճիկ, որի տիկնիկավարը չափազանց արագ էր թելերը բաց թողել, սրընթաց ծռվեց սեղանածածկոցի վրայով եւ, դադարելով անհանգիստ աչք ածել, կամացուկ ու համառորեն խոսեց.

-Ահա ձեզ բարի խորհուրդ, ազատվեք ձեր գրքից որքան հնարավոր է շուտ: Հավատացեք ինձ, այն օրից, որ ես հանդիպեցի այդ անիծյալ տառերին, ես թափառում եմ որպես կորսված շնիկ աշխարհի մռայլ ետնաբակերում եւ չեմ կարողանում հանգիստ գտնել: Տեսեք՝ ինչ դավադիր ու նենգադավ տեսք ունեն այդ տառերը: Դա վտանգավոր փտախտ է, որը հետզհետե կներթափանցի ամենուր, տառերը թույն են շնչում, եւ այն աննկատ ու համառորեն կրծում է ծանոթ առարկաները մեր աշխարհի, ահա կտեսնեք՝ այդ գոլորշիացումները կխեղեն մեր շինությունների կերպարանքը, այնպես որ՝ դրանք բարբարոսական տաճարների տեսք կառնեն՝ շողացող նողկալի գեղեցկությամբ, եւ ամենուր կփայլկտա մոռացված գեշ ոսկին: Թույնը կկրծի մեր խոսքերը եւ դրանք կվերածի ջունգլիների հիևավուրց սարսափազդու հնչյունների, քանդակների եսակենտրոն երաժշտության: Կյանքը կդառնա վատ գրանցված դեր՝ ջունգլիներում մահացող պարմանի աստծո մասին անհամ անվերջանալի բեմականացման մեջ:

Խոսելով, նա արմունկների վրա, ծածկոցի վրայով ավելի ու ավելի առաջ էր գալիս, նա համարյա թե պառկել էր դրա վրա: Ես խնդրեցի նրան պատմել, թե որտեղ է նա ծանոթացել առեղծվածային այբուբենին: Լարվածությունը փոքր-ինչ թողեց նրան, եւ նա թեթեւակի կողմ քաշվեց:

-Այդ զարհուրելի պատմությունը սկսվեց վաթսունական թվականներին: Այդ ժամանակ ես դասավանդում էի իրավաբանական ֆակուլտետում. դեռ ուսանելու ժամանակ ես շատ գիտական հոդվածներ էի հրապարակել, այնպես որ՝ բոլորն ինձ փայլուն կարիերա էին կանխատեսում: Ես փառավոր կին ունեի եւ երկու երեխա: Ես երբեք սիրավեպեր չէի սարքում, բայց մոտավորապես վաթսունականների կեսերին առաջին կուրսում հայտնվեց մի աղջիկ, որի հեզաբարո դեմքը ձգում էր ինձ անբացատրելի եւ հիվանդագին կերպով: Ինձ թվում էր, թե նրա ժեստերը ծնվել են ինչ-որ

անհայտ խորհրդավոր աշխարհում եւ այդպես է մինչեւ օրս եւ նրան չեն լքել:

-Իսկ այդ ի՞նչ աշխարհ էր,- հարցրեցի ես, որովհետեւ ինձ հետաքրքրում էին ժեստերից ծնվող աշխարհները:

-Դրանք վիթխարի դատարկ դահլիճներ էին, մարմարից սարքված: Մեզ կանանց մեջ միշտ գրավում են տարածությունները, որ ներծծվել են նրանց մարմինների մեջ, բնապատկերները, որոնցով նրանք սնվել են եւ որոնք հանդիպման պահին տարածում են նրանց շարժումները: Ախ, եթե ես իմանայի այն ժամանակ, թե ինչ մթին արքայություն են ինձ հմայում թեթեւ շարժումները սիրելի ձեռքերի: Ինձ թվում էր, թե նա էլ իրեն էր ինձ հետ լավ զգում: Մի անգամ մենք հանդիպեցինք Հին քաղաքում, ես նրան հրավիրեցի մի գավաթ գինի խմելու, հետո տուն ճանապարհեցի, մենք բարձրացանք չլուսավորված աստիճաններով նրա բնակարան: Նա ապրում էր Ներուդայի փողոցի վրա, այն տներից մեկում, որոնք աճում են կտրուկ լանջից եւ այցելուներին գրավում են այն բանով, որ կարելի է, բարձրանալով նեղլիկ սանդուղքով վերջին հարկ, քայլ անել դեպի ետնադուռը եւ կրկին հայտնվել հարթ գետնի վրա: Ես սկսեցի պարբերաբար լինել նրա մոտ: Ինձ զարմացնում էր, որ այդ աղջիկը մենակ էր ապրում մեծ բազմասենյակ բնակարանում, բայց նա երբեք իր մասին չէր պատմում՝ մենք ընդհանրապես քիչ էինք խոսում, մենք պարզապես պառկում էինք մթության մեջ եւ լսում էինք ձայները, որ հասնում էին փողոցից, եւ դիտում էինք դիմացի պալատի ճակատամասի վրայի քանդակները, որ երեւում էին պատուհանից: Իմ սիրեցյալի հպումները կրկին ու կրկին ստիպում էին մտածել անհայտ երկրի մասին, դրա խոտ ու տերեւների մասին, այնտեղի գազանիկների թաթիկների մասին...

Նա սսկվեց եւ կրկին շուրջբոլորը նայեց, բայց սրճարանում լոկ մի քանի թոշակառուներ եւ ուսանողներ էին, եւ ոչ մեկը մեզ վրա ուշադրություն չէր դարձնում. եւ այդուհանդերձ, նա ավելի մոտ շարժվեց ինձ եւ ձայնն իջեցրեց.

-Նախասենյակում ես ամեն անգամ շրջանցում էի սպիտակ գույնով ներկված փակ դուռը՝ դրա կողասյան վրա ինչ-որ մեկը մի քանի տարօրինակ տառ էր փորագրել: Դուռը բնակարանի այն կողմում էր, որ նայում էր բլրին... Չգիտես ինչու ինձ անհաղթարելիորեն ձգում էր դեպ այն, բայց ընկերուհիս ասաց, որ սպիտակ դռան ետեւում լոկ տարատեսակ հնոտիով մթերանոցն էր: Երբ մի անգամ նա կարճատեւ դուրս թռավ առեւտուր անելու, ես չդիմացա՝ կեռիկի վրայից հանեցի բանալիների կապուկը եւ փոր-

ձեցի գտնել սպիտակ դռանը համապատասխանողը: Մի քանի փորձ՝ եւ կողպեքը տրվեց...

Այդժամ մենք երկուսս էլ տեսանք, թե ինչպես է մեզ մոտ մանրաքայլում նեղլիկ ժիլետով սեղանապետը՝ մի ձեռքով նա արդեն հեռվից ձեռքով էր անում իմ զրուցակցին, իսկ մյուսով ականջին էր մոտեցնում պատկերելով, որ նրան հեռախոսի մոտ են խնդրում:

-Ոչ մեկը չգիտի, որ ես այստեղ եմ,- տագնապալից ասաց դեմառդեմ նստածս եւ ուղեւորվեց հանդերձարան:

Ես անհամբեր սպասում էի նրա վերադարձին եւ պատմության ավարտին: Պարապությունից նայում էի պատուհանից՝ քամի չկար եւ հատակին դանդաղ իջնում էին խոնավ ձյան խոշոր փաթիլները: Ես տեսա, թե ինչպես Լետենյան փողոցի շրջադարձից դուրս պրծավ կատարին բարձր ձյունե գխարկով կանաչ տրամվայը: Այն հանդարտ մոտեցավ կանգառին՝ սրճարանի պատուհանի առաջ եւ քարացավ: Տրամվայն այնպիսի տեսք ուներ, ինչպես եւ Պրահայի բոլոր տրամվայները, բայց այն ակնհայտորեն տաշել էին կանաչ մարմարի ամբողջական մեծաբեկորից. պատուհանները վագոնում մուգ անթափանց ապակուց էին: Տրամվայի առջեւի դռները բացվեցին, դրանցից դուրս թռան երկու տղամարդ՝ երկար գանգուր մորուքներով, մինչեւ կոճը ծանր ու գորշ վերարկուներով: Նրանց ձեռքերին հիվանդանոցային պատգարակներ էին. անծանոթները, կրծքերն առաջ մղած, վազում էին՝ ներդաշակ ինչ-որ երկար, ինչ-որ բալետային շարժումներ անելով: Նրանք այն է կորան սրճարանի դռան ետեւում, բայց մեկ էլ հանկարծ տեղնուտեղը նորից հայտնվեցին փողոցում, այդպես էլ չխախտելով իրենց համաչափ վարգը՝ պատգարակի վրա այժմ հանդարտում էր անկենդան մարմինը: Ինձ պետք չէր ավելի ուշադիր զննել, որպեսզի հասկանայի, թե դա ումն էր: Բավ է մի անգամ հետաքրքրասիրությունից նայել արգելված դենից անդին՝ մտածեցի ես, եւ այն, ինչ դուրս կգա այնտեղից, այդպես էլ կսողա քո ետքից բոլոր սրճարաններով, քեզ կպառկեցնի պատգարակի վրա եւ կվազի ետեւիցդ ձյունապատ հրապարակով՝ վաթսունական թվականներից մինչեւ այսօր: Բեռնակիրները նետվեցին տրամվայ, եւ դռները տեղնուտեղը փակվեցին: Տրամվայը տեղից շարժվեց եւ ակնթաթաբար անհետացավ:

Ես փողոց վազեցի, նետվեցի այն տաքսիներից մեկը, որ սպասում էին ուղեւորներին սրճարանի մոտի կայանում, եւ խնդրեցի քնատ, անտարբեր վարորդին հետեւել կանաչ տրամվային: Ձյունատեղումն ուժգնացավ, խիտ ձյան ահագին փաթիլները կպչում էին մեքենայի ճակատային ապակուն,

կիսակլոր լուսանցումներում, որոնք անդադար մաքրվում էին թրխկացող «հավաքարարներով», երեւում էր առեղծվածային տրամվայի ետնամասը, որը մեկ մոտենում, մեկ հեռանում էր: Սկզբում տրամվայն ընթանում էր սովորական երթուղիներով, բայց երբ մենք հայտնվեցինք արվարձանում, այն հանկարծ շրջվեց դեպի ամայի նրբանցքները, որտեղ տրամվայները երբեք չէին ընթանում՝ այն դանդաղ շարժվում էր երկար գործարանային պատերի, հոգնած տների ճակատամասերի երկայնքով՝ զարդարված երազկոտ կանացի դեմքերի պոկոտած ծեփածո պատկերներով: Պատշգամբիկներում բարձրանում էին հնոտիի, պոլիէթիլենով ծածկված, մթին կույտերը: Ես հիշեցի, որ երբեմն ծայրամասերում իմ երկարատեւ զբոսանքների ընթացքում ինչ-որ ռելսեր էի նկատում՝ անիմաստ գցված հեռավոր փողոցների ասֆալտի վրա, բայց երբեք չէի խորհրդածում դրանց մասին, ինձ թվում էր, թե դրանք լքված ապրանքաուղիներ են, որոնք մոռացել են հանել:

Վերջապես տրամվայը հայտնվեց կառուցված առանձնատներով թաղամասում՝ հենց բլրի ամենագագաթին՝ նա գնում էր խարխլված տների կողքով, կեցած ծյունապատ այգիների խորքում, որտեղ ցցված էին ջրի կաթսաները՝ փաթաթված փալասներով ու կապված առատուկներով, եւ ժանգոտում էին սառած ջրով կաթսաները: Ձյունն արդեն չէր տեղում, ամպերը արեւմուտքում ցրվել էին, պատերի ու ծառաբների վրա տարածվել էր երեկոյան արեւի թույլ լույսը: Տներն ու այգիները հանկարծ ավարտվեցին, վերջին ցանկապատերի երկայնքով ոլորվում էր ճանապարհը, իսկ դրա ետեւում սկսվում էր ծյունածածկ հարթավայրը՝ մինչեւ մթին անտառը ծգվող, որի ետեւում իջնում էր ալ կարմիր արեւը՝ նրա շողերը շամփրում էին հարթավայրի կուսական ծյունը: Դեպի դաշտ տանող փողոցի ամենածայրին կանգնած էր հնախարխուլ երկհարկանի մի տուն, դռան վերեւի պատի վրա կախված էր այրված ու կիսանջնջված «Ռեստորան» ցուցանակը, տան կույր կողապատը ելնում էր առ ծյունապատ հարթավայրը: Տրամվայը շրջանցեց ցուցանակով տունն ու ելավ ուղիղ սպիտակ խոպանի վրա, ծյունը ցայտեց բոլոր կողմերի վրա, ասես նավակ էին ջուր իջեցրել, եւ ծնային գեյզերը ներսից կարմիրով լուսավորվեց: Տրամվայը դանդաղ հեռանում էր դեպի անտառը եւ իր ետքից խորունկ ակոս էր թողնում՝ ստվերված սեւով, ասես ինչ-որ մեկը թափով խզմզել էր տուշով վարդագույն թղթի վրա: Ես տաքսիստին խցկեցի փողը եւ մեքենայից դուրս թռա: Ես փորձում էի վազել տրամվայի ետեւից, սակայն ծյունը մինչեւ ծնկներս էր, այնպես որ՝ դրան հասնելու հույսը մարեց: Այդժամ ես կանգ առա

եւ սկսեցի նայել, թե ինչպես է տրամվայը շրջվում մթին անտառ... եւ ահա արդեն ոչինչ չէր երեւում, բացի վարդագույն ծյունից ու անշարժ ծառերից, որոնք ինձ մոտ են ձգում իրենց ատամնավոր ստվերները, ես շրջվեցի եւ ետ գնացի ծյունածածկ դաշտով դեպի քաղաք, դեպի շլացուցիչ շողացող տները՝ պատուհանների վերջին արեւաշողերում. ճանապարհին ավտոբուս երեւաց, որ գալիս էր հորիզոնի ետեւի գյուղից, այգիներում հնչում էր շների հաչոցը:

Գլուխ 5
Այգիները

Քանի դեռ ես հասնում էի քաղաքի ծայրամասին, վերջալույսի արտացոլքը մարեց եւ ծյունը մգացավ: Ռեստորանիկում արդեն վառել էին լամպերը, լապտերը մուտքի վերեւում լուսավորում էր կեղտոտ ձնազանգվածը ցածր կառամուտքում: Ես ներս մտա, որպեսզի խեղդեմ դառնությունս խորհրդավոր տրամվայի ետքից անհաջող որսիս համար, եւ հայտնվեցի ընդարձակ, սաստիկ տաքացրած շինությունում: Մեջտեղում բիլիարդ էր դրած, որի կանաչ մահուդը կտրուկ առանձնանում էր ցածրամած մերկ լամպի լույսի ներքո: Սենյակի անկյունները կորչում էին կիսախավարում եւ ծխախոտի ծխի մեջ. տեղաշարժած սեղանների մոտ կուտակվել էին արձակված ֆլանելե շապիկներով մարդիկ, նրանց դեմքերը քրտինքից փայլում էին. նրանց գլխներից վեր, պատերին էին փակցված ֆուտբոլիստներով եւ ջրվեժի տակ կայտռող մերկ աղջիկներով վառ պլակատներ: Սթին որմնախորշում նարնջագույն լուսավորվում էր փակ վառարանի դռնակը, պատուհանի դժգույն կապույտը հատում էին այգու հյուսվող սեւ ճյուղերը, որ թաղվում էր վրա հասնող գիշերվա մեջ: Ես դժվարությամբ մի դատարկ տեղ խցկվեցի պատի մոտի երկար վաճառասեղանի կենտրոնի մոտի տեղում, գլուխս ետ տարա, հոգնած այն թաղեցի իմ ետեւում, պատի վրա կախված վերարկուների ճութերի մեջ, որոնցում հալչող ձյան տամկությունը առեղծվածային, թմրեցնող բույրեր էր արթնացնում, եւ սկսեցի լսել գարեջրատան հաճելի գվվոցը, որում միաձուլվում էին այցելուների ձայները: Միգամած անկյուններում, ասես կորսված թանկարժեք քարեր, շողում էին կանաչ լիկյորով ըմպանակները:

Մի կողմից ես սեղմված էի կլոր կարմիր դեմքով մի պնդակազմ տղամարդու արանքում, որը ոչ մեկի հետ չէր խոսում, այլ դանդաղորեն գարեջուր էր ըմպում եւ կարդում էր «Մեր նախապարտեզը» ամսագիրը: Երկրորդ գավաթը պարպելով, ես շրջվեցի նրա կողմն ու հարցրի՝ արդյո՞ք նա որեւէ բան գիտի կանաչ մարմարից առեղծվածային տրամվայի մասին: Տղամարդը լռեց եւ նույնիսկ չշարժվեց, ասես թե չէր լսել իմ հարցը: Բայց երբ ես արդեն հուսահատվել էի պատասխանի սպասելուց եւ դարձյալ անցա իմ գարեջրին, կարմրաթուշը մեկ էլ խոսեց, հայացքը հառելով կիսախավարի մեջ թաղված սենյակի մյուս կողմը.

-Այն հայտնվում է մեր թաղամասում գիշերը, կամ մառախուղի, կամ հողմամրրիկի ժամանակ: Նրանց, որ նստել են այն, այլեւս ոչ մեկը երբեք չի տեսել: Մի դարբասատակում ես մի ժամանակ, սվաղի վրա խզբզած մի մակագրություն կարդացի: Այն ազդարարում էր, որ այդ տրամվայի դեպոն գտնվում է Տիբեթի վանքի բակում, իսկ մեզ մոտ է գալիս անտառների եւ դաշտերի միջով անցնող գաղտնի ճանապարհներով: Գուցե եւ այդ ճիշտ է: Մի անգամ վարսավիրանոցում ոմն մեկը պատմում էր, որ վաղ ամառային առավոտյան նա անտառում սունկ էր հավաքում եւ հանկարծ նրա կողքին կամացուկ անցավ տրամվայը եւ անհետացավ մշուշում: Բայց կան եւ այնպիսիք, որ պնդում են, թե այդ տրամվայը Ատլանտյան օվկիանոսի հատակից է, որը երբեմն ինչ-որ անհայտ պատճառով ծգվում է դեպի գետաբերանները, շարժվում է դրանց հատակով հոսանքին հակառակ, իսկ երեկոները ցամաք է ելնում, դեգերում է հողի վրայով եւ ծայրամասային հին գործարանների եւ ֆուտբոլի դաշտերի փայտե ցանկապատերի կողքով հասնում է քաղաք: Ոչ մեկը չգիտի, թե ինչ է այդտեղ փնտրում, ինչպիսին է դրա կոչումը: Պատմում են, թե իբր վերականգնիչները ինչ-որ ռոտոնդայում, սվաղի շերտի տակ ռոմանական որմնանկար գտան, որտեղ իշխան Բրժետիսլավը պատկերված է ինչ-որ բանի ֆոնի վրա, որը զարմանալիորեն նման է կանաչ տրամվային...

Մեր սեղանին մոտեցավ սպորտային հագուստով գինովցած մի տղա եւ սկսեց իմ զրուցակցի հետ քննարկել մի պարկ ցեմենտ գնելը: Հետո տղան դիմեց ինձ՝ նրան թվաց, թե մենք հանդիպել էինք «Սպարտա» ստադիոնում: Հասկանալով, որ ես խոսակցության գլուխ չունեմ, նա ձեռքը թափահարեց եւ նստեց հարեւան սեղանի մոտ:

-Դրա ռելսերը գցված են այգիներում, պատնեշների երկայնությամբ աճող հոծ թփուտում: Գիշերը մենք լսում ենք մեր անկողիններում, թե ինչպես այգիների խորքից մոտենում է տնկտնկոցը, առաստաղի վրա առկայծում է արտացոլքը, շլացուցիչ լույսի մեջ դողում է պատի վրայի հրեշալիորեն վիթխարի վարագույրի ստվերը: Կանայք սարսափով ճանկում են մեր ձեռքերը: Բայց թեեւ մենք կեսօրին խուսափում ենք տրամվայի մասին խոսակցություններից, այն մշտապես կանգնած է մեր միջեւ որպես մթին ստվեր: Մենք վախենում ենք, որ հանկարծ երեխաները մեզ չհարցնեն դրա մասին...- Նա լռեց եւ կում արեց, ինձ թվում էր, թե նա խորհրդածում է՝ արդյոք շարունակի՞ պատմությունը: Հետո նա, այնդուհանդերձ, խոսեց.- Երբ մեր աղջիկը փոքր-ինչ մեծացավ, ես խնդրեցի կնոջս՝ խոսիր նրա հետ դեմ առ դեմ, պատմիր նրան ամեն ինչ կանաչ տրամվայի մասին: Նա դեռ

անփորձ է եւ կարող է հեշտությամբ ձախորդության մեջ ընկնել: Կինս քանիցս զրուցել էր աղջկաս հետ, բայց աղջիկս միայն ծիծաղում ու պնդում էր, թե մենք վախենալու բան չունենք, թե ինքը նրանցից չի, որ նստում է առաջին պատահած տրամվայը, դե այն էլ եւ կանաչ: Իսկ երբ մենք վերադառնում էինք նրա առաջին պարահանդեսից, մենք ստիպված եղանք ուշ գիշերով տրամվայի սպասել մթին կանգառում...- Նա կրկին լռեց, եւ ես չէի փութացնում նրան, որովհետեւ գլխի էի ընկնում, թե ինչ կհետեւի:- Տրամվայը հայտնվեց անսպասելի, այնքան դանդաղ էր շարժվում, որ մենք չնկատեցինք՝ ինչպես այն մոտեցավ: Մեր աղջիկը՝ կիսաքնած, պարահանդեսի մասին մտքերի մեջ թաղված, մտավ հենց իր առջեւ բացված դռնով: Երբ նա արդեն ներսում էր, ես նկատեցի, որ տրամվայն ինչ-որ տարօրինակ գույնի է, ճչացի ու նետվեցի դռների մոտ, որպեսզի վերադարձնեի աղջկաս, բայց դռները կայծակնորեն փակվեցին, եւ ձեռքս դեմ առավ պաղ անթափանց ապակու, եւ տրամվայը շարժվեց ու անհետացավ խավարում...

Մենք երկուսս էլ լռում էինք, ձայների թնդյունը սենյակում մեկ ուժգնանում, մեկ նվազում էր խորհրդավոր ծովի ալիքների նման:

-Դա պատահեց քսան տարի առաջ,- կամացուկ ասաց նա:- Այդ ժամանակից ի վեր մենք չենք հանդիպել մեր աղջկան, մենք միայն մի քանի անգամ տեսել ենք նրա դեմքը հայելու խորքում, մթին սենյակում, լսել ենք նրա ձայնը վառարանի գվվոցում: Սկզբում մենք երբեմն գտնում էինք արկղերի հատակին կամ գրքի էջերի արանքում նրա տխուր գրառումները, որոնց իմաստը քանի գնում, այնքան խուսավարում էին մեզնից, նա պատմում էր ընդարձակ դահլիճների միջով հոսող գետերի մասին, որոնցով լողում են բրոնզե առյուծներով լաստանավերը, անվերջանալի երկար սիմպոզիումների մասին՝ քարացած անտառներում, սրճարանների մասին, ուր մատուցողները դուրս են պրծնում հոծ մշուշից: Այն բանից, ինչ նա գրում էր, թվում էր, թե իբր նա ապրում է մի աշխարհում, որտեղ գործվածքների ծալքերն ավելի կարեւոր են, քան դեմքերը, եւ ունեն իրենց անունները, իսկ դեմքերի թավուտը լուծվում է անտարբերակելիության մեջ: Բառերը նրանց մոտ՝ աննշանակալից լրացում են աղմուկներին ու շրշյուններին, որոնցում էլ հենց բովանդակվում է հիմնական իմաստը: Երբեմն նրա նամակների տողերը հյուսվում, ծծանվում էին թղթի վրա եւ կրկին ոլորվում էին անհասկանալի գալարագծերի, որոնցում կռահվում էին անպարզ խոսքերի եւ պատկերների սկիզբերը: Նրա աշխարհը մեզ օտար է: Ամենից շատ աշխարհի երեսին ես երազում եմ գեթ մեկ անգամ տեսնել

նրան, բայց չգիտեմ՝ արդյոք մենք կկարողանա՞նք միմյանց հասկանալ, եթե հանդիպենք: Ես հաճախ եմ մտածում այն մասին, որ աշխարհը, որում նա ապրում է, կարող է լինել լրիվ մեր կողքին, կարող է նույնիսկ ծուլվել դրան, որովհետեւ այն տարածվում է այնտեղ, որտեղ մեր աշխարհում մենք տեսնում ենք լոկ դատարկությունը, իսկ այն, ինչ դատարկ է նրանց մոտ՝ լցված է մեր աշխարհով:

Նա լռեց, նայելով պլակատներով փակցված հանդիպակաց պատին, իսկ հետո հակվեց «Մեր նախապարտեզի» վրա: Մենք դեռ երկար նստել էինք իրար կողքի, նույնիսկ մի քանի գավաթ գարեջուր խմեցինք, բայց մեզնից եւ ոչ մեկը այլեւս խոսք իսկ չարտասանեց: Վերջապես մեր սեղանակիցները իմ զրուցակցին ներքաշեցին ինչ-որ թղթախաղի մեջ, իսկ ես վճարեցի ու հագնվեցի: Անցնելով պաղ միջանցքով, որի պատերի վրայի նախշը հիշեցնում էր չինացիների դեմքերը, ես ընկա մի փոքրիկ զուգարան: Այնտեղ լույս չկար, բաց լուսամուտի ետեւում տարածվում էր ծյունապատ այգին: Ինձ թվաց, թե դրա խորքից երկարաձիգ երգեցողություն է հասնում, այնպիսինը, որ ես լսել էի ստորգետնյա տաճարում: Ես հասա միջանցքի ծայրին, բացեցի դեպի այգի տանող դուռը, եւ ընկա խորունկ ձյան մեջ, որը կպել էր տան պատին: Սառնամանիքը գիշերային օձի պես սահեց թեւքերի ու անդրավարտիքիս միջով դեպի մերկ մաշկս: Ես ետեւիցս դուռը փակեցի՝ գարեջրատնից հասնող ձայները լռեցին: Իմ առջեւ մգանում էին ծյունապատ այգիները, սպիտակ ֆոնի վրա սեւին էին տալիս ծառերի ծռմռված բները, ճյուղերի արանքից, ասես շողացող պտուղներ, լուսավորում էին հեռավոր լապտերների կրակները: Հենց այգիների ընդերքից հասնում էր կամացուկ կախարդական երաժշտություն, եւ ես զգում էի, որ այն անհաղթահարելիորեն ձգում է ինձ: Ես գնացի այդ ձայների ուղղությամբ՝ անապակ ձյան վրայով դեպի մթին այգու խորքը: Ցարդված ցանկապատի ետեւում սկսվում էր հաջորդ այգին. գինովցած ես թափառում էի ծյունածածկ արահետներով, մերկ ծառերի արանքով, որոնց ճյուղերի վրա ինչ-որ տեղերում կախված էին փոքրիկ ճլորած խնձորներ, թափառում էի պարարտանյութերի, թեքված խորդանոցների, դատարկ ճագարանոցների, նորանոր ցանկապատերի կողքով: Արդյոք բների արանքում չի՞ պատահի առեղծվածային տրամվայը: Արդյոք թփերում չե՞ն շողա ադամանդները այգների Թագուհու ականախույրի վրա: Բայց քամու տակ տարուբերվող ճյուղերից բացի, շուրջս ոչինչ չէր շարժվում, լռությունը խախտում էր լոկ միապաղաղ երաժշտությունը, մեկ էլ երբեմն հնչում էր հեռավոր շան հաչոցը: Ես հասա կիսաքանդ տաղավարին

եւ հասկացա՝ այն, ինչ ես որպես եկեղեցական երգեցողություն էի ընդունում, ընդամենը գիշերային երաժշտություն էր, որը նվագում էր տաղավարի կտուրին քամու հոսքերի տակ տարուբերվող թիթեղի կիսանջատ կտորը: Ես գնացի ներս ու նստեցի: Հանած պատուհանների միջից տեսանելի էին սեւ ծառերը, ձյունը, հեռավոր կրակները, հնչում էր ննջեցնող երաժշտությունը, ինչպես ճյուղերի միահյուսվող ստվերները ձյան վրա, ինչպես խոնավության բծեր պատերի վրա, որոնց երկայնությամբ ես թափառում եմ միայնակ, ինչպես անհասկանալի տառեր-ոլորագծերը չարագույժ գրքերում: Տեր, դե, ո՞ւր եմ ես գնում, ինչու՞ չվերադառնամ, քանի դեռ ուշ չէ, առ այլ մարդիկ: Բայց այն, ինչ փչում էր ինձ վրա գիշերային այգիներից եւ մեր աշխարհի ծայրամասերից, արդեն պարուրել էր ինձ:

Ես գնացի առաջ, անցա ցանկապատերի մի քանի անցքերից, իսկ հետո տեսա, որ հերթական այգու պատնեշի ետեւում շողում են փողոցային կրակները, մագլցեցի փորագրովի ցանկապատի վրա եւ թռա մայթին: Շուտով արդեն ավտոբուսային կանգառում էի: Ավտոբուսի սպասման մեջ ես զբաղվում էի այն բանով, որ աղոտ լապտերի դալկամանուշակագույն լույսի ներքո խամրած թերթիկները, փակցրած ապակեպատ արկղի հատակին, որ կախված էր այգու ցանկապատի վրա, դա ցուցափեղկ էր, որոնց վրա սովորաբար տեղադրում են այգեպանների եւ տուրիստների՝ իրենց հասարակության հայտարարությունները: Թերթիկները շատ բաներ էին առաջարկում՝ ինչ-որ մեկը վաճառում է ելակի սածիլ, ինչ-որ մեկը՝ թախտ եւ հարսանեկան զգեստ, որը կարելի էր տեսնել հարսնացուի ճմռթած լուսանկարի վրա, ընդ որում՝ նրա գլուխը մկրատով կտրված էր: Ներքեւի անկյունում, թղթիկի կողքին, որի վրա մի վարպետ իր ծառայություններն էր առաջարկում սառնարանների վերանորոգման գծով, եւ հիշատակումով շների պարտադիր պատվաստման մասին, կախված էր մեքենագրված հայտարարությունը. «Վերջին տեղեկությունները սենյակներում Մեծ մարտի մասին», որ տեղի կունենան չորեքշաբթի գիշերվա երկուսն անց կեսին, փիլիսոփայական ֆակուլտետում: Ես լսեցի, թե ինչպես մոտեցավ ավտոբուսը եւ կամացուկ սվվոցով բացվեցին դռները՝ ես ներս մտա:

Գլուխ 6
Գիշերային դասախոսություն

Հաջորդ օրը հենց չորեքշաբթի էր, թեեւ ճշգրիտ ամսաթիվը հայտարարության մեջ չէր նշված, ես չէի համբերում ինչ-որ նոր բան լսել հազիվ իր ուրվագծերն ինձ ցույց տվող աշխարհի մասին, եւ ես որոշեցի գիշերով ուղեւորվել փիլիսոփայական ֆակուլտետ: Ես մոտենում էի Ստարոմեստյան հրապարակի կողմից, ձյունածածկ փողոցի դատարկ լռության մեջ ցածրաձայն բզզում էին ցերեկային լույսի լամպերը, ֆակուլտետի զանգվածեղ շինությունը մթին մեծաբեկորով բարձրանում էր տների շարքերի հենց ծայրին: Մոտենալով դրան, ես կանգ առա եւ վեր նայեցի, բայց պատուհաններում եւ ոչ մի լույս չտեսա, միայն վերին հարկերի ապակիների վրա ընկած էին փողոցային լապտերների արտացոլքերը: Գլխավոր մուտքը կամարաշարքի տակ բաց էր, ես մտա. դատարկ շինությունում մութ ու ցուրտ էր: Անցա ավագ պահակի խցի մոտով եւ ելա լայն աստիճաններով. ես քայլում էի միջանցքներով, որոնց պատուհանները դուրս էին նայում: Երբեմն քարանում էի տեղում եւ ունկ էի դնում, բայց շինությունում մեռյալ լռություն էր, միայն դռդռում էր առափով անցնող գիշերային տրամվայը: Ես բացում էի լսարանների դռները եւ ներս նայում, բայց ամենուր դատարկ ու մութ էր: Եւ ահա երրորդ հարկում, բացելով հերթական դուռը, ես տեսա պաղ տեղը՝ լուսավորված լոկ փողոցային լապտերի թույլ լույսով. սեղանների մոտ նստած էին վերարկուներով մարդիկ, ամբիոնից հնչում էր զեկուցողի միապաղաղ ձայնը, բայց նրա սուր մորուքով նիհարած դեմքի վրա ընկնում էր երերուն լույսի շերտը: Ես նստեցի դռան մոտի նստարանի ազատ տեղում:

Ահա թե ինչ ես լսեցի.

-Դեռ մի քանի տարի առաջ գիտական հասարակայնությունը համարյա միաձայն համակարծիք էր այն բանում, որ մեծ մարտը սենյակների խորքում չի կարելի պատմական իրադարձություն համարել: Հաստատվում էր, որ վկայություններն աղբյուրներում անարժանահավատ են եւ որոշ ծեսերի պատմականացման հետեւանք՝ կապված ի պատիվ խնայդրամարկղերից վիշապների արտաքսման աշնանային հանդիսությունների հետ: Նաեւ մշտապես շեշտվում էր, որ մարտում հիշատակություններ չկան հանրահայտ Առյուծային տարեգրության մեջ, որ գտնվել է, ինչպես

դուք գիտեք, անձրեւոտ մի օր՝ փաթաթված իգելիտե ժապավենի մեջ, մթին կուպեի նստատեղի վրա հենց այն պահին, երբ գնացքը կանգ էր առել ուղիների վրա, իսկ կուպեն Վշենարախի մոդեռն ոճի ամառանոցի վառ լուսավորված պատուհանի դիմաց էր, որի լույսն ընկնում էր մթին այգու շողշողուն թաց տերեւուտի վրա: Որքան էլ զարմանալի է, աղբյուրների նկատմամբ համանման հիպերքննադատականություն դրսեւորող գիտնականներին տարօրինակ չթվաց, որ ժամանակագրությունը գտնվեց հենց ամառանոցի առաջ, որի պատուհանից կարելի էր տեսնել պատից կախված մգացած նկարի անկյունը՝ անտառում պարող այծեմարդկանց պատկերով: Ոնց որ թե պատմաբաններից եւ ոչ մեկը չնկատեց, որ փոքրիկ առարկան՝ նկարված կեչու տակ խոտի վրա, շատ նման է բրնձե ցողունից խոզանակի, որ մինչեւ այսօր էլ օգտագործում են տաճար-բաղնիքում, որտեղ մի անգամ քահանան ասաց, դիմելով լոգարանների վրա քուլա-քուլա բարձրացող գոլորշու ամպերին, տառացիորեն հետեւյալը. «Հեռավոր քաղաքի խորտկարանում, կերակրատեսակների անվանումներով եւ գներով սեւ տախտակի վրա կավճով գրված է ծայրամասերի Տիրակալի վերջին կարգադրությունը՝ նախազգուշացում այն բանի դեմ, որ մեր տարածություն են արտաշնչում ծաղկամանների սեւացած ամփոփվածքները: Այդ շնչառությունը, ասում է ծայրամասերի Տիրակալը, կքայքայի հին համաստեղությունները: Մի մոռացեք նաեւ մեքենաների անհամբեր եւ արագաշարժ չանչերի մասին, որ դարանակալում են զոհերին Սմիխովի փողոցի երկար պատերի ետեւում: Նիրվանան չի փոխարինի համերգին մաքուր օդում»: Եւ դա կարեւոր չէ, որ նմանությունը գունավոր բծի խոզանակով նկարի վրա, ինչպես հետո պարզվեց, պատահական էր /իրականում այնտեղ շամպինյոն էր նկարված, իսկ գուցե դա ընդհանրապես լատեքսից մնացած հետք էր/: Հարկ է հիշատակել եւս ինչ-որ բանի մասին՝ F տառը, որից սկսվում է «այծեմարդ» բառը, այն մեր հարեւանների գրչության մեջ ունի ուղղահայաց ձողանի ձեւ՝ երկու զուգահեռ աստիճանիկներով, որ աճում են նա կենտրոնից եւ վերնամասից, այսինքն՝ ճշգրտորեն կրկնում է այն կառույցը քաղաքային ծայրամասում, որից ամեն երեկո անդադրում կեղծ-քաղաքագլուխը, կանգնած վարի աստիճանի վրա եւ դաշտային հեռադիտակն ուղղելով առ վերնամասը, զննում էր կանանց թափորը, որը պիտի ջանար քաղաք հասցնել սուտակե աչքերով արծաթյա գայլերին, որպեսզի նրանց տեղադրեր երկար գալարավարագույրներով ննջարաններում: Սակայն այն ժամանակ նա տեսնում էր միայն ավտոմեքենաների հեռավոր լույսը մայթին, այդ պաղ շողշողացող մանյակը: Մի՞թե

այս ամենը պատահականություն է: Իրավիճակը արմատապես փոխվեց, երբ եկավ պատմաբանների, պոզիտիվիստական նախապաշարմունքներով չծանրաբեռնված, երիտասարդ սերունդը: Նորագույն ուսումնասիրությունները, եւ հատկապես վերջին նշանակալից հայտնագործությունները շարժական արկղերի հնագիտության ոլորտում, միանշանակ վկայում են ոչ միայն այն բանի մասին, որ մարտն իրոք տեղի էր ունեցել, այլ նաեւ այն մասին, որ մարտը շարունակվում է մինչեւ այժմ: Ոսկե հուշարձանները դրա հերոսներին պատկերում են շողշողուն հայելու խորքում, սենյակի մութ անկյունում, երբ դրանց վրա է ընկնում դանդաղ պտտվող փարոսի շողը: Երբ բնակարանների բնակիչները գիշերը մթին միջանցքով զուգարան են գնում, նրանց ոտքը երբեմն դրվում է երերուն նավակամրջի վրա, քչերն են համարձակվում անցնել երերուն նավակամրջի վրայով առ խավար, թեեւ շատերը գիտեն, որ դրա վերջում նրանց կթույլատրվեր մոռանալ իրենց անուններն ու ճակատով հպվել խողովակների պաղ մետաղին, որոնցով դեպի ֆանտաստիկ առափնյա քաղաքներ է հոսում հուսահատ կենդանիների կաթը: Գիշերը մարդիկ նկատում են դիմակավորված հանդերձանքով կերպարանքը, որի վրայի բծերը պարսկական գորգի նախշեր են հիշեցնում. կարճ վազքով կերպարանքը հատում է ննջարանը, մահճակալի տակ գտնում է դաշտային հեռախոսների լարերը, իսկ սենյակի մութ անկյունում ձգվում է խրամատը, ընթրիքի ժամանակ դրա վրա փայլկտում են հետաքրքրասեր աչքերը: Ինչ-որ երեխա կասի. «Այնտեղ՝ անկյունում ինչ-որ բան կա, ես գնամ նայեմ», բայց ծնողները տեղնուտեղը կճչան նրա վրա. «Զգաստ նստիր եւ կեր»,-բոլորը վախենում են խոստովանել, որ անկյուններում պատերազմ է ընթանում, թեպետ եւ գլխի են ընկնում, որ իրենց բնակարանը գտնվում է մարտադաշտի մեջ, տնային ինտերիերների մոռացված Աուստերլիցում: Զինվորները վերծանում են պաստառները, հակառակ բոլոր համաձայնությունների՝ անողոք քերականական պատերազմ է ընթանում, թունավոր երաժշտությունը հնչում է գործնականորեն անդադար՝ լսելի են նույնիսկ սառցային ալտերը, որոնց կիրառումը խստիվ արգելված է մարդասիրական պայմանագրով: Վնասագործների խմբին հաջողվեց հակառակորդի առասպելների ժողովածուում ներբերել նոր պերսոնաժ՝ գլխի վրա եղջերվի պոզերով դեւին: Ոմանք հանդես եկան տարօրինակ առաջարկով՝ ազդարարել զինվորներին եւ շտաբին, թե ով է հակառակորդը, եւ ով՝ դաշնակիցը, բայց այդ նորամուծությունը քաջալերանքի չարժանացավ. ոմանք պնդում էին, թե իմանալ՝ ով է հակառակորդը, եւ ով՝ դաշնակիցը, անհնար է, իսկ մյուսները՝ որ

դրանց միջեւ տարբերություն չկա, եւ այդու իմանալու բան էլ չկա: Կամավորների դասակը զգուշորեն, էջ առ էջ, աչքի է անցկացնում հաստ հատորը եւ, այդուհանդերձ, շատ ուշ է նկատում բացիկը Զալցբուրգից, դրված երեք հարյուր քառասունվեց եւ երեք հարյուր քառասունութ էջերի արանքում. այնտեղ հաղորդվում է փուդինգների անտարբեր պաղության մասին, որով լիովին հաջող ավարտվում են, բաեբախտաբար, զբոսայգիներում ծնվող նոր աստվածության մասին ռեպորտաժ գրելու փորձերը: Ընկածները քնատ թափառում են պահարանների Էրեբով. երբ նախասենյակ կամ գիշերային լողափեր ներխուժում է պատահում, նրանցից որեւէ մեկը դարձյալ մարտի մեջ է մտնում, կրկին զոհվում եւ ընկնում է էլ ավելի հեռու անդրշիրիմյան աշխարհ, որտեղ անծայրածիր աղջամուղջային հարթավայրերում հուզվող խոտերի մեջ կեցած են ալաբաստրե գնացքաքարշերը: Զգեստապահարանների թմրեցնող ջունգլիներում ձգվում են դաժան ձեռնամարտերը, եւ ոչ մեկը չգիտի, թե որ համազգեստից հարված կհասցնի սրված շեղբը: Զինվորները, որոնք վերարկուների մեջ շատ ամիսներ են անցկացնում, ի վերջո հենց իրենք դառնում են ավելի վերարկուների նման, քան մարդկանց, եւ նրանց մտքերն ավելի կհարմարվեին վերարկուներին /օրինակ, նրանք ժամերով մտածում են քաղաքի մասին, որտեղ տները, հուշարձաններն ու փողոցային լապտերները զսպանակների վրա են, իսկ փողոցներով թափառում է մենավոր պոնին/, երբեմն պատահում է, որ բնակարանատերը ցրվածության պատճառով հագցնում է ինչ-որ զինվորի եւ նրա հետ փողոց է դուրս գալիս: Զինվորն իրեն վիրավորված է զգում եւ ուզում է կրակել, բայց նրա փափուկ հրացանից դուրս են ընկնում միայն փալասե գնդիկներ, որոնք գլորվում են մայթով, որտեղ դրանք կտցում են աղավնիները: Մասնագիտական հայացքով՝ ողբերգական սխալը ճանաչում է միայն հանդերձապահուհին սրճարանում. երբ կախ ընկած զինվորին դնում են նրա առաջ վաճառասեղանին, նա մեկից հասկանում է, թե դա ինչ բան է՝ դրան հարկ է անընդհատ տիրություն անել, նրան կախիչի համար մշտապես հանձնում են վերարկուի փոխարեն զինվորների եւ այլ էակների, որոնք ինչ-որ պատճառով, գուցե կրոնական, իսկ գուցե եւ գաստրոնոմիական /արբեցուցիչ քաղցր պտուղները՝ աշնանը հասունացող վերարկուների դարձածալերի վրա/, տեղափոխվել են պահարան եւ հետզհետե վերարկուացել են. նա գիտի, որ եթե պատահաբար սխալվի եւ անիսկական վերարկուն կեռիկից կախի, ապա դրա ազդեցության տակ կկենդանան եւ իսկական վերարկուները կսողան ողջ սրճարանով մեկ եւ փողոց դուրս կգան, հանդերձապահուհին ստիպված կլինի դրանք որսալ,

եւ նա արդեն ժամանակ չի ունենա էսսե գրելու իմացաբանական ավազաբլուրերի մասին, իսկ չէ՞ որ նա շատ խելացի կին է, նրա հետ խորհրդակցում էին այժմեականության հանրահայտ փիլիսոփաները, երբ չգիտեին, թե ինչ անեն. նա նրանց ասում էր. «Փիլիսոփայական գրքում մետաֆիզիկական տեսանկյունից ամենակարեւորը տառատեսակն է, որով տպված է գիրքը, տառերի հաստությունը կամ բարակությունը եւ դրանց հիմնածելը /դրանք այն ճիրաններն են, որոնք տառերը խրում են մեր աչքերի մեջ/ բովանդակում են տիեզերքի մասին գլխավոր իմացությունները», - եւ փիլիսոփաները ապշում էին նրա մտքերի խորությունից ու յուրօրինակությունից: Այժմ հանդերձապահուհիները գաղտնի փոխադրվել են Գրենլանդիա՝ հանդերձարանների մյուս ծայրին, որտեղ հենարանների վրայով թափառում են տների ներսում շատ ընկածներ,- դե, ուրեմն, հարգենք նրանց հիշատակն այսօր, Մեծ ձկնային տոնախմբության նախօրեին եւ ոչ հեռու այն տեղից, որտեղ այն պիտի տեղի ունենա, ինչպես որ մեզ մոտ ընդունված է:

Ունկնդիրները պայուսակներից հանեցին փայտե արկղիկները, դրեցին դրանք իրենց առջեւ սեղանների վրա եւ բացեցին կափարիչները: Ծրշյուն լսվեց, արկղիկներից գլուխները ցցեցին աքիսները, որ տոտիկնրով հենվեցին առաջնապատի ծայրին եւ սկսեցին ֆշշացնել: Մարդիկ զգաստ կանգնեցին: Ես նույնպես ելա: Թեեւ լսարանում կիսախավար էր, հարեւաններս արագ նկատեցին, որ ես առանց աքիսի եմ: Սենյակով մեկ վրդովված շշնջոց անցավ, եւ շուտով բոլորը միայն ինձ էին նայում: Ես դրեցի իմ պայուսակը սեղանի վրա եւ փորձեցի պատկերել աքիսով արկղի փնտրտուքները, բայց հետո գերադասեցի թռչել դռան մոտ եւ փախչել լսարանից: Ես սուրացի ողջ երկար միջանցքով եւ ետ նայեցի. տեսա, որ դուռը դարձյալ բացվեց եւ դրանից դուրս թռավ աքիսների ողջ ոհմակը եւ ընկավ իմ ետեւից: Ես վազում էի խավարի միջով եւ մեջքիս ետեւում լսում էի քար հատակի վրա բազում տոտիկների դոփյունը: Այ քեզ բան, մտածում էի ես, հինգ տարի ես քայլել եմ այս միջանցքներով, իմ վաղեմի համակուրսեցիներից ոմանք ցերեկն այստեղ դասավանդում են, իսկ գիշերը, ուրեմն, ինձ իրավունք ունեն հետապնդել տարատեսակ գազանիկները: Աստիճանների վրա ես պոկվեցի հետապնդումից եւ փողոց դուրս թռա, բայց չէի հասցրել անցնել կամարաշարը, երբ աքիսները ընդհանրական ջանքերով բացեցին դուռը եւ կրկին իմ ետեւեից ընկան: Ես վազում էի Կապրովյան փողոցով, եւ գրախանութի լուսավորված ցուցափեղկի առաջ, Ժիտեցկի փողոցի անկյունում աքիսները, ճարպիկ խուսավարում անելով, շրջապատե-

ցին ինձ: Նրանք չէին հարձակվում, բայց երբ ես փորձում էի ազատվել շրջափակումից, դրանցից որեւէ մեկը ցավոտ կծում էր ոտքս:

Համարյա տեղնուտեղը ֆակուլտետի շինությունից եւս երկու աքիս վազ տվեցին: Նրանք այնքան արագ չէին շարժվում, որովհետեւ նրանց վրա լծասարք էր դրված եւ իրենց ետեւից փոքրիկ սահնակներ էին քարշ տալիս, իսկ սահնակների վրա հեռուստացույց էր դրված՝ ամրակայված տեսախցիկով: Էկրանից ժպտում էր մարդը, որ հենց նոր դասախոսություն էր կարդում մթին ամբիոնից: Երբ սահնակները կանգ առան, նա քմծիծաղով ասաց.

-Հին ասացվածքն ասում է. «Թռչող տաճարում աքիս չես տապակի»: Եթե դու գեթ փոքր-ինչ խոհածեիր այս բառերի իմաստի մասին, ապա այժմ չէիր հայտնվի այսպիսի հիմար իրավիճակում, որը, հնարավոր է, ժամանակ անց որեւէ մեկին կոգեւորի քեզ պատկերող քանդակախումբ ստեղծել, նաեւ աքիսներին եւ հեռուստացույցով սահնակները, այդ անդրին կտեղադրեն օվկիանոսի վրայի ժայռի գլխին. հեռուստացույցի էկրանը, տասը մետր անկյունագծով, գիշերը փարոսի պես կլուսավորի հեռավոր նավերին, որոնց անձնախմբերն արդեն հիմնականում բաղկացած են ծովահրեշներից, որովհետեւ իսկական նավաստիներ գտնելն ավելի ու ավելի դժվարացել է, նրանք ոչ մի կերպ չեն կարողանում ընտելանալ այժմ մոդայիկ կանոնին՝ նավերը, իբր, պետք է չփնտրեն ծովը, այլ այն իրենց հետ վերցնեն: Նավաստիներից մեկը վերջերս ինձ մտերմիկ զրույցում ասաց. «Ես հիանալիորեն հասկանում եմ, որ անհարաժեշտ է քեզ ետ տանել քո այգիները՝ տաղավարներով եւ խիտ թփուտով, բայց տանել սեփական ծո՞վը: Այդ միեւնույն է, թե ուզենաս նախաճաշել մոնադոլոգիայով արդեն առավոտյան վեցին, երբ պատից անդին լսելի է, թե ինչպես են վերելակում միմյանց քսվում կանանց կոշտ թեւիկները»:

Այդժամ մեջքիս ետեւում հեւոց լսեցի: Ես շրջվեցի եւ տեսա, որ Ստարոմեստյան հրապարակում դեռ վազում են երկու աքիս՝ նրանք նույնպես իրենց ետեւից սահնակներ էին քարշ տալիս, որոնց վրա վեր էր թռչում տեսախցիկով հեռուստացույցը: Աքիսները վազեցին մեզ մոտ եւ այնքան կտրուկ, որ սահնակները ետեւից բախվեցին նրանց, եւ գազանիկները մռութներով դեմ առան ծյանը: Էկրանի վրա ուրիշ դեմք էր խոժոռվում՝ քահանան ստորգետնյա տաճարից: Հեռուստացույցները կեցած էին դեմ-դիմաց եւ լուսավորում էին կեղտոտ ծյունը: Քահանան դիմեց զեկուցողին.

-Ի՞նչ եք դուք ձեզուձեզ մտածում, հարգելիս: Բոլորը պատրաստվում են վաղվա հանդիսությանը, չգիտեն, թե ինչին ձեռք գցեն, իսկ դուք այս-

տեղ զվարճանո՞ւմ եք: Մեքենաները կրկին հաջողության մեջ են, վանականներին հասել է դոնդողն առանց որեւէ թիթեռի, գորգերի վրայով սողում են կրիաները աստվածազգիր մակագրություններով `ադամանդներով շարված նրանց պատյանների վրա, ոչ մեկը ժամանակ չգտավ ետ բերելու գիշերվա հրեշտակին, իսկ դուք այստեղ խորհրդածում եք նավաստիների եւ ծովահրեշների մասին: Ոնց որ թե դուք մոռացել եք այն ժամանակների մասին, երբ ինքներդ էիք ծովահրեշներ, ջրահեղձների ավազակախմբի գլուխը, եւ գիշերները առեւանգում էիք առափնյա կրպակները:

Բայց պատմաբանը չթողեց, որ իրեն խճճեն:

-Հաճելի է, որ դուք իմ մասին հիշեցիք,- թունոտ պատասխանեց նա,- թվում է՝ առաջին անգամ այն րոպեից, երբ ես փրկեցի ձեր կյանքը, երբ դուք ընկճախտի մեջ ուզում էիք բույսեր ուտել, որ աճել էին մոռացված ստեղնաշարում:

-Այդ ի՞նչ հիմարություններ եք դուք դուրս տալիս,- բորբոքվեց քահանան: - Ստեղնաշարը այդ ընթացքում վաղուց պաղել էր սառույցում, իսկ երաժշտությունը տարել էին գիշերն ու թռքերը եւ տարուբերվող վարագույրները:

Գլուխ 7
Տոնակատարություն

Հաջորդ գիշեր ես թափառում էի Հին քաղաքով, հուսալով ինչ-որ տեղ դեմ առնել տոնակատարությանը, որի պատճառով վիճեցին պատմաբանն ու քահանան հեռուստացույցների էկրաններին, լծված աքիսներով սահնակների վրա: Փարիզյան պողոտայով ես հասա Ստարոմեստյան հրապարակ: Այնտեղ ոչ մի լապտեր չէր վառվում, պատուհանները տներում մութ էին: Ես հատեցի հրապարակը. լռությունը խախտում էր լոկ ձյան խռթխռթոցը իմ կոշիկների տակ: Մոտենալով Տինյանի դպրոցին, ես տեսա, որ Ցելենտայի փողոցի ելանցքից ինչ-որ մեծ ու թափանցիկ բան երեւաց: Ես կողմ թռա եւ թաքնվեցի սյունաշարի անթափանց խավարում: Երբ այդ ինչ-որ բանը ցատկով առաջ շարժվեց, ես հասկացա, որ տեսնում եմ մեկն այն մեծ ապակյա քանդակներից, որ խաղաղ լուսավորվում էին ստորգետնյա տաճարի ժամատներում. քանդակախումբը պատկերում էր հերոսին՝ մի աղջկա հետ գրկված բարալիկ սյան կողքին, որին կապված էր կրիան, նրա պատյանից ցցված էին երկար սուր փշեր, իսկ դրանց վրա փակցված էր հարուստ հանդերձանքով տղամարդու մարմինը, նրա գլխից հատակին էր սահել թանկարժեք քարերով զարդարված թագը, որ ընկած էր հիմա անտարբեր կրիայի մռութի կողքին: Քանդակը կեցած էր մեծ սահնակի վրա. լուսավորվող ձկները, անհանգստացած թափահարումից, վախեցած դեսուդեն էին ընկնում մի ապակյա կերպարանքից դեպի մյուսը: Ծուտով հայտնվեցին եւ նրանք, որ հրում էին սահնակները. բոլոր այդ մարդկանց երեսներին սեւ դիմակներ էին՝ սրված, տարօրինակորեն ձգված եւ դեպի վեր կորված ծայրերով, արծաթյա փշերով եզերվող: Յուրաքանչյուրին գոտեւորում էին երկար կարմիր ծոպերով առատուկները, առջեւից հանգույցի ձգված. ամեն մի ծոպի ետեւում ասպազենք ու ծանր մուրճ էր խրված: Առաջին քանդակին հետեւում էր երկրորդը՝ տղամարդ պատկերող, որը կանգնել էր մի ծնկի իջած եւ զննում էր վիթխարի փայլկտող բյուրեղը: Երրորդ քանդակը արտացոլել էր մարտի դրամատիկական պահը՝ հակառակորդներից մեկը ընկել եւ սուրը վար էր նետել, իսկ երկրորդն այն է՝ պատրաստ էր նրան վերջին հարվածը հասցնելու, բայց այդտեղ մեջ ընկավ շան գլխով ինչ-որ տարօրինակ հրեշտակ, որը սրընթաց ընկավ վերից ու ատամներով կառչեց վեր բերած ձեռքին: Երբ սահնակնե-

որը շրջվում էին դեպի հրապարակ, հրեշտակի ապակյա թաթը դիպավ տան անկյունին եւ պայթեց, անցքից հորդեց ջրի շիթը՝ արագորեն սառցալեզվակի վերածված: Մեկը մյուսի ետքից հրապարակ ժամանեցին բոլոր տասներեք քանդակ-ակվարիումները, դիմակները դրանք հաստատեցին ծյունե շրջանում, Տինյան տաճարի եւ քաղաքապետարանի միջեւ: Փայլկտող մանր կենդանիները, որ լողում էին քանդակների ներսում, ծյան վրա էին նետում դժգույն տագնապալից ստվերներ, ծկնային ցոլքը դեսուդեն էր ընկնում նույնիսկ տների մթին ճակատամասերի վրա: Ցնորական շողացող ապակյա քանդակների շրջանի վրա հառնում էր քաղաքապետարանի մթին աշտարակը:

Դիմակների խումբը սկսեց ներկայացնել շրջանի կենտրոնում ինչ-որ երիտասարդ եւ դաժան աստծո տառապանքների, մահվան եւ հարության մասին միստերիան: Ես լիովին չէի հասկանում դերասանների հուզավառ ժեստերի իմաստը, բայց ինձ թվում էր, թե պիեսը պատմում է ջունգլիների միջով ճամփորդության մասին, աղմկոտ նավահանգիստներով եւ քնատ պալատական բակերով, միջօրյա կիզիչ արեւի տակ թափառման մասին, հուսահատության նոպաների մասին՝ երեկոյան այգիներում: Եւ ահա այն պահին, երբ առափնյա տաք մարմարի վրա, որի կողքին հանդարտ զրնգում էին թիանավերի շղթաները, սերտաճել էին վագրի քրքրած մարմնի կտորներն ու նախկինում խռով հոգին, խաղում էր աղվեսակիսամուշտակով կինը, որ վերադարձավ հանդերձյալ աշխարհից, հրապարակում սկսվեց համընդանուր ցնծությունը, դիմակավոր մարդիկ նետվեցին քանդակների վրա եւ սկսեցին դրանք մուրճերով ջարդել: Հորդեցին ջրի հոսքերը, ծյան վրա շաղվեցին ապակյա բեկորները խառնիխուռն ծկների եւ ծովային կենդանիների հետ: Նրանք սարսափահար գալարվում էին ծյան վրա, ջանալով փախչել, բայց սեւ դիմակներով կերպարանքները հանեցին աղեղնազենքերը եւ սկսեցին կրակել բարալիկ ամուր ճոպաններով, մետաղյա որսատեգերով դեսուդեն ընկնող մարմինների վրա, հրապարակի վրա տարածվում էին որսկանների ավյունալի ճիչերը, ծգված ու աղեղնակերպ ծռվող ճոպանների զնգոցը, եւ լսելի էր, թե ինչպես են թպրտում ծյան վրա ծկները: Թյունոսը խուճապի մեջ սողաց Գուսի հուշարձանի վրա եւ թաքնվեց քարե անդրիների արանքում, բայց եւ այնտեղ էլ նրան վրա հասավ որսատեգի սայրը: Ինչ-որ բծավոր ծուկ կողքիս ճիգով խցկվում էր ջրհորդանի մեջ, օգնելով իրեն լողաթեւերով: Որոշ կենդանիներ փորձելով փրկվել՝ թաղվում էին ծյան մեջ, ծյան միջից ֆանտաստիկ բույսերի տեսքով ցցվել էին տարուբերվող ծկնապոչերը, ութոտնուկների գա-

լարվող շոշափուկները եւ մեդուզաների թափանցիկ, հուզված ծոպերիզը: Որոշ տեղերում խորությունը խորհրդավոր լուսավորվում էր՝ այնտեղ դրա մեջ լողակների օգնությամբ թաղվել էին լուսատու ձկները: Մարդիկ կրակում էին ձյան վրայի լուսատու բծերի վրա. կրակոցից հետո լույսը մարում էր, ներքեւից ծորում էր մուգ արյունը: Ութոտնուկը մագլցել էր Կինսկիների պալատի ճակատամասով, շոշափուկներով կառչելով ռոկոկո ոճի նախշազարդերի կորվածքներից, այն արդեն կտուրին էր եւ բարձրանում էր լսողական պատի վրա, երբ նրա մարմինը շամփրեց որսատեգը՝ կենդանին կտրուկ թռավ կտուրից եւ ընկավ հրապարակի վրա, իսկ կտուրից նրա ետքից դեռ երկար տեղում էր ձյունը: Որոշ ձկների, այդուհանդերձ, հաջողվեց փրկել. ես տեսա մեծ շնաձկանը, որը շրջվեց դեպի Երկաթյա փողոցը,նա շարժվում էր ձյան վրայով՝ ինչպես թրթուր, մեկ կարճելով, մեկ շտկելով մարմինը: Վերջապես մահվան արյունալի պարն ավարտվեց: Դիմակավոր մարդիկ հավաքեցին սպանված ձկներին ցանցապարկերի մեջ եւ դրանց հետ գնացին Կապրի փողոցի կողմը:

Հրապարակը նորից դատարկվեց եւ թաղվեց լռության մեջ: Ես ելա սյունաշարից եւ սկսեցի թափառել արյամբ ներծծված ձյան վրայով: Մոտակայքում ինչ-որ շարժում նկատեցի՝ դատարկ հրապարակով ցնցված թափառում էր վիթխարի կատվաձուկը, նրա հարթ մարմինը ալիքաձեւ փոխադրվում էր ձյան վրայով, հողմապտտելով սպիտակ շատրվանները:

Արյան հետքերով գնացի տոնախմբության մասնակիցների ետեւից: Ձկնորսները գտնվեցին Մարիանյան հրապարակում, նրանք արդեն հանել էին դիմակներն ու կարմիր քուղերը, նրանց քիչ առաջվա հուզումը մեղմվել էր: Նրանք հանգիստ եւ կարգապահ կանգնել էին երկար ոլորուն հերթի մեջ եւ ձեռքերում պահել էին մեռյալ ձկներով ցանցապարկերը: Ի՞նչ էին նրանք սպասում՝ չէր երեւում. եւ այդուհանդերձ, կանգնեցի դանդաղ շարժվող հերթի պոչին: Այն, պարզվեց, դահուկաքարշի համար էր: Կլեմենտինումի պատին հենել էին տասնյակ զույգ դահուկ. յուրաքանչյուրը ստանում էր իր զույգը, հագնում էր, բռնվում էր ցցողից, որ ելնում էր նեղլիկ Սեմինարյան փողոցից, եւ անհետանում էր նրբանցքի մթին ելանցքում: Եւ ես, երբ հերթս հասավ, նույնպես դահուկները ամրացրեցի գոտիներով եւ բռնվեցի ցցողից: Պարանը ձգվեց եւ թափհար շարժվեց, դահուկները սահեցին կոկած դահուկարանի վրայով:

Ծուռտիկ Սեմինարյան փոքրիկ փողոցի կարճլիկ ու ծուռ եզրին ես անփութկոտ սահեցի երկու ներքնաբակերով /դահուկարանը անցնում էր այնքան մոտ ուսանողի հուշարձանից, ով պաշտպանում էր Պրահան

շվեդներից, որ ես ճանկռեցի դահուկի կողը քարե պատվանդանի վրա/ եւ բաց դռան միջով մտա Կրժիժովինյան հրապարակ, որտեղ ինձ շլացրեց ուշացած տաքսիի լուսարձակների լույսը. հնչեց արգելակների վնգվնգոցը: Հետո ցցողն ինձ քարշ տվեց կամրջաաշտարակի կամարների տակ, եւ ես հայտնվեցի Կարլովի կամրջի վրա. իմ նախորդների փռած հարթ դահուկարանով ես դանդաղ ընթանում էի ձյունապատ քանդակների կողքով: Պետրշինյան բլրի վրա մթին ծառերի միջեւ ճերմակին էր տալիս ձյունը, լուռ էր. ճիշտ է, երբ ես անցնում էի դահուկաքարշի թեթեւ, ձեռաց մոնտաժած կայմերի կողքով, գլխավերեւումս զրնգոց էր լսվում, կամացուկ ճռռում էին տարուբերվող դատարկ խարիսխները, որ դուրս էին լողում խավարից՝ ետ վերադառնալով: Դահուկաքարշը քարշ տվեց ինձ Մոստեցկի փողոցով, ես հատեցի դատարկ Մոլոստրանյան հրապարակը, ուր կայանել էին մուգ մեքենաներ, բարձրացա Ներուդայի փողոցով, շրջանցելով պալատների փակ դռները, շրջվեցի ետնաբակ. ես դանդաղ սահում էի նեղլիկ միջանցիկ բակերով, ծռելով աղբարկղերն ու ֆաներային արկղերի կույտերը, խարիսխն ինձ վեր էր քաշում պաղ ու մենավոր լամպով լուսավորված, խոնավություն հոտող տների աստիճաններով: Մթին ուղիներով ես ընկա նախասրահ, նախազգուշական ճչացի, առջեւումս անհստակ ուրվապատկեր տեսնելով, բայց դա հենց իմ արտացոլանքն էր կրկնակոշիկների վերեւի հայելում, ես անցնում էի ննջարանների միջով, որտեղ մահճակալների վրա քնած էին մարդիկ: Պատանին ու աղջիկը սեր էի անում լայն ու սպիտակ անկողնու վրա, աղջիկը շրշյուն լսեց, շրջվեց եւ լուռ նայում էր աչքերիս մեջ այնքան ժամանակ, մինչեւ որ ես անհետացա պահարանի ետեւում: Ես անցնում էի անձեռնմխելի բնակարանների միջով, իմացա, որ բնակարանները միակցված էին միմյանց գաղտնի արահետիկներով, թունելներով, առեւտրաուղիներով, ծածանվող տան խորքերում, որոնք մեզ չհաջողվեց գրավել եւ ներառել մեր աշխարհը, եւ այդու մենք գերադասեցինք ժխտել նրանց գոյությունը՝ բուրթ մեծամտությունը, որով մենք վերաբերվում ենք այդ խաղաղ վայրերին, դեռ չարակամ կարծագանքի մեզ, երբ լուսատու կենդանիները կքշեն մեզ բնակարաններից եւ մենք ստիպված կլինենք թափառել հենց այդ խորհրդավոր ճանապարհներով: Ես իմացա, որ բնակարանները շատ ավելին են, քան թվում է, որ բնակեցված ու ծանոթ տարածությունը սոսկ դրանց փոքր մասն է կազմում, որ բնակարաններում կան եւ խոնավ քարե սրահներ, որոնց պատերի վրա տրտմալի որմնանկարներ են, փարթամ բուսականության դրախտային բակեր եւ ներքնաբակեր, որոնց կենտրոնում վեր միտվող ցայտաղբյուրների պաղ

շիթերն են: Արգելյալ տեղերը միավորվում են բնակարանի բնակելի հատվածին՝ պահարանների անկյուններում տեղադրված անտեսանելի անցումներով, բայց հազվադեպ է որեւէ մեկն աչք ածում այնտեղ՝ թեպետ եւ մենք զգում ենք, որ մեր կյանքը փոխող եւ նորոգող որոշումները հասունացել են հենց այդ գաղտնի վայրերի շնչառության ազդեցության տակ:

Տան բաց դարպասների արանքով ես ելա բակերի ու միջանցքների լաբիրինթոսից եւ հայտնվեցի Պոգորժելցեի վրայի հրապարակի ներքնաձայրում: Այդտեղ ես կրկին տեսա տոնակատարության մասնակիցներին: Նրանք արդեն հասել էին դահուկներն ու խմբերով կանգնած էին թղթե բաժակներ ձեռքներին, որոնցից գոլորշի էր ելնում: Դահուկաքարշի ճոպանը կորչում է մեր ժամատանը, կեցած հրապարակի վերնամասում. ժամատան կողքին քամուց պղպջակվում էին մեծ վրանի սպիտակ քաթանե պատերը: Ցցօղն ինձ բերեց ժամատուն: Ներսից մթին, այն ավելի շուտ ապրանքավագոն էր հիշեցնում, դրա առաջ կամացուկ ու ռիթմիկ ճռռում էր դահուկաքարշի շրջադարձային անիվը: Ջոհարանը թույլ փայլկտում էր. ավելի մոտենալով, ես հայտնաբերեցի, որ այն ամբողջովին շաղված է ձկների մարմիններով, ձկներն այնքան շատ էին, որ դրանք ընկնում էին գետնին, մերթընդմերթ դրանցից որեւէ մեկը սկսում էր թպրտալ, բայց տեղնուտեղը դարձյալ քարանում էր: Հասնելով շրջադարձին, ես պոկվեցի կայմօղից եւ ժամատնից ելա:

Եւ տեղնուտեղը ինչ-որ մեկը թրմփացրեց ուսիս: Ծրջվելով, ես տեսա երկար ու գորշավուն վերարկուով բեղավոր մի մարդու. ես նրան ճանաչեցի՝ դա այն երկուսից մեկն էր՝ իմ զրուցակիցը, որին այն ժամանակ մալոստրանսկյան սրճարանից պատգարակով տարան եւ բեռնեցին մարմարյա տրամվայի մեջ: Նա այստեղ, հավանաբար, ամեն ինչին տնօրինում էր՝ նրա թեւքի վրա երախաբաց պիրանիայի պատկերով ժապավեն էր:

-Դե այս ինչո՞ւ եք դուք առանց ձկան եկել,- մռայլ հարեց նա:

Ինչո՞ւ են բոլորն ուզում, որպեսզի ես անպայման հետեւիցս ինչ-որ կենդանի քարշ տամ:

-Ավաղ, նախասրահներից մեկում ինձ վրա մի շուն հարձակվեց, ձեռքիս ձուկը թռցրեց ու փախավ,- պատասխանեցի ես:

-Դուք ստիպված կլինեք ինձ հետ գալ,- պաղ տոնայնությամբ պատասխանեց տամարդը: Նա ամուր բռնեց արմունկս եւ քարշ տվեց, խուսավարելով մարդկանց խմբերի արանքում, դեպի սպիտակ վրանը. ես անշնորհք քայլում էի նրա կողքից լանջնիվեր՝ անհնազանդ դահուկների վրա:

Վրանի մեջտեղում փայլկտող լամպը կտորե պատի վրա երկու ստվեր

էր ցուցադրում: Դրանցից մեկը հանգիստ նստած էր սեղանի մոտ եւ ինչ-որ բան էր գրում, իսկ երկրորդը, նկատելի սուր մորուքով, կանգնել էր այդ սեղանի մոտ, ժամանակ առ ժամանակ կռանում, պտտվում եւ գլխով էր անում: Բարալիկ կտավի արանքից լսվում էր նրանց զրույցը: Պտտվողն ու գլխով անողն ասում էր.

-Ներեցեք ինձ, ձերդ սրբազնություն, իմ վարքը սարսափելի էր, անպատասխանատու, անսերելի, ես հակաճառում էի ձեզ, տարատեսակ անհեթեթություններ էի պնդում, իբր թե փրկել եմ ձեր կյանքը. իհարկե, ես գիտեմ՝ որքան եմ ձեզ պարտական, չէ՞ որ, երբ ձեզ հետ ծանոթացա, ես սովորական ծովային սողուն էի եւ ցամաքի վրայի կյանքի մասին ընդհանրապես ոչինչ չգիտեի, ես հիմնականում խռիկներով էի մտածում, այլ ոչ թե գլխով շփվում էի ջրահեղձների եւ այլ խառնամբոխի հետ, եւ ինքս էլ ոչնչով ավելի լավը չէի. որտե՞ղ ես կլինեի հիմա, եթե չլինեիք դուք, այդ դուք ինձ դուրս քաշեցիք բարոյական ճահճից եւ ազատեցիք ջրիմուռներից...

-Լավ, լավ, այդ մասին հետո կխոսենք,- մոթմոթալով նրանից խույս էր տալիս նստած ստվերը:

Չար կարգադրիչը, բռնելով ինձ մի ձեռքով, մյուսով արձակեց կտրտած քաթանի ծայրի կոճակները /դրանք, սպիտակ թելերով կարած, կոճակներ էին բարձի երեսների եւ վերմակասավանների վրա/ եւ ինձ խցկեց վրան: Ես տեսա, որ սեղանի մոտ ծռմռվողը զեկուցողն էր փիլիսոփայության ֆակուլտետից, իսկ նստածը՝ քարոզիչը ստորգետնյա տաճարից, ով խոսում էր հրեշների վերադարձի մասին եւ պարսավում էր հեռուստացույցից զեկուցողին, փայլկտող Կապրի մթին փողոցի ձյան վրա:

-Դե, ի՞նչ կա էլի,- դժգոհ հարցրեց նստածը, երբ մենք ներս մտանք:- Դարձյալ ինչ-որ մեկը արգելված բայական ժամանակնե՞ր է օգտագործել: Ազատեք ինձ այդ հիմարություններից, դե, դուք գիտեք, որ բոլոր մնացած ժամանակները շուտով կթույլատրեն, համենայնդեպս՝ սպիտակ հրեշտակների եւ ջունգլիների ժամանակի համար ես բացարձակապես հանգիստ եմ: Չէ՞ որ այդ արգելքը լրիվ անհեթեթություն է. բոլորին վաղուց հասկանալի է, որ ցանկացած բայական վերջավորություն միանգամայն անվնաս է եւ ոչ մի ընդհանուր բան չունի չար երաժշտության հետ, որը փչացնում է շողացող մեքենաները:

Ինձ թվաց, թե ուղեկիցս, չգիտես ինչու, ամաչում է խոստովանել, թե ինչու է ինձ բերել:

-Նա...եկել է առանց ձկան,- ի վերջո կամացուկ արտաբերեց նա, աչքերը վար բերելով ու կարմրելով:

Պատմաբանը տատանվեց, եւ ստիպված եղավ հենվել սեղանի ծայրին: Նա ակնհայտորեն ճանաչեց ինձ, ես լսեցի նրա մորմոքուն շշնջոցը.

-Ոչ աքիս, ոչ ձուկ, ոչինչ, ընդհանրապես ոչինչ:- Ծշնջոցը վերածվեց կամացուկ հեծկլտոցի, դեմքը, ցավից խեղված, հետզհետե վերափոխվեց եւ սկսեց նմանվել ծովային կենդանու մռութի, որ նա եղել էր նախկինում՝ աչքերը բներից դուրս էին թռչել, կոպերը անշարժության մեջ քարացել էին, իսկ բերանը կլորացել էր, այնպես որ՝ շուտով ինձ թվում էր, թե ինչ մի մեծ ձուկ է նայում:

Փոխարենը նստած քահանայի վրա մեղադրանքն առանձնակի տպավորություն չգործեց: Նա միայն գրիչը մի կողմ դրեց եւ հետաքրքրությամբ ու չար քմծիծաղով սեւեռվեց ինձ վրա: Ես ափսոսացի, որ մանուշակագույն կազմով գիրքը չէի թողել բուկինիստական խանութի դարակի վրա: Կարգադրիչն ավելի ամաչեց, դողաց եւ սկսեց զննել իր կոշիկների ծայրերը: Զգալով, որ նրա բռնելածեւը թուլացավ, ես դուրս պրծա ու ելա վրանից, ես ոլոր-մոլոր ընթանում էի ձկնորսների խմբերի միջով եւ շուտով Ուվոզի պռնկին էի. սաստիկ կռանալով, ես սուրացի ներքեւ եւ, որպեսզի հետապնդման հետքը կորցնեմ, աջ թեքվեցի՝ դեպի Ստագովյան այգին, որտեղ իջա ծյունապատ լանջի զառիթափով: Խոտերի միջեւ կանգ առնելով, ես վեր նայեցի, բայց ոչ մեկին չնկատեցի, ոչինչ չէր խախտում գիշերվա լռությունը:

Գլուխ 8
Բիստրոն Պոգորժելցեի վրա

Արդյոք հնարավո՞ր է, որպեսզի մեզանից անմիջական հեռավորության վրա գոյեր մի աշխարհ՝ ապրող այնքան մոլեգին կյանքով, ծագած, հավանաբար, մինչեւ մեր քաղաքի հիմնադրումը, որի մասին մենք ոչինչ չգիտենք: Որքան շատ էի ես խորհրդածում, այնքան շատ էի ենթադրում, որ դա հնարավոր է, քանզի համապատասխանում է մեր կենսակերպին, համապատասխանում է այն բանին, որ մենք սահմանափակում ենք մեզ ինչ-որ շրջանով եւ վախենում ենք դրա սահմաններից դուրս գալ: Մեր մեջ սարսափ է հարուցում անհասկանալի երաժշտությունը, որ հասնում է սահմաններից, այն խախտում է մեր աշխարհակարգը, մենք վախենում ենք անկյունների կիսախավարից, մենք չգիտենք այդ ինչ է՝ մեր աշխարհի կոտրտված, քայքայվող ծեւերը կամ էլ նոր կենդանական աշխարհի սաղմերը, որոնք երբեւէ մեր քաղաքները կվերածեն որսորդական անդաստանների, հրեշների բանակի առաջատարի, որը հետզհետե կգրավի մեր տները: Այդ պատճառով մենք գերադասում ենք չնկատել այն, ինչ ծնվել է շրջանի սահմաններից դուրս, չլսել հնչյունները, որ հասնում են գիշերը պատերի ետեւից, մեզ համար իրական է լոկ այն, որ ներաճել է մեր աշխարհում, որ անխզելիորեն կապված է այլ առարկաների եւ իրադարձությունների հետ այն մի քանի պիեսներում, որոնք մենք միապաղաղ խաղարկում ենք եւ որոնց ներքին կապերը ենթադրում ենք՝ պատճառը, հիմքը, իմաստը. այդ պիեսները, մեր աշխարհի էությունն արարող, նվազ տարօրինակ եւ սարսափազդու չեն, քան ապակե քանդակներով գիշերային ֆերիաները, եւ եթե ինչ-որ մեկը նայում է դրանց մյուս կողմից, օրինակ՝ մեր գրապահարանի գրքերի լուսաշերտերի միջից, ապա երեւի թե նա ապրում է միեւնույն տագնապալից զարմանքը դյութիչ եւ ճնշող ծեսերի շղթան տեսնելիս, որը ես զգացի՝ դիտելով սյունաշարի մթության միջից ձկնային տոնախմբությունը. «Ի՜նչ սարսափելի հրեշներ են»,- շշնջում է նա, նայելով մեզ սարսափով եւ հենց իրեն անհասկանալի հիացմունքով: Ընդ որում՝ աշխարհը, որում մենք ներփակվել ենք, բավական նեղ է, իսկ ներսում տարածություններ են, որոնք մենք համարում ենք մերը, եւ կան տեղեր, որոնք մեզ ենթակա չեն՝ գազաններով բնակեցված որջեր, որ առաջացել են խավարում, մեր սահմաններից դուրս: Մեզ բոլորիս ծանոթ է

առանձնակի գլխապտույտը, որ վրա է հասնում իրերի շրջոնքին ու ներքին դատարկություններին հանդիպելիս, որոնք հրաժարվում են մասնակցել մեր ներկայացումներին, երբ սենյակը կարգի բերելու ժամանակ մենք մի կողմ ենք տանում պահարանն ու նայում դրա ետնապատի հեգնական-անտարբեր դեմքին՝ ուղղված դեպի ինչ-որ մթին սենյակների կողմը, որ արտացոլվում են նրա մակերեւույթին, երբ մենք պտտահանելով հեռուստացույցի ետեւի կափարիչը՝ մատով անցնում ենք լարերի հանգույցի վրայով, երբ մտնում ենք մահճակալի տակ, այնտեղ կորած մատիտի ետեւից եւ հանկարծ հայտնվում ենք խորհրդավոր քարանձավում, որի պատերը ծածկված են տարուբերվող փոշու քուլաներով, քարանձավում, որտեղ աստիճանաբար ինչ-որ անախորժություն է աճում, այն, որ երբեւէ անհունչ լույս աշխարհ կգա: Մեզ համար գոյություն ունի լոկ այն, ինչը կա մեր խաղարկվող պիեսում, զարմանալի չի, որ ոչինչ չգիտենք աշխարհի մասին, որը տարածվում է մեր պիեսների սահմաններից այն կողմ. հնարավոր է՝ մենք չէինք նկատի, եթե նույնիսկ այն իր տոնախմբությունները կատարեր մեր առօրյա իրարանցման մեջ:

Ես հիշեցի՝ ինչպես գիտաշխատողը համալսարանական գրադարանում պնդում էր ինչ-որ բան, որ ապրում է սահմանից անդին, ինչը մենք չենք կարող տեսնել, որովհետեւ ողջ գոյողն այնտեղ սնվում է իմաստի այլ աղբյուրից եւ այդու խուսափում է մեր հայացքից: Բայց ես ավելի ու ավելի եմ համոզվում այն բանում, որ այդ անտեսանելիությունը հետեւանքն է այն բանի, թե որքան անբասիր մեզ հաջողվեց ընտելացնել մեր հայացքը, եւ այն, թե ինչ պստլիկ փարախ մենք նրան հատկացրինք: Դաժանությունը, որով մենք վերաբերվում ենք մեր տեսադաշտին, ավելի վկայում է այն մասին, ինչ մենք գիտակցում ենք՝ մեր հայացքն աղոտ է ընկալում ծայրամասերի հրեշների խոսքերը, եւ մենք վախենում ենք՝ հանկարծ նա չհանդիպի ծանոթ հրեշների, նրանց հետ զրույցի չբռնվի եւ չհիշի իր հին ընկերությունը եւ մոռացված ընդհանրական լեզուն:

Հաջորդ օրն առավոտյան ես ուղեւորվեցի Պոգորժելեց՝ տեսնելու, թե ինչ հետքեր էին թողել գիշերային իրադարձությունները, բայց եւ ոչ մի վկայություն չգտա այն բանի, որ դեռ մի քանի ժամ առաջ այնտեղ ժամատուն էր, վրան եւ դահուկաքարշ, ես ոչինչ չգտա, ինչը չէր համապատասխանում ցերեկային աշխարհի միասնությանը: Փոքրիկ հրապարակն այդ ժամին դեռ դատարկ էր, զբոսաշրջիկները, որ շուտով կլցնեն այն, դեռեւս նախաճաշում էին քաղաքի ներքեւի հյուրանոցներում: Այստեղ փչում էր բարձունքների կտրուկ պաղ քամին, մենավոր մեքենաները ձյան կեղեւով

կտուրների վրա շրջապատված էին ծնաշերտի թմբերով: Մեծ պատուհանով բիստրոն արդեն բացել էին, ես տաք սուրճ ուզեցի եւ ներս մտա:

Ես հայտնվեցի նեղ, երկարավուն մի շինությունում. դրա առաջնամասը փափուկ լույսով էր ողողում պատուհանը, որ ելնում էր ծյունածածկ հրապարակի վրա, վաճառական. նակի վրա, կիսախավարում փայլում էին լոդափերով եւ քրտնած բաժակներով նկարները: Փոքրիկ սեղանի մոտ դեմդիմաց նստած էի երկու տարեց տիկին, որոնք ապրում էին ինչ-որ տեղ մոտակայքում եւ եկել էին այստեղ իրենց առավոտյան սուրճը խմելու: Ես նստեցի իմ սովորական տեղը սրճարանների եւ բիստրոների աշխարհում՝ պաղ նկարները ցուցադրող պատուհանի ապակու եւ սեղանիկի մոտ, որի մյուս կողմից ինձ էր նայում դատարկ աթոռը՝ ինչպես հանդարտ եւ խելացի գազան: Ես պատուհանից նայում էի հրապարակին, հանկարծ գլխավերեւումս տղամարդու ձայն հնչեց, որը հարցնում էր, թե ինչ եմ ես կամենում. մատուցողը մոտեցավ իմ սեղանիկին այնքան հանդարտ, որ նույնիսկ նրա քայլերը չլսեցի: Ես գլուխս շրջեցի եւ նայեցի մատուցողի հակված դեմքին, որ կանգնել էր իմ աթոռի կողքին: Ես տեսա, որ դա հենց այն մարդն է, որ ժամերգություն էր կատարում տաճարում եւ հայհոյանքներ տեղաց շարժական հեռուստացույցի պատմաբանի գլխին, հենց նա, որի մոտ ինձ բերեց հսկիչը, որովհետեւ ես ձուկ չունեի:

Ուրեմն ես զուր էի փախչում գիշերային պուրակների միջով, հետապնդողը կարող էր ինձ սպասել բիստրոյի հարմարավետության մեջ, քաղցր գունավոր լիկյորներ խմելով, իսկ ես, այդուհանդերձ, նրանից չխուսափեցի: Բայց մատուցող-քահանան չնետվեց ինձ վրա, նրա նախազգուշականությունը չանհետացավ, մարմինը, հակված սիրալիր կիսախոնարհման մեջ, չշտկվեց: Ծվարած՝ ես սուրճ պատվիրեցի, եւ մատուցողը գնաց վաճառականգնակի մոտ:

Սուրճն ինձ բերեց մուգ զգեստով փխրուն մի կին. երբ նա գավաթով մետաղյա սկուտեղը դնում էր սեղանի վրա, նրա երկար թեւքերով ձեռքերն ինձ գազանիկներ հիշեցրին, որոնք զգուշորեն ելել էին կեսօրվա լույսի տակ՝ պատրաստ առաջին իսկ կասկածելի շրշյունի դեպքում սրընթաց թաքնվել: Ես ինձ չզսպեցի եւ նրան հարցրի.

-Ձեր մատուցողը չի՞ տարվում գիշերային տոնախմբություններով:

Գավաթը սկուտեղի վրա, որը կինը դեռեւս ձեռքին էր բռնել, կամացուկ զրնգաց:

-Դա իմ ամուսինն է,- ասաց նա ճնշված ձայնով: Հայացք նետելով վաճառականգնակի կողմը եւ տեսնելով, որ մատուցողն անհետացել էր խո-

հանոցի դռների արանքում, նա խոսեց, եւ նրա ձայնի մեջ հնչեց վաղուց թաքնված սարսափը:

- Խնդրում եմ, ասացեք, թե որտեղ եք դուք տեսել ամուսնուս գիշերը:

Ես խնդրեցի նրան նստել իմ սեղանիկին մոտ, ազատ աթոռի վրա եւ նրան պատմեցի Պետրշինի տաճարի մասին, Կապրի փողոցի հեռուստացույցների եւ ձկնային տոնակատարության մասին: Ծրջվելով դեպի պատուհանը, նա նայում էր սպիտակ ձիուն, որով սուրում էին երկու ծիրանի գանգրամազ շուն:

-Ես չգիտեմ՝ ինչ անեմ,- ի վերջո ասաց նա:- Ամուսինս ինչ-որ անհայտ քաղաքի բնակիչ է: Նա ոչ մի անգամ ինձ այդ մասին չի պատմել, թեեւ մենք արդեն քսանվեց տարի միասին ենք: Նա այդ չի խոստովանում նույնիսկ ամենամտերմիկ պահերին, եւ ես ինքս էլ երբեք չեմ հարցրել: Բայց ես մշտապես գտնում եմ երկրորդ քաղաքի հետքերը կահույքի խորքերում՝ անողոք դեմքերով աստվածիկների մանրակերտ արձանիկներ, թռչնակերպ եւ կրիանման ինչ-որ պարագաներ՝ կարմիր, բզզացող ու թարթող տոտիկներով, որոնք նրանց մոտ աչքերի փոխարեն են, անծանոթ տառերով գրված գրքեր ծիածանային նկարազարդումներով, որոնց վրա տաճարներ են կուսական անտառում եւ վագրեր: Երբ ամուսինս գնում է երեկոները, ես գիտեմ, որ նա ինչ-որ տոնախմբության է գնում: Նրա քաղաքի մասին ես ոչինչ չգիտեմ: Այդ ի՞նչ է՝ որջերի լաբիրինթոս, ոսկեպատ, անսահման պալատ՝ տեղակայված բնակարանների միջեւ թաքուն տարածություններում, վաչկավրանների շրջանը, որոնք հայտնվում են գիշերը հարթավայրի վրա, կամ՝ կոլեկտիվ հալյուցինացիա՞: Ես նույնիսկ չգիտեմ՝ թագավո՞ր, թե՞ ծառա է ամուսինս իր քաղաքում: Կարծում եմ՝ նա ինչ-որ կարեւոր պաշտոն է զբաղեցնում, որովհետեւ ես մի քանի անգամ թերթեր էի գտել այլ քաղաքից՝ նրա լուսանկարներով: Ես դեռ երբեք չեմ եղել երկրորդ քաղաքում, թեպետ եւ կասկածում եմ, որ այն մոտ է, երկու քայլի վրա է, հենց պատի ետեւում: Երբեմն ես լսում եմ այդ քաղաքի ձայները գիշերային լռության մեջ, նրա ծառուղիների հեռավոր աղմուկը, զանգերի զնգոցը, բացօդյա համերգները: Ես կարծում եմ, որ ինչ-որ տեղ՝ այնտեղ, պատի ետեւում, տան անհայտ տարածություններում, կա ինչ-որ ծածուկ ծով, երբեմն լսելի են նավերի շչոցներն ու ժայռերին խփվող ալեբախության ձայնը:

Ես սուրճ էի խմում եւ լսում էի տխուր պատմությունը, երբ ձյունապատ մայթի վրա հայտնվեցին զբոսաշրջիկների առաջին խմբերը, մի քանի սեւ դիվանագիտական մեքենա հատեցին հրապարակն ու շրջվեցին դեպի արտաքին գործոց նախարարություն:

-Ողջ կյանքում ես երազել եմ իսկական տան մասին, բայց մինչեւ հիմա ապրում եմ ինչ-որ անհասկանալի տաճարի նախաշեմին, որի հոտերը ներթափանցում են կահույքի անցքերի մեջ եւ ներծծվում բոլոր առարկաների մեջ: Լինում են րոպեներ, երբ ես խորշում եմ դիպչել նույնիսկ ամենասովորական իրին, ինձ թվում է, թե այն մեզ է ժամանակավորապես տրամադրել ինչ-որ մեկն, ու թե մենք այն գործածում ենք ամենեւին ոչ այն բանի համար, ինչի համար նախատեսված է: Ես հուսով էի, հատկապես մեր աղջկա ծնվելուց հետո, թե ամուսինս կմոռանա երկրորդ քաղաքի մասին, թե նրա կյանքը հետզհետե կմիաձուլվի ընտանիքի կյանքին, թե նրա ընտանեկան վիճակը կդադարի լինել այն դերը, որը նա խաղում է այն բանից առաջ, երբ նա վերադառնում է իր տուն՝ պատի ետեւում...Բայց հետո ես հասկացա, որ ամուսնուս այլ քաղաքի հետ շատ ավելի ամուր մի բան է կապում, քան ընտանեկան կապերը: Ի վերջո ես հաշտվեցի մենության հետ, մխիթարվելով այն բանով, որ ես աղջիկ ունեմ, որը, բարեբախտաբար, ոչ մի ընդհանուր բան չունի երկրորդ քաղաքի հետ, որ ես գիտեմ նրա ողջ կյանքն ու հուսով եմ, որ նրա մեջ որեւէ թաքուն անկյուն չկա: Նա հիանալի է, մանկավարժական ֆակուլտետում չեխերեն եւ մարմնամարզություն է ուսումնասիրում, իսկ երբ ժամանակ է ունենում, ապա օգնում է մեզ սրճարանում...Բայց վերջին ժամանակներս վախն իմ կրկին կենդանացել է, ինձ թվում է՝ աղջիկս ու ամուսինս ինչ-որ առեղծվածային դավադրություն են նյութում, նրանք համարյա թե ողջ ժամանակը միասին են անցկացնում, համարյա անընդհատ ինչ-որ բան են քննարկում: Մի անգամ ես աղջկաս բռնացրի ինչ-որ անծանոթ տառերով գրված գրքով: Երեւի թե նա այն ինչ-որ տեղ գտել եւ պատահաբար բացել էր: Չէ՞ որ անհնար է, որպեսզի ինչ-որ մեկը, որ ծնվել է մեր աշխարհում եւ այստեղ ապրել է քսան տարի, այդպես անբռնազբոսորեն սահմանը հատի եւ դառնա այլ աշխարհի բնակիչ, սակայն վախն այժմ ինձ լիովին զրկել է քնից...

Խոհանոցի դուռը բացվեց, եւ այնտեղ հայտնվեց մատուցողը սկուտեղով, որի վրա ծեծած սերուցքով ձվածեղի երկու ափսե էր: Նա գնաց տարեց տիկնանց կողմը, բայց ինձ թվաց, թե նա դեռ դռների արանքում հպանցիկ մի հայացք նետեց դեպի իմ սեղանիկը: Նրա կինը տեղնուտեղը սսկվեց, ելավ ու զբաղվեց զվարթ եւ աղմկոտ խմբով, որը հենց նոր մտավ բիստրո: Ես փոքր-ինչ էլ նստեցի, բայց կինն այլեւս ինձ հետ չխոսեց, նա ինձ չէր նայում, նույնիսկ եթե ամուսինը խոհանոցում էր լինում: Մատուցողը պտտվում էր իմ սեղանիկի շուրջը, ներողություն էր խնդրում, որ բիստրոյում ցուրտ է, որովհետեւ կենտրոնացված ջեռուցումն այսպիսի սառնա-

մանիքին չի կարող տաքացնել շինությունը, ինձ ինչ-որ կրեմով մածուցիկ խմորեղեն պարտադրեց, որը գովաբանում էր՝ որպես իր հաստատության ֆիրմային կերակրատեսակը: Ի՞նչ գրված կլինի մեր դեմքերի վրա, եթե մենք կրկին հանդիպենք գիշերով: Ի՞նչ ճանապարհներով, ո՞ր պատերի երկայնքով նա ինձ կհետապնդի: Ի՞նչ պատիժ կնշանակի, երբ պահակախումբը դարձյալ ինձ նրա մոտ բերի:

Ես հաշիվը ցույց տվեցի, հենց նույն րոպեին դուռը բացվեց եւ բիստրո ներս թռավ սեւ ու ալիքաձեւ վարսերով մի արեւառ աղջիկ, խայտաբղետ սինթետիկ կոմբինեզոնով: Տեսնելով հաշիվը ձեռքիս, նա գոչեց.

-Ես ինքս այստեղ կհաշվեմ, մայրիկ, կարող ես չմոտենալ:

-Շնորհակալություն, Կլարա,- հասավ ետեւից:

Աղջիկը վերցրեց հաշիվը, երկար գումարում էր խմորեղենի եւ սուրճի գինը, սխալվեց, ծիծաղեց. ի վերջո նա, այդուհանդերձ, գլուխ հանեց եւ հաշիվը դրեց իմ առջեւ՝ սեղանիկի վրա: Թվերի աղյուսակի տակ խոշոր, փոքր-ինչ մանկական ձեռագրով գրված էր. «Եթե ուզում եք ինչ-որ բան իմանալ այլ քաղաքի մասին եւ ինչ-որ արտասովոր բան տեսնել, ապա եկեք այսօր գիշերվա ժամը երեքին Սուրբ Նիկոլայի տաճարի ժամատան պատկերասրահը՝ Փոքրիկ Երկրի վրա: Տաճարը բաց կլինի»: Ես քարացած դեմքով վճարեցի, աղջիկը զվարթ շնորհակալություն հայտնեց թեյավճարի համար եւ վազեց ծնողների մոտ: Ես ելա հրապարակ եւ ուղեւորվեցի ներքեւ՝ քաղաք:

Գլուխ 9
Աշտարակի վրա

Մոտ գիշերվա երեքին ես մտա Սուրբ Նիկոլայի տաճար, հատեցի մթին նավը եւ պտուտկածեւ սանդուղքով բարձրացա զանգակատան պատկերասրահ: Պատերի երկայնքով բարձրանում էին ձնաթմբերը, քարե բազրիքների վրա նստած էր կուսական ծյունը: Իմ առջեւ հառնում էր Քաղաքը, Սուրբ Վիտայի տաճարի կտուրի թեքությունները երփներփում էին դժգույն ֆանտաստիկ լույսով լիալուսնի շլացուցիչ շողանքի ներքո: Երկինքը շաղված էր վառ աստղերով: Հեռու ներքեւում ընկած է Մալոստրանյան հրապարակը: Դրա թեք զառիվերով տարածվում էր լապտերների կեղտաղեղին լույսը: Հրապարակի միջով անցավ տաքսին եւ կորավ Թոմաշյան փողոցում. այլեւս ոչինչ չէր խախտում դրա խաղաղությունը:

Մի րոպեից դեպի սանդուղք տանող դուռը բացվեց, եւ այնտեղ հայտնվեց բիստրոյի աղջիկը բմբուլե փափուկ անկողնով. բաճկոնն արձակված էր, դրա տակ սեւ սվիտերի վրա շողում էր սադափե մանյակը: Նա հենվել էր քարե եզրապատին, նրա մուգ վարսերի արանքում փայլում էին պետրշինյան հաղորդիչների կարմիր կրակները:

-Ներքեւում դարձյալ ինչ-որ տո՞ն է լինելու,- հարցրի ես:

Աղջիկը չպատասխանեց, նրա խորը ստվերներով դեմքը հոնքերի եւ այտոսկրերի տակ անվրդով էր մնում:

-Ձեզ համար չէր Դարգուզի մարմինը վագրը պատառոտել,- անսպասել քրթմնջաց նա գիշերային լռության մեջ՝ հաստատուն, արհամարհանքով լեցուն ձայնով:- Ձեզ համար չէր նա թափառում տենդի մեջ ամայի զբոսայգիներում եւ տաճարի հատակի երփներփող խճանկարի վրա երկար բանավեճեր վարում տաճարի դավադիր քահանաների հետ, որ ջանում էին հաղթել նրան, կիրառելով սիլոգիզմներ, որոնց միջին անդամն էին կույր ստորգետնյա նժույգների որջերը, եւ մշտապես շեղելով նրան, համերաշխորեն մատնացույց անելով դարչնագույն մումիաների տասհազարանոց զորքը ողողուն ոսկե ասպազենքով, որ հենց անցնում էր տաճարի բաց դարպասների մոտով, բարձրացնելով ճանապարհի փոշին: Ինչո՞ւ եք դուք ձեր քիթը խոթում մեր գործերի մեջ: Հիշեք, նա, ով սահմանն անցնի, կխճճվի փռված փշալարերի մեջ՝ ցցված իրերից, որոնք դուք ջարդված եք համարում եւ որոնք իրականում վերադարձել են իրենց նախնական տես-

քին, այն տեսքին, որով փորագրանկարել էին ապակյա աստղի մակերեսին՝ աստղաբույլի մեջ դեգերող: Նա, ով կուզենա ներթափանցել մեր քաղաք, երբեք չի վերադառնա, նրա դեմքը կանհետանա հին պատերի ճաքերի հյուսվածքում, ժեստերը կլուծվեն քամահալած թփուտի ճյուղերի տարուբերումներում: Մի կարծեք, թե ձեր հանդգնությունը կարող է վնասել մեզ: Բայց դուք համարձակվեցիք ներթափանցել մեր քաղաքի սահմանային ոլորտները, իսկ դա սրբապղծություն է նրանց հիշատակի վրա, որոնց պաղ կրակով աչքերի մեջ, հինգ հազար տարի առաջ տապալվեց թեւավոր շան անդրին հինավուրց անտառում, իսկ հետո, ինչպես պատահում է, ինքն էլ թեւավոր շուն դարձավ: Դուք ի՞նչ եք ուզում մեզ մոտ գտնել: Եթե նույնիսկ ձեզ հաջողվի մոտենալ շատրվաններին արքայական պալատի ներքնաբակերում եւ լսել դրանց աղմուկը, որոնց այդքան ուշադիր ունկ են դնում մեր փիլիսոփաները, եթե նույնիսկ դուք կարողանաք անցնել պալատական գրադարանի սրահներով եւ աչք նետել ծանր մատյանների վրա, որոնց մթին էջերի վրա այրվում են հրե տառերը, դուք, միեւնույն է, ոչինչ չեք հասկանա: Դե, որքան բութ ու ծանրամիտ եք դուք ձեր քաղաքում, դուք մոռացել եք ձեր նախալեզուն եւ կարծում եք, թե իբր այն, ինչ խոսվում է այդ լեզվով, համր է, դուք տեսնում եք ձեր աշխարհի սահմաններից դուրս լոկ քաոս, քայքայում եւ փտածություն: Դուք այնքան ջանադիր եւ ճշտապահ եք, դուք մշտապես ինչ-որ բան եք կառուցում, բայց ձեր բոլոր ճիգերը՝ լոկ կորսված սկզբի տենդագին փնտրտուք է, ձեր բոլոր կառույցները՝ ոսկե տաճարներ եւ պալատներ վերստեղծելու փորձեր են, որոնց անպարզ պատկերները հաստատուն դրոշմվել են ձեր հիշողության մեջ, բայց, ընդ որում՝ դուք վախով եւ նողկանքով խուսափում եք այն միակ տարածությունից, որտեղ կարող էիք հանդիպել ձեր որոնումների օբյեկտի կենդանի ու ճշմարիտ ժառանգորդներին՝ քամահրելի ծայրամասերում: Դուք գլխի չեք ընկնում՝ սարսափը, որ համակում է ձեզ ձեր աշխարհի սահմանագծին՝ քաղցրավետ վերադարձի նախագուշակն է, որ կործանումը կուսական մերձսահմանային անտառներում՝ հաղթական հարություն է: Եթե դուք նստեք կեղտահորի մեջ կամ ուղեւորվեք քաղաքից դուրս, աղբակույտի մոտ, որպեսզի մեդիտացիա անեք ձեւերի վրա, որոնք մերկանում են քայքայվող դիմակների տակ, ապա դա ձեզ կմոտեցներ ձեր ճամփորդության խորհրդավոր նպատակին շատ ավելի, քան ձեր մտահղացումների եւ դրանց իրականացման խառնաշփոթ պտույտը:

Ես ծիծաղեցի:

-Ինչո՞ւ եք դուք ասում «դուք» եւ «ձեր քաղաքը»: Ես գիտեմ, որ դուք

ինքներդ մեծացել եք մեր աշխարհում, դեռ մի տարի առաջ, հաստատ, չէիք էլ կասկածում ինչ-որ այլ քաղաքի մասին:

Աղջիկն ավելի մոտեցավ ինձ եւ ժպտաց:

-Ես խոստացել էի ձեզ ինչ-որ արտասովոր բան ցույց տալ:

Հանկարծ նա սեղմվեց իմ կողքին, ձեռքով վզիցս բռնեց, մյուս ձեռքը դրեց ուսիս, ինձ շրջեց դեպի այն կողմը, որտեղ պատկերասրահը կորչում էր սեւ ստվերում, եւ ականջիս շշնջաց, ցածրաձայն ծիծաղելով.

- Դա ա՛յ այնտեղ է, այնտեղ՝ մթության մեջ: Դե, գնացեք, հարկ է ընդամենը մի քանի քայլ անել: - Նա ինձ հրում էր մթության մեջ եւ անդադար քմծիծաղում էր: Կզակով ուսիս հենվելով, նա զվարթ ասում էր. - Դե, ի՞նչ: Հուսով եմ՝ դուք չեք վախենում: Չէ՞ որ դուք ուզում էիք ճանաչել մեր քաղաքը: Ոչինչ չես անի, էքսկուրսիան սկսվում է աշտարակում:

Ես իրոք սահմռկում էի նրա կամացուկ ծիծաղից, պատկերասրահի կորվածքի ականակուր խավարից, ինչ-որ սարսափելի բանի կանխազգացումից, որ սպասում է ինձ առջեւում: Բայց, այդուհանդերձ, ես ազատվեցի նրա գրկախառնումներից, ետ հրեցի նրան եւ ուղեւորվեցի դեպի լույսի եւ մութի միջեւ ընկած սահմանը: Ի վերջո, աղջիկը ճիշտ էր, չէ՞ որ ես իսկապես մտադիր էի ուսումնասիրել այլ քաղաքը: Իմ մեջքի ետեւում առաջվա պես հնչում էր կամացուկ ծիծաղը: Ես մոտեցա լուսնով լուսավորված այդ տեղի եւ անթափանց խավարի միջեւ ընկած տարածքին: Ինչ-որ բան ելավ մթության մեջ եւ նետվեց ինձ վրա: Ծանր, պաղ մարմինը՝ անձեռ ու անոտ, ինձ տապալեց ձյան վրա եւ իր ողջ զանգվածով խեղդում էր ինձ: Ես իմ գլխավերեւում տեսա շնածկան գլուխը՝ կողքերից փոքրիկ ոսկեգօծ աչքերով, բաց երախում, լուսնալույսի տակ շողացին ձյունափայլ ատամները: Ես զուր փորձում էի վրայիցս դեն նետել շնածկանը: Նա հափռեց իմ ուսից, բայց ես չկարողացա պրծնել նրա ատամներից եւ օձիքիս մի մասը կորցրի: Մենք լուռ մարտնչում էինք ձյան վրա, լուսնի շողանքը կուրացնում էր ինձ: Տներից մեկի ծածկապատշգամբում լույս վառվեց, ես տեսա, թե ինչպես ներքնաշորով մի մարդ, տառապելով անքնությունից, անցավ խոհանոց եւ ետ դարձավ. ես օգնություն էի կանչում, բայց ինձ ոչ ոք չէր լսում, շնածկնից եւ չար աղջկանից բացի: Մի րոպեից լույսը մարեց: Աղջիկը ոտնամատների ծայրերի վրա ավելի մոտ եկավ, հակվեց ինձ վրա այնպես, որ նրա մանյակը դիպավ ճակատիս, եւ խոսեց կամացուկ, քնեցնող ձայնով.

-Դու ողջ կյանքում նայում էիր աշխարհին պաղ ապակիների միջից, դու սիրում էիր սրճարանների եւ գնացքների պատուհանները, լեռնատնակ-

ների ապակեպատ ծածկապատշգամբները: Մենք քո մասին շատ բան գիտենք: Ապակիների ետեւում դու քեզ անվտանգության մեջ էիր զգում, դե, ինչու՞ դու թողեցիր քո կացարանը, ինչո՞ւ ուղեւորվեցիր ջունգլիներ: «Սլավիա»-ում հազվադեպ են այցելուների վրա շնածկներ հարձակվում: Դու ինչո՞ւ մենավոր գնացիր օտար քաղաք, որտեղ դու ոչ մեկին պետք չես: Հիմա շնածուկը կգլորի քո փրթած գլուխը ժամատան պատկերասրահով մեկ, իսկ երեխաները մեր դպրոցներում քո մասին ոտանավորներ եւ համրանքախաղեր կսովորեն:

Դարպասները բացվեցին, եւ այնտեղ երեւաց մատուցողը, աղջիկը դանդաղ շտկվեց եւ կողմ գնաց, որպեսզի նա կարողանար նայեր մենամարտը: Մատուցողը ժպտաց եւ գոհունակորեն գլխով արեց: Աղջիկը լքեց ինձ եւ մոտեցավ հորը, իսկ նա գրկեց նրան եւ այտը համբուրեց: Ես նայում էի նրանց ուրվապատկերներին, միմյանց փարված աստղալից երկնքի տակ: Ես ինքս ինձ երդվեցի, որ եթե ինձ ինչ-որ հրաշքով հաջողվի իջնել աշտարակից, ապա ես այլեւս երբեք չեմ թույլատրի համոզել ինձ կրեմով թխվածք վերցնել: Այնուհետեւ մատուցողը բռնեց աղջկա ձեռքը, եւ երկուսն էլ անհետացան դարպասների մթին արանքում: Ես մնացի քնած քաղաքի աշտարակում, մեն մենակ շնագայլի հետ:

Մենք դեռ երկար մարտնչում էինք ձյան վրա: Ինձ ոչ մի կերպ չէր հաջողվում շնածկանը վրայիցս վար նետել, եւ փորձում էի գոնե խանգարել նրան կծել ինձ: Բայց ես հետզհետե թուլանում էի: Կենդանին դա զգաց եւ ծառս եղավ, պատրաստվելով վերջին թռիչքին. այն պահին, երբ շնածուկն իր ուժեղ մարմինը խոյացրեց ինձ վրա եւ լայն բացեց երախը, որպեսզի այնտեղ տեղավորվի գլուխս, ես հավաքեցի ուժերիս մնացուկները, վեր թռա եւ հրեցի նրան. շնածկանը անհարմար էր պոչի վրա կանգնելը, այնպես որ՝ նա հավասարակշռությունը կորցրեց եւ բազրիքից այն կողմ ընկավ: Նրա մարմինը թռչում էր մթության մեջ, մինչեւ որ խրվեց երկար երկաթյա խաչի վրա, տաճարի քիվի վրայի քարե կերպարանքներից մեկի ձեռքին: Ես տեսնում էի, թե ինչպես էր գալարվում շնածուկը մերձիմահ ջղակծկումներում եւ ավելի ու ավելի խորը խրվում խաչի մետաղի վրա: Ծուտով ջղակծկումները դադարեցին, շնածկան ծռված մարմինը կախվեց խաչի վրա, ինչպես գիշերային ջահ: Օրորվելով, ես սանդուղքով իջա տաճար, փլվեցի պաղ հատակին, սյուներից մեկի խարսխի մոտ, եւ տեղնուտեղը ննջեցի:

Գլուխ 10
Ապակիների պաղությունը

Առավոտյան ինձ արթնացրին զբոսաշրջիկների ձայները, ես խառնվեցի նրանց եւ աննկատ ելա տաճարից: Փողոցում սառնամանիք էր, երկինքը փայլում էր վառ կապույտով: Սայթերն ու խանութների ցուցափեղկերը դեռ գտնվում էին կիսախավարում, սակայն տների վերնահարկերն ու ձյունածածկ կտուրները լուսավորում էր ելնող արեւը: Ես անցա տաճարի պատի երկայնքով դեպի հրապարակի ներքեւի մասը եւ նայեցի վեր՝ հետիոտների գլխավերեւում, արեւի շողերի տակ երեւում էր, խաչի վրա հագցրած, շնածկան մարմինը: Հրապարակում քայլող մարդկանցից եւ ոչ մեկը չէր նկատում մեռած շնածկանը՝ դե, իհարկե, չէ՞ որ բարձունքները նույնպես մենք բացառել էինք մեր տարածությունից, ինչպես եւ մթին ծայրամասերը: Մենք ի՞նչ գիտենք ճակատամասերի խորհրդավոր աշխարհների մասին, որոնք լողում են մեր գլխավերեւում՝ ինչպես ցնորական կղզիներ: Եթե կտուրների վրա աճեր քաղաք ոսկուց, տաճարներով եւ պալատներով, ո՞վ այդ կնկատեր: Գուցե թե ինչ-որ երեխա, նա, որ դեռ ոտք չէր դրել գիտակցվածի նեղ միջանցք, որով մենք, լուսնոտի պես, թափառում ենք մեր պատկերների որոնումներում, կամ պարտվածը, որովհետեւ անհետանում էր նրա վերջին նպատակը, որի ձգողականությունն ավելի ու ավելի երկարացնում էր այդ միջանցքը. նա, ով աննպատակ թափառում է շողացող նորոգված աշխարհով, որ բացվել է նրան վերջնական պարտությունից հետո, գուցե թե պատահաբար նկատի, որ տան ճակատամասերը գրքի էջեր են, որոնց վրա հեռացած աստվածները մեզ թողել են իրենց ուղերձը, հենց այն, որ մենք զուր փնտրում էինք ողջ կյանքում:

Ես որոշեցի նախաճաշել «Բերդապարսպի մոտ» կաթնաբարում: Նստեցի բարձր աթոռակի վրա եւ սկսեցի կտրատել ջեմով բլինչիկը: Գլխիցս դուրս չէին գալիս Կլարայի խոսքերը ապակիների մասին, ասված ինձ աշտարակի գլխին: Ես չէի կարողանում լիովին համաձայնվել նրա հետ, ափսոս, որ պատկերասրահում այն ժամանակ համապատասխան իրավիճակ չէր զրույցի համար: Ես նայում էի՝ ինչպես է բլինչիկը տրորվում դանակի սայրի տակ, եւ ինչպես, ընդ որում՝ դրա պարուրածեւ անցքերից, վեր տնկված երկու ծայրերին սեղմվում ջեմը եւ հոծ կաթիլներով կաթում ափսեի վրա, եւ փորձում էի ձեւակերպել այն, ինչն ավելի բարենպաստ պայման-

ներում կպատասխանեի աղջկան՝ հումորը սանդուղքի վրա ընտել բան էր ծովային հրեշների դեմ մալոստրանյան մենամարտերում. «Ես գիտեմ, թե ինչ բան է վախը հանդիպումից առաջ, որն ուղեկցում է մեզ ողջ կյանքում: Ցանկացած իսկական հանդիպում կործանում է առօրեականությունը: Այն, ինչ տեղի է ունենում մեր աշխարհի սահմանների պատճառով եւ կործանում է այն, մենք հրեշավոր ենք համարում. ցանկացած ճշմարիտ հանդիպում՝ հանդիպում է հրեշի հետ: Բայց ենթադրությունն առ այն, որ պատուհանի ապակիները ապաստարանի պատեր են, որտեղ կարելի է փրկվել վտագավոր հանդիպումից, հրեշներից, սխալ է: Ըստ իս, հենց շարունակ հետամտող մոտիկությունն իշխող առօրյա կյանքում անհնարին է դարձնում հանդիպումը եւ իրենով փակում է այն սարսափելին, որը շրջում է մեր աշխարհը, հրաշալի փրկություն բերելով: Ստերմության տարածությունը բեմ է, որտեղ մենք տեսնում ենք լոկ դերերն ու դիմակները պիեսի, որը մենք ինքներս էլ խաղարկում ենք: Պաղ ապակիները ջարդում են մտերմության տարածությունը, պոկոտում նպատակների դիմակը, սարդոստայնը, որի ետեւում իրականությունը չի երեւում: Միայն ապակու ետեւից ենք մենք իսկապես տեսնում՝ անիրական են ժեստերի աննահանջ ալիքները, որոնցից ծնվում են գոյության գաղտնի գետերը, հագուստի ծալքերի փոփոխական հիասքանչ գիրը, որի իմաստին մենք հասու ենք լինում, գույների շլացուցիչ շողանքը, որ հուրհրատում է իրերի ներսում: Հանդիպումը հնարավոր է լոկ այն բանի հետ, ինչը մենք իսկապես տեսել ենք: Նա, ով նստում է պաղ ապակիների ետեւում եւ զննում է, ապաստան չի փնտրում, ընդհակառակը՝ ցուցադրում է, թե հանդիպումից չի սարսափում: Միայն ապակու ետեւում, ազատ ողջ գոյողը կեղծ ու տաղտկալի դերերից, մեզ է ներկայանում սարսափազդու, շողացող տիեզերքը՝ դժնդակ քունն ու սրտահաճո հարազատ տունը»: Այդ պատճառով ինձ թվում էր, թե մատուցողի աղջիկն անիրավացիորեն հակադրել էր իմ կյանքը ապակիների ետեւում ճամփորդությանն այլ քաղաք: Հենց ապակու միջից հայացքի դեպքում մենք դադարում ենք իրականությունը բաժանել կենտրոնի ու ծայրամասերի եւ զգում ենք այն սարսափելի ու միաժամանակ ձգող բանը ճանաչելու անհաղթահարելի ցանկությունը, ինչն անպարզ երեւին է տալիս սահմանին, եւ թվում է, թե նստելն ապակու ետեւում՝ այլ աշխարհ ճամփորդության սկիզբն է:

Կանգնակի տակ, դարակի վրա ընկած էր ինչ-որ մեկի մոռացած ճմռթած թերթը. ես նկատեցի, որ այն շարված է նույն տառերով, ինչ եւ Կարլովի փողոցի վրայի բուկինիստական խանութի գիրքը: Բացելով այն, ես

տեսա առաջին էջին մեծ խորագրի տակ մի լուսանկար, որ պատկերում էր մարտը շնածկան դեմ՝ աշտարակի գլխին: Անշուշտ, ես չէի հասկանում՝ ինչ է գրված հոդվածում, բայց ինձ ապշեցրեց յուղոտ տառատեսակով տպված բառերի եւ նախադասությունների բազմությունը՝ թվում էր, թե տպագրական ձեւավորումը մատնում է հոդվածի հեղինակի հուզումն ու վրդովմունքը: Ես պատրանքներ չէի փայփայում, որ խուլ ատելության առարկան, տարածվող նույնիսկ տպատառի վրա, կլինի մատուցողը, նրա աղջիկն ու շնածուկը: Թվում էր, թե ինչ-որ ուժ, չսպասելով, որպեսզի պատառոտի ինձ, թղթի վրա էր տպել այդ յուղոտ տառերը: Ես բլինչիկս կերա, ծալեցի թերթն ու խոթեցի այն գրպանս: Ես կամեցա մտնել Պոգորելժեցեի վրայի բիստրոն՝ հետաքրքիր է, ինչպես իրեն կպահի մատուցողը, ինձ ողջ տեսնելով: Գուցե այնտեղ կլինի եւ Կլարան՝ մենք կարող էինք զրուցել ապակիների մետաֆիզիկայի մասին:

Ես դանդաղ բարձրանում էի Ներուդայի փողոցով. տներն ավարտվեցին, եւ ձախ կողմումս բացվեց Ստրագովսկյան այգու ձյունապատ ծորակը, այն շողում էր արեւի տակ այնպես, ինչպես եթե երկրում արթնանար մարած ճերմակ լույսը: Հանգիստ, ինչպես ձյուների հանդարտ երազներ, փայլկտում էին տնակները, որոնց օգնությամբ քաղաքը, իջնելով զառիթափով, ներթափանցել էր այգիների աշխարհ. քաղաքի գբոսայգիների սահմանի վրա, մի ժամանակ տագնապալից եւ սարսափ ներշնչող, տարածվել էր հանդարտ զինադադարը: Բլրի վրա երեխաները սահնակ էին քշում, սառցակալած օդում հստակ լսվում էին նրանց հեռավոր ձայները: Արեւի տակ փայլում էին վանքապատկան տաճարի կտուրները, ներքեւում՝ խորքում, մգանում էր հոծ թփուտը: Ձյուղերից կամացուկ թափվում էր ձյունը:

Ծողացող ձնից կուրացած, ես շոշափելով մտա բիստրոյի խավարի մեջ եւ նստեցի պատուհանի մոտ: Հետզհետե շինության խորքում երեւացին ուրվապատկերները, ես տեսա, որ վաճառականգնակի ետեւում կանգնած էին մատուցողն ու իր աղջիկը: Մատուցողը տեղնուտեղը ցատկեց ինձ մոտ եւ հարցրեց՝ արդյո՞ք ես սուրճ ցանկանում եմ, ինչպես երեկ: Նա բնավ զարմացած կամ ապշած չէր թվում: Սուրճն ինձ բերեց Կլարան՝ աշտարակների եւ շնածկների տիրուհին. նրա վրա միեւնույն սվիտերն էր, ինչ եւ գիշերը, բայց ծիածանագույն մանյակը նա հանել էր. նա նույնպիսի զվարթ ու անհոգ տեսք ուներ, ինչպես եւ մեր առաջին հանդիպման ժամանակ: Գիշերվա մարտի մասին ոչ մի խոսք չասվեց: Երբ մոտեցավ մատուցողը եւ խոսք բացեց կրեմով խմորեղենի մասին, ես հիշեցի իմ երդման

մասին եւ հրաժարվեցի, սակայն զգացի, որ ինձ դուր է գալիս նրբանկատությունը, որը խանգարում է հորն ու աղջկան խոսել գիշերային արկածների մասին: Հնարավոր է՝ դա միայն սկիզբն է, հնարավոր է՝ նրանք նոր զարմանալի հետապնդում են կազմակերպում, հնարավոր է՝ այդ զույգը գիշատիչ ձկների կույտի գլխին ամեն գիշեր կհետապնդի ինձ զանգակատների եւ ծյունածածկ տների կտուրներին, իսկ առավոտյան սիրալիր ժպիտով նախաճաշ կբերի: Գուցե թե, նրանց քաղաքի թերթերում մեր մասին ոչ թե առանձին հոդվածներ կտպագրեն, այլ մի ամբողջ սերիալ կնկարահանեն, շարունակելի կոմիքս, որում մատուցողը Կլարայի հետ ինձ կքշեն նկարից նկար: Ինձ հանկարծ թվաց, թե գիշերային մարտերը ցերեկվա լույսին բերելն անդաստիարակության եւ ճաշակի բացակայության դրսեւորում է, եւ ինձ համակեց երախտագիտությունը նրանց լռության համար: Ես նույնիսկ կրեմով խմորեղեն պատվիրեցի: Այդուհանդերձ, ես ուշադիր երկու կողմից ուսումնասիրեցի հաշիվը, որն ինձ տվեց Կլարան: Այնտեղ միայն թվեր էին:

-Ինչ-որ սխալ կա՞,- հարցրեց նա, երբ ես սեւեռվեցի թղթիկի վրա:- Ես հաշվից ուժեղ չեմ:

Ես պատասխանեցի, որ ամեն բան կարգին է, հանեցի գրպանիցս՝ նրա շնածկան ատամներով ճղճղված դրամապանակս եւ վճարեցի: Պատուհանի ետեւում նույնքան շլացուցիչ փայլում էր ծյունը:

Գլուխ 11
Մայզելի փողոցի վրայի խանութը

Կաթնային բարում գտնված թերթում կարճ տեքստեր էին՝ դատելով տպագրական ձեւավորումից, գովազդային հայտարարություններ: Դրանցից մեկի կողքին ես տեսա ցուցափեղկի լուսանկարը: Ցուցափեղկի վրա պատկերված էր այլ քաղաքի մեծ տառերով ցուցանակը, եւ այդուհանդերձ, մուտքի վրայի փոշոտված գիպսե հրեշտակներից ես հեշտորեն ճանաչեցի Մայզել փողոցի վրայի տներից մեկի ճակատամասը, որի կողքով անցնում էի իմ զբոսանքների ժամանակ: Տանն, իրոք, խանութ կար, որտեղ վաճառվում էին, համենայնդեպս կեսօրին, կոշիկներ ու գուլպաներ: Խանութի լուսանկարն այլ քաղաքի թերթում բոլորովին ինձ չզարմացրեց՝ ես արդեն ինչ-որ բան գիտեի մեր տարօրինակ հարեւանների կենսակերպի մասին, եւ այդ պատճառով ինձ բնական էր թվում, որ, համանման այն բանին, ինչպես փիլիսոփայական ֆակուլտետում դասախոսությունները հերթագայում են ցերեկային եւ գիշերային գիտություններով, խանութի գրադարակները, օրվա ժամից կախված, լցվում են տարբեր ապրանքներով:

Հենց նույն գիշեր ես ուղեւորվեցի Մայզելի փողոց: Ցուցափեղկի անկյունում ընկած էր ճմռթված մի գուլպա՝ վերջին հիշատակումը ցերեկային աշխարհի մասին, իսկ ընդհանրապես ողջ ցուցափեղկի վրա արձանիկներ էի դարսված, որ պատկերում էին մեզ արդեն ծանոթ տեսարանը՝ վագրը կրծոտում է երիտասարդի կոկորդը: Արձանիկներն արված էին տարատեսակ նյութերից՝ ճենապակուց, փայտից, ապակուց, թավշից եւ քաղցրաբլիթի խմորից: Փայտե արձանիկներից ոմանք անվիկների վրա էին եւ, հավանաբար, կարող էին տեղաշարժվել. վագրի ներքին ծնոտը ագույցով ամրացված էր նրա գլխագագաթին եւ շարժվելիս, դատելով ըստ ամենայնի, բացվում եւ փակվում էր: Ես հրեցի ապակյա դուռն ու ներս մտա: Հաստատությունը լուսավորվում էր կլոր սեղանի՝ կաթնապակուց լուսամփոփով լամպի փափուկ լույսը, կեցած վաճառասեղանի վրա, որի ետեւում ննջում էր ճերմակահեր մի ծերունի: Պատերի երկայնքով շարված էին բարձր, մինչեւ առաստաղ, կանգադարակները, որոնց վրա բազում անհասկանալի իրեր էին ընկած: Լամպի լույսն այնքան թույլ էր, որ դարակների վրայի առարկաների ուրվագծերը լուծվում էին կիսախավարում, ինձ

թվում էր, թե ես հայտնվել եմ խորտակվող առեւտրական նավի ներսում: Հեռավոր անկյունները կորչում էին անթափանց խավարում: Ես սկսեցի զննել դարակների վրայի ապրանքները: Այնտեղ կեցած էին անճաշակ նկարով բաժակներ՝ բիստրոյի ժպտացող մատուցողի դիմանկարով, նրա վզից կախված էր ադամանդե ծովածիով մի շղթա: Այստեղ կային նաեւ մգակապույտ օվկիանոսի մեջտեղի կղզով գունավոր բացիկներ. արմավենիների սաղարթամասի վրա, կղզու կենտրոնում, անամպ երկնքի ֆոնի վրա բարձրանում էին Պրահայի Սուրբ Վիտայի տաճարի աշտարակները. ավազոտ լողափի մոտ կանգնած էր խարսխված սպիտակ զբոսանավ, լողափին, զոլավոր հովանոցների տակ զվարճանում էին լողազգեստներով արեւառ երիտասարդներ: Ինձ թվում էր, թե բացիկից ինչ-որ ձայներ են հասնում. ես ականջիս կպցրի եւ հեռավոր կամացուկ ծիծաղ լսեցի, գրամոֆոնի երաժշտություն, գավերի զնգոց, թութակների ճիչեր եւ ալեբախության մեջ կորչող մարդկային ձայներ: Այդտեղ ճզմված ռեզինե գազանիկի նմանվող մի բան կար. ես ռեզինի մեջ անցք գտա եւ սկսեցի դրա մեջ փչել, հետզհետե առարկան սկսեց կենդանանալ, գիրանալ եւ դուրս ցցել իր տարբեր մասերը. պարզվեց, որ դա փչովի գունավոր քանդակ է: Այս անգամ այն պատկերում էր ոչ թե վագր-մարդասպանին, այլ ռազմիկների խումբ՝ գոտկատեղերում երկսայր կացիններով, սոճիներով շրջապատված անտառային մարգագետնի մեջտեղում: Ռազմիկները բարձր քարե պատվանդանից վար էին բերում գրերով ծածկված, որոնք ի տարբերություն այլ քաղաքի գրերի, խիստ ու անկյունաձեւ էին, թեւավոր շան ոսկե քանդակը:

/Այլ քաղաքի բնակիչները առանձնահատուկ հակում եւ տածում ունեն քանդակների հանդեպ, եւ նույնիսկ, ինչպես այս դեպքում, քանդակած քանդակների: Եթե նրանք հավատում են, որ մինչեւ այժմ ապրում են սկզբի հովանու ներքո, ինչպես ասում էր աշտարակում Կլարան, ապա քանդակներն ակնհայտորեն հիացնում են նրանց այն բանով, որ հաղթում են թե ժամանակը եւ թե ինքը գոյությունը, որը, վախի համարձակությունի՞ց, չի հեռանում իր ակունքից: Ընդ որում, հնարավոր է՝ երկու դեպքում էլ դա միայն պատրանք է՝ ինչպես է քանդակը հոսում ժամանակի հոսքով եւ նրա քարացած անփոփոխությունը, իրականում լոկ հողմահարման դանդաղ մեղեդին է, ինչպես եւ սկիզբը չի պահպանվում, բայց փոխվում է, զարմանալիորեն դառնում իր հետեւանքների հետեւանքը՝ համանման այն բանին, ինչպես խոսքի մտահղացումը ծնվում է միայն ասված խոսքում, որն ասողին թվում է օտար եւ վայրի, ինչպես դեւի ձայնը/: Ես բացեցի քանդակի խցանը՝ ծառերն ու կերպարանքները սկսեցին սեղմվել եւ կորվել, օդն,

ընդ որում, անցնում էր մի հարմարանքի միջով, որը հանդիսավոր մեղեդի էր կատարում, հավանաբար երկրորդ քաղաքի հիմնից մի հատված: Ես ուսած քանդակը դրեցի դարակի վրա: Փոքր-ինչ հեռու ես մի ապակյա գունդ տեսա, որ թափանցիկ հեղուկով էր լցված, դրա ներսում սրբի մի քանդակ էր, որ ձեռքին խաչ էր բռնել՝ խաչի վրա կախված էր իր սեփական ծանրության տակ կքած, վերեւում խրված շնածկան մարմինը: Երբ ես թափահարեցի գունդը, ներսում ծյուն տեղաց ճերմակ փշրանքներից, որոնք դանդաղ իջնում էին հեղուկից դեպի հատակը: Ես հասա անկյուններին, ուր արդեն չէր հասնում լամպի լույսը: Մթին դարակներից հասնում էին ճռթճռթոց, չխկչխկոց, ճռռոց, կամացուկ ծվծվոց, հանկարծ ռիթմիկ ինչ-որ բան տկտկաց եւ նույնքան հանկարծակի լռեց: Ես մինչեւ արմունկս աջ ձեռքս խրեցի դարակի խորքերը եւ ուղեւորվեցի ճամփորդելու այնտեղ ընկած իրերի մեջ: Մատներս անցնում էին բազում սուր նիստերով բյուրեղների միջով, հարթ ու ծանր մետաղյա մականների, սարքերի միջով, որոնց վրա ջղաջգորեն պտտվում էին նրբին փորագրությամբ անվիկները, ինչ-որ երկաթյա թիթեղների եւ խճճված լարերի միջով, որ մատներս ժանգով էին կեղտոտում: Հետո ձեռքս թափառում էր սուր ութանկյուն աստղերի կույտերի միջով՝ երեշների ծայրերին փոքրիկ կլոր պտուցներ էին փակցված: Աստղերի ետեւում ես շոշափեցի հորիզոնական դարսված կլորակների կարգաբերված շարքերը, որոնք զսպանակվում էին նույնիսկ մատի թեթեւ սեղմումից, բայց բավ էր, որ մատս հեռացնեի, որպեսզի կլորակները ակնթարթաբար վերադառնան իրենց նախնական դիրքին. երբ կլորակները ելնում կամ իջնում էին, կամացուկ շրշյուն էր հնչում: Կլորակների շարքերը տեղակայված էին մեկը մյուսի ետքից, ասես դա ինչ-որ տարօրինակ սանդուղքի մոդել էր, որի աստիճանները փլվում են դրանցով բարձրացող մարդու ոտքերի տակ. գուցե այդ սանդուղքը տանում էր դեպի գաղտնի սրբավայր եւ ցանկանում էր անցնողին հիշեցնել, որ վերելքն առ աստվածությունը՝ միշտ անկում է անդունդ: Երբ մատներս հասան այդ զարմանահրաշ սանդուղքի վերնամասին, դրանք հայտնվեցին ոչ խորը փոսի եզրին, որի հատակին շոշափվում էր հաճախակի պատահող վանդակացանցը՝ մի՞թե դրա ետեւում գազան է թաքնված: Եւ հանկարծ ես հասկացա, որ դիպչում եմ գրամեքենայի: Ես ողջ ուժով սեղմեցի ստեղներից մեկը, իսկ մյուս ձեռքով շոշափեցի վերնամասը, ուր, ինչ-որ անծանոթ միջատի տոտիկի նման, դժվարությամբ, ցնցվելով բարձրանում է ինքը՝ տառը, ջարդոտված բազում մեռած հոդերի, որոնք մեկ շտկվում, մեկ չռվում էին. վերջապես տառին հաջողվեց ոչ երկարատեւ ուղղահայաց դիրք ընդունել, այն

բարձրանում էր օդում, կողմից կողմ տարուբերվելով, իսկ հետո բոլոր մասերով ջարդոտվեց ու վար փլվեց: Երբ ձեռքս հասավ գրամեքենայի մյուս ծայրին, թեթեւ ճռռոց լսվեց. մատներս ետ դարձան եւ հայտնաբերեցին, որ այժմ տառը, դողդողալով, բարձրանում էր ինքն իրեն, ասես թե գրամեքենայի մեջ արթնացել էր ինչ-որ առեղծվածային հիշողություն, ասես թե նա կրկին կամեցավ անել այն, ինչը նրան չէր հաջողվել առաջին անգամ: Գրամեքենայի ետեւում ձեռքս սողաց ինչ-որ բանի կողքով, ինչը ես չորացրած խնձորների տեղ դրեցի, բայց հասնելով դարակի ամենավերջին, ես հայտնաբերեցի, որ դրանք շարժվում են: Մի ենթադրյալ խնձորի կտոր նույնիսկ ընկերացավ ձեռքիս հետ, այն կպչում էր նրան, ինչպես մանուկը մորը, եւ ոչ մի կերպ չէր ուզում պոկ գալ: Ես քշում էի այն, ետ էի հրում, մի քանի անգամ ճանկեցի եւ տարա դեպի մյուս չիրերի կողմը, բայց նա կրկին սրընթաց սողում էր ետ եւ սեղմվում ափիս: Ես շոշափեցի ընկած փակ գիրքը. կաշվե կազմի վրա ռելիեֆ էր փորագրված՝ զառիկող լեռան լանջին պարող քողով կինը, որտեղ տեղակայված էր ժայռաքաղաքը: Ես սկսեցի թերթել էջերը. դրանք ավելի ու ավելի ամուր ու ծանր էին դառնում: Ձանձրացուցիչ խնձորի պատառը անընդհատ ձեռքիս տակ էր ընկնում, երբ ես պատահաբար նրա վրա գցեցի ծանր էջը, կարճատեւ խուլ ծվվոց լսվեց. ես տեղնուտեղը բարձրացրի էջը, բայց «խնձորը» այլեւս չէր շարժվում: Գրքի էջերը ծանրանում էին եւ ավելի ու ավելի կարծրանում, մինչեւ որ վերածվեցին փայտե թիթեղների. ես հասկացա, որ դրանք ջրաղացի անվի թիաբերաններն են, որ, ձգվելով, սկսեց դանդաղ շարժվել: Ես ձեռքս թաղեցի պաղ ջրի մեջ, որը հոսում էր պլաստմասե փողորակի վրայով եւ հրում էր փայտե թիաբերաններին: Ջրաղացի թեքման հատակին մանրավազ էր ընկած, ես դրա մեջ ինչ-որ ձվածեւ առարկա շոշափեցի, որ աճել էր կոշտ ցցամազերով եւ առձիգ էր, ինչպես մաքրած-խաշած ձուն: Ես այն հանեցի ջրից. դրա կաշին այնքան պիրկ էր ձգված, որ բավ էր ավելի ուժեղ սեղմեի, եւ այն պայթեց. մատներս թաղվեցին ինչ-որ մածուցիկ բանի մեջ, որն անհապաղ դուրս հոսեց, շուտով ես զգացի, որ զզվելի լորձը թեւքիս մեջ ընկավ: Կամացուկ ճռթոց լսվեց, այն, ինչպես արագ հասկացա, հանում էին խնձորի պատառները. նրանց ձգում էր հյութի նեխավուն հոտը, որ հոսում էր ճզմված ձվածեւությունից, դրանք սողում էին ինձ մոտ գրամեքենայի ստեղնաշարով: Ակնթարթ անց դրանք արդեն հասան ձեռքիս եւ պատեցին այն: Ես խնձորի պատառները թափ տվեցի հատակին. անկումից ուշքի գալով, դրանք սկսեցին շալվարովս վեր սողալ: Ես ավելի լավ համարեցի վերադառնալ լուսավորված տեղերը: Դարակի վրայից

վերցրի թիթեղյա խաղալիքը՝ լարովի դեւը, եւ երբ ես այն բանալիով լարեցի, նա սկսեց պպզելով պարել եւ, ընդ որում՝ գցեց ծանր թանաքամանը: Ծերունին վաճառասեղանի ետեւում արթնացավ եւ քարշ եկավ ինձ մոտ: Նա վերցրեց պարող կերպարանքը եւ այն ձեռքս խոթեց, ասելով.

-Սա ոգի է, որն ինձ դուրս բերեց տարուբերվող սպիտակ վարագույրների միջից: Վերցրու այն, եթե դուրս գալիս է, միեւնույն է՝ դու մեր փողերից չունես: Ես գիտեմ՝ ով ես դու, ես տեսել եմ հեռուստացույցով քո եւ շնածկան մենամարտի ուղիղ փոխհաղորդումը եւ ամբողջ հոգով քո կողմից էի: Ինչպե՞ս եմ ես քեզ նախանձում. դա, երեւի, այնքան հիասքանչ է՝ մենամարտել շնածկան դեմ գիշերային քաղաքի վրա: Ինձ հետ, ավաղ, համանման ոչինչ չի պատահել, միայն մի անգամ ջահել տարիքում ծովի հատակին ես լսել եմ ոստրեների երգեցողությունը: Ասում են, եթե լսես ոստրեների երգեցողությունը, այլեւս չես ուզի մակերեւույթ ելնել, հետզհետե դադարում ես խոսել, մենավոր ապրում ես մռայլ հյուրանոցային համարում, ստորգետնյա քաղաքի ծայրին, լսում ես տրամվայների դռդռոցը ծովի հատակով եւ նայում ես պատուհանից անդին՝ այգում տարուբերվող ջրիմուռներին: Բայց ես վերադարձա, եւ տարիների ընթացքում ոստրեների մեղեդիից հասունացավ երաժշտական պիեսը հարյուր հիսունյոթ դաշնակահարների համար, որ նվագում են մեկ երկար ստեղնաշարի վրա, ձգվող գիշերային գյուղերի միջով եւ շողացող լուսնալույսի տակ, այգիների խորքում: Ծովի հատակին ոստրեների հետ երգելը հիասքանչ է, բայց երգը ոչ մի կերպ չի համեմատվի աշտարակի կատարին շնածկան դեմ մենամարտի հետ: Իսկ Ալիվեյրուի վրա դու մի բարկացիր, նա ուզում էր՝ որքան հնարավոր է լավ լինի: Նա փորձում է քաղաքը պաշտպանել անկոչ հյուրերից եւ դեռ չի հասկանում, որ չկա որեւէ օտարական, այլ կան միայն անառակ որդիներ, որոնք դառնում են տուն: Եթե գոյություն ունենար քաղաքին բացարձակապես խորթ գեթ մեկ էակ, ապա քաղաքը կկորչեր: Քեզ դա պա՞րզ է:

-Ոնց որ թե՝ այո, դատելով այն բանից, ինչ ես լսեցի աշտարակի վրա. ես հասկացա, որ մեր քաղաքն իր կոչումը տեսնում է այն բանում, որպեսզի հսկի եւ պահպանի սկիզբը, այլ տեղերում՝ վաղուց մոռացված: /Իհարկե, ես չգիտեմ՝ ինչի մասին է խսքը՝ արդյո՞ք օրենքների հինավուրց ժողովածուի, երաժշտության մասին, որը ժամանակի ընթացքում քարացել է խոսքերի մեջ, մշուշոտ մրրկագոյացումների մասին, բյուրեղի մասին, պարզ լույսի մասին, բուրգի ներքին շինությունում մարմարի վրա փորագրված մաթեմատիկական հավասարման մասին, թե՞ պատի վրա խո-

նավության բծի մասին, որ իր մեջ թաքցրել է բոլոր ծեւերի տարերքները/: Ինչ-որ մեկի խտրական համարելը կնշանակեր ժխտել նրա գոյության վերաբերումն այդ սկզբին, ինչ էլ որ այն լինի. չէ՞ որ սկիզբը կդադարեր սկիզբ լինել, եթե ինչ-որ բան խուսափեր նրա իշխանությունից: Ալիվեյրան՝ Պոգորշելցեի վրայի բիստրոյի մատուցողի աղջի՞կն է: Ես կարծում էի, թե նրա անունը Կլարա է:

-Չկա որեւէ օտարական, բոլորը միայն վերադառնում են, վերադառնում են եւ ոստրեները, որոնք երբեմն շարվում են երկար տողանով եւ ներթափանցում քաղաքներ, դրանց վտառները կամացուկ շրշյունով սողում են մեր ննջարանների միջով: Ինչպե՞ս եմ ես ուրախանում ամեն անգամ, երբ լսում եմ նրանց քնքուշ շրխկոցը: Ոստրեները, սակայն, նույնպես լիովին անմեղ չեն, երբեմն նրանց առաջնորդը մտնում է վերմակի տակ եւ իր թունավոր սեպը, որ ցցված է խծեփողկի ծայրին, խրում է քնածի կողը, հետո սողում են մնացած ոստրեները, պատում են անուժ մարմինը եւ ծծում մինչեւ այն պահը, որ մնա լոկ կմախքը, բայց, այդուհանդերձ, արդարացի չէ եւ դաժանություն է նրանց ողջ-ողջ ուտելը, հատկապես, երբ նրանք լալիս են հոնգուր-հոնգուր մեր բերաններում: Ալիվեյրայի հայրն, իրոք, տանում-բերում է ըմպելիքները եւ ուտելիքը բլրի վրայի երկար սեղյակում՝ մյուս ափին. իսկ մեզ մոտ նա գերագույն քուրմ է: Ինչպես են կոչում Ալիվեյրային ձեր քաղաքում, ես չգիտեմ:

-Նա այնքան էլ լավ չվարվեց ինձ հետ,- բողոքեցի ես:- Տարավ աշտարակի վրա եւ վայրի ծովային կենդանուն սադրեց ինձ վրա հարձակվել: Ընաձուկն ուզում էր գլուխս պոկել եւ ճղեց բաճկոնիս գրպանն ու ուսս:

-Ներիր նրան այդ, տղա: Մենք բոլորս այնքան սիրում ենք նրան: Նա այնքան ջանադիր եւ աստվածավախ է, օրերով խնամքով ուսումնասիրում է «Գրադարակների ապակիներում արտացոլվող գնացքների լույսի մասին» բարդագույն տրակտատը: Նա ահա-ահա կդառնա Դարգուզի քրմուհիներից մեկը: Նրա տարեկից մյուս աղջիկներին հինավուրց ավանդույթներից գրավում է լավագույն դեպքում դահուկաքարշով ընթանալը մեծ ձկնային տոնակատարության ժամանակ, բայց այդ ժամանակ էլ նրանք ինչպես հարկն է չեն հագնվում, այլ զարդարվում են ըստ ձեր մոդայի: Ես ափսոսում եմ, որ քեզ թվում է, թե Ալիվեյրան քեզ նեղացրել է: Դե, տես, ինձ մոտ քեզ համար ինչ-որ բան կա: - Նա մագլցեց դարակի խորքը եւ այնտեղից մի փոքրիկ ապակյա շիշ հանեց, որ մգականաչ հեղուկով էր լցված:- Դե, վերցրու: Երբ դու կտխրես, խմիր: Կտեսնես՝ այն քեզ կօգնի:

Խանութ ոչխարենու գդակով մի պարթեւահասակ մարդ մտավ, սիրա-

լիր ողջունեց եւ սկսեց վաճառողին շարադրել իր խնդրանքը.

-Ինձ պետք է շողշողուն թեփուկներով պատված ինչ-որ բան, դե, թեկուզ հինգշաբթի եւ ուրբաթ օրերին, իսկ ներսում որպեսզի լինեն շրխկան փոքրիկ երկաթյա սրոցաքարերը, միայն թե ոչ չափազանց գոթական: Լավ կլինի, եթե այն լինի երկու հարյուր քսան վոլտ կամ խռիկներով: Երգելը պարտադիր չէ, ամենից լավը, եթե այն ընդհանարապես խոսել չիմանա: Դա չի նշանակում, որ այն չի կարող երբեմն ինչ-որ բան խռխռալ, հատկապես եթե պատերի ետեւում բարձրանում է հրեշների կանաչ աստղը:

Վաճառողը բանիմաց գլխով արեց: Երբ տղամարդն ավարտեց, նա փոքր-ինչ մտածեց, իսկ հետո ասաց.

-Փոքր-ինչ սպասեք, ոնց որ թե ես կարող եմ ձեզ ինչ-որ բան առաջարկել: - Նա գնաց ետնասենյակը եւ վերադարձավ տուփով, բայց դռների արանքում հանկարծ կանգ առավ եւ հոգոց հանեց:- Ախ, այո, դուք ասում էիք՝ ոչ չափազանց գոթական, հիշողությունս արդեն ինձ դավաճանում է:- Նա կրկին անհետացավ, հետո ելավ այլ արկղով եւ այն երկարեց գնորդին:- Հուսով եմ՝ դուք գոհ կլինեք: Միայն թե չմոռանաք մի լավ թափահարել օգտվելուց առաջ, իսկ եթե էլէկտրական կայծ անցնի կամ ծվվոց լսվի, ապա այն որոշ ժամանակով խրեք գիշերային ավտոբուսի նստատեղի տակ, որ անցնում է ամառանոցների ընդարձակ շրջանով, որտեղ մթին տաղավարներից հասնում են նախադասությունների պատառիկներ, որ արտաբերում են ջարդված մեխանիկական քարոզիչները, որոնց քշել են այնտեղ. դրանք հատվածներ են փտած ծաղկեփնջերի մասին եւ փոշոտ թփուտով պատված երկաթուղու հողաթմբի պլատոնյան գաղափարի մասին:

-Երկաթուղու հողաթմբի...- մտազբաղ կրկնեց գնորդը:- Հենց երկաթուղային հողաթմբի վրա մեր մեջ առաջին անգամ միտք հղացավ հաստատել փառահեղ չարի տարածության սահմանի վրա հաշվառման բանկ, որն առանց հոգնության խավարի մեջ կժայթքեցներ փողերը, եւ դրանցով կհագեներ անանուն, անմոռանալի եւ նողկալի գործերի խիստ հինավուրց անտառը, որ իրենով էր լցնում գիշերային սենյակները:

Գնորդը շնորհակալություն հայտնեց ծերունուն, վճարեց արժեթղթերի տուփով, որոնց վրա ես տեսա վագրի գլուխներ, եւ ելա խանութից: Վաճառողը կրկին նստեց վաճառասեղանի ետեւում, նրա գլուխը դանդաղ թեքվում էր կրծքին: Ես գիտակցեցի, որ նա այլ քաղաքի առաջին բնակիչն է, որն ինձ հետ լավ վարվեց. հնարավոր է՝ նա կարողանար ինձ օգնել իմ թափառումներում:

-Պապիկ, - արագ ասացի ես, քանի դեռ նա չէր ննջել,- խորհուրդ տվեք՝ ինչպես ես ընկնեմ ձեր քաղաքի կենտրոնը: Ինձ համար դա շատ կարեւոր է: Ես ինչ-որ բան եմ լսել պալատական բակերի եւ շատրվանների մասին:

-Պետք չէ ոչ մի տեղ գնալ: Կենտրոնի քո որոնումները միայն քեզ հեռացնում են դրանից: Այն պահին, որ դու դադարես այն փնտրել, երբ դու կմոռանաս դրա մասին, դու կիմանաս, որ երբեք չես լքել այն:

-Այդ դեպքում բոլորը կենտրոնում կապրեին,- առարկեցի ես:- Դե, ինչպե՞ս կարող են այդքան կենտրոններ լինել: Չէ՞ որ դուք համաձայնվեցիք ինձ հետ, երբ ես ասում էի, որ սկիզբը պիտի միայն մեկը լինի: Դուք դեռ խոսում էիք անառակ որդիների վերադարձի մասին, վերադարձող ոստրեների մասին, բայց վերադարձը ենթադրում է հեռացում տնից, իսկ այժմ դուք այդ ժխտում եք:

-Չկան բազում կենտրոններ, կա միասնական կենտրոնը, մի սկիզբ, այն կա ամեն ինչում, ինչը որ դրանից է սերել: Վերադարձը՝ փոխաբերություն է, իրականում վերադարձը միայն գիտակցումն է այն բանի, որ մենք իրականում տանն եք, մենք չենք լքել մեր տունը: Տիեզերածնությունը կրակի նեքին պատմությունն է. գոյությունը հուր է, որը բռնկվել է եւ որը երբեւէ կմարի:

-Դե, ինչպե՞ս ես դու մտադրվում առանձնացնել առաջնայինը ածանցյալից, ինչպե՞ս ես մտադիր փնտրել հրի կենտրոնը: Կրակն ամբողջությամբ կենտրոն է...

Ծերունու գլուխն իջավ կրծքի վրա, խռմփոց լսվեց: Ես նրան չէի արթնացնում, թեպետ եւ ուզում էի շատ բաների մասին հարցուփորձել: Բայց շուտով լսվեց ժամացույցի զարկը պատի վրա, երբ մեծ սլաքի սայրը հասավ թվահարթակի բարձրագույն կետին, դրա վրա բացվեց քառակուսի պատուհանիկը եւ ժայթքեցրեց մանրիկ սեւ գնդիկների զանգվածակույտը. գնդիկները թնդյունով ընկան հատակին եւ գլորվեցին մեկուսի անկյուններում: Վաճառողը ցնցվեց եւ աչքերը բացեց: Ես օգտվեցի դրանից եւ շարունակեցի.

-Լավ, ենթադրենք, թե կենտրոնը ես կարող եմ գտնել լոկ այն ժամանակ, երբ դադարեմ այն փնտրել: Բայց չէ՞ որ կարող է եւ այնպես պատահել, որ ես գիտակցաբար փորձեմ մոռանալ կենտրոնի մասին կամ այն ինքնաբերաբար մտքիցս դուրս թռչի: Բայց առաջին դեպքում կենտրոնի մասին չմտածելու իմ փորձերը կլինեն կենտրոնի որոնման այլ դրսեւորումը, այսպիսով՝ արդյունքներ չեն բերի, երկրորդ դեպքում, ինձ թվում է, որ դա բացարձակապես բացառված է՝ ահա այդպես վերցնել ու մոռանալ

կենտրոնի մասին. իմ կյանքում կտրվեցին բոլոր կապերը, փոշեցրիվ եղան, մնացին լոկ ինչ-որ բեկորներ, որոնք մեկ էլ տեսար ճանկռում են մաշկս: Յուրաքանչյուր հաջորդ վայրկյան՝ նոր, ոչնչով չամրապնդված սկիզբ է, խավարից ինձ վրա է գահավիժում անծանոթ աշխարհը, իսկ ես դրան ամենեւին պատրաստ չեմ. հազիվ թե ինձ հաջողվի մոռանալ կորսված կենտրոնի մասին, երբ իմ բոլոր բաց վերքերը միասնության են կոչում, որով ցայտում է կենտրոնը:

-Դու սխալվում ես, բեկորներն ինքնին բացարձակ միասնություն են,- շշնջում էր ծերունին, աչքով տալով,- եւ այն փաստը, որ ամեն հաջորդ պահին ինչ-որ նոր բան է ծնվում, որը մերկացնում է ամրագույն կապը՝ այրման կապը: Դու վստա՞հ ես, որ ջարդված իրերի բեկորներն իրոք որ ցավ են պատճառում: Սովորիր լողալ գոյության կրակում, չէ՞ որ դա այնքան հեշտ է: Ինչ-որ տեղ գնալու, ինչ-որ բան փնտրելու հարկ չկա, դու չպիտի փնտրես նույնիսկ ոչ-որոնումը, բայց եթե փնտրում ես, ապա դա էլ սարսափելի չէ: Իհարկե, որոնումները վիճակի, որում մենք արդեն չենք փնտրում, փակ շրջան է, որից դուրս չես գա: Դե, ի՞նչ: Ինչո՞ւ ես դու մշտապես ուզում ինչ-որ տեղից գնալ ինչ-որ տեղ ընկնել: Փակ շրջանը նույնքան հիասքանչ է, իսկ իրերը ծեր քաղաքից՝ պարզապես արբեցուցիչ են. մթին պարապությունները կոշիկի մեջ, որ վաճառում են այդտեղ կեսօրին, այնքան բանաստեղծական են, առեղծվածային՝ ինչպես անհետացած քաղաքակրթության սրբությունները...Նույնիսկ չգիտեմ՝ ինչու եմ ամեն գիշեր ապրանքը փոխում, երեւի այն պատճառով, որ դա հին ավանդույթ է, իսկ հին ավանդույթները նույնպես հիասքանչ են...

Բայց Կլարան, այսինքն՝ Ալիվեյրան, աշտարակի վրա ծանակեց ինձ այն բանի համար, որ իմ քաղաքի բնակիչները ոչ մի կերպ չեն կարողանում հասկանալ սկիզբը:

-Այո, ես գիտեմ, թե ինչ էր ասում Ալիվեյրան, ես ձեզ տեսել եմ հեռուստացույցով: Դուք այնքան լավ էիք միասին նայվում, դուք կարող էիք հիանալի զույգ դառնալ: Իսկ շնածուկը՝ դե, ինչ հիասքանչություն է: Լսիր, Ալիվեյրան դեռ շատ բան պիտի սովորի: Դե, ինչպես դու կարող էիր ինչ-որ բան հասկանալ, դե, ինչպես դու կարող էիր արտաբերել պարզագույն նախադասությունը, եթե կատարելապես չհասկանայիր սկզբի էությունը, եթե դու ինքդ սկիզբ չլինեիր, վայր, որտեղ ծնվում է համաստեղությունը...

Ծերունին կրկին փակեց աչքերը եւ գլուխը հակեց, շուտով ես լսեցի դանդաղ խռպոտ շնչառությունը, որին էին միախառնվում կամացուկ տկտկոցն ու զնգոցը, որ լսվում էին մթին դարակաշարերի խորքից:

Գլուխ 12
Թռիչք

Ես ելա խանութից եւ սկսեցի թափառել գիշերային փողոցներով: Ընդարձակ փողոցում ես ձյան վրա մթին տների երկու շարքերի միջեւ մի անդրօվկիանոսային լայներ տեսա, դրա տախտակամածը հասնում էր չորրորդ հարկին, նավի կոկած կողի վրա մի քանի պատուհանիկներ էին լուսավորվում: Ես մոտեցա ծռված նավակողին եւ ձեռքով դիպա պաղ պողպատե ժապավենին: Վերեւից ձայներ էի հասնում: Ես ավելի հեռու գնացի եւ գլուխս վեր ցցեցի՝ տախտակամածի վրա, իմ գլխավերեւում երկու ուրվապատկեր հայտնվեցին եւ հենվեցին բազրիքներին: Փողոցային լապտերը ներքեւից լուսավորում էր նրանց դեմքերը. մի երիտասարդ տղամարդ էր եւ մի աղջիկ: Ես թաքնվեցի պողպատյա կողամասի ետեւում եւ ունկ դրեցի նրանց խոսակցությանը:

Աղջիկն ասում էր.

-Նավարկումն այնքան երկար է տեւում, երբեմն ինձ թվում է, թե մենք այդպես էլ նպատակին չենք հասնի: Երեւի կապիտանը մոլորվել է: Ինչ-որ տարօրինակ վայրում մենք հայտնվեցինք: Ինձ դուր չեն գալիս այս պատուհանաշարերը. դրանք ինձ վախ են ներշնչում, երբ լույս չի վառվում, երբ սեւ ապակիների վրա սողում են լապտերների արտացոլքերը, ասես չար ջրոգիների կրակներն անտառի թավուտում, գիշերային ջրհորների մակերեսին, բայց ես ավելի շատ եմ վախենում, երբ լույսն, այդուհանդերձ, վառվում է, երբ տեսանելի են դառնում անշարժ կահույքը, պատերը, տարօրինակ տագնապալից նախշերով պատված, անմարմին գլուխներ, բերաններով, որոնք մեկ երկարում, մեկ կարճանում են, ինչպես գալարվող ձկներ: Դե, ե՞րբ վերջապես մենք դուրս կգանք այս տրտմալի վայրերից: Դրանք շատ ավելի տրտում են, քան սառույցի ֆանտաստիկ մեխաբեկորներով սառցադաշտերը, որ ցցվում են գորշ մառախուղից: Ոչ մեկը մեզ չի նախազգուշացրել այս տեղերի մասին, երբ մենք նավարկության ելանք. երեւի թե մենք մոլորվել ենք, դեւերը մեզանից առաջ անցել եւ իրենց սրընթաց նավակներով շեղել են ճամփից: Ինձ թվում է, որ եթե մենք ինչ-որ հրաշքով հասնենք էլ մեր նպատակին, ապա մեր մեջ ընդմիշտ կկենա այս ծանր եւ անտարբեր կահույքը, պաստառների վրայի նկարների շրջապտույտը կլցնի մեր մտքերն ու կկլանի մեր բոլոր հիշողությունները: Գուցե

թե, պետք է ծանոթանալ տեղաբնիկների հետ, որպեսզի նրանք մեզ բացատրեն՝ որտեղ ենք մենք, ճանապարհ ցույց տան...

-Մի վախեցիր,- պատասխանում էր տղամարդու քնքուշ ձայնը,- մի վախեցիր, մեր կապիտանը փորձառու է, նրա տոհմը՝ հնագույններից մեկն է եւ, ըստ լուրերի, ծագել է հովազներից: Նա կարող է նավարկել, կողմնորոշվելով համաստեղություններով եւ տների պատերի փոշոտ ծեփածո զարդարանքներով: Գիշերները նա զրուցում է իմաստուն օձերի հետ: Մենք հինավուրց սրբազան քարտեզներ ունենք, որոնք նավերի համակարգիչների ծրագրերում ներմուծված են որպես փայլուն աքսիոմներ՝ բոլոր միֆերից ամենասրբազանները, դիսփլեյների վրա, որ իրենց դժգույն լույսով լուսավորում են թեւավոր ցլերով որմնանկարները, ողջ գիշեր թարթում են թվերը: Ես հիշում եմ, թե ինչպես տեսա դրանց անհաստատ լույսի ներքո քո մարմինը, երբ այն առաջին գիշերվա հինավուրց իրավունքով սեղմում էր իր գրկում կապիտանը:

-Ես այնքան ուրախ էի, որ դու այն ժամանակ ինձ հետ էիր եւ ձեռքս բռնել էիր:

-Ահա կտեսնես՝ ամեն ինչ լավ կավարտվի: Իմաստ չունի հարցուփորձել տեղի բնակիչներին ճանապարհի մասին, հաստատ դա բարբարոս, անկիրթ ժողովուրդ է՝ մի՞թե մենք կարող ենք հավատալ նրանց բառերին ավելի, քան նախադասություններին՝ ոսկետառ գրված եւ ահա արդեն հազար տարուց ավելի մեր օրենսգրքերի սեւ էջերի վրա շողշողացող, որ դրված են բյուրեղապակյա սեղանի դարակում՝ սենյակում, որտեղ պատերից մեկը հիասքանչ զովաշունչ ջրվեժ է: Դե, եւ գուշակները, որոնք գուշակում են վերմակների ծալքերով, եւ նրանք, որ գուշակում են ապագան մեքենաների դռդռոցից ծայրամասային պատերի ետեւի արտադրամասերում, պնդում են հաղթական ժամանման մասին, այն մասին, որ շուտով մենք կշրջենք թեթեւ լողազգեստներով արմավենիների տակի սպիտակ ծառուղիներին, որոնք իջնում են դեպի ափամերձ միջնաբերդերը: Մեզ կընդունի նահանգապետը, եւ նրա պալատի խաղաղ բակում մենք կսկսենք թեյ ըմպել բարալիկ ճենապակյա գավաթներից: Մեր արմատացած տենդը կօգնեն բուժել քրտնած զով բաժակները պատշգամբում, որտեղ տաք քամին ծովից թերթում է էջերը գունավոր նկարազարդ ամսագրի: Արդեն բացում են զոլավոր հովանոցները, արդեն բարալիկ օղակներով կտրում են կիտրոնները...

-Ես սարսափում եմ, վախենում եմ, թե նպատակ գոյություն չունի, որ չկա որեւէ արմավենիներով ծառուղի, ես վախենում եմ, որ կան միայն գի-

շերն ու ծնամորիկները՝ պտտվող լապտերների լույսի ներքո, միայն մթին կահույքի կտորները լուսավորվող պատուհաններում, միայն դիմակավորների քմծիծաղները ծյունոտ, իրենց դատարկ բերանները լցվող պատերին...

-Գնանք, սիրելիս, խուց վերադառնալու ժամանակն է, ես քեզ համար տաք լոգանք կպատրաստեմ, վաղը առավոտյան մենք կտեսնենք ափը, սպիտակ քարաժայռերը...

Ձայները լռեցին. ես եւս որոշ ժամանակ կանգնեցի թեք նավակողի մոտ, իսկ հետո կրկին ուղեւորվեցի թափառելու Պրահայի փողոցներով: Ես տաղտուկ էի զգում. հիշեցի շշիկի մասին, որ ստացել էի հին վաճառողից, եւ այն գրպանիցս հանեցի, լապտերի լույսն արթնացրեց դրա մեջ մի պաղ կանաչ կայծ: Այդ ի՞նչ է՝ ալկոհո՞լ, թե՞ թույն: Մի կումով ես շշիկը կիսով չափ պարպեցի՝ ըմպելիքը հոծ էր, մածուցիկ ու քաղցրումեղցր:

Շուտով մարմնիս մեջ զարմանալի թեթեւություն զգացի: Ես ետ հրվեցի ծյունից, մի քանի անգամ ձեռքերս թափահարեցի եւ օդ ելա, ես թռչում էի սառնամանիքային գիշերով ամայի փողոցներով, մթին պատուհանների շարքերի երկայնքով, որոնք տախտակամածի վրայի աղջկա մեջ այնպիսի տխրություն էին հարուցում, ես բարձրություն վերցրի եւ թռչում էի ծյունածածկ կտուրների վրայով, վառարանային խողովակների կողքով, որոնցից ծգվում էին ծխի նեղլիկ ժապավենները՝ վառարանները մարում էին սսկված սենյակների խավարում, հետո ես դարձյալ իջնում եւ թռչում էի հենց ավտոմեքենաների վրայով, կայանված մայթեզրին, երբեմն ես կոշիկիս ծայրով դիպչում էի ծյանը, որը ընկած էր դրանց վրա, ես թռչում էի լուսարձակների վրայով՝ դրանց միապաղաղ թարթող նարնջագույն կրակները լուսավորում էին ծյունը ամայի խաչմերուկներում: Ես նստեցի լապտերի ծռված ծայրին, կրկին վեր սավառնեցիգդանդաղ պտտվելով սեփական առանցքիս շուրջը, ես թռա Կլիմենտինումի պատի, որմնասյուների խոյակների եւ այլանդակ դեմքերի երկար շարքի երկայնքով: Փոթորկվող ջրամբարից վեր ես թռա մթին գետի վրայով. անցնելով Սուրբ Նիկայի մալոստրանյան տաճարը, ես տեսա շնագայլի մարմինը, սառնամանիքին քարացած, հետո ավելի ուժգին թեւերս թափահարեցի եւ սկսեցի բարձրանալ սուր կտուրներից վեր, ապա նեղլիկ մթին բակերով սլացա դեպի Քաղաքը:

Հոգնելով, ես ծրագրեցի սուրբ Վիտայի կտուրի կատարին փոքր-ինչ հանգստանալ: Իմ տակ, Քաղաքի բակում ծյան վրա ընկած էին լույսի շրջանագծերը, որ նետում էին լապտերները պալատի պատից, հեռվում կայծկլտում էին քնած քաղաքի պաղ կրակները: Ես մեկից չնկատեցի, որ

կտուրի վրա, ինձնից բացի, ինչ-որ մեկն էլ կա: Աշտարակի ստվերում հարմար տեղավորվել էր դահուկորդի ծոպավոր գլխարկով մի երիտասարդ: Նրա մի ձեռքին վառված ծխախոտ էր, իսկ մյուսին՝ վանդակ սպիտակ թռչնով, որ նման էր թութակի, բայց բադի կտուցով: Ես ողջունեցի անծանոթին եւ սիրալիր հարցրեցի՝ արդյո՞ք նա հաճախ է նստում Սուրբ Վիտայի տաճարի կտուրին: Նա, ոնց որ ուրախ էր, որ իր հետ զրուցող գտնվեց:

-Ոչ պակաս, քան տարին երկու անգամ:- Դե, այնպես չէ, որ ինձ առանձնապես դուր է գալիս, բայց ես դա անում եմ հանուն Ֆելիքսի:- Երիտասարդը ձեռքը խցկեց վանդակի ճաղերի արանքից եւ շոյեց թռչնի գլուխը:- Նա կարոտում է բարձրությունը, եւ այդ պատճառով ժամանակ առ ժամանակ ստիպված եմ լինում նրան բարձրացնել որեւէ բարձր կտուրի կամ աշտարակի վրա, թե չէ նրա մոտ ընկճախտ է սկսվում, նա ախորժակը կորցնում է, բայց գլխավորը՝ նրա հիշողությունն է թուլանում:

-Իսկ թռչնի ինչի՞ն է պետք լավ հիշողությունը,- զարմացա ես:

-Այն պարզ պատճառով, որ նրա հիշողությունն ինձ կերակրում է: Ֆելիքսը՝ ծիսական թռչուն-ասմունքող է: Միանգամից երեւում է, որ դուք մեր քաղաքից չեք, մեզ մոտ Ֆելիքսին ամեն երեխա գիտի:

-Պիտի խոստովանեմ, որ ես մինչեւ հիմա ոչինչ չեմ լսել թռչուն-ասմունքողների մասին:

-Առանց թռչուն-ասմունքողի մեզ մոտ ոչ մի կարեւոր հասարակական միջոցառում չի անցնում: Նրա մասին խոսվում է հենց մեր սահմանադրության երկրորդ հոդվածում: Թռչուն-ասմունքողը անգիր գիտի մեր «Ցարդված գդալը» ազգային էպոսը եւ հանդիսություններում արտասանում է համապատասխան հատվածները: Էպոսը պատմում է մեր քաղաքի հիմնադրման մասին հենց հինավուրց անտառի թավուտում, եւ այն ավելի երկար է, քան «Իլիականը» եւ «Ոդիսականը» միասին վերցրած:

-Իսակ Ֆելիքսը չի՞ կարող ինչ-որ բան արտասանել:

-Իհարկե: Նա կարող է ձեզ մի հատված կարդալ այն վայրի մասին, որտեղ մենք այժմ գտնվում ենք:

-Սուրբ Վիտայի տաճարի կտուրի մասի՞ն:

-Այնքան էլ չէ: Բլրի բարձունքի մասին, որի վրա կանգնած է տաճարը: Երեկոն մոտենում էր...

Թռչունը մի քանի անգամ տոտիկը տոտիկի վրա գցեց, գլուխը կողք հակեց եւ ճռճռացող ձայնով սկսեց արտասանել.

-«Երգիր կայսերական երկրներից, որտեղ փոխզիջումային օրենքն անհայտ է...»:

Երիտասարդն այնքան սրընթաց վեր թռավ, որ համարյա թե սահեց թեք կտուրով, ե ես ստիպված եղա նա թեւքից բռնել:

-Աստված իմ, ի՞նչ ես դու ասում,- բղավեց նա Ֆելիքսի վրա:- Չէ որ դա բնավ էլ «Կոտրված գդալը» չի:- Երիտասարդը թեքվեց իմ կողմն ու մեղավոր ասաց.

- Նույնիսկ չգիտեմ, թե որտեղից է նա այդ սովորել, նրա պատճառով պատմության մեջ ընկա:- Հետո նա դարձյալ դիմեց թռչունին:- Դե լավ, բավ է հիմարություններ անես: Երեկոն մոտենում էր...

Այս անգամ թռչունը սկսեց արտասանել ճիշտ տեքստը, թեպետ եւ բացահայտ դժկամությամբ, եւ երբ տերը շրջվում էր, նույնիսկ դժգոհ ծամածռանքներ էր անում.

Մոտենում էր երեկոն, երբ նրա վերելքն ավարտվեց:
Անծավի մուտքը խոչընդոտում են ոսկյա դարպասները
նրբահյուս գործի,
Վառագույն փայլով մայրամուտի շողքում փայլում էին
Արեւները, որ առ հեռավոր անտառների հինավուրց
խավարն էին գնում:
Գույնով այդ փայլը նման է Դարգուզյան արյան,
Դարգուզ Աստծո, որին պատառոտել էր մի ժամանակ
վագրը կատաղի:
Բարձրաձայն հեկեկում էր Դարգուզի ընկերուհին
դարավանդի ստվերում:
Վշտալի լուր ստանալով, շորերն էր պատառոտում,
մազերը չէր խնայում,
Չհասկանալով, որ մահկանացուն Անմահի հետ այդպես էր վարվել,-
Վագրի ժանիքները կյանքից զրկեցին նրան, բայց
վերածեցին Աստծո:
Ինչ վերաբերում է անծավին, ապա գոլորշին ելնում է ստորոտի
անտառներից
Եւ բարձրունքի մոտ քուլա-քուլա էր լինում, բայց կտուրը ոսկյա
փայլում էր
Հեռավոր տաճարի, թաքցված թավուտով մարդկային աչքից:
Աղջիկներն անդ խոսում են, անտառային աստվածությունների հետ
խաղում:
Ավելի հեռու՝ հովտում, երբ հայացքդ կտրես անծավից,

Կտեսնես գետը, ինը կղզիների միջով հոսող,
Դեւերն են այնտեղ բնակվում, սարսափելի տեսքով եւ էությամբ,
Իսկ նրանց թամբի տակ քայլում են անչափելի բզեզները,
Նրանք մարդկանցից բարձր են մի քանի անգամ եւ
անպատշաճ երգեր
Երգելու ունակություն ունեն, երբ դեւը ելնում է նրանց վրա...

-Բավական է, Ֆելիքս,- ընդհատեց թռչնորսն իր հոգեզավակին:- Այս հատվածն, ըստ մեկնիչների, բովանդակում է Պրահայի գոգահովտի նկարագրությունն այն ժամանակներում, երբ այստեղ եկավ քաղաքի հիմնադիրը՝ էպոսի գլխավոր հերոսը: Նա թագավորի տղան էր եւ Դարգուզի յոթերորդ մարմնավորումը: Իր տասներկու քույրերի հարսանիքին արքա-հարեւանի հետ նա պատահաբար ջարդեց գդալը, իսկ թագավորը դա համարեց անտակտ ակնարկ այն դեպքին, որ տեղի էր ունեցել իր նախնիներից մեկի հետ՝ նա ողջ օրը արեւի տապին մարտնչում էր չարակամ բույսի դեմ եւ բաց թողեց պահը, երբ իր պալատի պատի վրա մրջյունները նախադասություն կազմեցին, որտեղ ասվում է երազի մասին՝ արեւից շիկացած տաճարի սանդուղքի վրա, եւ ցայտաղբյուրների միապաղաղ աղմուկի մասին ընդարձակ դատարկ հրապարակներում: Արքան նեղացավ եւ ծանակեց այն, որ մեր հերոսի երկրում գլխավոր հեղինակությունը կրոնական հարցերում կանաչ մողեսներ էին /ինչը եւ ճիշտ էր, եւ ճիշտ չէր, բայց այդ հիմա գործին չի վերաբերում/: Գինովցած հերոսը ճանկեց փորագրվածքով ծանր ոսկյա գավը, որը պատկերում էր թիանավերի մարտը լճի վրա, եւ ջախջախեց արքայի գլուխը: Երբ նա հետո հարցրեց գուշակին, թե ինչպես մաքրվի սպանության մեղքից, ապա պատասխան ստացավ, որ հարկ է՝ նա անհապաղ լքի թագավորությունն ու քաղաք հիմնի անտառի խիտ թավուտում, այնտեղ, որտեղ նա հանդիպեց բնիկների, որոնք խոսում էին անծանոթ լեզվով եւ երկրպագում էին թեւավոր շան քանդակին, որ կեցած էր դաշտի մեջ: Բայց ես հո չեմ կարող ձեզ ողջ էպոսի բովանդակությունը վերապատմել:

-Հավանաբար, թռչուն-ասմունքողներ բուծելը հիասքանչ զբաղմունք է,- ասացի ես: Ուզում էի սիրաշահել թռչնորսին, որպեսզի եւս ինչ-որ բան իմանայի այլ քաղաքի մասին, քանի որ ես այդ գործում հաջողության չհասա վաճառող-պանթեիստի կրպակում:- Երեւի թե դուք շա՞տ եք սիրում ձեր հինավուրց պոեզիան:

-Ամենեւին ոչ, ինչի՞ց վերցրիք: Ես անձամբ ամաչում եմ, որ ողջ էպոսը՝

անցյալ դարի ոչ այնքան հաջող նմանակություն է:

-Այդժամ անհասկանալի է՝ ինչու եք դուք ընտրել այդ զբաղմունքը:

-Դե, այն պատճառով, որ թռչնային աստունքի համար հանդիսության ժամանակ վատ չեն վճարում, ահա եւ ամենը: Իսկ հանդիսությունները մեզ մոտ անընդհատ տեղի են ունենում: Մեզ մոտ բոլորը, երեխաների պես, միշտ ինչ-որ բան տոնում են, նրանք այնքան ծիծաղել են իրենց բանահյուսությամբ: Անընդհատ պարծենում են, որ իրենց ծեսերը՝ ձեր աշխարհակարգի գաղտնի նախապատկերն է եւ որ դրանք իրենց մեջ թաքցնում են դրա մոռացված իմաստը: Ես դրանում կասկածում եմ. ըստ իս, ամեն ինչ հակառակն է՝ ծեսերի միահյուսումը, որը պահպանում է կյանքը մեր քաղաքում, լոկ խճճված վերապատումն է պատմական իրադարձությունների, որ պատահել ձեր աշխարհում /իսկ մենք ինքներս մեր սկզբի եւ կրկնության պաշտամունքով քիչ թե շատ ունակ չեղանք սեփական պատմության/, իսկ մեր դիցաբանության անխոհեմ դոգմաները՝ միայն լղոզված ընդօրինակումներն ու խեղումներն են ձեր տրամաբանական օրենքների: Մերոնք ասում են, որ նրանք այստեղ են եղել ձեզնից հազար տարի առաջ, բայց հաստատում են իրենց մեծամիտ պնդումները միայն կասկածելի ծագման, ազդեցիկ դարձրած եւ անճաշակ լեգենդներով, իսկ իրականում մենք աստված գիտի ինչ ստորգետնյա քայլերով սողացել ենք այստեղ, որպեսզի բնակեցնենք տարածության ամայի ծայրամասերն ու ծակուծուկերը, որոնք դուք արարել եք, մենք պորտաբուծություն ենք անում ձեր քաղաքի վրա, մեր առասպելները սնվում են ձեր մտածողության մնացուկներից: Սակայն դա կարեւոր չէ: Բայց ես տեսնում եմ, որ Ֆելիքսն արդեն քնած է, իմ գնալու ժամն է: Ուրախ էի ձեզ հետ ծանոթանալու համար, հուսով եմ՝ մենք դեռ կհանդիպենք:

Երիտասարդը ճանկեց Ֆելիքսով վանդակն ու սրընթաց անհետացավ խավարում: Ես դեռ փոքր-ինչ էլ նստեցի տաճարի կտուրին, նայելով հեռավոր լապտերների տրտում լույսին, իսկ հետո շարունակեցի իմ թռիչքը: Բայց թռչող հեղուկի ներգործությունը թուլանում էր, ես դժվարությամբ էի առաջ շարժվում, թերեւս, պարզապես թեւերի թափահարումով հեռացնում էի անխուսափելի անկումը, անպես որ՝ ես գերադասեցի իջնել մթին Եղնիկների խանդակը: Ոտքերս թաղվեցին անարատ ձյան մեջ, իմ գլխավերեւում միահյուսվում էին բարձր ծառերի մթին կեղեւները, հառնում էին թեք ձյունապատ ստորոտները, ամենաբարձունքում՝ երկնքի ֆոնի վրա, սեւին էին տալիս Քաղաքի պատերն ու կտուրները:

Գլուխ 13
Կարլով կամուրջը

Հաջորդ գիշեր ես քայլում էի Մոստեցկի կամրջով, իմ առջեւ հոգնած քայլում էր մի տարեց մարդ, ես տեսնում էի նրա գոտկից վար սողացող շալվարը եւ կորացած մեջքը բամբակաբաճկոնով՝ մեր քաղաքում այդպես էին հագնվում հավաքարարները: Նա իր առջեւում սայլակ էր քարշ տալիս, որում երեւում էին թիթեղներ, պարկեր եւ ինչ-որ գործիքների փայտե բռնակներ: Գալով կամրջի վրա՝ նա կանգնեց սուրբ Կոզմայի եւ Դամիանի քանդակների առաջ եւ բացեց պատվանդանի աննշմար դռնակը: Զարմանալի է՝ ողջ կյանքում ես համարյա ամեն օր քայլում էի Կարլովի կամրջի վրայով եւ չէի նկատել, որ պատվանդանը կարելի է բացել: Դռան ետեւում խորացում կար. այնտեղ վառվող լույսը ձյան վրա արտացոլքեր էր նետում: Արդյո՞ք քանդակից որսկան դուրս կգա՞, կցվի՞ վիշապի գլուխը կամ՝ կցայտի՞ կարմիր հրաբխի հոսքը՝ ստորգետնյա լճից ելնող: Լուսավորված խորացումից դուրս թռավ մոտավորապես կես մետրանոց մի որմզդեղն լայն ֆոսֆորափայլ եղջյուրներով: Նա սկսեց զվարթ սուրալ ձյան վրայով եւ փորձեց գլուխը պարկի մեջ խրել, որտեղ, երեւի թե, կեր էր: Բամբակաբաճկոնով տղամարդը որմզդեղնին դեն քշեց ցախավելով, որը հանել էր սայլակից, հետո մանրակրկիտ մաքրեց բաց դռնակի վրայի դատարկ տարածությունը, ներսում թարմ խոտ փռեց, պատվանդանից հանեց ամանը, մեջը թիթեղամանից ջուր լցրեց եւ ետ՝ քանդակի մեջ դրեց:

Ավարտելով, նա սայլակը քարշ տվեց դիմացը կանգնած սուրբ Վացլավի արձանի մոտ: Այնտեղ նույնպես նա բացեց պատվանդանի դռնակը, եւ դրա ետեւում փոքրիկ տարածություն կար, անտեղից կրկին փոքրիկ որմզդեղն դուրս թռավ: Տղամարդը ավլեց սուրբ Վացլավի ներսը, դրա մեջ խոտ փռեց եւ ամանի մեջ ջուր լցրեց: Միեւնույնը կրկնեց կամրջի վրայի այլ արձանների մոտ: Դռնակները բաց էին մնում, եւ դուրս թռած որմզդեղները կերակրվելու ժամանակ կարող էին սուրալ ձյան վրայով: Ես հեռավորության վրա քայլում էի անասնապահի ետեւից՝ անդրիից դեպի անդրի. հասնելով սուրբ Օգուստինոսին, հետաքրքրասիրությունից գլուխս խցկեցի դռան արանքը: Ես զգացի մսուրքի հոտն ու տեսա, որ ողջ պատվանդանը եւ քանդակը ներսից դատարկ են, դատարկ տարածությունը ճշգրտորեն կրկնում էր քանդակի ուրվագծերը. պարզվեց, որ քարը երկու սանտիմետ-

ից ավելի հաստ չէ: Ներսը լուսավորված էր լամպով, որը կախված էր եպիսկոպոս Գիպոնի դատարկ գլխից, ջրամանը կեցած էր որմնախորշում, գոյավորված մաշիկի դատարկ ներսից, որ դեմ էին առել մանիքեականների հերետիկոսական ստեղծագործություններին: Երկրորդ քաղաքը, երեւի, լցված է արձաններով, մտածեցի ես, իսկ դրա բնակիչները դավադրաբար օգտագործում են նաեւ մեր քանդակները, դրանցից ընտանի կենդանիների համար մսուրք էին սարքում: Նրանք ոչ միայն բնակվել էին մեր տարածության անցքերում եւ անկյուններում, այլ, ի հավելումն, մեր իրերում նոր խոռոչներ են ստեղծում, որոնց մենք վստահում ենք եւ համարում դրանք, ինչպես եւ հարկն է, ամբողջական:

Ինչ արագ կանհետանար վստահությունը ժեստերի, որոնցով մենք սահմանափակում ենք մեր տարածությունը, եթե իմանայինք, որ ձեւերը, որոնց մենք ընտել դիպչում ենք, ամենից հաճախ լոկ բարալիկ կեղեւներ են՝ տարօրինակ կենդանիների մթին որջերը թաքցնող: Ընդ որում՝ պետք է հաշվի առնել այն փաստը, որ ժամանակի ընթացքում բարալիկ կեղեւը կճեղքվի եւ դրանց անցքերից մեզ կնայեն ներսի մեռած հոգիները:

Ես որոշեցի, որ բամբակաբաճկոնով տղամարդը, հավանաբար, երկրորդ քաղաքի վարչության ինչ-որ աշխատակից է: Որմզդեղներին կերակրելուց բացի նա այլ պարտավորություններ էլ ուներ՝ սայլակի մեջ դրած էր ծալած պլակատներով եւ թիթեղատուփով սոսնձված պայուսակը. սուրբ Ֆրանցիսկ Բորջիայի եւ սուրբ Քրիստոփորոսի արանքում նա կանգ առավ, հանեց պլակատներից մեկն ու սկսեց այն բացել: Նրա դեմքի վրա էր ընկել փողոցային լապտերի լույսը, եւ ես զարմանքով ճանաչեցի այն մարդուն, որն ինձ մալոսրանյան սրճարանում պատմում էր իր սիրուհու բնակարանի խորհրդավոր դռան մասին եւ որին կես խոսքի վրա տարավ մարմարյա տրամվայը:

Ես չգիտեի, թե առաջին հերթին նրան ինչ հարցնեի:

-Ի՞նչ է գտնվում կանաչ տրամվայի ներսում: Ձեզ ո՞ւր տարան: Ձեզ ստիպեցի՞ն իրենց ծառայել: Մի վախեցեք, ես ձեզ կօգնեմ փախչել: Ասացեք՝ դուք ի՞նչ տեսաք սպիտակ դռան ետեւում:

Նա անտարբեր նայեց ինձ եւ, բառ իսկ չասելով, շարունակեց իր աշխատանքը՝ բացեց պլակատը եւ փութաջան փակցրեց այն կամրջի քարե պարսպին: Այնուհետեւ նա տեղափոխվեց սայլակով դեպի սուրբ Քրիստոփորոսը եւ սկսեց դուրս հանել որմզդեղնին, որը ոչ մի կերպ չէր ուզում ելնել: Ես շփոթահար կանգնել էի պլակատի մոտ, որ ճերմակին էր տալիս լապտերի լույսի տակ: Տեքստը պլակատի վրա, որքան էլ տարօրինակ է,

տպագրված էր մեր այբուբենով. ես կարդում էի՝ «Ի՞նչ է թաքնված խորհրդավոր դռան ետեւում: Արդյոք մենք կդառնա՞նք սպիտակ քանդակներ լճերում՝ մահվանից հետո: Թռչուն-աստունքող Ֆելիքսը մեղադրված է գողության մեջ ունիվերսամում: Ֆիզիկոսները հարցնում են՝ արդյո՞ք կամրջի որմզդեղները հայտնվել էին միանգամից, Մեծ պայթյունից հետո: Աշտարակի վրա շնածկանը սպանած մոլագարը դեռ չի բռնվել: Այդ եւ շատ այլ գրավիչ իրադարձությունների մասին կարդացեք «Ոսկե ճիրան» ամսագրի նոր համարում: Կարդացեք «Ոսկե ճիրան» ամսագիրը, ամսագիր, որի 3500 տարին է լրանում, ամսագիր, որով մեր վսեմ խնամակալուհին ծածկել է իր երեսը, երբ հանդարտ ետմիջօրյա ժամերին պալատի սպիտակ պատերի վրա երեւացին օձերով եւ շողշողացող մեքենաներով որմնանկարները»:

Մսուրքներ կային համարյա բոլոր անդրիներում, միայն սուրբ Վարվարայի, Մարգարիտի եւ Ելիզաբեթի քանդակային խմբում բար հայտնվեց: Քանդակի առաջ, հենց ձյան վրա կեցած էին չորս երերուն աթոռակներ: Պատվանդանի անցքում երեւում էր բարապանի մարմնի վերնամասը սպիտակ պիջակով, նրա ետեւում՝ դարակների վրա շարված էին շշերի հավասար շարքերը, վերեւում՝ քանդակների դատարկ մարմիններում լուսավորվում էին գունավոր կրակները:

Տղամարդը, որին տարել էին խորհրդավոր տրամվայով, իր սայլակը կողմ էր հրել եւ նստել աթոռակի վրա: Բարապանը նրա առջեւ՝ կանգնակի վրա դրել էր սեւ ըմպելիքով գավաթը, որի վրա բարձրանում էր առկայծող մանուշակագույն գոլորշին: Ես նստեցի կողքի աթոռակին, մի ձեռքիս դաստակով հենվեցի վաճառասեղանին, իսկ մյուսով քաշեցի գողացվածի թեւքից:

-Դե, իսկ ինչո՞վ ավարտվեց դռան եւ տրամվայի հետ կապված պատմությունը: Պատմեք ինձ ամեն ինչ, դա ինձ համար շատ կարեւոր է,- անսահանջ պնդում էի ես:

Անասնապահը շրջվեց ինձնից եւ հայացքն ուղղեց դեպի մթին Պետրշինը: Փոխարենը արձագանքեց բարապանը, նա դուրս ցցվեց քանդակից եւ բարկացած ասաց.

-Ամոթ չի՞ տարեց մադու հետ այդպես խոսելը: Պարզապես ձեռքերս քոր են գալիս ձեզ լավ դնգստելու համար: Մի մոռացեք, որ լկտիությունն էլ պիտի սահման ունենա: Դուք կարգին հաստատությունում եք, այլ ոչ թե ինչ-որ ստորջրյա խորտկարանում, որտեղ սվսվացնում են հարբած ութոտանիները: Ես վաղուց արդեն աշխատում եմ այստեղ եւ հիշում եմ ավելի

լավ ժամանակները, երբ հիանալի բարեր կային բոլոր քանդակների մեջ՝ այդ դեռ մինչեւ այն էր, որ այստեղ սկսեցին որմզդեղներ բուծել, դրանց հերն անիծած, այնպես որ՝ ես հիշելու բան ունեմ, բայց նմանատիպ ցոփախոսություն ես ոչ մի անգամ չեմ լսել:

Որմզդեղները, որոնք դուրս էին ցատկել քանդակներից, հոտով կուտակվել էին, անցան Ստարոմեստյան աշտարակի կամարի տակով, անցան Կրժիժոնովյան հրապարակը եւ անհետացան Կարլովի փողոցում: Ես գնացի նրանց ետքից, նրանց եղջյուրները լուսավորում էին ձյունը մթին խանութների ապակյա ցուցափեղկերում: Գալով այնտեղ, մինչեւ Կարլովի Կլիմենտինումի մուտքը, փողոցը վերածվում է փոքրիկ հրապարակի, նրանք տարբեր կողմեր փախան եւ սկսեցին սուրալ ձյան վրայով: Ես կանգնել էի վիթխարի, մինչեւ գետին հասնող «Օձի մոտ» գինու ռեստորանիկի պատուհանի կողքին, դրա ներքնաձայրի երկայնքով ձգվում էր ցածրիկ մի ձնեթումբ: Ներսում լույսերը չէին վառվում, իսկ մթին ապակու մեջ առկայծում էին փայլկտող եղջյուրների արտացոլանքները: Փողոցային լույսի թույլ լույսի ներքո ես տեսա, որ պատուհանի ետեւում նստած է բացգույն զգեստով մի աղջիկ եւ մտազբաղ նայում է հրապարակին: Դա Կլարա-Ալիվեյրան էր:

Գլուխ 14
«Օձի մոտ» գինու ռեստորանիկում

Ես մտա եւ նստեցի Ալիվեյրայի կողքին: Ինձ չէր հետաքրքրում՝ արդյո՞ք նա մթության մեջ չէր թաքցրել սուր ատամներով հերթական գազանին: Մենք լուռ զննում էինք ձյան վրայով սուրացող փոքրիկ որմզդեղներին: Ալիվեյրայի դեմքի մի կեսը մթին էր, մյուսի վրա ընկել էր փողոցային լապտերի արտացոլքը:

-Ես նույնպես նայում եմ ապակու միջից պաղ կրակներին,- հոգնած ժպտաց նա:- Ես մտա շատ հեռու թավուտները: Ինձ գրավում էր սկզբի կրակը. երբ հայրս ցուցանեց ինձ ետդարձի ուղին, ես որոշեցի, որ մոռացված հարազատ տունը լրիվ մոտիկ է...- Նա լռեց, որմզդեղները սուրում էին երկար ու սահուն ցատկերով, նրանց եղջյուրները խավարում լուսաշող գծեր էին ուրվագրում:

Լիլիեւի փողոցից հայտնվեցին զուգասահնակները երգեհոնով, այն նվագում էր մի կին իրիկնազգեստով, որ երփներփում էր լապտերների լույսի ներքո. սահնակներն անցան ձյունապատ հրապարակի միջով եւ անհետացան խավարում՝ Սեմինարյան փողոցի շրջադարձում:

-Բայց վերադարձը միշտ անբարոյական է,- կրկին խոսեց խավարի մեջ Ալիվեյրան,- սերն առ սկիզբը՝ արբեցնող փակ շրջան է, միապաղաղ ինցեստ՝ նողկանք տարածող: Մենք կպառկենք պաղ սավանների վրա եւ դյութված կնայենք խավարից ելնող երկրաչափական պատկերներին. ննջարաններում մեր մարմինների միջով սառցե աստղի որոնումներում, թաքնված տան խորքում կսողան լանգուստները: Երբ մենք վերադառնում ենք, ապա միշտ հանդիպում ենք հրեշներին, նրանք մեր մանկության սենյակներում սլկուն լոտո են խաղում, եւ պատառիկները՝ մսի կտորներն են: Ինչու ես սահմանն անցա, որը դժգույն եւ անտարբեր փայլկտում էր գորգի վրա սենյակի անկյունում: Այո, քաղաքը, որում մենք ապրում էինք, մեր իսկական տունը չէ, բայց, ինչպես ասում են փիլիսոփայական սարքավորումները անտառային թավուտում, արժանավայել կարելի է ապրել միայն օտարության մեջ... Տունը, նախնիների դաշտը, հրեշների դրախտը... Կիրքն առ սկիզբն ու տունը՝ հրեշների թակարդն է. երբ մի անգամ մենք շրջվում ենք ետ, ժամանակը դեպի մեզ չի շրջվում, մենք չափազանց ուշ ենք հասկանում, որ տունը, ուր մենք վերադառնում ենք՝ անծանոթ տուն է,

իսկ անանցանելի թավուտն ու ճահճուտը, որոնք հայտնվել են այդտեղ տնից առաջ եւ թունավորել են իրենց շնչով դրա հիմքը եւ մթնոլորտը, այդ ծածուկ շնչառությունը փոխում է տան ողջ նիստուկացը. մեր տունը լքում է մեզ, որովհետեւ համակերպվել է օրենքների շեշտերին ու մեղեդիներին. բայց շեշտերն ու մեղեդիները՝ գլխավորն է օրենքներում: Տունը լոկ սպիտակ պատկեր էր հինավուրց անտառի ծյուներում: Սկիզբը սպանում է, այն միշտ թունալի է: Վերադառնալու տեղ չկա, ամենակասկածելի բերկրանքը Լոտոֆագների ավելի մաքուր է, քան Իթաքան ճանապարհի վերջին...

Մթին պատուհաններից մեկի ետեւում սկսվեց ամուսնական գգվռտոցը, հիստերիկ ճվում էին տղամարդու եւ կնոջ ձայները, հետո բացվեցին դռները դեպի պատշգամբ եւ գիշերանոցով տղամարդը դուրս հրեց մեծ քանդակը նեյգիլբերից՝ մերկացրած սրով գեներալին ծառս եղած ձիու վրա, այնուհետեւ պատշգամբում երեւաց կինը, նա քանդակը ներս քարշ տվեց եւ դուռը շրխկացրեց: Ալիվեյրան գլուխն ուսիս դրեց, նա շշնջում էր.

-Անկյունների մթին Ասիայում զմրուխտե օձը կրծում է սեփական պոչը: Դարգուզը դաժան է, նա խժռում է ժամանակը, ապակյա աստղերից նա առաքում է տների գիշերային աստիճանների վրա քանդակների հորդաները: Նույնիսկ եթե մենք հաղթանակենք քանդակների դեմ անտեսանելի պատերազմում, դա նողկալի հաղթանակ կլինի, որն ի վերջո կքշի մեզ անիրական եւ շողացող ճանապարհամերձ հյուրանոցներ: Իրականությունը հետզհետե փոխակերպվում է մեկ համատարած գարշելի տոնակատարության: Ինձ համար նողկալի է այդ դժվարին անմահությունն ընդարձակ դահլիճներում, որտեղ վարագույրները ծածանվում են բարձր պատուհանների վրա եւ ընձառյուծները կամացուկ քայլում են փափուկ ու սպիտակ գորգերի վրայով: Սկիզբը քառսից էլ սարսափելի է՝ այն շարունակությունն ու լրացումն է մեր աշխարհակարգի եւ պատկանում է մեր աշխարհին, այնինչ սկիզբը...- նա հոգնած փնտրում էր խուսավարող բառերը, պատուհանի առջեւ հայտնվեցին սֆինքսի երկու զավակները՝ հնգամյա աղջիկների գլուխներով կորյունները, որոնք թաթերով ծեծեցին ապակին եւ խնդմնդալով չքացան. սկիզբը՝ կամացուկ խելահեղ ծիծաղն է խելագար աստծո, որից հետո կկազմավորվի Բանը...

Ես գրկեցի նրան եւ սեղմեցի ինձ, դեմքիս վրայով սահեցին նրա խիտ ու սեւ վարսերը. ես հիշեցի ամառային դեգերումները գիշերային այգիներով, ինձ թմրեցրեց անծանոթ մարմինների խորհրդավոր ու տրտում բույրը, որ մոտենում էր խավարից: Որմզդեղները հանգստանում էին ձյան

վրա: Ես չգիտեի՝ ինչպես մխիթարեմ Ալիվեյրային: Ես շոյում էի նրա մազերը, դատարկության եւ խավարի մեջ հայտնվում էր լոկ վերջին մխիթարանքը՝ մխիթարանքը կարեկցանքով, անառիթ, եւ այդու անմահ, կարեկցանքով, որը զարմանալի կերպով կապում է էակներին նույնիսկ այնժամ, երբ մնում է միայն գոյության անտարբեր մատերիան, ձեւերը փոխած ժամանակակից նինջում, կարեկցանքով, որը պահպանում է հավատարմությունը քնքուշ հպումների արվեստին նույնիսկ այն տեղերում, որտեղ ընդմեջ գոյության փոթորկվող ծովի կորցնում է իմաստը եւ ինքը՝ նողկանքը: Մենք լուռ սեղմվում էինք իրար, երկու մարմին, ինչ-որ անհայտ մի բանի ուղեկցորդներն առ խավար ու ցուրտ, նույնքան նողկալի, ինչպես եւ բոլոր հրեշները, որ սողում են աստղալից դաշտերով:

Սեմինարյան փողոցից ելան սահնակները, որոնց լծված էր մեխանիկական բակելիտե շների վեցյակը. յուրաքանչյուր շան մեջքից ցցված էր մեծ գործարանային բանալին, հոդերով թաթերը պտուտամեխերի վրա անճարտար եւ կամացուկ չրխկոցով ելնում էին ձյան վրա: Սահնակները փայլում էին սեւ լաքով, եւ դրանց ետին բարձրացած մասը գոյավորում էր փափուկ բազկաթոռի թիկնակը՝ կարմիր պաստառով. այնտեղ նստած էր Ալիվեյրայի հայրը, արձակած կղբենու մուշտակի տակից մատուցողի հագուստն էր, վզի վրա՝ օրորվող ադամանդե ծովանժույգով ծանր ոսկե շղթան: Հրապարակի մեջտեղում մեխանիկական շները կանգ առան՝ երեւի լարումը վերջացել էր. նրանց թաթերը ջղածիգ քաշվում էին եւ ավելի ու ավելի դանդաղ էին շարժվում, մինչեւ որ քարացան: Որմզդեղները շրջապատեցին շներին եւ քթերով հրում էին նրանց, շներն անօգ փռվում էին ձյան վրա: Մատուցողի հայացքը տագնապալից դեգերում էր տների ճակատմասերի վրայով, թվում էր, թե նա ուզում էր ներթափանցել ապակիների ետեւի սենյակների խավարի մեջ: Ես խցկվեցի սեղանի տակ եւ Ալիվեյրային քարշ տվեցի իմ ետքից: Ձայն հնչեց, որում միախառնվել էին անհամբերությունն ու վախը.

-Ալիվեյրա, որտե՞ղ ես դու: Դու մոռացե՞լ ես, որ վաղը տոնակատարություն է, որ դու դառնալու ես Դարգուզի քրմուհիներից մեկը: Չէ՞ որ դու այնքան սպասում էիր դրան: Հավաքվելու ժամն է, աստիճանների վրա արդեն հրմշտվում են շնորհավորողների ամբոխները, արդեն թշշում է շամպայնը, գլորվում են խավիարի գնդիկները, արդեն վազելինով են պատում երկնային քանդակների համար նախատեսված մեքենաները...

Ես սեղմեցի Ալիվեյրայի ձեռքը, պայց նա պոկ եկավ, լուռ ելավ, լուսնոտի պես անցավ ռեստորանիկի մեծ պատուհանների մոտով եւ ելավ հրա-

պարակ: Հայրը տեղնուտեղը վեր թռավ, վազեց դեպի նա, գրկեց, ուղեկցեց մինչեւ սահնակները, նստեցրեց բազկաթոռի վրա եւ սկսեց նրան ծածկոցաշալերով պատել: Հետո նա հերթով լարեց բոլոր շներին, չարությամբ աքացի տվեց որմզդեղնին, որը նրա ոտքի տակ էր ընկել, եւ թռավ սահնակի վրա, նրանք տեղից շարժվեցին ու անհետացան Լիլիեւի փողոցի մթին գետաբերանում: Շուտով եկավ անասնապահը, որմզդեղները վազեցին նրա մոտ, նա համրեց նրանց եւ քշեց ետ՝ դեպի Կարլովի կամուրջը:

Գլուխ 15
Սավաններ

Ես դեռ երկար նստել էի պատուհանի մոտ եւ նայում էի դատարկ հրապարակին: Աչքերս սկսեցին փակվել, բայց այդժամ լսվեց մոտեցող ավտոմեքենայի թնդյունը եւ ինձ նինջից հանեց. ես բացեցի աչքերս եւ տեսա, որ Կլամ-Գալասի պալատից գալիս է աղբի մեքենան՝ այն ապակյա էր, թափանցիկ պատերի ետեւում հառնում էր փայլփլուն ոսկյա զարդակույտը, որի վրայով սողում էին կանաչ օձեր, զարդերի մեջ ցցված էր մետաղյա ոտքի վրա վառված ձողաջահը, իսկ դրա տակ սպիտակին էր տալիս փռված մահճակալը, որի վրա գրկախառնվել էին մերկ սիրահարները: Մեքենան կանգ առավ «Կապույտ գայլածկան մոտ» գարեջրատան մերձակայքում, հավաքարարները դուրս ցատկեցին ետնամասից եւ դրա մոտ քաշեցին մայթի վրա դրված տակառները: Դրանք մեքենայի մեջ նետեցին, եւ տակառներից թափվեցին նոր թանկարժեք իրերն ու գալարվող կանաչ օձերը. զարդերը գլորվում էին մահճակալի շուրջը, օձերը փաթաթվում էին ձողաջահի ոտքին: Լսելով թանկարժեք իրերի զրնգոցը, սիրահարներն ավելի ամուր սեղմվեցին միմյանց եւ տեմպն արագացրին: Ես կրկին փակեցի աչքերս եւ լսում էի՝ ինչպես էր աղբի մեքենան հեռանում, նրա շարժիչի ձայնն ավելի ու ավելի էր թուլանում, մինչեւ որ լռեց տների պատերի ետեւում:

Հեռվից բզզոց լսվեց, այն ավելի ու ավելի սաստկանում էր: Ծուտով հրապարակի վրա սպիտակ ուղղաթիռ երեւաց, որի տակ ոռնացող վագրի գլուխ էր նկարված: Ուղղաթիռն ավելի ցածր եւ, օրորվելով, կախվեց առ ձյունը՝ մարդահասակ բարձրության վրա: Ներսում վառվեց վառ լուսարձակը, կտրուկ լույսի շողը սահում էր ճակատամասերով, գարեջրատան դատարկ սրահով, ելնում էր վեր՝ դեպի կտուրները, կրկին ներքեւ էր իջնում, եւ ետնադռան արանքով անցավ տան խորքը:

Ես թափառում էի մթին միջանցքների, մուտքերի, բակերի ու աստիճանների լաբիրինթոսում: Կանգ առա ապակեպատ պատկերասրահի մոտ, որի պատուհանները նայում էին փոքրիկ բակին, նրա ձյունապատ հատակին սեւին էր տալիս գորգեր ծեծելու վերադրակը: Ուղղաթիռի բզզոցը չէր լսվում: Լուռ էր, միայն պատկերասրահի ծայրի ծորակից կաթում էր ջուրը քրքրված կոնքամանի մեջ, ինչ-որ դռներից խռմփոց էր լսվում:

Ես բացեցի վերջին դուռը, մտածելով, որ դա ելքն է, բայց այնտեղ բնակարան էր: Մթին նախասրահում ինձ վրա փչեց վերարկուի եւ կոշիկի հոտը, ես անցնում էի նեղլիկ, չլուսավորված սենյակներով, մինչեւ որ ննջարան ընկա: Պատուհանի մեջ երեւում էր տան լռին ճակատամասը փողոցի այն կողմում: Բնակարանը պաղ եւ դատարկ էր: Ծրշյուն լսվեց,ես վախեցա ու ճչացի, բայց դա ընդամենը ինչ-որ տեղից ելած կատու էր. նա մոտեցավ եւ զննող հայացքով, փայլկտուն աչքերով նայեց ինձ: Հայացքս ընկավ բացված անկողնու վրա, ես ուզեցի փոքր-ինչ ննջել. հանվեցի եւ ներքնաշորով պառկեցի պաղ ու ծանր վերմակի տակ:

Ես պառկել ու նայում էի հակադիր տան մթին պատուհանների շարքին: Հետո շրջվեցի մյուս կողմի վրա եւ ձեռքս առ խավար երկարեցի, բայց մատներս պատի դեմ չառան: Դա ինձ զգոնացրեց: Մի՞թե ես նորից հայտնվել եմ ինչ-որ անծավի մուտքի մոտ, որի խորքում ինձ ինչ-որ մեկը դարանակալում է: Ես մահճակալի վրա ծնկի ելա եւ չորեքթաթ սողացի զսպանակվող ներքնակների վրայով դեպի խավարը, մահճակալը չէր վերջանում, այն ավելի լայնացավ, ես ելա ու քայլեցի բոբիկ ոտքերիս տակի փափուկ հարթավայրով՝ ծածկված ճմռթած բարձերով ու սավաններով, որոնց աղոտ լուսավորում էր ինչ-որ հյուսիսափայլ, որ դողում էր սպիտակ դաշտի վրա, սավանների ծալքերն ու ճմռթած վերմակները դրա լույսի ներքո նմանվում էին պառկած արծվառյուծների եւ սֆինքսների: Ես, ինչպես ձնեթմբերի վրայով, անցնում էի վերմակների միջով եւ ընկնում էի հարթավայրի վրա, որը մեղմացնում էր անկումն ու օրորվում իմ տակ: Որոշ տեղերում լսվում էր քնածների շնչառությունը, քնատ քրթմնջոցն ու ճիչերը գիշերային մղձավանջներից, երբեմն ես ոտքով դիպչում էի ինչ-որ քնածի: Թեթեւ քամի բարձրացավ, սավանները հարթավայրի վրա ուռեցին եւ իրար անցան, նրանց շրշյունը խառնվում էր քնատ շնչառությանը: Վերմակային հարթավայրը վեր ելավ, իմ առջեւ հառնեցին բլուրները՝ սավաններով ու վերմակներով ծածկված, այդ վերմակապատ բլուրներով գալիս էին դահուկորդները եւ դահուկորդուհիները գիշերանոցներով, ներնքնաշապիկներով ու ներքնազգեստներով: Ես մոտեցա թեք կտուրով ապակյա կառույցին, որը հիշեցնում էր «Խաչմերուկի վրա» սրճարանը Կրկոնոշում, տնակի առջեւ՝ ներքնակների միջեւ երեւում էին փոքրիկ ծաղիկներով, ժապավեններով եւ այլ նախշերով զարդարված դահուկները, որ ընտել էին անկողնային սպիտակեղենի համար: Ես ներս մտա, սեղանիկների մոտ նստած էին գիշերազգեստներով մարդիկ: Ես տեղավորվեցի պատուհանի մոտ եւ զննում էի ստորոտի դահուկորդներին: Հարեւան սե-

ղանի մոտ նստած էին վարդագույն գիշերաշապիկներով երկու տիկին, ես լսեցի նրանց խոսակցությունը.

-Վաղը մեզ հետ սարեր կգա՞ս:

-Ես վախենում եմ. հայտարարեցին հրաբխի հնարավոր գահավիժման մասին, ես ոչ մի կերպ չեմ կարողանում մոռանալ այն մասին, թե ինչպես իմ դասընկերուհին ընկել էր հեղեղի տակ եւ մի քանի ժամ պառկել խավարի մեջ՝ վերմակների տակ, մինչեւ որ նրան հոտոտելով գտավ շունը: Այդ ժամանակաընթացքում նա բանաստեղծություն էր հորինել, որում խոսվում է ոսկե մոտոցիկլետների մասին, լուսաճաճանչ տեսանողի ուղեղում, եւ այն մասին, թե ինչի է պետք, որ պարտվողները կարեկցեն հաղթողներին: Այդ բանաստեղծության բառերը ոչխարների մասին են, ինչ-որ տեղից համառորեն ծգվում են երկար ու հաստ էլեկտրական ճոպանները դեպի «Եվրոպա» հյուրանոցի սրճարան՝ այցելուներով լի. վշտացած ոչխարների համանման գործողությունները ընկան վիթխարի որմնանկարի սյուժեի հիմքում, որի առջեւ իմ աներորդու վրա, որ վերադառնում էր փիլիսոփայության կոնգրեսից, որտեղ նա զեկույց էր կարդում այն մասին, որ մետաֆիզիկայի գլխավոր խնդիրը անհրաժեշտ է լուծել ընկույզով մյուսլիի ոգով, հարձակվել էին ձկնավաճառ կանայք, նրանք բռունցքներով խփում էին նրա դեմքին եւ գոռում. «Լավ դիմակավորված խճուղային ցանց է, դա նույնքան վեհանձն է, ինչպես կենդանին, որին բոլորը որսում են դաշնամուրի սոնատների համար, մեզ համար նոր ծյունանուշիկ սարքիր, տխմար»: Բայց նույնիսկ դրանից հետո չէր կարողանում պատասխանել այն հարցին, որը նա համարում է մետաֆիզիկայի գլխավոր խնդիրը:

-Այո, անուրախ պատմություն է:

Ես հաճույքով ավելի հեռու կներթափանցեի դեպի այդ խորհրդավոր տարածությունը. նույնիսկ փորձեցի մագլցել լեռը, բայց վերելքն ավելի ու ավելի կտրուկ էր դառնում, եւ ես ստիպված եղա հրաժարվել այդ գաղափարից: Ես դարձյալ իջա եւ փորձեցի շրջանցել լեռնազանգվածը, բայց փափուկ վերմակներով լեռները մթին բացվածքների հատակին ավելի ու ավելի ուղղաբերձ էին: Ես կամացուկ քրթմնջոց լսեցի ու անհանգստացա: Հարթավայրի վրա կարմիր կրակներ հայտնվեցին, որոնք արագ մոտենում էին ինձ: Դա փորատակին ոռնացող վագրի գլուխ պատկերող գծանկարով ուղղաթիռն էր: Ես վազեցի, սակայն խճճվեցի սավանի մեջ եւ ընկա ներքնակների վրա: Ուղղաթիռը քարացավ, այն ցածր կախվել էր հարթավայրի վրա. սավանները, արթնացած մրրիկից, որը բարձրացավ պտտվող պրոպելերից, օդում խելագար պար էին սարքել: Ինձ կուրացրեց լուսար-

ձակի լույսը, մեգաֆոնից խեղված խստամբեր ձայն հնչեց.

-Դուք մեղադրվում եք Սահմանի անօրինական խախտման, հարցուփորձի, սրբազան շնածկան կանխամտածված սպանության եւ արգելված ձայնավորների արտասանության մեջ: Դիմադրությունն անօգուտ է, ձեռքերդ գլխի ետեւը:

Ես սկսեցի փախչել, ես սուրում էի սավանների պաղ գեյզերների միջով, որ վեր էի թռչում ինձ հետապնդող լուսարձակի կտրուկ լույսի տակ: Քնքուշ, ինչպես մեղեդի նվագող ժամացույց, խոսք բացեց կողաթնդանոթը. փամփուշտները խրվում էին բարձերի ու վերմակների մեջ, ծակերից ելնում էին փետուրների ու աղվամազի ամպերը եւ սուրում տարուբերվող սավանների միջեւ: Ես ընտելացա վազքի մեջ ներքնակի զսպանակներն օգտագործելուն, երկար թռիչքներ էի գործում, եւ որքան ընկնում էի հարթավայրի վրա, այնքան ավելի վեր ու հեռու էր ինձ նետում ներքնակը, իմ թռիչքները դառնում էին ավելի ու ավելի երկար, ի վերջո աղեղնաձեւ թռա վերմակածածկ, մի քանի տասնյակ մետր վար գտնվող քնածների վրայով: Սակայն ուղղաթիռը վրա հասավ ինձ եւ, ասես վիթխարի զազրելի միջատ, թռավ առջեւովս. ես ընկա վերմակի վրա եւ նայում էի՝ ինչպես է ուղղաթիռը մոտենում եւ իջնում, ինչպես են վերմակներն ավելի ու ավելի վեր բարձրանում. դրանցից մեկը փաթաթվել էր պրոպելերի վրա, ուղղաթիռը տատանվեց եւ փլվեց մահճակալին, նրա պտուտակը պտտվում եւ պատռում էր սավանները, վերմակներն ու ներքնակները եւ օդ էր հանում փետուրները, պորոլոնի լաթակտորներն ու կտորները, իսկ հետո պայթյուն թնդաց, որի ձայնը ներդաշնակ ակորդ էր հիշեցնում՝ վերցված բազում փողավոր գործիքներով, եւ ուղղաթիռը կործանվեց պաղ կապույտների մեջ:

Ես մնացի այնտեղ պառկած, եւ փոքր-ինչ ննջեցի: Ես այնքան էի հոգնել կատաղի հետապնդումից, որ ուժերս չբավեցին նորից դեպի լեռներ ուղեւորվել եւ գտնել լեռնանցքը, որով կարելի էր ներթափանցել այլ տարածության խորքը, եւ ես անկողնային հարթավայրով մթին սենյակ անցա: Այնտեղ հագնվեցի եւ այն է՝ պատրաստվում էի գնալ, երբ հնչեց կտրուկ թակոցը պատուհանին: Ապակու ետեւում նստած էր թռչուն-ասմունքող Ֆելիքսը: Ես ուրախացա, որ կրկին տեսնում եմ նրան, եւ տեղնուտեղը փեղկերը բացեցի, բայց Ֆելիքսը, մնալով դրսի լուսամուտագոգի վրա, գլուխ տվեց եւ սկսեց արագ բանաստեղծություն կարդալ, որը նա փորձում էր արտասանել դեռ մեր առաջին հանդիպման ժամանակ, Սուրբ Վիտայի տաճարի կտուրի վրա: Նա կարդում էր մեծ պաթոսով եւ հատուկ շեշտում էր տեղերը, որոնք նրան ընկալման համար կարեւոր էին թվում, թեւաբա-

խումով եւ ցածր գլուխ տալով, այնպես որ՝ ես վախենում էի, թե նա լուսամուտագոգից վար կընկնի.

Երգիր ծայրամասային հողերի մասին, որոնց միջին օրենքն
անհայտ է,
Բարբարոսը հարթավայրից այնտեղ գավն է պարպում լուռ
գինովցած
Հեռավոր հողերի տեղի պահապանի հետ, որոնցում
Նա, ով զուրկ է հաղթանակից, կրկին ծեռք կբերի այն
Գետի մոտ՝ անվերջ դեգերելով կամ ետնասենյակներում
Կրպակների, որտեղ քաղցրավենիքները կիտված դրված են
Ցուցափեղկերի մոտ, որ հրապարակ են ելնում,
Կամ դիպչելով զանազան իրերին տարածության մեջ աննպատակ:
Երգիր նոր պատմության մասին, ուր արեւափայլն է
եւ ամայությունն այգում:
Ամոթ, ասում են, կարգապահության անցքերից վաղեմի
մեծությունն է շողում,
Իշխանությունը, ամենքից մոռացված, որ առաջվա պես իշխում է
գաղտնի
Մայրաքաղաքային զգեստների շրշյունում, տեւական
պարահանդեսն է բացում,
Հնչյուններն է ժողովում եւ վերաբացահայտում իմաստը մոռացված
բառերի,
Գաղտնի իշխանությունը, որ մեր ծրագրերի փոխարեն բալետ է
ազդարարում
Ցունգլիներում խուլ եւ որ աչքից աննկատ ժեստերում է ապրում,
Ասես ոսկե դղյակներում, որ հեռավոր լեռներում են թաքչել:
Ծայրամասերը, ուրկից գիշերային լռության մեջ հրեշների ձայնն է
ծորուն...

Այս խոսքերն ասելիս Ֆելիքսը ուժգին թեւերը թափահարեց՝ եւ ես ինձ չզսպեցի: Ներքեից վախեցած ծվծվոց լսվեց, բայց, բարեբախտաբար, թռչունը կարողացավ հավասարակշռությունը պահել. նա տեղնուտեղը կրկին թռավ լուսամուտագոգի վրա եւ շարունակեց.

Ծայրամասերը, ուրկից գիշերային լռության մեջ հրեշների ձայնն է ծորուն
Լսվում, ծուլվելով ջրի կարկաչին զուգարանում եւ գնացքի ճիչին
Ուղեկամրջի շուրջբոլորը, ուր հուսահատությունն է հնչյուններին տիրում:
Լսելի է հիասքանչ մեղեդիի միասնության մեջ, որի պատկերներում
Տեսնում ենք մողեսներին, հիանալի առագաստանավերի վրա մրրկալից ծովի,
Որպեսզի այնուհետ լուծվեր մեղեդիում այդ կանչող:
Ծայրամասերը, ընկեր իմ, դա կենտրոնն է, իսկ մենք տարաբնակվել ենք ծայրին,
Գաղտնիքը քեզ կբանա Ֆելիքս թռչունը, որ հնավանդ տողերն է սովորել՝
Նստած այն ռոբոտների ուսին, որ դեգերում են գաղտնի ճամփեքով:
Դե, լսիր, անցորդ, այն մասին, որ վերջի կենտրոնի շողանքը
Միայն ծանոթ աշխարհից անդին կգտնես, պարտասելով ճամփին,
Բայց արթմնի չես հասնի ցանկալի շրջանի սահմաններին,
Նույնիսկ անսահման քո կյանքի օրերի ուղին քո անցնելով տարեցտարի,
Անցնելով ճերմակ տաճարները արծաթե ճամփեքի, անտառներն անգազան ու Անծածկ կամ սրճարանը, ուր սպասյակները գողանում են սնունդն այցելուների,
Այնպես որ՝ վերջիններիս անհանգստացնում է ճակատագիրը քարադամբանների,
Որ պահարանում էին թողել նրանք միամտաբար...

Կամացուկ թռիչքով լուսամուտագոգի վրա ելավ կատուն: Ֆելիքսը կրկին ճվճվաց եւ թռավ: Ես սպասում էի, թե արդյո՞ք նա չի վերադառնա եւ էլի ինչ-որ բան չի ասի ծայրամասերի կամ այն բանի մասին, թե ինչ պատահեց քարադագաղների հետ պահարանում սրճարանի, բայց նա այդպես էլ չհայտնվեց, եւ ես ելա բնակարանից ու իջա մթին սանդուղքով տան առաջին հարկի սրահը: Ելքի դռան կամարամահիկի միջից երեւում էր ձյունը, որ պտտվում էր փողոցային լապտերի լույսի տակ:

Գլուխ 16
Զառիվայր

Ես մթության մեջ շոշափեցի դռան բռնակը: Այն ճռռոցով բացվեց, մթին միջանցք սուրաց ծյունը եւ խփեց դեմքիս: Ես հասկացա, որ անցա մի քանի միմյանց միավորված տների միջով եւ հայտնվեցի Ամենեսկի հրապարակի կամրջի վրա: Ինչ-որ տեղից, տնքոցներին միախառնված, բարկացած հաչոց լսվեց: Ես ետ նայեցի ու քանդված վանքի մոտ երախաբաց մի մեծ շուն տեսա, որին արդեն հանդիպել էի Ստարոմեստյան հրապարկում եւ որին, դատելով ամենայնից, հաջողվել էր անցկացնել ձկնային տոնախմբությունը: Կատվածուկը փորձում էր դուրս պրծնել շան ժանիքներից եւ պաշտպանվում էր էլեկտրական լիցքերով: Ամեն անգամ հարվածից հետո շունը կաղկանձում եւ ետ էր թռչում, բայց հետո դարձյալ նետվում էր կենդանու վրա: Պարզ էր, որ կատվածուկն արդեն շատ հոգնել էր եւ որ էլէկտրական լիցքերը թուլանում են: Փոխարենը շունը հարձակվում էր ավելի ու ավելի կատաղի, կատվածկան մարմինն արնահոսում էր այն տեղերում, ուր պատառոտել էին շան ատամները. պարզ էր, որ անհավասար մարտը մոտենում էր ավարտին: Ես մոտ վազեցի ախոյաններին եւ շանը քշեցի: Կատվածուկն ուժասպառ պառկած էր ձյան վրա, արնահոսելով, նրա աչքերը երախտապարտորեն նայում էին ինձ: Ես շոյեցի նրա պաղ մարմինը: Մի փոքրիկ «Որսորդական»-ով տափաշիշ ունեի, եւ ես ուզում էի կատվածկանը մի կում տալ, բայց հետո ավելի լավ բան հորինեցի: Գրպանիցս հանեցի պղպջակը, որում դեռ փոքր-ինչ թռչող հեղուկ էր մնում, զգուշորեն բարձրացրի կատվածկանն ու բուկը մոտեցրի նրա բերանին մարմնի ներքնամասում: «Խմիր,- ասացի,- սա քեզ կօգնի»: Կատվածուկը կում արեց կանաչ հեղուկից:

Երբ թուրմը օգնեց, բնազդը կատվածկանը հուշեց՝ ինչ անի: Նրա մարմնի ծայրերը հուզվեցին, նա օդ ելավ, սահուն թռավ հրապարակի վրայով՝ երրորդ հարկի բարձրության վրա եւ դարձյալ իջավ ձյանը, ոտքերիս մոտ: Երեւում էր, որ հեղուկը նրան ուժ էր հաղորդել, դե, եւ վերքերն էլ դադարել էին արնահոսել: Սակայն կատվածուկը չթռավ, նա միշտ վերադառնում էր ինձ մոտ, իջնում ոտքերիս շուրջ եւ անհամբեր նայում էր ինձ: Թվում էր, թե նա ինչ-որ բանի հասնում է, եւ ես հանկարծ հասկացա: Ես զգույշ նստեցի նրա հարթ մեջքի վրա եւ թուրքավարի ոտքերս խաչեցի:

Կատվածուկը բերկրալի թափահարեց մարմնի ծայրերը եւ ինձ հետ սլացավ երկինք:

Ես դարձյալ լողում էի քաղաքի վրայով, խավարի մեջ թաղված, սահուն իջնող ձյան փաթիլների մեջ: Գիշերը նահանջում էր, փողոցում հայտնվում էին առաջին անցորդները՝ քաղաքի իմ մասից: Կատվածուկը սկսեց բարձրանալ լայն շրջանագծերով, եւ շուտով մենք թռանք ամպերի մեջ: Մենք դուրս լողացինք ամպերի վրա դալկացող աստղերի տակ, կատվածուկը ձգտում էր ավելի ու ավելի վեր, ներքեւում տարածվել էր ամպերի մթին ծովը, որը հետզհետե լուսավորվում էր արեւելքում՝ հորիզոնում հայտնվեց կարմիր արեւի ծայրը, եւ նրա շողերը տեղնուտեղը լուսավորեցին ամպերի հարթավայրը, որը վարդագունեց, վարդագույն ֆոնի վրա երեւացին սեւ ստվերները փոփոխական ալիքների կատարին: Կատվածուկը դանդաղ թռչում էր վարդագույն ծովի վրայով, ավելի հարմար տեղավորվելով նրա մեջքի վրա, ես բացեցի «Հին որսորդականը» եւ սկսեցի ըմպել այն. ինձ վշտացնում էր, որ կատվածկան երկու աչքերն էլ մարմնի վերին կեսում են եւ այդ պատճառով նա չի կարող տեսնել հիասքանչ աեւագալը ամպերի վրա:

Կատվածուկը սկսեց դանդաղ իջնել, հիմա նա թռչում էր արեւի ուղղությամբ՝ դեպի ամպերի վարդագույն հարթությունը եւ ավելի ու ավելի էր սաստկացնում արագությունը: Մեր առջեւ երկու ամպասյուներ հայտնվեցին, որ վերածվեցին վիթխարի բաների, մոտ վեցհարկանի շենքի չափ, գեղարդները ձեռքներին հեծյալ ռազմիկներ. մենք տեսնում էինք նրանց դեմքերը, երեւի դրանք հենց այն ամպային քանդակներն էին, որոնց մասին խոսում էր Ալիվեյրայի հայրը, վարպետները երկրորդ քաղաքից երեւի թե ինչ-որ տեխնոլոգիայի էին տիրապետում, որ օգնում էր նրանց գոլորշուց քանդակներ ստեղծել: Երկու քանդակներն էլ հետզհետե փոխվում էին՝ ձախակողմյան հեծյալը դարձավ բուրգ, որի սայրերին գնդեր էին, ինչպես ագռավի հինոցի վրա, իսկ աջակողմյան հեծյալը նախկինն էր մնացել, բայց փոխարենը նրա ձիու գլուխը վերածվել էր գեղեցիկ կնոջ գլխի, որ մեր կողմն էր նայում եւ երջանիկ ժպտում էր: Ի վերջո երկու ամպային քանդակները վեր ձգվեցին եւ վերածվեցին երկու ձգված ձեռքերի, որոնցից յուրաքանչյուրը բռնել էր ջղակծկված մատների մեջ շրջված ճագարի մորթի: /Հետաքրքիր է, թե ինչ էր ուզում դրանով ասել անհայտ քանդակագործը/: Կարմիր ցածրիկ արեւը շողում էր երկու վիթխարի ձեռքերի արանքում, որ իրենց ստվերներով ծածկում էին ողջ վարդագույն հարթավայրը. կատվածուկն այժմ թռչում էր արտասովոր արագությամբ, հենց

ամպերի վրայով, նա ուղղվում էր դեպի ձեռքերի միջեւ եղած լուսանցքը, որոնք մոտենում եւ աճում էին, եւ վերջապես մենք սուրացինք ցնորական դարպասների միջով: Ես շրջվեցի եւ տեսա, որ քանդակները դանդաղ փլվում են ետ, առ ամպերի ծովը:

Կատվածուկն արագությունը դանդաղեցրեց եւ սկսեց իջնել՝ երեւի թռչող հեղուկը կորցնում էր իր ներգործությունը: Մենք դարձյալ թաղվեցինք ամպերի մեջ, շուտով հայտնվեցին քաղաքի ձյունապատ կտուրները: Ձյունատեղումն ավարտվեց, փողոցներում ահագին ժողովուրդ կար: Երբ մենք անցանք միլոստրանյան կամրջաաշտարակի դիտակետային հարթակի կողքով, ես դրա սյուների միջեւ նկատեցի մատուցողի քմծիծաղող դեմքը, Ալիվեյրայի հոր՝ ստվերից երեւաց հրացանի փողը: «Զգույշ»,- գոչեցի ես, բայց հնչեց կրակոցը, կատվածուկը ձգվեց ու տարուբերվեց, նրա մեջքից արյուն հոսեց: Աշտարակի վրա չարագույժ ծիծաղեցին: Կատվածուկը կտրուկ սուրում էր զսպանակի վրայով՝ ուղիղ դեպի գետը, Կամպից մի քանի մետրի վրա ես նրա վրայից սահեցի եւ ընկա ձնեթմբի մեջ, որն առաջացել էր մայթեզրին: Կատվածուկը կորավ ջրի տակ եւ այդպես էլ դուրս չեկավ:

Ողջ օրը ես աննպատակ թափառում էի փողոցներով. ճաշից հետո ընկա քաղաքի ծայրամասը, որտեղ ձյան վրա հին աղյուսե տների հավասար երկար շարքերի միջեւ խաղում էին երեխաների երամակները: Ինչ-որ տեղ մոտակայքում կայարան կար. ես լսում էի գնացքների շչակների ձայները եւ թափարգելների երկաթյա զնգոցը: Ես մտա գարեջրատուն, որի պատուհանից բացվում էր տեսարանն առ գորշ գործարանային պատը, որ ձգվում էր ողջ հանդիպակաց մայթի երկայնությամբ: Պլաստմասե դատարկ սեղանածածկերը փայլում էին մեղմ լույսով, գարեջրասրահում ընդամենը երեք հաստլիկ էին նստած, նրանք գարեջուր էին խմում եւ հոկեյ նայում՝ գունավոր հեռուստացույցը դրված էր պատի մոտի դարակի վրա: Տերը նրանց հետ էր. նա ելավ ու ինձ գարեջուր բերեց, իսկ հետո կրկին նստեց հաստլիկների մոտ, եւ բոլորն իրար ընդհատելով սկսեցին մեկնաբանել խաղը: Հանկարծ պատկերը անորոշ եւ երկատված դարձավ, եւ էկրանի վրա առկայծեցին ինչ-որ այլ ծրագրի կադրեր:

-Էլի վատ է աշխատում: Գրողը տանի, Վաշեկ, դե, ե՞րբ վերջապես կսարքես քո «արկղը»,- դժգոհ հարեց այցելուներից մեկը:

Տանտերն արդարանալով՝ պատասխանեց,

-Երեկ հենց եկել էր վարչապետը, ասաց, որ դրա հետ ամեն ինչ կարգին է: Երեւի ինչ-որ տեղ կողքին ուժեղ հաղորդիչ է, որը խանգարում է:

Նա մոտեցավ հեռուստացույցին եւ սկսեց դրան բռունցքով խփել: Եր-

որոդ հարվածից հետո հոկեյի հարթակն ընդհանրապես վերացավ էկրանից, փոխարենը հայտնվեց հստակ պատկերը ինչ-որ ընդարձակ շինության՝ արհեստական լույսով լցված: Ես նույնիսկ չզարմացա՝ ճանաչելով ստորգետնյա տաճարը: Նստարանները նավում լեփլեցուն էին, անցումներով շարժվում էին տեսախցիկները, զարդարված միեւնույն ձղանձիգ կորված նախշերով, ինչ տաճարի պատերը: Բեմի առաջ կեցած էր մեկուկես մետր բարձրությամբ ապակյա մի տարա, ծայրեծայր լցված ոսկեգօծ հեղուկով. դրա առջեւում սանդուղք էր դրված: Ձախ կողմում կանգնած էր վարդագույն նախշով շքեղ, սեւ հանդերձանքով մի մատուցող: Աջ կողմում նստած էին վեց աղջիկ՝ ոսկեկար վիշապներով սպիտակ մետաքսե հանդերձանքներով: Դրանցից վերջինը Ալիվեյրան էր:

Ֆրի հարթության վրա ընկնող, կաթիլների հնչյուններ հիշեցնող, կամացուկ միապաղաղ երաժշտություն լսվեց: Մատուցող-քուրմը հագավ ծիսական գլխարկը, որը սարքվել էր շրջված ութոտանուց. դեպի շոշափելիքների ծայրերին, որ վեր էին ցցված եւ, հավանաբար, ամրացված էին ներսից մետաղալարով, փոքրիկ զանգուլակներ էին կախված, եւ դրանց զնգոցը ձուլվում էր ջրային կամացուկ երաժշտությանը: Հաստլիկները քրքջացին, տանուտերը խփում էր ծնկին եւ գոչում.

-Ա՛յ քեզ բան: Գժվել կարելի է:

Առաջին աղջիկը կանգնեց, հանեց հագուստները, բոլորը գարեջրասրահում սկսվեցին եւ աչքերը հառեցին էկրանին՝ մերկ աղջիկը բարձրացավ աստիճաններով եւ սահեց կնքավազանի մեջ: Նա ամբողջությամբ թաղվեց այնտեղ, կորավ հարթության տակ մոտավորապես մի քառորդ րոպե: Հեղուկը դանդաղ լցվում էր տարայի ծայրից՝ հավանաբար մեղր էր, դրա կաթիլները ծանր շրմփում էին տաճարի հատակին: Հետո աղջիկը դուրս եկավ, մեղրից կուրացա, մատուցողը ձեռքը նրան մեկնեց, օգնեց դուրս գալ եւ իջնել աստիճաններով:

Աղջիկը քարացավ կնքավազանի ձախ կողմում, մեղրը կաթում էր նրա իրար կպած վարսերից, ծորում էր մարմնի վրայից: Մեղրի մեջ թաղվեցին բոլոր վեց աղջիկները. երբ վերջինը կնքավազանից դուրս էր գալիս Ալիվեյրան, նրա դեմքը, մեղրով պատված, խոշոր պլանով ցույց տվեցին՝ նա բերանով էր շնչում, որովհետեւ մեղրը փակել էր նրա քիթը, թվում էր, թե նա ուղիղ ինձ է նայում, բայց պատկերը կրկին լուծվեց ու դողաց, իսկ երբ այն հստակվեց, ապա էկրանի վրա հայտնվեց հոկեիստներով սառցադաշտը:

-Ա՛յ քեզ բան...- քրթմնջաց հաստլիկներից մեկը:

-Ա՛յ թե անհեթեթություն ցույց տվեցին,- մեկնաբանեց հեռարձակումը

ստորգետնյա տաճարից մյուս հաստլիկը:- Ճիշտ՝ ինչպես նախորդ անգամ, երբ նկարահանել էին շնածկանը ջրարգելակում, Յանաչեկի պարսպապատ ծովափին:

-Դե չէ, երբեմն հետաքրքիր է լինում,- տանտերն անցավ իր հեռուստացույցի պաշտպանությանը:- Հիշո՞ւմ եք այն կատակերգությունը տխմարի մասին, որ մարտնչում էր աշտարակի վրա շնածկան դեմ: Ա՛յ թե ծիծաղելի բան էր:

Ես մի գավաթ գարեջուր էլ խմեցի եւ մինչեւ վերջ նայեցի հոկեյի խաղակեսը: Բայց ստորգետնյա տաճարն այլեւս էկրանին չհայտնվեց: Ես վճարեցի ու եւ ելա մթնաշաղոտ փողոց, որտեղ դարձյալ սկսվեց ձյունատեղումը:

Գլուխ 17
Ջրարգելակում

Ես ճամփա ընկա ետ, դեպի քաղաքի կենտրոնը. իջա առափնյա դարասկզբի վիթխարի վարչական շինությունների եւ վանդակների երկայնքով, որոնց ետեւում սպիտակ էին տալիս ծյունածածկ զբոսայգիները, կտրուկ քամին դեմքիս էր նետում մանրիկ փշոտ ծյունը, ես քայլում էի կկոցվելով, եւ փողոցային լապտերների ու ավտոմեքենաների լուսարձակների լույսն անորոշ էր թվում: Ես քայլում էի ափափողոցով՝ մերկ ու սեւ ծառերի տակ, փողոցի մյուս ծայրին ձգվում էին կարիատիդներով խաղաղ ճակատամասերը, որ նեցուկ էին լինում պատշգամբներին, ներքեւում, մետաղական պատվարի տակ, հոսում էր մթին գետը, թաքնված փութկոտ հետիոտների աչքերից, ճիշտ նույնպես, ինչպես մարմինների կամացուկ կյանքը, ինչպես ուրվականներ անկյուներում: Ես նայում էի մթին ջրային հարթության՝ դրա վրա շողացող կրակներով եւ մտածում էի այն մասին, թե որքան էր վերջին օրերի ընթացքում փոխվել իմ ընկալումը. ծիծաղեցի՝ ես դարձել էի համարյա թե նրանց նման, պահարաններից եւ խցիկներից, ես նկատում եմ լոկ աշխարհի ամենամնացուկը, նրա ծայրամասը, որի գոյության մասին իմ աշխարհում համարյա ոչ մեկը չգիտի, այնժամ, երբ ձեւերը, որոնց վրայով շատ տարիներ սահել է իմ հայացքը, հետզհետե աղոտանում են մշուշում: Դե, իսկ ե՞րբ ես ինքս ուրվական կդառնամ:

Անցնելով ափափողոցի եւ կղզու միջեւ ընկած ջրարգելակի մոտով, հիշեցի գարեջրատան խոսակցության մասին: Ես հենվեցի պաղ բազրիքին եւ վար նայեցի: Ջրամբարի դարպասների երկու փեղկերը գտնվում էին ջրի մակարդակի վրա, կիսախավարում՝ ջրարգելակի կղզու մասում քարակույտերով պատին էր սեղմվել երկար լաստանավը՝ գետավազի բուրգերով, որոնց վրա ծյուն էր նստել: Ես տեսնում էի դատարկ եւ մթին ապակեպատ կապիտանական նավախցիկը: Կամրջակով անցա կղզի եւ երկաթյա սանդուղքով, որ հարմարեցված էր ջրարգելակի քարե պատին, բարձրացա տախտակամածի վրա: Այնտեղ ես նավախուց մտա: Սարքատախտակի վրա լուսավորվում եւ կամացուկ տկտկում էր թվացույցը, ապակյա պատի միջից երեւում էին պատի խոնավ քարերը, կարմիր ազդանշանը ջրարգելակի փակ մետաղյա դարպասների վերեւում, որ արտացոլքեր էր նետում ծյունապատ թփի վրա, աշտարակի ուրվապատկերը

Իրասեկի կամրջի վրա: Հանկարծ նավը տարուբերվեց: Ջրի հարթությունը դողաց եւ սկսեց իջնել, ես նայում էի, թե ինչես մեկը մյուսի ետքից մերկանում են պատի քարերը: Ծուտով ես հասկացա, որ ջրի մակարդակը վաղուց արդեն հասել է լաստանավի տակի գետի մակարդակին: Սակայն ջուրն անընդհատ ինչ-որ տեղ հոսում էր, ջրարգելակային դարպասներն արդեն ամբողջությամբ երեւում էին, դրանք կեցած էին լայն քարե հիմքեր վրա. նավը դանդաղ իջնում էր խորացող վիհի մեջ, սահմանափակված կողմերի վրա չորս քարե պատերով: Խորքում՝ ջրի տակ լույս երեւաց, այն բարձրանում էր վեր այն ժամանակ, մինչեւ որ դուրս եկան լուսավորվող պատուհանները: Դրանք հայտնվում էին շարք շարքի ետեւից, բոլոր չորս պատերում. պատուհաններից մի քանիսը մթին էին, բայց հիմնականում լույսը դրանցում վառվում էր, ապակիների ետեւում երեւում էին սենյակները, որոնք համարյա ոչնչով չէին տարբերվում քաղաքի մեր մասի սենյակներից,- տարբերությունը սոսկ այն էր, որ գլանի օգնությամբ ներկված պատերի վրա կախված էին անճոռնի գունավոր ռելիեֆները Դարգուզի պատկերով, որին խժռում է վագրը: Ջրից ցցվում էին նորանոր բնակարաններ, դրանք վեր էին լողում կապիտանի նավախցիկից վեր եւ բարձունքում անհետանում էին: Սենյակներից մեկում ընթրում էր ընտանիքը, մյուսում շապիկով ճաղատ մի մարդ զննում էր թերթի խաչբառը, երրորդում տարեց մի կին, ժողված մազերով, կռացել էր կարի մեքենայի վրա: Այժմ նավը կանգ էր առել: Ես գլուխս վեր տնկեցի, թվում էր, թե ես ընկել եմ երկնաքերների միջեւ ընկած մի բակ, իմ գլխավերեւում լուսավորվում էին մի քանի տասնյակ հարկեր, ուղղահայացները կուտակվում էին գլխապտույտ հեռանկարում դեպի բարձր՝ վերեւում առ անտեսանելի անցքը, ուրկից նավախցիկի ապակու վրա ընկնում էին մանրիկ փաթիլները: Երբեմն մի պատուհանը մարում էր, իսկ փոխարենը վառվում էր մյուսը, երբեմն պատուհանը բացվում էր, դրանում երեւում էր մթին ուրվապատկերը, լսվում էր զիլ կանացի ձայն, որ կանչում էր ինչ-որ մեկին: Հենց ջրի վրա, լաստանավի կողքին, մի մթին սենյակի պատուհան էր, որի դիմաց աղոտ լուսավորվում էր դռան փայլատ ապակին, այն տանում էր դեպի հարեւան շինություն, որտեղ լույս էր վառվում եւ թույլ էր տալիս տեսնել մոտակա սենյակում կահույքի ուրվագծերը, պահարանների թույլ, փայլկտող հարթ մակերեսները: Պատի վրա ծանր կաշվե բազկաթոռի վրա նկար էր կախված, ինձ թվաց, որ դրա անհստակ բծերում ես տարբերում եմ Ալիվեյրայի ծիծաղկոտ դեմքը, նրա՝ ծածանվող մազերով, ետ գցած գլուխը: Նկատելով, որ պատուհանը կիսագոց է, ես լաստանավից սենյակ անցա:

Այնտեղ հին պաստառի եւ չորացած դարակների հոտ էր փչում, ես անպարզ կանացի ձայներ լսեցի հարեւան լուսավորված սենյակից: Ոտնամատերի վրա գաղտագողի մոտեցա նկարին. պարզվեց, որ լիախավարն ինձ խաբել էր, դա Ալիվեյրան չէր, դա ընդհանրապես դիմանկար չէր՝ յուղաներկով արված, ոսկեզօծ շրջանակով նկարը /ներքեւում դրա վրա էր պտուտակված 2092 թվով թիթեղիկը/ պատկերում էր ինչ-որ շքեղ ամառանոցի ինտերիերը, լայն պատուհանի եւ դեպի ծածկապատշգամբ տանող դռների ետեւում ձգվում էր ծովի հորիզոնի գիծը, լուծվող տաք օդում. ծածկապատշգամբում երեք հյուսածո բազկաթոռ կար, տեղակայված սալարկված հատակին այնպես, կարծես թե դրանք անփութորեն կողմ էին տարել, երբ ելել էին. թենիսի ձեռնաթիակը դեմ էր տրվել անկյունին եւ սպիտակ լաքած բազրիքին. ետնապլանում երեւում էր կլոր ծովանեղուցը, լողափի ավազին պառկած էին լողազգեստներով մարդիկ՝ շոգից պարտասած, լողափի վրա ուղղաբերձ ելնում էր մի բլուր, որի վրա արմավենիներ եւ ձիթենիներ էին աճել, դրանց ստորոտներում խտացել էին ամառանոցները, որոնց սպիտակ պատերը տերեւուտի արանքից փայլկտում էին: Սենյակի կողապատին մի մգացած նկար էր կախված, իսկ դրա տակ ընկած էր բացգույն կոստյումով մի երիտասարդի անշունչ մարմինը, որի վրա էր հակվել, անխղճորեն կծոտելով նրա գլուխը, մի սարսափելի կենդանի. այսպիսով, ես կրկին հանդիպեցի այլ քաղաքի արվեստի ընտել մոտիվին, բայց այս անգամ կենդանի-մարդասպանը վագրը չէր, այլ տարեց մարդու հասակով մի մրջյուն: Ալ արյունը հոսում էր հատակով մեկ եւ ներծծվում էր գորգի ծոպերիզի մեջ: Սենյակի առաջամասում պատկերված էր մի գրասեղան, որի ծածկի վրա մի քանի նամակ էր գցված. դրանցից մեկի ծրարի վրա երեւում էր Societe des Bains de mer /Ծովային առողջարանների միություն/ լոգոտիպը: Սեղանի ծայրին դրված էր բացված ստվար մի հատոր. նկարի այդ մասի վրա հարեւան սենյակից լույսի շերտ էր ընկնում, եւ ես կարողացա կարդալ տեքստը գրքի էջերում. դա թվում էր «Ոդիսական»-ն էր, եւ այնտեղ մատիտով շեշտված էր այս տողը՝ «Y moi egy, teyn aute brotyn es gaian hikany?» /Եղուկ: Ինչ երկիր, ինչ մարդկանց մոտ եմ ես ընկել». կողքը, լուսանցքում մանրատառ գրված էր. «Շատ տարիներ անց վախի ձգված աղեղը զրնգոցով կտրվեց, երբ իր ոսկե դիմակով, գիշերային կրակների թունոտ արտացոլքերով շողացող, հանկարծ հայտնվեց Նա, որ լուսադեմի ժամին երգում է պահարանում: Ձեւերը հուզվեցին եւ պայթեցին. այն, ինչ ցայտեց մեզ վրա, հայտնվեց հողերից, որ ընկած էին հաճույքի եւ նողկանքի ամենահեռավոր սահմաններից անդին, մահճակալի

տակի դատարկ ճամպրուկներից: Որքան էլ տարօրինակ է, պարզվեց, որ այդ անհայտ հանքախորշն է մոռացված ներքնաշխարհներից, դանդաղ սպրդող մակերեսի անցքերից, որ կարող է ապահովել աշխարհի ամբողջականությունը, որին մենք դադարեցինք հավատալ արդեն շարժական լողացող բներում, դեգերող ամայի գյուղական ճամփեքով, շրջանակված սալորենու ծառուղիներով. առաջին անգամ միտք հղացավ, որ հրեշները, հնարավոր է, մեր ընկերներն են: Փույթ չէ, որ կապող նյութը ծնվող ամբողջականության՝ գարշահոտ խառնաճարակ է, որ մեր դեմքերը դարձյալ կնկարվեն սպիտակ սյուների վրա, ջունգլիներում խոյացող: Դրանց բարձունքներում նստած են կանաչ կապիկները, լճից լսվում է հովազի ոռնոցը: Այսօրվանից մենք կմոտենանք ցանկացած ափի դատարկ ձեռքերով ու ժպիտով, որը բնիկներին ավելի շատ կվշտացնի, քան այն, որ մենք նախկինում խարխլում էինք հենարանները: Դա գրավիչ կլինի: Մեր համառ սիրալիրությունը չի կարողանա հաղթել ոչինչ աշխարհում, «Քնքշություն առ հրեշները» լոզունգը, որտեղ վերջապես հիշատակված է գավաթների կամացուկ շրխկոցը ճամփեզրյա բնակարանների ցուցափեղկերում, որ նորից կներբերվի հանրագիտարանի մեջ եւ կնշվի սրբազան ներկով՝ երփներփող հիվանդագին սառցե տաճարում: Վայրի գազանները, որոնք թափառում էին մեր ժեստերում, ազատագրվել եւ պարում են այժմ ամեն գիշեր հրապարակում՝ ժամատան տակ: Մեզ հետ արդեն ոչինչ չի կարող պատահել, մենք արդեն վախենալու բան չունենք: Քնքուշ հպումներն անուշաբույր մաշկի եւ սուր ատամների հիանալի աշխատանքը անբաժանելի են տոնախմբությունից, որ տարածվում է համաստեղությունից համաստեղություն: Թող գա Նավզիկեն աղջիկների հետ, թող սողա ավազի վրայով հրեշների նախիրը...»: Տեքստն ավարտվում էր գծով, որ տարածվում էր ողջ էջի լայնքով եւ մի տեղ ճեղքում էր այն. երեւի դա հետքն էր այն պահի, երբ մրջյունը կառչել էր գրողի ծոծրակից եւ նրան սեղանից մի կողմ էր քաշել:

Պատից կախված նկարի վրա մրջյունի եւ երիտասարդի վերեւում, Պրահայի կենտրոնական կայարանն էր գիշերը՝ հեռու-հեռու, բլրատակի վերջին ճամփին կանգնած էր գնացքը, դրա պատուհանները մթին էին, եւ միայն մեկը վառ մանուշակագույն լույս էր արձակում: Անցնելով ռելսերի սարդոստայնով, որոնցում արտացոլվում էր վագոնի պատուհանիկի եւ ազդանշանորդների լույսը, դեպի շողացող ուղղանկյունն էին քայլում մարդիկ, որ տարօրինակ ընծաներ էին կրում՝ նրանք քարշ էին տալիս կենդանիների մեծ խրտվիլակներ եւ անհասկանալի, բարդ սարքեր, երկու երկա-

թուղագործ անճարտար քարշ էին տալիս փայտակոճերի վրայով մի վիթխարի նկար, որի վրա պատկերված էր հյուրանոցի ռեստորանը, որ սովորաբար տեղակայված էր լինում հրապարակի վրա՝ քաղաքապետարանի եւ դրամարկղի հարեւանությամբ. շինությունը, ողողված վառ առավոտյան լույսով, դատարկ էր, լոկ առանձին գրասենյակի խորքում թերթի վրա էր հակված ճերմակահեր մի պարոն, պատի վրա կախված էր ծխախոտի ծխից մգացած նկարը, եւ ինձ թվաց, թե դա հենց այն է, որի կողքին ես կանգնած եմ՝ ինտերիերը մերձծովափնյա ամառանոցի, որտեղ վիթխարի մրջյունը սպանում է երիտասարդին:

Ողջ այդ ընթացքում, քանի դեռ ես զննում էի պատի նկարը եւ դրա պատկերները, ապակյա դռան ետեւում հնչում էին անհստակ կանացի ձայներ ու ծիծաղ: Ես այնքան էի հրապուրված կտավներով, որ ուշք չէի դարձնում հարեւան սենյակից հասնող ձայներին: Հանկարծ ինձ թվաց, որ ինչ-որ մեկը տվեց այն փողոցի անունը, որի վրա ես ապրում եմ: Ես կանգնեցի դռան կողքի պատի մոտ եւ ականջս սեղմեցի միջատախտակին: Կանացի ձայն էր լսվում, որը հրապուրված պատմում էր.

-Նա նույնիսկ չգիտի, որ այս փողոցը հինավուրց երկար ճանապարհի մասն է, քաղաքների, անտառների եւ հարթավայրերի միջով տանող դեպի ջունգլիների ոսկե պալատը, մարդկանց մեծ մասը մոռացել է ճանապարհի առանձին հատվածների միջեւ ընկած կապի եւ պատճառի մասին, որից ճանապարհը հայտնվել է եւ որը մինչեւ այժմ թաքուն իշխում է դրան: Ճանապարհը հաճախ կորչում է, այն անհնար է գտնել խոտերի մեջ, դրա եզրերը ծուլվում են անտառափին, քչերը կնկատեն դրա ճամփեզրյա սյուները՝ բազմադարյան անձրեւներից կոկված եւ մամռապատ, սովորական քարերից: Նույնիսկ նա, ով գլխի է ընկնում ճանապարհի իսկական էության մասին, կարող է կասկածել, թափառելով երկար ամիսներ ու տարիներ գյուղական գարեջրատների անվերջանալի միջանցքներով՝ խոնավ սվաղ հոտող, հատակի իրար եկող սալիկներով՝ եղինձով աճած բակերում, բլրակների միջեւ ընկած անվածիրերով, հնոտիքով լեցուն պատշգամբներում եւ պատկերասրահներում, նա կմտածի, որ այդ նեխահոտ տեղերը կարող են լինել ճանապարհ դեպի պալատը՝ ճամփա ընկնելիս, նա պատկերացնում էր վսեմ համաչափությունն ու լուսաշերտերը գրանիտե քանդակազարդ սյուների միջեւ, նա կկարծի, թե վաղուց շեղվել է ճամփից, եւ կհրաժարվի որոնումներից՝ գուցե թե, հենց այն բարետես փտած դռան կողքին, որի ետեւում բացվում են թագավորական սրահները:

-Այո,- ծիծաղեց մյուս կինը,- ճանապարհն իսկապես ճանապարհ է

դառնում հենց այնժամ, երբ լուծվում է բնապատկերում, երբ մեզ թվում է, որ այն ավարտվել է, այդժամ հալչում է եւ նպատակը՝ դա մեր պատկերացումն է, անբաժան տեղից, ուրկից մենք սկսում ենք մեր ճամփորդությունը, եւ այն մշտապես մեզ ետ է ձգում. լոկ այդ ժամանակ մեր մեջ կհայտնվի հույսը՝ հասնել ճանապարհի վերջին, երբ մենք կմոռանանք եւ ճանապարհի, եւ նպատակի մասին, երբ կսուզվենք տարածության մեջ եւ կթույլատրենք դրան տանել մեզ իր անփութկոտ հոսանքով, թագավորական պալատը կշողա գիշերվա շեմին ծառերի արանքում լոկ այնժամ, երբ մենք հաստատապես կմոռանանք այն մասին, որ մի օր կտեսնենք այն:

-Զվարճալի է,- ասաց երրորդ զվարթ կանացի ձայնը:- Նա չգիտի, որ ճանապարհի վերջն իշխում է դրա բոլոր առանձին հատվածների վրա՝ նա քայլում է ծանոթ փողոցներով անհայտության մեջ, մոտենում է ոսկե պալատին կամ էլ թե հեռանում է դրանից:

-Իսկ ի՞նչ է նա հիմա անում,- ընդհանուր ծիծաղը ծածկեց ձայներից մեկը:

-Նա հարեւան սենյակում զննում է նկարը:

Ես քարացա եւ սեղմվեցի պատին:

-Ոչ, այլեւս չի զննում, ավելի շուտ դռան տակ ականջ է դնում: Ի՞նչ եք դուք կարծում՝ նա մեզ լսո՞ւմ է:

-Թող որ լսի, միեւնույն է՝ ոչինչ չի հասկանա:

-Չի հասկանա, չի հասկանա,- զրնգուն ծիծաղում էին կանացի ձայները,- չէ՞ որ նա չհասկացավ՝ ինչ էր ուզում նրան հաղորդել Նա, Ում Կծել էր Մրջյունը:

-Նա հիմար է,- հրճվում էին ձայները,- դե, որտեղից նա հասկանա կծվածի խոսքերը:

Ինչ-որ մեկն ասաց, ծիծաղից խեղդվելով.

-Երեւի թե նա վախեցել է այն բանից, ինչ տեսել է նկարում, նրան հայտնի չի, որ երկար տարիներ իր սեփական բնակարանում նրա հետ կապրի շատ ավելի մեծ միջատ: Ըստ իս, վիթխարի մի ճանճ:

-Ճանճ: Ճանճ,- բերկրալի գոչեցին ձայները:

Կրկին զրնգաց հրճվալի ծիծաղը, խոսացողները ծածկում էին միմյանց. «Նա կսնվի իր գրադարանի գրքերով, նա իր կնճիթով վար կբերի դրանք դարակներից»: - «Ճանճը հավատարիմ կլինի նրան. երբ նա ուղեւորվի էքսկուրսիայի, նա կգնա նրա ետեւից, եւ նրան չի հաջողվի քշել նրան»: - «Իսկ գնացքում նա կխցկվի նրա հետ լեփլեցուն կուպեն»: - «Իսկ հետո նա կգնա զննելու դղյակը, եւ ճանճը կաճյա հողաթափերով կսահի մանրատախտակի վրայով՝ սրահից սրահ»:

Ես դուռը բացեցի: Լուսավորված շինությունը, որի շեմին ես կանգնած էի, մի հին բուֆետով խոհանոց էր, ծածկված կրեմագույն լաքով եւ կլոր սեղանով՝ սփռոցով փռված: Խոհանոցում ոչ ոք չկար: Փակ պատյանի պատի մոտ կեցած էր նվագարկիչը պտտվող ձայնասկավառակով, դրա ծրարը, զարդարված Ալպերում ինչ-որ հյուրանոցի գունավոր լուսանկարով, հենած էր պատին:

Կանացի ձայները հնչում էին փոքրիկ ռեպրոդուկտորից, որ դրված էր նվագարկիչի կողքին: Նրանք եւս ինչ-որ բան էին ճչում ճանճի մասին եւ ծիծաղում էին, իսկ հետո ասեղը հասավ ձայնապնակի կենտրոնին, եւ ձայները լռեցին: Ես ասեղը ետ տարա եւ կրկին լսեցի. «...որ երկար տարիներ իր իսկ սեփական բնակարանում նրա հետ կապրի շատ ավելի մեծ միջատ...»՝ ամեն ինչ ճշգրտորեն կրկնվում էր, միանույն խոսքերը, նույն ծիծաղը: Կարկաչյուն լսվեց, ես հասկացա, որ ջրի մակարդակը ջրարգելակում կրկին բարձրանում է, արագ անցա խոհանոցով, մթին սենյակով, ելա լուսամուտագոգի վրա, որի միջով արդեն ներս էր ծորում ջուրը, վերջին պահին ճանկվեցի հեռացող տախտակամածից եւ բարձրացա լաստանավ: Ես պառկեցի ձյունածածկ ավազե սարի վրա եւ հայացքս վեր պարզեցի, դեպի երկար ուղղահայաց թունելը, որի միջով տեղում էր ձյունը. ձայնապնակի կանացի ծիծաղը սսկվեց ջրի տակ, լուսավորված պատուհանները անհետանում էին ջրի հարթության տակ, շուտով նավն արդեն կանգնած էր այնտեղ, որտեղ ես առաջին անգամ տեսա այն:

Գլուխ 18
Կայարան

Լեգիայի կամրջի վրա ընկած էր թարմ կուսական ձյունը՝ լապտերների լույսի ներքո կայծկլտող: Ես շուրջբոլորս նայեցի՝ ավազով լաստանավն անդորրավետ հանգստանում էր պատի ստվերում: Ես հիշեցի նկարի վրայի գնացքի մասին, որ կախված էր ծովափնյա ամառանոցում, եւ որոշեցի գտնել այն: Իմ ճամփան ընկած էր դեպի Կենտոնական կայարան: Ես մոտենում էի դրան Երուսաղեմյան փողոցով, ապակեպատ սպասասրահում շողում էին ձյունապատ պուրակի ծառերի մթին բների ուրվագծերը: Ներսում, քարե նստարանների վրա մի քանի մարդ էին քնած, վերարկուներով փաթաթված, շողշողուն հատակի վրայով համարյա անլսելի անցնում էր լվացող մեքենան, որը վրա նստել էր բացգույն կոմբինեզոնով մի երիտասարդ: Ես անցա սալիկով երեսպատված անցումով եւ աստիճաններով բարձրացա վերջին կառամատույց: Կառամատույցի ետեւում ոչինչ չկար, խավարում աղոտ փայլող ռելսերի սարդոստայնից բացի: Երկար տախտակամածի վրա մի քանի ուղեւոր էին նյարդային քայլում, որ սպասում էին մինչեւ Բրատիսլավա ճեպընթացի մեկնելուն. գնացքն արդեն կանգնած էր տախտակամածի մյուս կողմում, իջեցված պատուհանի ետեւում երեւում էր զինվորի անշարժ կերպարանքը: Ներսից քրտնած ապակիներով լուսավորված կրպակում ես թղթե բաժակով գարեջուր գնեցի. դաստակներս դնելով նեղլիկ վաճառասեղանի վրա, որ ծգվում էր կրպակի կողքի երկայնությամբ, ես կամացուկ գարեջուր էի ըմպում եւ նայում ուղիների միահյուսումներին, որոնց գծերը ընդհատում էին ինչ-որ առեղծվածային կոնստրուկցիաների սեւ ուրվապատկերները. ես չէի կարողանում որոշել այդ ինչ է՝ երկաթուղային մեխանիզմներ կամ էլ թե այլ քաղաքի սրբազան քանդակներ. հնարավոր է՝ դա միաժամանակ թե մեկն էր եւ թե մյուսը: Ես տեսնում էի պահուստային ուղիների վրա ուղեւորային եւ ապրանքային կառախմբերը, լրիվ ետեւում, մացառուտով աճած ուղղաձիգ հողաթմբի տակ կանգնած էր մերծովափնյա ամառանոցի պատի վրայի նկարի գնացքը. դրա բոլոր պատուհանները մութ էին: Ես կռացա, գլուխս խցկեցի կրպակի նեղլիկ պատուհանից ներս եւ ճագարենու ժիլոտով տարեց վաճառողուհուն հարցրեցի՝ արդյո՞ք նա որեւէ բան չգիտի հեռավոր ուղու գնացքի մասին: Նա սկսեց բղավել, որպեսզի ես կորչեմ, որ նրան

այդպիսի բաները չեն հետաքրքրում, որ իրեն իր հոգսերը բավական են...Նրա ձայնի մեջ վախ էր լսվում: Ես գարեջուրս պարպեցի, բաժակն աղբարկղը նետեցի եւ տախտակամածից թռա ռելսերի վրա: Տեղնուտեղը լսվեց վաճառողուհու տագնապած ձայնը, նա ինձ ետ էր կանչում: Սակայն ես չլսեցի եւ, գայթելով, քարշ եկա ուղիների միջով դեպի հեռվում կանգնած մթին գնացքը:

Գնացքը ոչնչով մյուսներից չէր տարբերվում, ոչինչ չէր մատնանշում այն, որ դրա կեղտոտ ապակիների ետեւում կարող է թաքնվել անտեսանելին: Ես բացեցի պոչի վերջին դուռն ու աստիճաններով բարձրացա: Ես քայլում էի վագոններով դատարկ մթին կուպեների կողքով, որոնց պատուհաններն էին ճանկռում թփերի ճյուղերը, որ աճում էին հողաթմբի ստորոտին: Հերթական վագոնը մտնելով, ես տեսա փակ սրահակի ապակու միջից, որ այն բաղկացած է մեն-միակ շինությունից: Այնտեղ խռնվել էին նստարանները, որոնց ետեւում մեջքով դեպի ինձ նստել էին երեխաներ: Վագոնի մյուս ծայրին, զանգվածեղ սեղանի ետեւում, աթոռի վրա օրորվում էր գորշավուն պիջակով մի տղամարդ, նրա կողքին մի աղջիկ էր կանգնած: Վագոնը, հավանաբար, որպես դասասենյակ էր ծառայում: Այնտեղ մութ էր, աշակերտները գրում էին լուսավորվող գրիչներով, լուսավորվող թանաքներով տետրակներում: Ես կամացուկ դուռը բացի եւ լսեցի՝ ինչպես է ուսուցիչն աղջկան ասում.

-Պատմիր, թե ինչ գիտես հոլովական վերջավորությունների մասին:

Աղջիկը, կարկամելով, սկսեց պատասխանել.

-Մի ժամանակ հոլովական վերջավորությունները ծառայում էին դեւերին դիմելու համար: Մարդու յուրաքանչյուր շփման ձեւը գոյության հետ ուներ իր դեւ-պահապանը: Դեւի անունը միշտ արտասանվում էր իրեն անվանելուց հետո:

-Ճիշտ է: Իսկ այժմ մեզ ասա՝ ինչպե՞ս ստացվեց, որ դեւերին դիմելուց առաջացան հոլովական վերջավորությունները:

-Պաղ աստիճանների վրայով եկան կույր շնագայլերով օտար կանայք...

-Մի շփոթիր նախանցած ժամանակի ծագման հետ,- ընդհատեց նրան ուսուցիչը:- Ուրեմն չե՞ս հիշի, դե, ինչպե՞ս դա ստացվեց:

Աղջիկը լռում էր եւ նյարդային մի ոտքը մյուսին էր գցում: Ուսուցիչը դիմեց դասարանինգ

-Ինչ-որ մեկը գիտի՞: Դե, դու ասա:- Նա մատնացույց արեց մի տղայի, որ նստած էր առաջին նստարանին. նա կանգնեց եւ սկսեց.

-Երբ խոզանի վրա հայտնվեցին ժանգոտ հածանավերը, դեւերի անունները կորցրին շեշտերը եւ հետզհետե սերտաճեցին գոյականների հետ: Մարդիկ մոռացան դրանց նախնական նշանակության մասին: Կապը հարաբերությունների որոշակի տեսակի հետ, որ խնամակալում էր այս կամ այն դեւը, վերածվում է ընդամենը քերականական գործառույթի:

-Շատ լավ, կարող ես ուտել: Ահա թե ինչու մենք ասում ենք, որ քերականությունը ածանցյալ է...ի՞նչ,- ուսուցիչը կրկին դիմում էր աղջկան, որ կանգնած էր գրատախտակի մոտ:

-Քերականությունը ածանցյալ է...Մենք ասում ենք, որ քերականությունը ածանցյալ դիվաբանություն է:

-Դե, ահա, ապրես: Իսկ հիմա պատմիր մեզ հոլովական վերջավորությունների զարգացման մասին:

-Հոլովական վերջավորությունները հետզհետե կազատվեն գոյականների հիմքերից եւ կդառնան այն, ինչ կային նախապես, այսինքն՝ դեւերի անունների կանչում: Գոյականների հիմքերը կկորցնեն իրենց նշանակությունը, դրանք ավելի ու ավելի կամացուկ կարտասանվեն, մինչեւ որ լրիվ կչքանան, լեզվում կմնան միայն նախկին վերջավորությունները, մարդիկ կհասկանան, որ մնացածը պարզապես պետք չէ: Դահլիճների լռության մեջ հնչում են լոկ միջանցահովիկի տակ դողդոջող վարագույրները եւ մեկ էլ դեւերի սարսափելի անունները, որոնք այժմ ծանոթ են որպես հոլովման տեսակներ:

Աղջկա ձայնն ավելի ու ավելի ամրանում էր, եւ դրանում նույնիսկ ինչ-որ չարագուշակ հաղթանակի երանգ հայտնվեց: Ուսուցիչը հիացմունքով ունկնդրում էր նրան:

-Վարագույրերի դողդոջյունն ու հինավուրց անունները: Այո, բայց այդ ամենը վերջում, իսկ ի՞նչ կլինի վերջում, իսկ ի՞նչ կլինի ավելի վաղ, դե ասա, ի՞նչ կլինի ավելի վաղ:

-Դաշտերը, որոնց վրա հրեշները գոլֆ են խաղում, կձգվեն մինչեւ մեր ննջարանները, ապակյա խողովակի վրայով, որ կտարածվի սիմինդրի դաշտով, համաչափ ժամանակահատվածներում կվազեն մետաքսյա զգեստներով կանայք, անտառները սենյակի մթին անկյուններում անանցանելի կդառնան, դրանց թավուտում կվառվի սպիտակ լամպը:

Ուսուցիչը նստել էր աչքերը փակ, ձեռքերով կառչելով սեղանի ծայրերից:

-Այո, այո,- շշնջում էր նա, ինչպես էքստազի մեջ,- դե, վերջապես ինձ կհաջողվի զբաղվել իմ շաքարապատված հանրագիտարաններով եւ բա-

ռարաններով, ես կըմպեմ դրանց էջերի ողջ քաղցրությունը, կսկսեմ ծամել դրանք երկար ժամեր, նստած բազկաթոռի վրա՝ երազելով գունավոր հեռուստացույցների մասին, որոնք դանդաղ թռչում են երեկոյան մարգագետնի վրայով, իսկ դրանց էկրանների վրա հիասքանչ կենդանիները տանջում են ընտանիքների հայրերին, վերջապես իմ բնակարան կվերադառնա ծանր հրետանին, բույսերի ծոցում նոր հիանալի հերձվածներ կծնվեն, որոնց համը կհիշեցնի նախկին գիշերային բորշչերի մասին՝ ապակեպատ սրճարաններում:

Աղջիկն ավելի մոտեցավ ուսուցչին:

-Պատրանքներ մի սարքիր,- կոպիտ ասաց նա:- Հրետանավորները երբեք չեն վերադառնա, նրանք կսովորեն փտող պահեստների հիմար Օքսֆորդում, շաքարապատ գրքերը կբռնագրավեն եւ հանուն շողշողուն ու դաժան մեքենաների ամբիոնից կնետեն մողեսների վրա, դրանք այնժամ դեռ կերթաքայլեն չորս-չորս սյուների մոտ, բայց շուտով լեզու կգտնեն մեզ հետ՝ աղջիկների, եւ բարձրաձայն կարտասանեն այն, որ լռության էին մատնել բյուրավոր տարիներ, որ օբյեկտիվորեն շները գոյություն չունեն:

-Բայց չէ՞ որ դա անհնար է,- խռխռաց ուսուցիչը, ապակյա հայացքով նայելով իր առաջ:- Դա չի կարող պատահել, ես այնքան երկար փորձում էի իմ գրամեքենան գազակերպ վիճակից բերել հեղուկ վիճակի, ես երկրաչափությունն ազատեցի բեւեռային կենդանիներից, ներմուծեցի դաժան բազմաստվածությունը քաղաքային հասարակական տրանսպորտի մեջ, թեեւ տրանսպորտային ձեռնարկության ղեկավարը սկզբում պատշաճ ընկալում չցուցաբերեց եւ նույնիսկ փորձում էր փախչել ինձնից, ես վազում էի նրա ետեւից, եւ մենք երկուսս էլ, ձեռքերս թափահարելով, որ նման էին վիթխարի կշեռքների, թռչում էինք գիշերային լճերի հարթության վրայով, որտեղից լսվում էր ջրահարսերի հազիվ լսելի երգեցողությունը,- եւ դու ուզում ես ասել, որ այդ ամենը ես զո՞ւր եմ արել:

Աղջիկը հանդուգն ծիծաղեց:

-Իհարկե, զուր, հիմար,- արհամարհական պատասխանեց նա: - Դու երկրաչափությունն ազատեցիր բեւեռային կենդանիներից... Դու ի՞նչ է՝ մոռացե՞լ ես, թե ինչ է ասում Էվկլիդեսի առաջին աքսիոմը՝ երկրաչափական տարածության մեջ միշտ մնում են երկու պինգվին: Մի՞թե դու չես քո ձեռքով քո սառցե մեքենայի մեջ իմ կողի վրա տատու արել այդ նախադասությունը: Այն ժամանակ դու դեռ ասում էիր, որ հենց այդ սկզբունքին համապատասխան Դեկարտից Ամստերդամում առանձնացան նրա երկու ձեռքերը եւ սկսեցին հարձակվել նրա վրա, դրանք խելագարի պես հար-

ձակվում էին փիլիսոփայի վրա, հետապնդում էին նրան ջրանցքների երկայնքով եւ ուզում էին ջուրը նետել, ի վերջո նա ստիպված եղավ դրանցից փախչել Քրիստինե թագուհու մոտ, բայց եւ արքունիքում էլ, ինչպես խոստովանում է Դեկարտը Արնոլդին հղած նամակում, ձեռքերը նրան հանգիստ չթողին: Եթե դու այն հիմարությունների փոխարեն, որ արել ես, շատացնեիր քո լույսի պայծառությունը երեկոյան ճոպանուղուն, Շպինդլերյան ալրաղացի վրա, եթե դու հոգ տանեիր այն մասին, որպեսզի քաղաքում բավեին սարքին աստվածաբանական ավտոմատները, եթե դու հետեւեիր այն բանին, որ քո գրադարակները միշտ փակ լինեին... Դեռ մեզ, երեխաներիս, դուր չի գալիս, որ երեկոները դու քայլում էիր մեր տներում եւ ծեծում էիր մեր ծնողներին նեֆրիտե արձանիկներով, դու այն ժամանակից ի վեր նողկալի ես մեզ համար, որ մենք քեզ բռնացրինք քեզ հաշվարկիչի վրա նարինջ քամելիս: Մենք քեզ տանել չենք կարողանում: Դու մեզ համար ծիծաղելի ես:

Ուսուցիչը լռում էր, նա նստել էր ամբիոնի ետեւում, գլուխը ափերի մեջ թաքցրած: Մանկական ծիծաղ լսվեց, դասարանը ծիծաղում էր իր ուսուցչի վրա դաժան, ատող, անվերջանալի ծիծաղով, դրանց պայթյունները նորիցնոր կրկնվում էին: Ես փակեցի դուռը, վերադարձա հարեւան վագոնը եւ գնացքից ելա:

Ես քայլում էի վերջին անվածիրի եւ մացառուտով պատված հողաթմբի միջեւ ընկած ձյունապատ մասով, թփերի ճյուղերը տհաճորեն քսվում էին դեմքիս: Մացառուտի ետեւում, ստորոտում ծանր մետաղյա դուռ տեսա, որ ռմբապաստարանի մուտք էր հիշեցնում: Ես դժվարությամբ այն բացեցի: Դրա ետեւում սկսվում էր կամարակապ միջանցքը, կեղտոտ սալաքարերով շարված եւ լամպերով լուսավորված, որոնք միջանցահովիկից տատանվում էին առաստաղի տակ: Հենց պատին կից, դռան մոտ դեմ էր արված մի ժանգոտ հեծանիվ: Մի կողմի երկայնությամբ ինչ-որ ճոպաններ ու խողովակներ էին ձգվում, յուղաներկով արված տասնյակ նկարներ կային այնտեղ: Դրանք բոլորը մի չափսի էին. թվում էր, թե դրանց սյուժեն էլ միեւնույնն էր: Դրանցից յուրաքանչյուրը պատկերում էր ծովամերձ ամառանոցի ծանոթ ինտերիերը. դա հենց այն սենյակն էր, որ ես տեսել էի նկարի վրա ջրարգելակի սենյակում, սակայն առանց տղամարդու եւ վիթխարի մրջյունի: Ես նկատեցի, որ ներքեւում՝ շրջանակների վրա մետաղյա պիտակներ էին հարմարեցված. առաջին նկարի վրա մեկ էր գրված, երկրորդի վրա՝ երկուս, եւ այդպես շարունակ ահագնանալով: Սակայն երբ ես զննեցի նկարներն ավելի ուշադիր, ապա նկատեցի մանրամասներ,

որոնցով դրանք միմյանցից տարբերվում էին՝ փոխվում էին վարագույրների ծալքերը, ալիքների ձեւերը եւ լողափին մարդկանց դիրքերը: Հետո ես ուշադրություն դարձրի, որ ամեն մի հաջորդ նկարի վրա զարթուցիչի վայրկյանասլաքն էր, որ դրված էր սեղանի վրա, առաջ է վազում: Ես հասկացա, որ ողջ պատկերասրահը՝ դա ինչ-որ ֆիլմ է այն մասին, որ ամեն րոպե տեղի է ունենում սենյակում... Իսկ այնտեղ տեղի էր ունենում միայն վարագույրների հուզումը եւ միապաղաղ ճամփորդությունը զարթուցիչի թվատախտակի սլաքի ուղղությամբ: Ես վերադարձա դեպի մուտքի դուռը՝ առաջին նկարի վրա ժամացույցն ուղիղ տասներկուսն էր ցույց տալիս: Ես նստեցի հեծանիվն ու քշեցի պատի երկայնքով:

Երկու կիլոմետրից ոչ պակաս անցա ոլորուն միջանցքով, իսկ նկարների վրա փոխվում էին միայն վարագույրների ծալքերը: Եւ միայն 1032 համարով նկարի վրա /զարթուցիչի վրա մեկից տասնհինգ պակասից փոքր ինչ ավելի էր/ դռների արանքում հայտնվեց սարսափելի ծնոտներով մրջյունի գլուխը: Տեսնելով, որ սենյակում ոչ մեկը չկա, մրջյունն արագ հատեց այն եւ թաքնվեց վարագույրի ետեւում՝ 1034-1039 նկարները ցույց էին տալիս այդ շարժման տարբեր փուլերը: Երբ ես հեծանիվով անցնում էի նկարների մոտով, դրանք իրոք միաձուլվում էին ինչ-որ ձգձգված ֆիլմում, որը խաղարկվում էր շրջանակների ներսում: Հետո մոտ մի կիլոմետր նկարների վրա համարյա ոչինչ չէր փոխվում, միայն 1471 համարի կտավի վրա սենյակ մտավ սպիտակ կոստյումով մի երիտասարդ. հաջորդ նկարներում նա փութանակի աչքի անցկացրեց նամակագրությունը եւ սկսեց Հոմերոս կարդալ. նա նշեց բառերը, որ մտքում կրկնում էր Ոդիսեւսը, երբ ֆեակների կղզու ափին նրան արթնացրին Նավզիկեի եւ նրա ընկերուհիների ձայները, եւ սկսեց գրել գրքի լուսանցքներում իր տարօրինակ մեկնությունը: Նրա մոտ կամացուկ սողաց մրջյունը, 2054 համարի նկարի վրա ծնոտներով խրվեց նրա ծոծրակի մեջ եւ քարշ տվեց պատի մոտ: 2092 համարի նկարը բացակայում էր՝ դա հենց այն էր, որ կախված էր ջրարգելակի տանը: Տղամարդն արդեն դադարել էր շարժվել, իսկ մրջյունի ծնոտները չէին թուլանում, պարփակված ինչ-որ մթին ատելության ջղակծկումով: 2173 նկարի վրա իջել էր սպիտակ հրեշտակը: Մի ցատկով նա հայտնվեց սենյակում, եւ նրանք մրջյունի հետ նետվեցին իրար վրա եւ հատակի վրա դաժան կռիվ սկսեցին: Մգակապույտ ծովի ալիքներում այդ ժամանակ շարունակում էին ճղփալ անհոգ արեւառ մարդիկ: Մրջյունն անխղճորեն կծոտում էր հրեշտակին, նրա վերքերից ծորում էր ոսկե արյունն ու կայծկլտում արեւալույսի մեջ: Սակայն ի վերջո հրեշտակը մրջյունին դեմ տվեց

հատակին, նստեց նրա վրա եւ խեղդում էր այնքան ժամանակ, մինչեւ որ 2895 համարի նկարի վրա՝ հրեշի մեծ սեւ բեղիկները դադարեցին թրթռալ: Զարթուցիչը ցույց էր տալիս մեկին տասներկու պակաս: Ելնելով, հրեշտակը սկսեց բացել արկղերը եւ խանդավառ տնտղել թղթերը. հետո նա մեկ առ մեկ թափահարեց գրադարակի գրքերը՝ եւ սպիտակ գրքույքից, որի կազմիի վրա գրված էր՝ Hegel et la pensee moderne, seminaire sur Hegel dirig; par Jean Hyppolite au College de France (1967-1968)*, հատակին ընկավ այն, ինչը նա, հավանաբար, փնտրում էր. ի զարմանս ինձ, դա լուսանկար էր, որ դրոշմել էր ինձ եւ Ալիվեյրային՝ նստած մեծ պատուհանի ետեւում, «Օձի մոտ» ռեստորանիկի մթության մեջ թաղված: Հրեշտակը ջանադրաբար ճղճղեց լուսանկարը մանր կտորների, վեր խոյացավ ծածկապատշգամբից, թռավ դեպի ծովը, կտորները ջուրը նետեց եւ ուղեւորվեց դեպի հորիզոն: 3600 համարի վերջին նկարի վրա հրեշտակը վերածվեց պայծառ բծի՝ կապուտակ ծովային հարթության վրա: Ցերեկվա ժամը մեկն էր, ծովածոցի ափին մարդիկ իրենց մարմինները դեմ էին տալիս կիզիչ արեւի շողերին: Այդ նկարի ետեւում միջանցքն ավարտվում էր փակ դռնով: Ես իջա հեծանիվից, այն պատին դեմ տվեցի եւ սեղմեցի բռնակը:

---

* /ֆրանս./- Հեգելը եւ ժամանակակից միտքը, Հեգելին նվիրված սեմինար Ժան Հիպոլիտի ղեկավարությամբ՝ Կոլեժ սդե-Ֆրանսից (1967-1968):

Գլուխ 19
Սանդուղք

Ես մթին մի սենյակ ընկա, կրկին զգում էի ծանոթ շինության հոտը, եւս մի ակորդ բույրերի խառնաշփոթ եւ տրտում սիմֆոնիայում: Լայն պատուհանից անդին երեւում էր գիշերային երկինքը, որով անցնում էին անհանգիստ ցիրուցան ամպերը. դրանց միջեւ ընկած բացվածքում երեւաց պարզ լուսինը, որի լույսը շողաց պաստառների վրա, փայլկտեց սենյակի խորքի ապակու եւ թաղարների միջի բույսերի հարթ մսոտ տերեւների վրա, իսկ հետո դարձյալ մթնեց: Ես մոտեցա պատուհանին, ապակու մեջ սպրդեց հարթավայրը. դատելով ամեն ինչից, ես անցա խաղողների տակի ոլորուն միջանցքով եւ այժմ գտնվում էի տներից մեկում, որ կեցած են Նուսելյայի սանդուղքի վերնամասին, դրանց պատուհանները նայում են Նուսելյան հարթավայրին: Ես կանգնել էի օտար բնակարանի պատուհանի մոտ եւ վար էի նայում, մթին հարթավայրին, որտեղ ձյան վրա շողում էր լապտերների լույսը. հեռավոր ստորոտը անցնում էր դեպի Պանկրաց բլուրը, որի գագաթին բարձրանում է հյուրանոցի ապակյա աշտարակը, դրա պատերը մեկ լուսավորվում, մեկ մարում էին լուսնալույսի փոփոխական լույսի ներքո: Պատուհանի վրա ես ամրակալի վրա հեռադիտակ նկատեցի. աչքս դնելով դրա ակնապակուն, սկսեցի դանդաղ տեղաշարժել օպտիկական սարքը, հայացքս սահում էր տների ճակատամասերի եւ ձյունապատ փողոցների վրայով, ակնապակու մեջ հայտնվեցին մթին պատուհանների շարքերը, լռին եւ դատարկ բեռնատարները, մենավոր լապտերները, որ լուսավորում էին ձյունածածկ ֆաբրիկայի բակերը, կիսախավար ապակյա անցուղիները, անանցանելի մացառուտով պատված երկաթուղային հողաթմբերը: Ժամանակ առ ժամանակ ակնապակու մեջ առկայծում էր լուսավորված պատուհանը: Ես նայեցի հենց կտուրի տակի տանը՝ այնտեղ մահճակալի տակ հատակից աղբյուր էր բխում եւ բարալիկ շիթով հոսում էր դեպի անկյունների խավարը. հնարավոր է, որ այլ քաղաքում այն կմիածուլվի խավարում կարկաչող այլ հոսքերի, եւ կվերածվի հուժկու սահուն գետի, քշված գրանիտից ու մարմարից սարքված առափնյա պատնեշի մոտ, քարե սֆինքսներով եւ լայն աստիճաններով, որ տանում են ջրի տակ, գետը, որի աղմուկը մենք կլսենք պատի ետեւում, գիշերվա լռության մեջ: Ես տեսա նախասենյակը, որտեղ կախիչի տակ, որի վրա

կախված էին ծանր վերարկուներ, ճամբար էին խփել հոգնած լեռնագնացները, որոնք մթին ու վտանգավոր սանդուղքով ինչ-որ սառցե բարձունք էին ելնում: Ես տեսա սենյակը, բազկաթոռների վրա նետված ու ճմռթված սպիտակեղենով, որտեղ մանրահատակի վրա աղոտ լույսով փայլում էր աշխարհի գաղտնի բեւեռը. դե, ով գիտի՝ ինչ մետաղներ է այն տագնապեցնում եւ ինչ սլաքներ է քաշում դեպ իրեն մթության մեջ. ճամփորդն իր վերջին ուժերով ձգտում էր դեպ նա, հարմոնի պես հավաքվող գորգի ծալքերի միջով, խճճվում էր երկար ու սպիտակ վարագույրներում, ելնում էր չհավաքված տեղաշորի ճմռթված վերմակների սարի վրա: Ես տեսնում էի ննջարանը հրաբխի խառնարանում, թաքնված տան խորքերում, այն լուսավորված էր հրաբխի կապույտ շողանքով, որ բարձրանում է դրանց անցքերով եւ դանդաղ ծորում էր պահարանների արանքներից, գրադարակների վրայի գրքերի միջեւ եղած արանքներից՝ այնտեղ հեքիաթային շողշողացող սավանների վրա գրկված քնած էին երկու մերկ աղջիկ: Ես տեսա թղթախաղացներին, մթին հայելային սրահում վառվող խաղաթղթերով մարմարյա սեղանիկի մոտ,որոնց հրե լեզվակները անվերջորեն արտացոլվում էին հայելիների սեւ խավարում... Ես տեսա նաեւ ինչ-որ մռայլ մարգարեություն, թունավոր կրակներով լեցուն, հնախարխուլ տան պատուհանում, Բոտիչ գետի սառած հարթության վրա: Բաց դռան ետեւում կամացուկ կանչ լսեցի: Ես մտա հարեւան սենյակը. դրա առջեւի մասում՝ գորգի վրա, մտահնար արաբանախշերով զարդարված, ընկած էր լուսնի լույսը, իսկ սենյակի ետնամասը, ուրկից էլ գալիս էին օգնություն կանչող ճիչերը, թաղված էր անթափանց խավարում: Ես ուղեւորվեցի դեպի այդ կողմ, մթության մեջ դեմ առա կահույքի անկյուններին, գայթում էի աթոռների վրա, ընկնում էի փափուկ թախտերի վրա: Ձայնը լռեց, բայց ինչ-որ գվվոց էր լսվում, որը մեկ սաստկանում, մեկ լռում էր: Ինչ-որ բան քնքշորեն դիպավ դեմքիս. ես պատկերացրի գիշերային միջատի թեւը, բայց ձեռքս առաջ տանելով, շոշափեցի ներքնաձայրից մետաղյա տոտիկներով ծողաջահից կախված ծոպերիզը: Ես գտա ծայրին հարթ գնդիկով անջատիչի լարը եւ ձգեցի այն: Խավարի մեջ բռնկվեց փղոսկրագույն լուսամփոփը. ես տեսա, որ ծողաջահը կկանգնած է պաղ, անբարեհամբույր ծովի ափին, այն լուսավորում էր կանաչավուն ալիքները, որոնք սողում էին մթությունից դեպի իմ ոտքերը, գորգի նախշերի վրա թուլանում եւ փրփուրի էին վերածվում, որ գորգով ետ էր հոսում, որտեղ այն որսում էր նոր ալիքը: Մթության մեջ կրկին ճիչ լսվեց, լույսի շրջանում գերան հայտնվեց, որից մի աղջիկ էր կառչել, նրա մարմինը, ցրտից կապտած, ծածկել էին

պատառոտված զգեստի ծվենները: Վրա հասած ալիքը նրան համարյա թե բարձրացրել էր մինչեւ սենյակի առաստաղը, իսկ հետո դրեց իմ առջեւ՝ գորգի վրա: Աղջիկն անշարժ պառկել էր ծողաջահի տակ: Ես հանեցի նրա վրայի քրջերը, վերցրի ձեռքերիս վրա եւ պառկեցրի վերմակի տակ մահճակալին, որը ծողաջահի մոտ էր: Հավաքեցի նրա դեմքի վրայից մազերը եւ ճանաչեցի լայն փողոցից նավի տախտակամածի վրայի աղջկան:

Ես գնացի հարեւան սենյակ եւ վառեցի գազի գլխանոցը, վերցրի կապույտ լույսի տակի՝ կափարիչի վրա չինական վիշապով տուփը եւ թեյ պատրաստեցի: Վերադառնալով, նստեցի անկողնու ծայրին եւ գավաթը մոտեցրի աղջկա շուրթերին. թեյն ըմպելով, նա նայեց աչքերիս եւ դանդաղ ու հանգիստ արտասանեց.

-Մենք նավաբեկության մեջ ընկանք, երբ նավը լողում էր շատ նեղ նեղուցով, ինչ-որ վիթխարի գրադարանի գրադարակների միջեւ: Երեւի նավը վրա էր եկել քարացած գրքերի ապառաժներին, երեւի անհայտ խորթ ծրագրեր էին, որոնք արդեն վաղուց փոթորկվում էին նավային համակարգիչների խորքերում, ներհոսել էին նավավարական ծրագրերի մեջ եւ ցաքուցրել էին տրամաբանական շղթաների իմպլիկացիաների մեջ: Սակայն դա արդեն կարեւոր չէ: Փրկվեցի միայն ես... Այլեւս երբեք ես չեմ տեսնի իմ փեսացուին, նա այժմ թափառում է տաղտկալի ստորջրյա սրճարաններում, եւ մեր աշխարհը նրան երերուն ու մշուշոտ է թվում, ինչպես զարմանալի երազ: Ես վաղուց գիտեի, որ համակարգիչները մեզ ինչ-որ վատ բանի են նախապաստրաստում, բայց չէի ուզում ինքս այդ մասին խոսել, նա երեխայի պես դյուրահավատ էր, նա անչափ հարգում էր կապիտանին եւ անձնակազմը, հիշում եմ՝ ինչպես կշտամաբական նայեց ինձ, մինչեւ որ մի անգամ ես չդիմացա եւ ասացի, որ կապիտանն ինձ համար նողկալի է: Նա չանհանգստացավ նույնիսկ այն ժամանկ, երբ բոլոր ուղեւորների համար պարզ դարձավ, որ, համենայնդեպս, նավի սպաներից երկուսը՝ լոկ հայլուցինացիաներ էին եւ որ մեր փչացած գիշերային երազներից նավի ցռուկի առաջ ինչ-որ անպարզ Աֆրիկա է տեղի ունենում, որը պատրաստվել էր թռիչքի՝ մեզ դարանելով, ասես դաժան գազան: Ինձ թվում էր, թե ծովից, մահճակալի ետեւում, ցցված է եղջյուրավոր ծովահրեշի գլուխը՝ ալիքը նրան, խավարում թաքնված, դաշնամուրի վրա շպրտեց, գործիքի ներսը խուլ արձագանքեց բոլոր լարերով, խելագարության կամացուկ երաժշտության ակորդը դեռ երկար էր հնչում:

-Այլեւս երբեք նրա ձեռքերն ինձ չեն դիպչի,- շշնջում էր աղջիկը,- ինձ կդիպչեն միայն վարագույրները՝ միջանցահովիկի տակ տարուբերվող,

ինձ կդիպչեն լոկ հարթ գործվածքները եւ մեկ էլ նողկալիորեն թաց թփերի տերեւները, մեկ էլ պատերը: Օ՜, Աստված, ես երբեք չեմ սպրդի այս տաբօրինակ եւ տրտում երկրից, ես ստիպված կլինեմ մենակ ապրել այստեղ՝ ճակատամասերի սարսափելի անշարժ կերպարանքների մեջ, պատերի վրայի սահմռկելի նախշազարդերի մեջ, ես կքայլեմ անվերջանալի պարիսպների երկայնքով, կլսեմ հեռավոր գնացքների աղմուկը, որոնք ներխուժում են նախադասությունների մեջ եւ թափանցում են հենց տների խորքերը, եւ դրանցից պրծում չկա...

Ասես ի հաստատումն նրա խոսքերի լսվեց թունել մտնող գնացքի գվվոցը՝ մենության ու հուսահատության մենավոր ձայնը: Ես շոյեցի աղջկա այտը: Նա ճանկեց ձեռքս եւ դեպի իրեն քաշեց, անսպասելի ուժով քաշեց վերմակի տակ, պաղ մարմնով սեղմվեց եւ ոտքերով շուլալվեց ինձ, նրա ձեռքերը մտան շապկիս տակ եւ ամուր կառչեցին մեջքիցս: Մենք պառկած էինք կողքի, եւ ես տեսնում էի՝ ինչպես նրա ուսի ետեւում, որը վերմակի տակից դուրս էր պրծել, հայտնվում են կանաչ ալիքները, լուսավորված ծողաջահի կրակով, ինչպես են դրանք մոտենում մեզ եւ տեղնուտեղը ընկրկում, մերթ ընդ մերթ շիթերը ցաքուցրվելով ընկնում էին վերմակի եւ մեր դեմքերի վրա: Պաղ շուրթերը ելան բարձի վրայից, նրանք շոշափում էին դեմքս, ասես ինչ-որ ծովային կենդանի, իսկ հետո բռնեցին շուրթերս եւ սեղմվեցին դրանց: Ես իմ ետեւում ձայներ էի լսում: Աղջիկը սարսափած ավելի ուժեղ սեղմվեց ինձ: Ես շուրթերս պոկեցի նրա բերանից եւ գլուխս շրջեցի՝ խուսավարելով կահույքի առարկաների միջով. մեզ մոտ էր լողում անպարզ մթին մի կերպարանք: Երբ այն հայտնվեց լույսի շրջանակում, ես տեսա, որ դա պատանի է, որը կանգնած էր մի ժամանակ նավի տախտակամածին եւ խոսում էր նրա հետ մերձափնյա պուրակների եւ քրտնած բաժակների մասին: Ճանաչելով նրան, աղջիկը ուրախությունից ճչաց, բայց ինձ մեկից բաց չթողեց, նրա գրկախառնումները հետզհետե էին թուլանում:

-Դու ողջ ես: Քեզ ինչպե՞ս հաջողվեց փրկվել,- հարցնում էր նա, քանի դեռ նրա ձեռքերը ճամփորդում էին իմ վերնաշապկի տակ:- Դու ափ ես լողացել դելֆինի մեջքի վրա՞: Քեզ տախտակամածի վրա ինչ-որ մաքսանենգ նա՞վ է վերցրել՝ մեկը նրանցից, որ ակոսում են տան խորքե՞րը:

Նրա փեսացուն նստեց անկողնու ծայրին, կռացավ իմ վրայով եւ սկսեց համբուրել նրա դեմքը, ուսերն ու կուրծքը: Աղջիկը վերջապես շապկիս տակից ձեռքը հանեց եւ փաթաթվեց սիրեցյալի վզին: Ինձ անհարմար եւ անպատշաճ զգալով, ես անճարտար շրջվեցի փորի վրա եւ փորձեցի

դուրս սողալ միմյանց սեղմված մարմինների տակից:

-Ես ընդհանրապես նավի վրա չէի, երբ այն խորտակվեց,- քնքշորեն ու սիրալիր ասում էր տղամարդը համբույրների արանքում:- Դու ննջել էիր, իսկ ես գնացի խանութ, որպեսզի քեզ համար թուզ, չորացրած ծիրան եւ ընկույզ գնեի:

Նա պոլիէթիլենե փաթեթից հանեց մաքրած ընկույզը եւ դրեց աղջկա բերանը, նա սկսեց ծամել:

Ինձ վրա ալեւս ոչ մեկը ուշադրություն չէր դարձնում. վերջապես ինձ հաջողվեց մահճակալից դուրս պրծնել. ես քայլում էի սենյակով դեպի պատուհանը, որի ետեւում շողում էր լուսինը, եւ մեջքիս ետեւում լսում էի նրանց խոսակցությունը, որին միախառնվում էր ալիքների շրշյունը:

-Հիմա մենք ի՞նչ պիտի անենք,- հարցրեց աղջիկը:- Մենք երբեք կղզի չենք ընկնի, երբեք չենք անցնի սպիտակ ծառուղիներով, չենք նստի ծովի վրայի ծածկապատշգամբում...

-Դա կարեւոր չէ,- պատասխանում էր ընկերը,- այսպես նույնիսկ ավելի լավ է, մենք ամեն ինչ կպատկերացնենք: Ամեն օր զբոսանքներ կհորինենք, խաղեր լուսավորվող ավազաններում, հիանալի երեկույթներ լապտերիկներով, սիրախաղեր հետաքրքիր մարդկանց հետ, պարեր նավերի գիշերային տախտակամածների վրա: Չէ՞ որ մենք անքան էլ բութ չենք, որպեսզի իրականության կարիք ունենանք...

Ձայները սենյակում լիովին ծուլվեցին ծովի աղմուկին: Ես ելա բնակարանից մթին միջանցք. տան դռնից կարելի էր ուղիղ ընկնել Նուսելյան սանդուղքի վրա: Ես իջնում էի հովիտ ծյունածածկ աստիճաններով, ձախ կողմում՝ ներքեւում զառիթափի թունելից դուրս էին պրծնում, ճյուղավորվելով, եկաթուղիները, աջ կողմում՝ ցանկապատի ետեւից սանդուղքի վրա էր կախվում մացառուտը, որ աճում էր ուղղաբերձ ծյունապատ այգիների ծայրին: Ոտքերս զգուշորեն շոշափում էին ծյունապատ աստիճանները. լուսինն անհետացել էր ամպերի ետեւում, խորունկ խավար էր, բայց ինձ, այդուհանդերձ, թվում էր, որ ձյան տակ կամացուկ վառվում է կայծկլտուն լույսը: Ես շրջվեցի ու քարացա: Սանդուղքով դանդաղ, գլուխը հակած, իջնում էր մի կերպարանք, որ դալուկ կանաչավուն լույս էր առկայծում: Սպիտակ գործվածքի վրա երեւում էին մեծ ու արյունոտ բծեր: Ես ընկրկեցի դեպի այգու ցանկապարիսպը, ծռմռված ճյուղերը դեմ էին առնում մեջքիս եւ խառնշտկում մազերս: Ծողացող կերպարանքը մոտենում էր. ոտքերով աստիճանին դիպչելով, որի վրա ես կանգնած էի, նա կանգ առավ եւ գլուխն իմ կողմը դարձրեց: Տեսիլքը կնգուղը դեն նետեց եւ ես ճչացի՝ ես

տեսա ուժասպառ մի դեմք, որը վերջին օրերս նայում էր ինձ բազում նկարներից, եւ տեսա չապաքինվող վերքը վզի վրա, որից սեւ արյուն էր հոսում: «Դարգուզ»,- շշնջացի ես: Մենք կանգնել էինք դեմ առ դեմ եւ լուռ իրար էինք նայում, հեռու-հեռու դալկորեն շողացող երկար ու ցաքուցիր մազերով գլխի ետեւում՝ ուղեկամրջով անցնում էր լուսավոր պատուհաններով գիշերային ճեպընթացը. արյունը կամացուկ կաթում էր ձյան վրա: Ես չգիտեի՝ ինչպես պահեի ինձ, նախկինում ինձ չէր վիճակվել հանդիպել աստծու: Ես հազիվ ինձ զսպեցի, որպեսզի նրան չմեկնեի ձեռքս: Գուցե թե, հարկ է նրան խնդրել կղզիներ տեղափոխել նորապսակներին, որոնց նավը խորտակվել էր եւ օգնել հոգնած Ալիվեյրային լուծել նրա տարակուսանքնե՞րը: Խնդրել, որպեսզի նա ինձ իր քաղաք տանի, դեպի դրանց հրապարակներն ու պալատները, որոնք մշտապես խուսավարում էին իմ աչքերից: Բայց ոնց որ թե Դարգուզը չէր կարող որեւէ մեկին օգնել: Դա այն մեծամիտ եւ դաժան աստվածությունը չէր, որ պատկերում էին քանդակագործները: Նրա դեմքը հետապնդվող օտարականի դեմք էր, որը, ինչպես եւ ես, դեգերում է արտաքսման հովտում: Թվում էր, թե նրա կենալը աստծո կարգավիճակում՝ լոկ անսահման վիթխարի տառապանք է, որը վերջ չի ունենա: Ինձ համակեց կարեկցանքը նրա հանդեպ, ես կուզենայի նրա համար ինչ-որ բան անել, բայց գիտեի, որ նրան անկարելի է օգնել:

Դարգուզը քաշեց կնգուղը եւ սանդուղքով վար իջավ: Ես տեսա, թե ինչպես նա շրջանցեց «Էքսելսիոր» ռեստորանը եւ կորավ մթության մեջ՝ Նուսելյան սանդուղքի եւ Բոտիչի միջեւ տարածության մեջ, լցված երկաթյա փակ ավտոտնակներով, արհեստանոցների կույր պատերով, կիսաքանդ գործարաններով եւ մրոտված մերձճանապարհային մացառուտով:

Գլուխ 20
Ջունգլիներ

Աղջկա պատմածը գրքերի մեջ նավաբեկության մասին ինձ հիշեցրեց Կլեմենտինումից գիտաշխատողի խոսքերը գրադարանի մթին անկյունների մասին: Հաջորդ օրը ես դարձյալ մտա նրա գրասենյակ, պատմեցի այլ քաղաքի եւ իմ թափառումների մասին եւ խնդրեցի ինձ տանել գրապահոցի խորքերը: Նրան այդ դուր չեկավ. երեւում էր, որ նա իսկապես էլ վաղուց կորցրել է մեր աշխարհի կասկածելի ետնաբակերը գնալու եւ այնտեղ անձեռնմխելի սահմանաշերտերը փնտրելու ցանկությունը:

-Ինձ թվում է՝ ժամանակն է, որ դուք հրաժարվեք ձեր ճամփորդություններից,- ասաց նա ինձ:- Դուք ինքներդ էլ արդեն նմանվում եք ինչ-որ ցնորական քաղաքի բնակչի: Բայց եթե դուք, այդուհանդերձ, ամեն գնով ուզում եք ընկնել այլ քաղաք, ապա խորհուրդ կտամ այլ ճանապարհ ընտրել: Անցումը գրադարանի միջով վտանգավոր է: Գրադարանը նենգավոր է. եթե գրքերի կազմերի վրա, որ կեցած են դարակաշարի սկզբում, պատուհանից ընկնում է ցերեկային լույսը եւ հասնում է փողոցային աղմուկը, իսկ երկու գրադարանավարուհի բլբլում են երեկվա հեռուստահաղորդման մասին, ապա դարակների վերջում՝ կիսախավարում քուլա-քուլա բարձրանում է մշուշը, գրքերի վրայից նեխահոտ ջրիմուռներ են կախվում եւ ինչ-որ գազանի չարագույժ քրթմնջոց է լսվում: Պատահում է, որ նույնիսկ փորձառու աշխատակիցը գերագնահատում է գրադարանի իր իմացությունը եւ ուղեւորվում է ինչ-որ քիչ ուսումնասիրված շրջան. աշխատակիցները նրան համոզում են ոչ մի տեղ չգնալ, բայց նա միայն ժպտում եւ ասում է, որ արդեն երեսուն տարի աշխատում է գրադարանում եւ այստեղ ամեն մի անկյունը գիտիգ. տեսնելով, որ նրան չես տարհամոզի, գրադարանավարները վազում են ընթերցողի մոտ եւ պաղատում են նրան պատվերից հրաժարվել, նրանք նրան են տանում հիասքանչ գրքերի երկար ու օրորվող կիտուկները, կազմերով գրքերը, որ շողում են թանկարժեք քարերով ու էջերով, որ Արեւելքի ամենահազվագյուտ օծանելիքներ են բուրում, գրքեր նրբուհյուս թավիշից եւ մանրավազից ռելիեֆային զարդանկարներով, գրքեր՝ ուտելու էջերով, որ համով նմանվում են լոտոսի, որ ընթերցողը կարող է ընթերցելիս ուտել, գրքեր մետաքսից, որոնք կարելի է դարսել կախօրրանի վրա կամ, քամոտ օրը, ինչպես դելտապլան հարթա-

վայրի վրա, բարձր սավառնելու համար, արբեցնող էրոտիկ պատմություններով գրքեր, որտեղ գործողությունը տեղի է ունենում մարմարյա դարավանդներում, նոճիների տակ՝ ծովափին,- այդ գրքերի էջերը ներծծված են հաշիշով, եւ ընթերցողին թվում է, թե իբր ինքն էլ է մասնակցում գործողությանը եւ լողանում է տաք գիշերային ծովում՝ հիասքանչ աղջիկների հետ, բայց համառ ընթերցողը նույնիսկ չի նայում գրքերի վրա, համառորեն պահանջելով իրենը՝ ինչ-որ բան ավտոմեքենայի խնամքի կամ վարունգի աղադրման մասին, նա ուզում է այդ, որովհետեւ պատվիրել է այն եւ համարում է, որ գրադարանի անձնակազմն ամեն գնով պիտի ծառայի իրեն. դժբախտ գրադարանավարի գեղեցիկ աղջկան, որին արդեն հասցրել են զանգել եւ որը, ինչպես Շահրեզադեն առաջարկում է ընթեցողին գիշերները հեքիաթներ պատմել, նա պատասխանում է. «Լսեք, աղջիկ, ես ձեզ հետ խոսելու բան չունեմ: Ես պահանջում եմ իմ գիրքը ավտոմեքենայի խնամքի մասին /վարունգների աղադրման/»՝ եւ այդժամ գրադարանավարը գրկում է աղջկան եւ ուղեւորվում գրադարանի խորքը. բոլորը լարված նայում են նրա ետքից, միջանցքի խորքում նա շրջվում եւ ձեռքն է թափահարում, իսկ հետո անհետանում է գրադարակների ետեւում եւ այլեւս ոչ մեկը նրան չի տեսնում, ընթերցողը զուր սպասում է իր գրքին, նրան սկսում են տանջել խղճի խայթերը, նա ամեն ժամ ուզում է իմանալ՝ արդյո՞ք գրադարանավարը չի վերադարձել, ի վերջո նա ընդհանրապես դադարում է հենակից հեռանալ, որտեղ տալիս են պատվիրված գրքերը, առավոտյան հինգին նա մլուլ է տալիս Կլեմենտինումի փակ դռների առաջ, երկարուձիգ անհասկանալի երգեր երգելով: Գրադարանի խորքերում ամեն տարի մի քանի գրադարանավար է անհետանում, գրադարանային ուսումնարանները չեն հասցնում շրջանավարտների ներկայացնել: Դարակների միջեւ ինչ-որ մեկը կորած գրադարանավարների հուշարձան է կանգնեցրել, այդ աշխատանքային խալաթով բրոնզե քանդակը գրադարանավարի, որ մահանում է ուժասպառությունից՝ գրքերի կույտի վրա, բայց եւ այդ րոպեին նրան չի լքում միտքը պարտքի մասին եւ թուլացող մատները սեղմում են berwindung der «Metaphysik durch logische Analyze der Sprach» գրքի պատվերի բլանկը: Ես չգիտեմ, թե ինչ պատահեց գրադարանավարների հետ, արդյո՞ք նրանք մոլորվել են անվերջանալի միջանցքներում դարակաշարերի միջեւ եւ զոհվել են քաղցից ու ծարավից, թե նրանց խեղդել են կենդանիները, որ թաքնվել են գրադարանային խավարում. իսկ հնարավոր է՝ այնտեղ բնակվում են ինչ-որ վայրի ցեղեր, որոնք որսում են գրադարանավարներին եւ նույնիսկ ուտում են նրանց՝ մերթ ընդ մերթ ինչ-որ հեռու տե-

ղից լսվում է տամտամների ձայնը, եւ գրադարանավարներից ինչ-որ մեկը պնդում է, թե տեսել է միջանցքների վերջում կամ թե անցքում, որ մնացել է հենված գրքից, վայրենու ներկված դեմքը: Հնարավոր է՝ այդ մարդիկ գրադարանավարների վայրենացած հետնորդներն են, որոնք չեն գտել ետդարձի ճամփան: Դուք առաջվա պես ուզո՞ւմ եք, որ ես ձեզ գրապահոցի խորքերը տանեմ:

-Հնարավոր է՝ ես նույնպես կվայրենանամ եւ կպարեմ գրքերի մեջ տամտամի ձայների ներքո, հնարավոր է՝ իմ դեմքը միջանցքի վերջում կվախեցնի գրադարանավարներին, բայց արդեն ուշ է ետ դառնալու համար, ես պիտի առաջ գնամ: Ես չափազանց շատ եմ մոտեցել այլ քաղաքի սահմաններին, եւ այն, ինչ փչում էր այնտեղից, բավ էր, որպեսզի լուծեր սովորույթների ցանցի վերջին մնացուկները, որոնցից է հյուսված մեր վարքը՝ առանց այդ ցանցի ամենապարզ արարքները ցրվում են տասնյակ գործողությունների, որոնցից անհրաժեշտ է կրկին զրույց կառուցել եւ համակցել միմյանց, անհրաժեշտ է մտածել հազարավոր հնարավոր կապեր, այնպես որ՝ ճաշը ռեստորանում կամ արշավը խանութ դառնում է հերակլեսյան սխրանք: Ինձ հարկ է ավելի առաջ ներթափանցել այլ քաղաք. հին աշխարհակարգն արդեն անհնար է շտկել, այն միշտ ծակ է եղել, դրա միջից միշտ սպրդում են ինչ-որ կաթոցքի ռիթմերը: Ամենը վկայում է այն, որ հոսքերը հոսում են հենց այլ քաղաքից, եւ ես հուսով եմ դրա կենտրոնում գտնել աղբյուրը, որը մեր կարգի սկիզբն է եւ որն էլ հենց կարող էր նորոգել այն: Ոչինչ չես անի, ինձ պետք է գրադարան գնալ: Ես չգիտեմ, թե ինչ հրեշների կհանդիպեմ, բայց կարծում եմ, որ ավելի վատ բան, քան կյանքն է իմ քաղաքում, ինձ ոչինչ չի սպասում: Բացի այդ, ես լավ պատրաստվել եմ ճամփորդության:- Ես բացեցի ուղեպայուսակս եւ ցույց տվի նրան ուտելիքի պաշարները, նաեւ հանեցի լապտերիկս եւ գլխավերեւումս թափահարեցի սուր մաչետեն:

Գիտաշխատողը հոգոց հանեց:

-Լավ, եթե ձեզ ռեստորանը քիչ է, ապա ես ձեզ կուղեկցեմ գրադարան: Բայց միայն մինչեւ վտանգավոր գոտու սահմանները, հետո դուք ինքներդ պիտի գնաք: Եվ հույս չունենաք, թե ինչ-որ մեկը կուղեւորվի ձեզ փնտրելու, եթե դուք չվերադառնաք:

Մենք քայլում էինք անվերջանալի դարակների կողքով, սկզբում ընթանում էինք հարթ եւ լավ լուսավորված անցումներով՝ մանրակրկիտ հավասարեցված կազմերի երկայնքով, բայց հետզհետե, մեր գրապահոց խորանալուն համընթաց, հատորյակները սկսեցին ցրվել, դրանցից դուրս էին

թռչում պոկված թերթիկները, վառվող լամպերն ավելի ու ավելի քիչ էին, այնպես որ երբեմն մենք ստիպված էինք լինում շոշափելով շարժվել: Վերջապես մենք հասանք խաչմերուկ: Դրա վրա փայլում էր աղոտ լամպը. արահետների ելանցքները, որոնք կորչում էին գրադարանային խորքերում, մթին էին, օդում զգացվում էր հին թղթի ծանր հոտը: Իմ ուղեկիցը կանգ առավ:

-Այստեղ սկսվում են ջունգլիները,- լուրջ ասաց նա եւ ցույց տվեց դարակաշարի միջեւ ընկած մթին փողոցները:- Այստեղ ես ձեզ կլքեմ: Հաջողություն ձեզ եւ զգույշ եղեք: Նա ձեռքս սեղմեց ու արագ հեռացավ:

Ես մտա այդպիսի փողոցներից մեկը: Ծուտով հայտնվեցի լիակատար խավարում, միայն որոշ տեղերում փայլում էին փտող գրքերը: Ես վառեցի լապտերիկը, եւ լույսի կոնը դարակների վրա տարուբերվեց: Խոնավությունից գրքի էջերը կծկվում եւ ծռվում էին, դրանք ուռչում էին, քրքրվում եւ փքվում էին, դրանք շերտավորվում եւ ներսից ճնշում էին կազմերի վրա, դրանք պատռում կազմերն ու անցքերից ելնում էին: Կազմերը փլվում էին, էջերը դրանցից դուրս էին գալիս եւ վար էին կախվում, ինչպես հոգնած լեզուներ, ոմանք ընկնում էին հատակին, որտեղ խառնվում էին այլ գրքերի էջերին եւ փտում էին, գոյավորելով թացացող ու փայլկտող եւ անդուր հոտող բաղադրյալ պարարտանյութի հաստ շերտ, որով ես ստիպված էի լինում անցնել եւ որի մեջ երբեմն մինչեւ գոտկատեղս թաղվում էի: Փայտե գրադարակները հեղձուցիչ խոնավության մեջ պայթում եւ ծռվում էին: Գրքերի փտող ներսերում, էջերի միջեւ մթին սեպերում լռվում էին բույսերի սերմերը, մթության մեջ դրանք ուռչում էին, թղթի մեջ արմատներ էին նետում եւ իրենց ընձյուղները ձգում էին գրքի ծայրերին, որտեղ նրանց աշխույժ ծայրերը սպրդում էին, երբեմն դրանք վերածվում էին լիանաների, որոնք, հյուսվելով, ձգվում էին դարակների երկայնքով, եւ դրանցից մածուցիկ հյութ էր կաթում, երբեմն դառնում էին սողացող բույսեր, որոնք ձգվում էին դարակների միջով եւ զոռով ներթափանցում էին այլ գրքերի մեջ, անցնելով փակ էջերի միջով դեպի հատորի կենտրոնը, որպեսզի այնտեղ էլ իրենց արմատները նետեին: Որոշ ցողունների վրա, որ աճում էին գրքի ներսից, հասունանում էին ծանր տտիպ պտուղները: Ամենից շատ ես վատ էի զգում նույնիսկ ոչ թե այն բանի գիտակցումից, որ այդ հեղձուցիչ եւ նեխահոտ միջանցքներում տեղի է ունենում տարօրինակ տարերային աղետ եւ փոթորկված բնությունը կլլում է մարդկային ոգու պտուղները, ոչ, սարսափ էր հարուցում այն հանգամանքը, որ վայրենի վերածումը գքերի վտանգավոր ու անտարբեր բուսականության ակնհայտ էր դարձնում կոր-

ծանարար հիվանդությունը, թաքուն փոթորկվող մարդու ստեղծած յուրաքանչյուր գրքում եւ յուրաքանչյուր նշանում: Ես ինչ-որ տեղ կարդացել էի, որ գրքերը խոսում են լոկ այլ գրքերի մասին, որ նշանները հղում են առ այլ նշանները, որ գիրքն իրականության հետ ոչ մի ընդհանուր բան չուներ, որ ավելի շուտ ինքը իրակնությունը գիրք է, որովհետեւ այն լեզվով է ստեղծված: Տխուր էր սոսկ, որ ստացվում էր՝ իբր իրականությունը կորչում է մեր նշանների ետեւում: Իմացությունը, որով հոսում էր ինձ վրա նեխող գրադարանից, շատ ավելի չարագուշակ էր՝ այդժամ ինձ համար պարզ դարձավ, որ գրքերն ու նշանները, ընդհակառակը, մնում են սերտաճած մեր իրականությունում, որի անհայտ հոսանքները ղեկավարում են դրանց, որ մեր նշանակումները եւ մեր հաղորդումները գտնվում են գոյության շրջանակներում, որը նշանակում է ինքն իրեն, սեփական գաղտնի ռիթմերը, եւ որ այդ նախնական նմանակումները, այդ սկզբնական մշուշոտ շողանքը գոյության մեր կյանքը պահում է նշանակություններում եւ միաժամանակ սպառնում է կրկին կլլել դրանք եւ լուծել իր մեջ: Գրադարանում, ջունգլիների վերածված, ես հասկացա, որ տառերը պատառոտված հատորներում եւ տառերը նոր գրքում խանութի վաճառասեղանին՝ դրանք լոկ բծերի տարատեսակություններ են, որով փոթորկվող գոյությունը զարդարում է ողջ գոյողի մակերեսը եւ որոնց օգնությամբ հաղորդում է իր միապաղաղ ու անհստակ շշնջոցը:

Այդ քայքայվող ծեւերի բարդ աշխարհում բնակվում էին եւ կենդանի էակներ՝ թերթելով գրքերը ես դեմ էի առնում հարթ կակղամորթերի, որոնք թաքնվում էին էջերի արանքում եւ որոնք այնպես էին ընտելացել դրանց, որ համարյա անտեսանելի էին դարձել. ամենից հաճախ ես հայտնաբերում էի կակղամորթին լոկ այնժամ, երբ այն, որ ես թուղթ էի համարում, հպումից հանկարծ կծկվում եւ գալարվելով թաղվում էր խավարի մեջ. պատահում էր, որ ցրիվ էր գալիս ողջ գիրքը, որն իրականում լոկ միմյանց փակչած կակղամորթերի գաղութ էր: Թվում էր, թե կենդանիներն ավելի ու ավելի են շատանում. իրականում ես պարզապես սովորել էի ճանաչել հնարքները, որոնք օգնում էին այդ էակներին դիմակավորվել: Նրանց միմիկրիան հաճախ համարյա կատարյալ էր. ինձ հատկապես ապշեցրին մարդածկների մարմինները՝ սեւ բծերը նրանց սպիտակ մաշկի վրա լիովին տառերի տեսք ունեին, այնպես որ, երբ մարդածուկը պառկում էր գրքի էջերի վրա, նա բացարձակապես չէր երեւում: Տառերը մեծ մասամբ անիմաստ խմբեր էին կազմում, բայց երբեմն պատահաբար ստացվում էին իմաստավորված բառեր կամ նույնիսկ նախադասության կտոր-

ներ. օրինակ, ես կարդացի մարդածկների մաշկի վրա «անպարկեշտ», «դժգունել», «իրավարարություն» բառերը, իսկ մի կենդանու պոչի վրա ես տեսա «ապակին նզովեց թագուհուն» համակցումը:

Դա գրադարանի կենդանի կյանքն էր՝ ճաքած դարակների ընդարձակումը, գրքերի ուռչումը, բույսերի ագրեսիվ մոլեգնումը, պտուղների հասունացումն ու փտումը, կենդանիների վխտումը՝ ուներ այն հետեւանքը, որ դարակաշարերը անընդհատական եռուզեռից աճում եւ բաժանվում էին, անցատեղերը դրանց միջեւ նեղանում էին, ես ստիպված էի լինում անցնել նեղլիկ կածաններով, եւ ինքս ինձ մաչետեով ճամփա հարթել: Երբեմն դարակաշարերի երկու շարքերը սերտաճում էին, գունաթափ գրքերն ու ցողունները, դրանց ներսերից ցցվող, հյուսվում էին հոծ կամուրջների, որոնք դանակի չէին տրվում. այդ ժամանակ ես ստիպված էի լինում սողալ նեղլիկ երկար թունելներով, դրանց կամարները գոյավորում էին սերտաճած դարակները. ինչ-որ տեղերում՝ այդպիսի թունելներում լապտերի լույսը որսում էր մթությունից ցցված ժանիքներով այլանդակ գազանային մռութ, կենդանին զիլ բարբառում եւ կառչում էր դեմքիցս, երբեմն ինչ-որ գազան վազում էր թունելով միեւնույն ուղղությամբ, ինչ-որ ինքս, եւ ես սաստիկ փութում էի, ես ետեւից լսում էի անհամբեր փնչոցն ու փռնչոցը, կենդանին թաթիցս կծում էր, որպեսզի ես շտապեի, ի վերջո այն անցնում էր իմ վրայով, իր մարմնով՝ կոխելով ինձ կեղտի մեջ, եւ չարագույժ ինչ-որ բան քրթմնջալով: Որքան առաջ էի ես շարժվում, այնքան գրքի էջերը քիչ էին տարբերվում բույսերի տերեւներից, դարակների փայտը՝ ծառերի բներից, որոնք աճում էին այդտեղ պտղաբեր ոչգրքային նեխվածքից. սկսվեցին իսկական ջունգլիները՝ մոլեգին, փտող անտանելի հեղձուկում, խոնավության եւ գարշահոտի մեջ: Ես հասա պղտոր դանդաղ գետի ափին, որը Պրահայի Վլտավայից փոքր չէր: Մեջս լաստանավ սարքելու միտք հղացավ. ես լիանաներով կապեցի մի քանի ընկած բներ, որոնք ընկած էին կեղտի մեջ, եւ գրադարակի մի կտոր գտա, որը ես հանձնեցի ծույլ հոսանքի կամքին: Ես լաստանավը իջեցրի ջրի մեջ եւ թիավարեցի մինչեւ գետի մեջտեղը: Հերթով լուսավորում էի լապտերով երկու ափերը, բայց տեսնում էի միայն թուփ-դարակաշարերի թավուտները, որ թեքվում էին հարթության վրա, իրենց վարընկեց ճյուղերով: Երբեմն թռչնի ճիչ էր լսվում կամ գազանի ոռնոց, որի մարմնի մեջ էին խրվել սուր ատամները: Ինչ-որ ժամանակ անց թավուտում, եւ աջից, եւ ձախից, հայտնվեցին պատատուկով պատված, դեպի խավար՝ բարձր սյուների դատարկություն բարձրացող շարքերը՝ այն վեր էր սողում դեպի զարդարված դատարկ

սյունագլուխները, հետո հայտնվեցին քանդված հատակներով շինությունների պատերը, շինությունների, որոնց ներսում փոթորկում էր անանցանելի մացառուտը: Գուցե թե, գետն ինձ բերեց այլ քաղաքի ինչ-որ անմարդաբնակ եւ լքված թաղամաս կամ էլ թե ես հայտնվեցի անհետացած կայսրության ավերակների մեջ, շատ ավելի հին, քան այն քաղաքը, որ ես փնտրո՞ւմ եմ: Ես լողում էի պալատների երկար ճակատամասերի միջեւ՝ պատուհանների սեւ խոռոչներով, որոնցից վեր էին միտվում մացառուտի ճյուղերը, լողում էի ընդարձակ հրապարակների կողքով՝ դրանց մոլախոտերով, որ սպրդում են գրանիտե սալիկների միջից, եւ մետաղյա ցայտաղբյուրներով. սկզբում ես մտածում էի, որ ցայտաղբյուրներից խփում էր պղտոր ջուրը, բայց հետո հասկացա, որ դա լոկ խիտ հյուսված սողացող բույսերն էին, որոք աճել էին ցայտաղբյուրային թավուտներում եւ կախվել էին դրանց ծայրերից, վերջապես վերջին ճաքած պատը իջավ մացառուտ, առկայծեցին մի քանի մենավոր սյուներ՝ եւ գետը կրկին շրջապատեց անտեսանելի թավուտը:

Ես լսում էի հեռավոր գվվոցը, որը մշտապես սաստկանում էր, գետի հոսքն արագացել էր: Ես հասկացա, որ ինձ դեպի, մթով ծածկված, վիթխարի ջրվեժ էր քշում: Ես ողջ ուժով աշխատում էի դարակ-թիակով, ձգտելով դեպի ափ: Ընկնող ջրի աղմուկը վերածվեց ահեղ ոռնոցի: Հոսքը քաշում էր լաստանավը, քշում էր դեպի գետի կենտրոնը, բայց ամենավերջին վայրկյանին ինձ հաջողվեց ճանկել մերկացած արմատը, որ ցցվել էր ջրի հարթության վրա, եւ մագլցել դրանով դեպի ափը: Լաստանավը՝ բոլոր իմ իրերով, ջուրը տարավ, եւ ինձ մոտ նույնիսկ լապտերիկը չմնաց, ես կանգնել էի մենակ, ջունգլիների մեջ:

Կուրորեն իջնում էի թավախիտ զառիթափով, խցկվում էի թփերի միջով, խլացած ջրի աղմուկից, որը իմ կողքին սրընթաց ընկնում էր խորության մեջ: Երբ ես վար իջա եւ ոտքերիս տակ զգացի ավազը, նեղլիկ շերտը, որը գետը բաժանում էր մացառուտներից, ինձ այնպիսի հոգնություն էր համակել, որ ես պառկեցի հենց ավազի վրա: Իմ գլխավերեւում աղմկում էր անտեսանելի ջրվեժը: Ծուտով ես ննջեցի:

Արթնանալով եւ աչքերս բանալով՝ ես սարսափից ճչացի: Այն ափի ջունգլիներում հրդեհ էր բռնկվել, կրակի շլացուցիչ լեզվակները կարմիրով էին լուսավորում ջրի ոռնացող պատը, որն ընկնում էր ինը հարկանի տան բարձրությունից՝ գիշերվա այդ ցնորական օրգանը: Ես երկար կանգնել էի ափին եւ ակնդետ նայում էի ալ շիթերին:

Գլուխ 21
Ժայռափոր տաճարը

Ես քայլում էի ավազի նեղլիկ շերտի վրայով, ձախ կողմից՝ սեւ գետում արտացոլվում էին հրդեհի կարմիր լեզվակները, իսկ աջից ինձ էին սեղմվում անանցանելի, իրենց թմրեցնող բույրերով ջունգլիները: Հանկարծ մացառուտների վրա երեւաց ժայռը: Այն լուսավորում էին հրդեհի արտացոլքերը, եւ ես տեսա, որ քարե մակերեսի վրա տաշված է Դարգուզի վիթխարի դեմքը՝ այն այնպիսին էր, ինչպիսին ես տեսա Նուսեյան սանդուղքի վրա՝ հյուծված, ներս ընկած, խելագար աչքերով: Քարե դիմագծերը ողողել էր ջուրը, որ հոսում էր ժայռի վրայով, աչքերի փորվածքներն ու բերանը քարաքոսով էին ծածկվել: Ավազոտ ափից քիչ վեր՝ ժայռում անցք էր երեւում, դեպի ուր տանում էին թեքված մետաղալարե բազրիքներով քարե աստիճանները: Ես ելա սանդուղքով եւ մտա ժայռի ներսը: Ես հայտնվեցի ընդարձակ մի քարանձավում, դրա պատերի վրա վառվում էի շողերը եւ լուսավորում հինավուրց որմնանկարները՝ գիշերային պուրակում ինչ-որ մետաղյա էակների մարտերը պատկերող, որտեղ մթին ծառերի ետեւում շողում էին տրամվայի լույսերը. քարանձավի առաստաղը կորչում էր խավարում: Որմնախորշում զոհասեղան էր դրված, որ արված էր նեղլիկ թիթեղյա պահարանիկից, որոնք լինում են գործարանների հանդերձարաններում, պահարանիկի ներսում, ուսիկների վրա ինչ-որ սրբազան առարկաներ էին կախված: Պահարանիկ-զոհասեղանի առաջ, հատակին նստած էր, ոտքերը խաչած, գրքի էջերից անփութորեն կարված հասարակ հագուստով տարեց ու վտիտ մի մարդ, եւ քրթմնջում էր ոչ այն է աղոթքներ, ոչ այն է անեծքներ: Ես չէի ուզում նրան խանգարել, եւ այդ պատճառով երկչոտ սպասում էի, թե երբ նա կավարտի իր զրույցներն աստվածությունների հետ: Դադարելով քրթմնջալ, ծերունին իմ կողմը դարձրեց ճգնակյացի իր կնճռոտ դեմքը:

-Դու եկել ես հուռութքի ետեւի՞ց, թե՞ ուզում ես քո ապագան իմանալ:

Ես նրան բացատրեցի, որ գալիս եմ քաղաքից, որ ընկած է ջունգլիների մյուս ծայրին, եւ որ ես մոլորվել եմ:

-Ցահել հասակում ես մի անգամ եղել եմ ձեր քաղաքում,- ասաց ժայռափոր տաճարի պահապանը:- Դա շատ վաղուց էր: Սակայն ի՞նչը քեզ ստիպեց դժվար ճամփա ընկնել: Դու նման չես նրանց, որ ներթափանցում

են ջունգլիներ, որպեսզի մարգարիտ գտնեն, որ աճում է գրքի էջերի արանքում, կամ որսալու հազվագյուտ փոքր կոկորդիլոսներ, որոնց կաշին ոսկու գին է գնահատվում,- բոլորը երազում են ջունգլիներում գտնել հեքիաթային գանձեր, եւ ի վերջո խելագարվում են, երբ նրանց են կապում վայրի անտառային հրեշտակները, կրկնակոխ թափառում են նրանց ետքից եւ անընդհատ կարդում են միապաղաղ ձայնով անպատշաճ, միանգամայն անպատկերացնելի էպոսը, կամ էլ թե եկվորներին հաղթահարում է կատաղի բուսականությունը՝ գրքերը, որոնց վրա նրանք պառկում են, սերտաճում են նրանց մարմիններին, կազմերը սերտաճում են իրենց մաշկով եւ էջերը, որոնցով ծածկվում է ողջ մարմինը, անդադրում թերթում է քամին:

Ինձ թվաց, որ ճգնավորին կարելի է վստահել: Եւ ես պատմեցի նրան առեղծվածային գրքի պատմությունը, դրված բուկինիստական խանութի գրադարակի վրա, եւ երկրորդ քաղաքի որոնումների մասին: Նա ուշադիր լսում էր ինձ. երբ ես խոսելը վերջացրի, նա մատով ինձ կանչեց, գլխով արեց, որպեսզի ես կռանամ դեպի նա, իր ոսկրոտ ձեռքն ուսիս դրեց, եւ ինձ ավելի մոտ քաշելով, ականջիս շշնջաց.

-Քո ճամփորդությունը զուր էր, իզուր էիր դու քեզ վտանգների ենթարկում: Ես քեզ ինչ-որ բան կասեմ...Բայց ոչ այստեղ, արի դուրս գանք:

Նրա շշնջոցում ես անհանգստություն էի զգում: Ո՞ւմ ականջներից էր նա վախենում այսպիսի տեղում, ջունգլիների սրտում: Նա կարծում էր, որ թիթեղյա զոհասեղանի մոտ նրան կարող է ունկ դնել աստվածությունը, կամ էլ թե ժայռի պատի մեջ լսող հարմարանք կա՞ր: Նա բռնեց ձեռքս եւ քարանձավից դուրս բերեց: Մենք նստեցինք ավազե ափին, մեջքով ժայռին հենվելով: Մեր առջեւ լուսավորվում էր կրակի կարմիր շերտը մյուս ափին եւ դրա արտացոլքը մթին գետային հարթության վրա:

-Դու ուզում ես ճանաչել քաղաքը, որը սահմանակից է քոնին, ուզում ես ընկնել դրա կենտրոնը, համարելով, որ դա միաժամանակ քո իսկ քաղաքի կենտրո՞նն է: Դու ենթադրում ես, որ այլ քաղաքի օրենքներն ընդունելը նշանակում է վերականգնել աշխարհակարգը, որը քո աչքին կործանվել է...Դու չես կարողանա գտնել այն, ինչ փնտրում ես:

Այժմ տաճարի պահակն ավելի բարձր էր խոսում, քան քարանձավում:

-Կնշանակի՝ ես այն կողմը չե՞մ գնում,- հարցրեցի ես:- Ջունգլիներում դժվար է կողմնորոշվելը: Ես շատ հոգնել եմ:

-Ոչ, ջունգլիներն իրոք մտնում են քաղաքի կազմի մեջ, որը դու փնտրում ես: Եթե դու փոքր-ինչ էլ առաջ անցնեիր, ապա կտեսնեիր ծառերի

բարձունքներին արքայական պալատի ոսկե ծայրաձողերը: Բայց եւ այլ քաղաքն ունի իր ծայրամասերը, որտեղ այլ տարածություն է անցնում: Հնարավոր է՝ դու կընկնես գլխավոր հրապարակի պալատը եւ կթափառես դրա միջանցքներով, հնարավոր է՝ թագավորական գրադարանում դու ձեռքդ կվերցնես Օրենսգիրքը, բայց այդ քեզ չի օգնի, դու այնտեղ ոչ մի սկիզբ չես գտնի, քանզի բոլոր օրենքները արտագրված են հարեւաններից, իսկ նրանք ավելի վաղ դրանք արտագրել էին իրենց հարեւաններից...Կամաց, դու եղեգների մեջ ինչ-որ կլկլոց չլսեցի՞ր:- Նրա ձայնի մեջ հնչեց միեւնույն անհանգստությունը, որը ես որսացել էի նախկինում, ժայռափոր տաճարում:

-Երեի դա ձուկ է: Թվում է, թե ես արդեն փոքր-ինչ ծանոթ եմ այդ ուսմունքին: Ես լսել եմ բանաստեղծությունը, որի հեղինակը պնդում էր, որ մեր փնտրած գաղտնի կենտրոնը՝ իրականում լոկ այլ կենտրոնի վայրն է, որը նույնպես վայր է, իսկ վերջին կենտրոնը այնքան հեռու է, որ մենք դրան հասնելու հույս չունենք:

-Դե, ո՞վ է քեզ այդպիսի բան ասել,- զարմացած հարեց ճգնակյացը:

-Ֆելիքսը, թռչուն-ասմունքողը, որ պատմեց այդ սառնամանիքային գիշերով եւ, ընդ որում՝ ընկնում էր լուսամուտագոգից:

-Ախ, Ֆելիքսը...Նա էդպիսի բաներ չի, որ կասի: Ոչ, բանաստեղծության մեջ, որ կարդացել է թռչուն-ասմունքողը, միանգամայն այլ ուսմունքի մասին է խոսքը: Բանը ամենեւին այն չէ, որ կենտրոնը հեռու է եւ դժվարահասանելի, որ նախնական օրենքը անուղղելիորեն խեղաթյուրվել է բազում թարգմանությունների թարգմանություններով, մոտավորապես այնպես, ինչպես խեղաթյուրվում է նախնական խոսքը փչացած հեռախոս խաղալիս, բանը նույնիսկ այն չէ, որ աստծո դեմքը թաքնված է հազարավոր դիմակների տակ: Զարմանալի գաղտնիքն այն է, որ վերջին կենտրոն էլ գոյություն չունի, դիմակների ետեւում ոչ մի դեմք էլ թաքնված չէ: Փչացած հեռախոս խաղում ընդհանրապես առաջին բառ չկա, թարգմանությունը բնագիր չունի: Կան լոկ անդադար պտտվող համրիչները, որ ծնում են հետագա փոփոխությունները: Ոչ մի անդրենաձինների քաղաք էլ չկա, կա միայն քաղաքների անվերջանալի շղթան, անսկիզբ եւ անվերջ շրջանը, որտեղ անտարբեր ճողփում է օրենքների փոփոխական ալիքը: Կա ջունգլի-քաղաքն ու քաղաքը, որտեղ մարդիկ ապրում են ավտոմեքենաների վերջնական կանգառների պարսպապատումներում, խաչաձեւվող անվերջանալի ցցափակոցներում, քաղաքը հնչյուններից, քաղաքը ճահճուտում, հարթ ու սպիտակ գնդերի քաղաքը, որ դանդաղ գլորվում է բետոնի

վրա, քաղաքը՝ բաղկացած բնակարաններից, նետված մի քանի մայրցամաքներում, քաղաքը, որտեղ մթին ամպերից թափվում են քանդակները եւ փշրվում են մայթին, քաղաքը, որտեղ լուսնի ուղին անցնում է բնակարանների միջով: Բոլոր քաղաքները միաժամանակ կենտրոն եւ ծայրամաս են, սկիզբ եւ վերջ, հարազատ քաղաք եւ գաղութ:

-Անսովոր ուսմունք է,- ասացի ես:- Չեմ կարողանում հասկանալ՝ այն արդյո՞ք հուսահատություն է խոստանում, թե՞ տարօրինակ երջանկություն:

-Երջանկությունը եւ հուսահատությունը բառեր են, որ իմաստ ունեն երկրում, որը սկիզբ եւ շարունակություն ունի, կենտրոն եւ ծայր: Եթե դու թույլատրես վրա հասած ալիքին տանել քեզ, ապա կմոռանաս,թե ինչ են դրանք նշանակում, դու չես կարողանա ասել, թե ամեն ինչ իմաստ չունի կամ ամեն ինչ մինչեւ վերջին հյուլեն իմաստով լեցուն է: Քո առջեւ կբացվի խեղաթյուրված ժամանակի լաբիրինթոսը, որտեղ միջանցքներում, աղյուսե պատերի երկայնքով հավասարաչափ կշարժվեն խավարի մեջ փայլող խաղավտոմատները էլեկտրոնային խաղերով հետապնդողների հետապնդման մասին, դու չես կարողանա հասկանալ՝ արդյո՞ք դու խելքդ թոցրել ես, թե՞ հասու ես եղել տիեզերքի գաղտնիքին, որն անընդհատ խուսավարում էր քեզնից:

Մյուս ափին կամացուկ եւ արտասովոր դանդաղ ընկնում էր բարձր այրվող բունը, փչեց տաքուկ զեփյուռը, կարմիր լույսի բծերը սեւ հարթության վրա դողացին եւ ցրվեցին: Տաճարի պահակը նայում էր լույսի խաղին ջրի վրա եւ հոգնած ասում էր.

-Ոչ մի տեղ մի գնա, յուրաքանչյուր երկիր՝ սկիզբ ու վերջ է, ցանկացած քաղաք հավասարապես խելագար երազի ցնդաբանություն է եւ տաղտկալի իրականություն: Քաղաքը, որտեղ դու ապրում ես, ավելի նվազ չափով չէ երազ եւ հալյուցինացիա, քան մարմարյա վագրերի քաղաքը մոլոշաքարե հարթավայրից, որոնց կողերի վրա շողում են, որպես թանկարժեք քարեր, ցողի կաթիլները, երբ հորիզոնում ելնում է ալ արեւը: Դարձիր առ քո երազը, զոհեր մատուցիր աստվածներին քո երազից, օգտագործիր ձեր ֆանտաստիկ մեխանիզմները պտտվող եւ սուրացող տեխնիկայի տարօրինակ երազում, արբեցնող եւ անհավանական պարում: Ահա ես՝ քուրմը Դարգուզի սրբավայրում՝ ապրիր բարձր պատի ետեւի երկրում՝ պղնձե թերթերով, որտեղ գերագույն աստված է երկրաչափական պատկերը, կարմիր բազմանկյունը համաչափության՝ բազում առանցքներով, ես կպաշտեի այդ աստվածությունը եւ կքանդակեի դրա պատկերը բյուրեղապակու վրա:

Դարձիր տուն... Կամ մի վերադարձիր, թափառիր քաղաքից քաղաք, անցնելով քաղաքների շղթաներով: Վերջը միեւնույնը կլինի...

Այժմ արդեն ես էլ էի լսում ճողփյունը եղեգների մեջ: Ջրի տակից հայտնվեց մետաղական սայրը, տարուբերվեց եւ կրկին անհետացավ, հետո դուրս ցցվեց գլուխը՝ մթին ռեզինե դիմակով, դեմքը թաքնվում էր ջրասուզական ակնոցի ետեւում եւ երկատված փողրակի, որ ելնում էր բերանից: Գետից ելավ թթվածնի բալոնը, սեւ կոմբինեզոնով կերպարանքը եւ երկար ու նեղ սուր ձեռքին: Դրա շեղբի վրա ընկած էր հրդեհի արտացոլքը:

Կիպ կպած ռեզինե կոմբինեզոնի տակ ուրվագծվում էին կանացի մարմնի գծերը: Ջրասուզակը հանեց ակնոցն ու բերանից դուրս բերեց փողրակը, գլխից պոկեց սաղավարտը եւ տարածեց սեւ վարսերը՝ դա կրկին Ալիվեյրան էր՝ չարությունից եւ ատելությունից խեղված դեմքով. նրա մթին ուրվապատկերի ետեւում այրվում էին ջունգլիները, ալիքածեւ վարսերի շուրջը, որպես լուսապսակ, բոցկլտում էր կարմիր արտացոլքը: Լաստերը շրմփացնելով, նա երկու արագ քայլ արեց,սուրը մոտեցրեց պահակի վզին եւ շեղբով գլուխը սեղմեց ժայռին:

-Դե, վերջապես մենք քեզ դարանեցինք,- ֆշշաց նա:- Ես մագնիտոֆոնով ձայնագրել եմ քո սրբապղծությունները, քո սարսափելի վիրավորանքները Դարգուզին: Մենք վաղուց էինք կասկածում, որ դու հազարավոր քաղաքների աղանդի հետեւորդն ես, բայց մենք ոչ մի կերպ չէինք կարողանում բռնել քեզ հանցագործության մեջ, դու խորամանկ էիր եւ օձի պես լպծուն: Վերջին հարյուրամյակների ընթացքում մեր ուշադրությունը բթացել էր. մեզ թվում էր, որ այն բանից հետո, երբ ձեր նողկալի մարգարեի մեջ ոսկե պողոսակ էին պտուտակել, ձեր այլասերիչ ուսմունքը ի չիք էր եղել...Եւ միայն վերջերս մենք նկատեցինք նշաններն այն բանի, որ չսատկացրած օձը կրկին բարձրացնում է գլուխը, մենք գտնում էինք նեքնաբակերոմ ձեր գարշելի գինարբուքների հետքերը, կարի մեքենաների այրված մնացուկները, քսված հաղարջի մուրաբայով...

Նա թաքցրեց սուրն ու պահակի դաստակի շուրջը ամրացրեց փայլփլուն ձեռնաշղթաներից մեկը, իսկ դրանց երկրորդ օղակը դրեց պարսպի մետաղյա սյան վրա:

-Իսկ դու՝ դու շատ բան ես լսել, որպեսզի հենց այնպես վերադառնաս քո քաղաք:

Նա վեր պարզեց ալ փայլփլող սուրը. ես պուկ տալով փախա, սուրացի նեղլիկ ափով, իսկ երբ ժայռը վերջացավ, սուզվեցի հոծ ջունգլիների մեջ,

ես անցնում էի դրանց միջով խավարի մեջ, լսելով՝ ինչպես է Ալիվեյրան իմ մեջքի ետեւում մոլեգին իրեն ճամփա հարթում սրով՝ ճյուղերի եւ լիանաների միջով: Ես արդեն զգում էի նրա սրի սայրը իմ թիակների վրա, երբ հանկարծ դեմ առա մի քարե պատի. կտրուկ շրջվեցի եւ սկսեցի անցնել խիտ աճած մացառուտի միջով, շուտով ես պատի մեջ փոքրիկ դռնակ շոշափեցի, պտտեցրի ժանգոտած բռնակը, ներս սուրացի եւ գոցեցի դռնակը հենց այն պահին, երբ դրան հարվածեց սրի ճարպիկ սայրը:

Ես հայտնվեցի անպատուհան լուսավորված շինությունում: Իմ դիմաց աթոռի վրա նստած էր ճերմակավարս մի կին սպիտակ նեյլոնե խալաթով եւ կարդում էր «Վլաստա» ամսագիրը, նախասենյակի սեղանիկի վրա դրված էր զուգարանի թղթի կարգաբերված տրցակը: Դա զուգարան էր «Սլավիա» սրճարանի նկուղում: Ես կնոջ աջ դրված ափսեիկի մեջ մի կտոր թուղթ բրդեցի եւ աստիճաններով բարձրացա:

Մեծ պատուհանների ետեւում խավար էր. սրճարանը լեփ-լեցուն էր, մարմարյա սեղանիկների վրա շողշողում էին ջահերը եւ դրանց անհաստատ արտացոլանքներն ապակու եւ հայելիների մեջ: Ես փութացի դեպի ելքը, բայց հետո ինձ հիմարություն թվաց Ալիվեյրայից փախչելը դեպի սահմանի այս կողմը,աշխարհում, որտեղ նա, ըստ երեւույթին, ոչ մի իշխանություն չունի: Բացի այդ, ջունգլիներում դեգերելուց հետո ես ուժասպառվելու աստիճանի հոգնել էի եւ կամեցա ինչ-որ բան խմել: Ես նստեցի դատարկ սեղանիկի մոտ եւ մատուցողուհուն կոնյակ պատվիրեցի: Նայում էի սանդուղքի կողմը, որ տանում էր դեպի զուգարան, սպասելով ռեզինե լաստերի շրմփոցին աստիճանների վրագ. ինձ հետաքրքիր էր, թե արդյո՞ք դուրս կլողա Ալիվեյրան իր սեւ լողազգեստով դեպի լուսավոր սրճարանը, եւ արդյո՞ք կթափահարի իր նեղլիկ սուրը: Սակայն սանդուղքի վրա ոչ մեկը չէր հայտնվում, Ալիվեյրան հարգում էր երկու քաղաքների միջեւ ընկած սահմանը, նա լավ էր դաստիարակված եւ գիտեր, որ մարտերը, որ սկսվել էին ջունգլիների թավուտներում, հարկ չկա շարունակելու սրճարանում, եթե նույնիսկ նրան անտառից եւ այնտեղի բնակիչներից բաժանում է լոկ բարալիկ պատը, լոկ զուգարանի դռնակը:

Գլուխ 22
Մեկնում

Ես հոգնեցի ոչ միայն ջունգլիներում դեգերելուց: Ինձ մաշեցրին այլ քաղաք ներթափանցելու փորձերը, դեպի նրա ծածկած պալատներն ու հրապարակները, դեպի նրա իշխանության ակունքները: Ես հոգնեցի գոյություն ունենալ սահմանին՝ տան սահմանին, որտեղ բոլոր իրադարձությունները հետզհետե սմքում էին, զրկված իմաստի ավյուններից, եւ վերածվում էին անիմաստ ծեսի եւ օտար երկրի, որի կարգերը մշտապես խուսավարում էին իմ ընկալումից:

Ես հանդիպում էի այլ քաղաքի բառերին եւ ժեստերին, նրա կենդանիների ճիչերին, նրա քանդակների քարացած դիրքերին՝ որպես հիերոգլիֆիկ տեքստ. թեեւ նրա գրերը երբեմն հանկարծ եւ համարյա հիվանդագին շամփրում էր միավորող իմաստի շլացուցիչ լիցքահանումը, բայց, այդուհանդերձ, այն ավելի շուտ էր մարում, քան ես կկարողանայի որսալ:

Ես տարօրինակ կերպով ապրում էի երկու կայսրությունների արանքում, մեկում մարում էր իմաստի կրակը, մյուսում ոչ մի կերպ չէր կարողանում բռնկվել: Այլ քաղաքի մասին տեղեկությունները, որոնք ես իմացա, ավելի շուտ շփոթեցնում էին. այն, ինչ ասում էին այլ քաղաքի եւ նրա օրենքների մասին Ալիվեյրան, վաճառականը, թռչնորսը, Ֆելիքսն ու տաճարի պահակը, հնչում էր հակասական ու փոխբացառող՝ եւ այդուհանդերձ պարզ էր, որ այդ բացատրություններն ինչ-որ կերպ ճշմարիտ էին:

Ես չէի ուզում որեւէ տեղ գնալ, ես նստում էի տանը եւ տրամաբանության հաստափոր գիրքն էի կարդում, դրա էջերի վրա ընկած էր, ծյունով մաքրված, միջօրյա արեւի պարզ լույսը: Հանկարծ հայացքս դեմ առավ մի տարօրինակ բառ-խառնածինի՝ դրա առաջին կեսը կազմում էին լատինական այբուբենի տառերը, բայց դրանց, ինչպես ջրահարսի պոչ, կպչում էր երկրորդ կեսը, գրված այլ քաղաքի տառերով: Ճարվածքի տառարկղի հատակին մնացել էին գիշերային աշխատանքի պատառները, որ պատահաբար ցերեկային գրաշարի ձեռքի տա՞կ ընկան: Արդյո՞ք օտար տառերը ծածկագի՞ր էին, ուղարկված այլ քաղաքի լրտեսներին իրենց կենտրոնից, տեղակայված պատերի ետեւի տարածություններում: Սակայն ես կասկածեցի, որ դա ինչ-որ այլ բան է: Գիրքը, որ ես կարդում էի, դրված էր գրադարակի վրա, բավական հեռու գրադարակի մեջտեղից, որտեղ ես խցկել

էի Կարլովի փողոցի վրայի բուկինիստական խանութի հատորյակը: Ես ինչ-որ գրքույկ հանեցի,, որն ավելի մոտ էր մանուշակագույն թավիշով գրքին, եւ թերթեցի այն՝ ինչպես եւ վախենում էի, դրա էջերի վրա շատ ավելի շատ էին այլ քաղաքի տառերը, այստեղ պատահում էին ողջ բառեր եւ նախադասությունների հատվածներ: Սարսափով ճանկեցի հատորը, որ գտնվում էր խորհրդավոր մանուշակագույն գրքի հարեւանությամբ: Բացեցի այն եւ ինձ այնպիսի զգացողություն համակեց, ինչը լինում է, երբ շրջում ես գլաքարը եւ դրա տակ տեսնում ես վխտացող միջատների: Էջերը համարյա լիովին ծածկված էին յուղոտ սեւ տառերով սահմանի այն կողմի աշխարհից, միայն ինչ-որ տեղեր մնում էին լատինական տպատառերի կղզյակները: Ես ինձ վատ զգացի. եւ փակեցի գիրքը: Այժմ ես հաստատ գիտեի, թե բանն ինչ է՝ օտար գիրը տարածվում էր իմ գրադարանով մեկ, պահարանը մոլախոտի պես պատվում էր դրանով: Ես շուտափույթ հանեցի մանուշակագույն գիրքն ու դրա հետ վազեցի սենյակով մեկ, փնտրելով, թե որտեղ այն պահեմ: Արդյոք կարելի՞ է բուժել գրադարանը, որ անհասկանալի գրերով է ներծծվել:

Հետո ես կանգ առա, ծիծաղեցի իմ վախերի վրա եւ գիրքը ետ իր տեղը վերադարձրի: Թող կլորավուն եւ սուր տառերը տարածվեն եւ բազմանան, թող գորգերի վրայով մթին անկյուններից գան վագրերը, թող ժխտվող ծովի ալիքը գա խորքերից լիգի սենյակի լուսավորված կենտրոնը: Ես էլ ի՞նչ ունեմ վախենալու: Հանկարծ հասկացա, թե ինչու այլ քաղաքն ինձ չընդունեց, ես գիտակցեցի, որ ինձ իսկապես խանգարում էին բնավ էլ ոչ կողային թնդանոթները ուղղաթիռի, որը ելնում էր տարուբերվող սավանների վրա, ոչ թե շնածկները ծնեթմբերում, ոչ էլ Ալիվեյրայի դյութիչ սայրը: Ես հանկարծ գլխի ընկա, որ նրա առաջ, ով իսկապես գնում է, քաղաքն անպայման բացվում է, որը գնացողին կբերի դեպի շողացող պալատներն ու մթին այգիները, ցանկացած ճանապարհին, որի վրա նա ոտք կդնի: Բայց ես մինչեւ այժմ այդպես էլ չգնացի: Իսկապես գնում է նա, ով թողնում է ամեն ինչ, ով ժպտալով եւ դատարկաձեռն գնում է առ խավար եւ չի մտածում վերադարձի մասին: Նա, ով գնալով, ենթադրում է վերադառնալ, չի կարողանա լքել տունը, եթե նույնիսկ մտնի սպիտակ քաղաքներ ջունգլիների խորքում եւ կհանգստանա նրա հրապարակների մարմարի վրա. նրա ուղիները, միեւնույն է՝ մնում են միահյուսված նպատակների գործվածքին, որոնք դնում է տան տարածությունը, եւ օտարության շողացող սահմանները նահանջում են նրա առջեւ: Ես ողջ կյանքում ապրել եմ ծայրամասում եւ ավելի լավ էի գլուխ հանում հին պատերի անցքերից եւ բծե-

ից, քան ձեւերի աշխարհից, որոնք ճանաչվել էին իմաստավորված եւ մոտիկ կարեւոր բանը, ես երբեք չեմ հասկացել պիեսի իմաստը, որն այստեղ խաղարկվում է, եւ դերերը, որոնցից ես պիտի ընտրեի լոկ մեկը. ժամանակ առ ժամանակ ես ուզում էի ինձ վրա փորձել այս կամ այն դերը, բայց ամեն անգամ միայն մեխանիկորեն թմբկահարում էի խոսքերը, այնպես որ՝ ես գերադասեցի լռել եւ թաքնվել բեմի անկյունում եւ, այդուհանդերձ, մինչեւ այժմ ես վախենում էի տեքստը դեն նետել եւ գնալ մթին վարագույրների ետեւը: Այսինքն, ես, անշուշտ, գնում էի, բայց հասկանում էի իմ մենկնումն որպես վերջին դեր, որն, ի վերջո, զարմանալիորեն ինձ կներսոռի պիեսի մեջ: Այժմ ես գիտեի, որ այլ քաղաք կարող է ընկնել լոկ գնացողն այն բանի գիտակցմամբ, որ ուղին, որ նա բռնում է, ոչ մի իմաստ չունի, քանի որ իմաստը նշանակում է վայր փոխկապակցվածությունների գործվածքում, որ տուն է արարում, եւ որ ճանապարհը այդ նույնիսկ չի կարելի անիմաստ կոչել, քանզի անիմաստությունը՝ իմաստի հավելումն է եւ պատկանում է նրա աշխարհին: Անհանգստություն այն բանից, որ բոլոր տեղեկություններն այլ քաղաքի մասին հակասական են, անհետացավ: Ես հասկացա, որ օրվա լույսի ներքո բոլոր գիշերային մեկնություններն ի մի բերելը լոկ փորձ էր այլ քաղաքը ծանոթ համակարգի մեջ դնել, այն վերածել ընտել տան գաղութի եւ դրանով ենթարկեցնել ու կործանել: Անլուծելի հարցը լուծվեց՝ այն պարզապես դադարեց հարց լինել: Այժմ խավարում ես տեսնում էի տարածությունը, որտեղ քուլա-քուլա բարձրանում եւ փոխվում էին փայլկտող կերպարանքները, որոնց ձեւերն անկարելի է արտահայտել մեր աշխարհի ձեւերով եւ որոնք ոչ մի իմաստ չունեին, բայց, այդուհանդերձ, իրենց մեջ ինչ-որ իրավունք էին կրում, շատ ավելի ուժեղ, նախնական եւ անժխտելի է թվում, քան իմաստի իրավունքը՝ անմիջականորեն սերտաճած գոյությանը, ինքնավար եւ ոչնչին չենթակա, եւ այդու՝ ոչ մի սպառնալիքից չվախեցող: Այն, ինչ ծույլ թավալվում էր տարածության մեջ, միաժամանակ հում, սաղմնայային իրականություն էր, եւ սկզբնապատճառը, փոփոխական եւ անտարբեր առեղծվածային շողանք: Հարցերը, որոնք ես տալիս էի քուլա-քուլա բարձրացող ձեւերին եւ որոնցից տարբեր ու հակասական պատասխաններ էի ստանում, չէին կարող հանդիպել այդ դժգույն լույսին: Ինձ բացվող տարածության մեջ անհնար էր տարբերել օրենքների եւ սովորությունների ակունքներն անհետացած էակների բեկորներից եւ մեր աշխարհի մնացուկներից, սկզբի անձեւությունը անհետացման անձեւությունից, օտար ուժերի մարտը բացարձակ եւ անկործան ամբողջականությունից, քաոսի շրջապտույտը անխախտ կարգից: Այդ տարածու-

թյունը վերջապես ազատվեց տան իշխանությունից: Ինձ բացվեց երկիրը, որից մեզ ողջ կյանքում ուզում են ետ պահել, մեզ մերժում են տանուլ տալու իրավունքն ու արտաքսման իրավունքը, կորչելու եւ պատերի տակ թրեւելու իրավունքը, նժդեհ դառնալ հեռավոր անկյունների աշխարհում, գոյության ետնամասերում: Ինչ տաղտկալի են նրանք՝ լոկ գիտեն, որ մեր վզին փրկություն եւ տուն կապեն, նրանք ուզում են մեզ զրկել օտարության շողշողացող երկրներից, որտեղ ազատագրված իրերը կամացուկ փայլկտում են հիասքանչ պաղ լույով, ուզում են զրկել մենության բերկրանքից գիշերային հարթավայրերում դողդողացող քաղաքների վրա, զրկել հրեշների հիասքանչ դանդաղ պարերից դատարկ ճանապարհի վրա, արբեցնող անհետացումից մթին սենյակների խորքում, պաղ հայելիների տակ, ուր դողում է հեռավոր լապտերների լույսը՝ հիվանդագին համաստեղությունը կենդանակերպի շրջանի, որ պտտվում է տների ներսում:

Ես հագնվեցի եւ վազելով՝ աստիճաններով իջա փողոց: Պաղ, սառնամանիքային օր էր, արեւի լույսից հետիոտների հոնքերի տակ, քանդակների քարե ծալազարդերի կորանքներում եւ ծյունապատ քիվերի տակ կտրուկ ստվերներ էին ընկել: Դեմքերն ու շարժումները մարդկանց, որոնց ես հանդիպում էի, ինձ թվում էին հանդիսավոր, ֆանտաստիկ քարացած: Ես քայլում էի նեղլիկ փողոցներով, որոնք անսպասելի ինձ դուրս էին բերում դեպի շողոցող հրապարակներ, ես անցնում էի մթին պատկերասրահներով, որոնց սյուների վրա ճերմակին էր տալիս ծյունը եւ ցավեցնելու չափ կուրացնում էր աչքերը: Ես մտածում էի գաղտնի մարտերի մասին, ժամերգությունների եւ պարահանդեսների մասին, որ տեղի են ունենում խորքում՝ լռիկ ճակատամասերի ետեւում, հեռավոր ճանապարհների մասին Ասիայի սրտում, որոնց մի մասը փողոցներն են. անցնելով Յան Գուսի հուշարձանի կողքով, ես պատկերացրի դրա սնամեջ ներսը եւ խոհածեցի այն մասին, թե ինչ է այնտեղ թաքնված՝ պարասրահով գինու ռեստորանիկը, արտադրամասը, որտեղ կամացուկ գվվում են մեքենաները, կամ թե լողավազանը, որոնց մակերեւույթին արտացոլվում է բազմաբղետ լամպերի լույսը, շողշողացող դատարկ հուշարձանի գլխո՞ւմ: Գուցե թե, արդեն այսօր ես կլողամ դրա զով ջրում, լույսի առկայծող բծերում, մարմինս կսկսեն շոյել երկար վարսերը աղջիկների, որոնց մարմարյա տրամվայը տարել էր իրենց ընտանիքներից եւ որոնք մոռացել էին, որ դատարկամարմին քանդակներից անդին գոյություն ունի այլ աշխարհ: Ես գիտեի, որ բոլորն այստեղ միաձայն կխոսեն կործանման եւ դասալքության մասին: Բայց իմ մեկնումն այլ քաղաք չի դառնա պարտությունը ծածկող ներկայացում:

Միխալ ԱՅՎԱԶ

Ցավը կործանումից չէր մեղմվում, բայց տարօրինակ կերպով միաձուլվել էր անասելի բերկրանքի հետ ճանապարհից եւ դարձել նրա մի մասը: Փախուստի մասին ամենից շատ խոսում են նրանք, որոնք օրեցօր թաքնվում են տան կացարանում կանչերից, եւ իրենց նետում մթին ծայրամասերը եւ պահեստային ուղիները: Ես նրանց հանդեպ չէի չարանում, որ նրանք թաքնվել էին հարազատ տարածությունում՝ հավատարմությունը պիեսին, որում նրանք խաղում են, հիացմունքի արժանի էր եւ հարգանք էր հարուցում, բայց ես անհրաժեշտ չէի համարում արդարանալ այն բանի համար, որ դրանում մասնակցություն չէի ունենում: Ինչ-որ մեկը մնում է, ինչ-որ մեկը գնում: Մեկն իր կյանքի ողջ ընթացքում ոչ մի անգամ չի լսել սոսափների եւ շրշյունների երաժշտությունը, իսկ մյուսին կլանում է նախշը գորգի վրա կամ պահարանի թմրեցնող ներսը, ընտանիքը շաբաթներով նստում է պահարանի բացված դռների մոտ եւ սպասում նրա վերադարձին, իսկ հետո բոլորը մոռանում են նրա մասին: Որքա՞ն երկար դեռ մեր հասարակությունը կարհամարհի նրանց, ովքեր գնում են: Ե՞րբ կհաշտվեն գնացողներն ու մնացողները: Ե՞րբ մեկնումն այլ քաղաք կդառնա հանդարտ տոն, ե՞րբ կդադարեն ծանակումները նրանց, որ հրաժարվել են խաղալ պիեսում կամ չի կարողացել դա սովորել. ե՞րբ կդադարեն բռնի բեմ քարշ տալ նրանց, որոնց արդեն հանդիպում է նշանակված ապրանքային կանգառի մեծ աղյուսե շինությունների մոտ՝ ոսկեդիմակ կանաչ հրեշտակի հետ: Հասարակությունը չի գիտակցում, որ կարիքն ունի նրանց, ովքեր հատում են սահմանը: Գնացողն արդեն չի մտածում հետքերի մասին, որ թողել է տանը, բայց նրանց, որոնք չեն գնացել, նրանք հիշեցնում են այլ աշխարհի մասին, եւ այդ հիշեցումից երերում է գործող աշխարհակարգը եւ կարճատեւ արթնանում է ննջած ուժը, որ գաղտնի սնուցվում է՝ առանց հեռացողների ընտել աշխարհակարգը կկարծրանա եւ կմեռնի: Մեկնումը չի նշանակում խոսակցության ավարտ: Դե, եւ իսկական խոսակցությունը հնարավոր է միայն նրանց միջեւ, ովքեր գնացել են, եւ նրանց միջեւ, որ մնացել են: Խոսակցությունները համերկրացիների հետ՝ ընդամենը հոգուն վրա հասած սեփական խոսքերի արձագանքն է: Բոլոր խոսակցություններ ը ուժ են քաղում մեկ մեծ զրույցից տան ապրողների եւ նրանց միջեւ, որոնք հաղթահարում են սահմանը՝ աղմուկով, որոնցում գործվածքների շրշյունը միախառնվում է հրեշների ոռնոցին եւ մի քանի օր տեւող երաժշտական պիեսներին, որոնք նվագում է արտաքսվածների նվագախումբը: Նրանք, որ ապրում են ներսում, ձայները բառերի համարում են անգործոն ուղեկցություն եւ դրանց վրա ուշք չեն դարձնում, բայց այդ կամացուկ նո-

տաները եւ հեռավոր ճչոցներն, այդուհանդերձ, գրվանի տակ դրված ազդում են քարացած ծեւերի վրա՝ լուծում են դրանց, իսկ հետո աճում եւ պտղաբերում են հիշողության հատակին:

Ես անցա Մանեսի կամուրջը, անցա բազմաշարք ծյունապատ այգիները: Ես չէի մտածում վերադարձի մասին, բայց չէի կարող լիավստահ ասել, որ երբեք չեմ վերադառնա: Ես ազատագրեցի գալիքը ծրագրերի ցանցից. այժմ այն շողում էր լույսով՝ մարած աշխարհում, որտեղ մեր ծառան էր: Ես չգիտեի՝ ինչ է ինձ սպասվում, արդյո՞ք կենալն այլ քաղաքում պիեսի ժխտումը կլինի, թե՞ դրա վերածուլումը եւ մաքրումը հինավուրց հրի մեջ: Ինձ այդ չէր հուզում, տրվելով ճանապարհի բարեհաճությանը, ես չգիտեի, որ այն կկարգադրի գալիքում ընդմիշտ մնալ պատերի ետեւում, թե վերադառնալ կտրված հրեշների լեզուներով՝ պայուսակիս մեջ: Այն, ինչ մենք գալիք էինք կոչում, այլեւս գոյություն չուներ, կար լոկ ժամանակի մաքուր եւ ամբողջական հուրը, լոկ գոյի հրացոլքը, դրանցում բաբախում էին հասունացող անցյալ գործերի եւ ծեւերի մթին ավիշները եւ անաղմուկ մոտեցող հրեշների անպարզ հոտերը: Ես բարձրանում էի կտրուկ փողոցներով՝ պալատների ետնաճակատամասերի երկայնքով, ես չէի փութում, ես նույնիսկ չգիտեի, ուր կշրջվեմ հաջորդ խաչմերուկին: Ես խորհրդածում էի այն մասին, թե ինչով կզբաղվեմ այլ քաղաքում՝ արդյոք ես կդառնամ ոսկեխույզ գրքերի ջունգլիներում, վանական վանքում Լիբեմի հին տան կտուրի տա՞կ, ձկնո՞ր, որ որսի է գնում առ ներքին մթին ծովը եւ տեսնում է հեռվում երեկոյան սենյակների լուսավորող լամպերը: Նախկինում ես խելահեղորեն կարծում էի, թե կարելի է արձակուրդ անցկացնել այլ քաղաքում, վերադառնալ եւ իմ հանգստի մասին գիրք գրել: Դե, ինչ, այդժամ ես այստեղ կթողնեմ գիրքը հանդիպման եւ սահմանի մասին: Իմ մնացած գրքերը կգրվեն այլ քաղաքի տառերով եւ կտպագրվեն գիշերային տպագրատներում, որ թաքնվում են վերարկուի տակ՝ պահարաններում: Գուցե թե, իմ գրքերից որեւէ մեկը կհայտնվի բուկինիստական խանութի դարակի վրա եւ ինչ-որ մեկը, ինձ նման, այնտեղ կմտնի անձրեւին ու մրրիկին, զարմանքով կտեսնի՝ ինչպես դարակի մյուս կողմի գրքերի ետեւից կերեւա քնքուշ կանացի մի ձեռք եւ հատորների միջեւ կտեղադրի գիրքը. ցնցված՝ նա կհանի եւ կբացի այն, կսկսի զննել էջերը՝ անծանոթ նշաններով ծածկված, հետո կհակվի, կնայի գրքերի միջեւ եղած անցքին եւ կտեսնի կրակները՝ առկայծող սեւ մակերեսի վրա, կզգա քարե միջանցքների հոտը: Ես հատեցի դատարկ Գրադարանի հրապարակը, Մարտինիցկի պալատի մոտ դեպի Նոր լույս փողոցը, անցա նրբանցքով, որի մի կող-

մը կազմում էր քարե պատը, անտեսանելի այգիները ծածկող, բարձրացա ջարդված թեք սանդուղքով, որ ձգվում էր հինավուրց աղյուսե պատնեշի երկայնքով: Ռելսերը շողշողացին, դրանց ետեւում, արեւի տակ շողում էր ձյունապատ զբոսապուրակը, ձյան վրա օրորվում էին քամուց ցնցվող ծառերի ստվերները: Ես թափ տվեցի ձյունը նստարանի վրայից եւ նստեցի, զննելով կայծկլտող ձյան վրայի ստվերների խաղը: Վառոդային կամրջից դանդաղ մոտենում էր տրամվայը, երբ այն ավելի մոտեցավ, ես տեսա, որ այն կանաչ գույնի է: Տրամվայը հանդարտ կանգ առավ զբոսապուրակի առաջ, նրա բոլոր դռները բացվեցին: Ես ելա ու գնացի դեպի ձյունոտ սպիտակ խոպանը:

ԶԵՆՈՆԻ ՊԱՐԱԴՈՔՍՆԵՐԸ

Ողջ գիշեր եւ ողջ առավոտ ձյուն էր տեղում, կեսօրից հետո ձյունատեղումը սաստկացավ եւ քամի բարձրացավ: Արդեն մութ էր, երբ ես քայլում էի փիլիսոփայության ֆակուլտետից դեպի Վացլավի հրապարակը: Երբեմն քամին մեղմանում էր, իսկ հետո կտրուկ խփում էր մեջքիս եւ ինձ առաջ հրում: Պատահած անցորդները քայլում էին, գլխահակ կռանալով, ասես թե առափնյա փողոցում, մեջքիս ետեւում հառնում էր վիթխարի մի կուռք. աչքերը նեղացնելով պստլիկ անցքերի, մարդիկ դժվարությամբ անցնում էին ձնամրրիկի միջով: Ես նայում էի լապտերների լույսի տակ պտտվող ձյան պտտահողմերին, հաճելի էր զգալը՝ ինչպես են պաղ փաթիլներն ընկնում դեմքիդ եւ հալչում այտերի վրա. ես ուրախանում էի շրջապտույտից, որում հայտնվում եւ կրկին լուծվում էին մարդկային կերպարանքների, թփերի եւ թռչունների ուրվապատկերները՝ քաղաքի խառնափնթոր երազների շրջապտույտից: Եւ երբ ես անցնում էի Մելանտրիխովյան փողոցի մթին միջաթափանց անցման մոտով, որի վերջում անտեսանելի լապտերի լույսի ներքո տարուբերվում էր կախարդական մարգարտյա վարագույրը, ես տրվեցի գայթակղությանը եւ շեղվեցի իմ ճամփից, թաղվեցի դարբասատակի տամուկ խավարի մեջ եւ սկսեցի աննպատակ թափառել փողոցիկներով, փողոցներով եւ միջանցիկ բակերով, որտեղ ընկած էր մաքուր ձյունը. ես հատում էի սպիտակ հրապարակները, որոնց վրա խռովահույզ ձյան ամպերում կորչում էին աշտարակների ծայրերը: Իսկ երբ ես ստիպված էի լինում քամուն հակառակ քայլել, աչքերս կկոցում եւ տեսնում էի միայն խավարում լողացող, ցաքուցիր կրակները: Միխալսկի փողոցի վրա ավելի լուռ էր, դրա վերջում իմ առջեւ բացվեց Ածուխի շուկան. կամարաշարքի տակ, որտեղ թաքնված էր գարեջրատան մուտքը, նեոնե ցուցանակ էր վառվում եւ թռչող ձյան փաթիլները կանաչ գույնի էր դարձնում: Ես հասկացա, որ սառել ու հոգնել եմ, եւ ուղեւորվեցի ձյունապատ հրապարակի միջով դեպի կանաչ լույսը: Սյունաշարի տակ ես բաճկոնիս ծալքերի միջից թափ տվեցի ձյունը, թաշկինակով դեմքս սրբեցի եւ մտա գարեջրասրահ:

Ընդարձակ շինությունը լեփլեցուն էր: Ես անցնում էի աթոռների արանքով՝ ազատ տեղի փնտրտուքներով եւ, ի վերջո, նստեցի նստարանի ամենաձայրին, երկար սեղանի մոտ: Ես նայեցի հարեւաններիս՝ նրանց

դեմքերը թաղվում էին սպիտակ ծխի մեջ, ասես նայում էի նրանց փայլատ ապակու միջից: Իմ դիմաց նստած էր հարթ, վարդագույն դեմքով մի տղամարդ, աջ ձեռքով նա սեղմում էր գարեջրի գավաթի բռնակը, ձախով դեպի իրեն էր դեմ անում՝ իր ծնկների վրա դրված տարօրինակ աշխատանքային գործիքը. վերից՝ թղթի տակից ցցվել էր, փայտե կոթով վերջացող, մետաղական դետալը: Իմ բոլոր մյուս հարեւանները լրիվ պատանի էին, ավելի շուտ՝ նրանք ուսանողներ էին, որովհետեւ գավաթների միջեւ գրքեր, տետրեր եւ մեթոդական ձեռնարկներ էին դրված: Ես խմում էի տաք գրոգը եւ լսում հաճելի աղմուկը, որին միաձուլվում էին շրջակա ձայները, բոլոր գարեջրասրահների այդ օրորոցայինը: Մերթընդմերթ աղմուկից բառ կամ առեղծվածային նախադասության հատված էր սպրդում: Ես ուշք դարձրի, որ իմ կողքին մի քանի անգամ հունարեն բառեր հնչեցին՝ ձմեռային նստաշրջան էր, եւ ուսանողները, հավանաբար, պատրաստվում էին անտիկ փիլիսոփայության քննությանը: Հետզհետե նրանց վեճը դառնում էր ավելի ու ավելի աղմկոտ ու տաք: Ես սրտնեղում էի, որ հիմա չափազանց շատ բառեր եմ հասկանում եւ դա ինձ խանգարում է թաղվել գարեջրատան աղմուկի քաղցրավետ անսահմանության մեջ: Պարզվեց, որ ուսանողները խոսում են պարադոքսների մասին, որոնց օգնությամբ Զենոն Էլեացին ապացուցում էր շարժման անհնարինությունը: Առաջին երեք ապորիաները՝ «բաժանումը», «թռչող նետը» եւ «Աքիլեսն ու կրիան»՝ տարածայնություններ չէին հարուցում, սակայն ուսանողները չէին կարողանում պայմանավորվել, թե ինչ էր նշանակում չորրորդ պարադոքսը, հայտնի «Ստադիուս» կամ «Ստադիոն» անվան տակ: Հաստ սվիտերով ուսանողը, որի վրա նախշ կար՝ ոճավորված պատկեր հյուսիսային եղջերուների, որ խմբապար էին բռնել ուսանողի կրծքավանդակի վրա, բացեց սեղանի վրա դրված գրքերից մեկը: Ես նկատեցի կազմի վրայի անվանումը՝ Արիստոտելի «Ֆիզիկա»-ն էր: Նա այնտեղ մի հատված գտավ, որտեղ Արիստոտելը խոսում է Զենոնի պարադոքսների մասին, եւ սկսեց կարդալ.

«Չորրորդ փաստարկը՝ հավասար մարմինների մասին, որ շարժվում են ստադիուսով հակադիր ուղղություններով, իրենց հավասար մարմինների կողքով. ոմանք շարժվում են ստադիուսի վերջից, մյուսները՝ մեջտեղից, հավասարաչափ արագությամբ, ուրկից, ինչպես նա կարծում է, հետեւում է, որ ժամանակի կեսը հավասար է ամբողջին: Այսպես, օրինակ, AA թող լինեն հավասարաչափ անշարժ մարմիններ, BB՝ մարմիններ մեջտեղից սկսվող, հավասար AA մարմիններին թվով եւ մեծությամբ, իսկ CC՝ մարմիններ են, վերջից սկսվող, BB մարմիններին հավասար թվով եւ մե-

ծությամբ, եւ օժտված BB մարմինների հետ հավասար արագությամբ»:

Բոլորը սեղանի մոտ ուշադիր լսում էին, առեղծվածային գործիքով մարդը նույնիսկ կռացել էր, որպեսզի գարեջրասրահի աղմուկի ետեւում ոչ մի բառ բաց չթողներ: Ես ձեռքիս ետեւի մասում տամուկ հպում զգացի, նայեցի սեղանի տակ եւ հայտնաբերեցի, որ ինձ բարեհաճորեն լիզում է սեղանի տակ ծանձրացած սեւ գանգրավոր քոքեր-սպանիելը, որը պատկանում էր ուսանողներից մեկին:

«Այդժամ ստացվում է, որ, երբ BB եւ CC մարմինները շարժվում են միմյանց կողքով, առաջին B-ն դրվում է վերջին C-ի վրա միաժամանակ այն բանի հետ, որ առաջին C-ն վերջինիս վրա դրվի միաժամանակ այն բանի հետ, որ առաջինը դրվի վերջին B-ի վրա: Ստացվում է, որ C-ն անցել է բոլոր B-երի կողքով, իսկ B-ն՝ մարմինների կեսի կողքով եւ այդու ծախսել է միայն կեսն այն ժամանակի, որ ծախսել է C-ն, քանի որ երկուսից յուրաքանչյուրը անցնում է յուրաքանչյուրի կողքով հավասար ժամանակամիջոցում: Միաժամանակ ստացվում է, որ առաջին B-ն անցել է բոլոր C-երի կողքով, քանի որ առաջին C-ն եւ առաջին B-ն միաժամանակ կդրվեն հակադիր դրված ծայրի A-ի վրա, ճիշտ նույն ժամանակում անցնելով B մարմիններից յուրաքանչյուր մարմնի կողքով, ինչպես եւ յուրաքանչյուր A մարմնի կողքով հավասար ժամանակում...»:

Ուսանողը լռեց եւ շուրջբոլորը նայեց: Առաջինը խոսեց ծնկներին փաթեթով մարդը:

-Ամեն ինչ ճիշտ է,- ասաց նա: Իսկական մարգիկներ հիմա չեն մնացել, միայն՝ խարդախներ: Դրանց միայն փող տուր:

Ուսանողներն ականջի ետեւ գցեցին այդ մեկնությունն ու սկսեցին վիճել Արիստոտելի խոսքերի շուրջ: Ծանոթագրության մեջ կար սխեմա, որի վրա աֆրոսիադեսցի Ալեքսանդրը պատկերել էր ստադիոնում կատարվածը. կարդացող ուսանողը գիրքը սենյակով մեկ պտտեց, բայց եւ դրանից հետո էլ ավելի հասկանալի չդարձավ, թե ինչ նկատի ուներ Զենոնը ստադիոնի մասին իր պատմության մեջ: Այդ ձախորդություններում հավասարապես մեղավոր էին Զենոնի մտածողության տարօրինակ անհամապատասխանությունը կենաց փորձին, Արիստոտելի մեկնության անպարզություններն ու ալկոհոլի քանակը, որ խմվել էր սեղանի մոտ: Անպտուղ խոսակցությունը շուտով ավարտվեց եւ ուսանողների խոսակցությունը ծուլվեց գարեջարատան աղմուկին: Ես նկատում էի լոկ դիմախաղը ծխի սպիտակ քողի տակ, լոկ սեղանածածկի վրա բարձրացող ձեռքերի շարժմունքը: Ինձ դուր եկավ սեւազգեստ ուսանողուհին՝ մանկական դեմքով եւ

երկար ու բացգույն մազերով, որ նստած էր սեղանի մյուս ծայրին. նա հուզված վիճում էր Արիստոտել կարդացող պատանու հետ, եւ ընդ որում՝ սեղանի վրա տարուբերում էր բարալիկ ցուցամատների ծայրերը, որոնք այդ խամաճիկային փիլիսոփայական վեճում ներկայացնում էին հույն ատլետներին: Մետաղյա գործիքով մարդն այլեւս վիճաբանություններին չէր մասնակցում, բայց երբ ուսանողները դարձյալ չկարողացան լեզու գտնել առ այն, թե որն էր այդ պարադոքսի իմաստը, հարցրեց, դե ինչու նրանք չբեմադրեն այն փողոցում: Դա բոլորին հիանալի գաղափար թվաց. ուսանողները վեր թռան, շրջապատեցին մատուցողին, որը հենց նրանց կողքից էր գնում, եւ քանի դեռ նա հաշիվն էր գրում, երիտասարդները հագնում էին գզուզ բաճկոնները, փաթաթվում էին երկար շարֆերով եւ գլխներին էին քաշում վառ փուփուլներով գլխարկները: Ես եւ վարդագունոտ դեմքով մարդը մնացինք սեղանի մոտ, որի վրա դատարկ եւ թերխմված գավաթներն էին: Անսպասելի ես նույնպես ցանկացա իմանալ, թե ինչպես է հնարավոր, որ կիսատ ժամանակը հավասար է ամբողջին: Ես արագ խմեցի գրոգի մնացուկը, վճարեցի եւ գարեջրատնից դուրս թռա:

Սյունաշարի լուսաշերտում դեռեւս պտտվում էր նեոնի կանաչ շողանքով գունավորված ծյունը: Հրապարակի մեջտեղում առկայծում էին մթին ուրվապատկերները, զվարթ ձայներ եւ հիացիկ հաչոց էի լսում: Ես անցա ճանապարհն ու միացա վազող ստվերների ամբոխին: Անկյունի շուկան ստադիոնի դեր էր կատարում. եղջերվենու սվիտերով ուսանողը մասնակիցներին բաժանում էր A, B եւ C խմբերի եւ որոշում նրանց տեղերը ըստ Աֆրոսիադեսի ու Ալեքսանդրի սխեմայի: Երբ հնչի ազդանշանը, A շարքը պիտի տեղում մնա, B շարքը՝ վազի Կոտցայի մոտ, իսկ C շարքը՝ սուրա հակառակ՝ Ստորժեպկա փողոցի ուղղությամբ: Փոքր հապաղումից հետո, որ պատահեց ականջներին ձյան գնդիկներ փակչած սպանիելի պատճառով, որն ոտքի տակ էր ընկնում, բոլորը վերջապես գրավեցին իրենց տեղերն ու քարացան ազդանշանի սպասման մեջ:

B շարքում ես առաջինն էի կանգնած, որը պիտի վազեր դեպի Կոտցա: Ես նայեցի մյուսներին, բայց նրանց դեմքերը չտեսա՝ երիտասարդությունը փաթաթվել էր շարֆերով եւ գլխարկները վար բերել ճակատի վրա. մթության մեջ առանձնանում էին միայն աչքերն ու քթերը, կարծես թե ես հայտնվել էի ինչ-որ փոչոտ կենդանիների դիմակահանդեսին, որտեղ դեմքներին սպիտակ դիմակներ էին քաշել: Երբ բոլորը պարզեցին, թե ինչ պետք է անեն, ուսանողը գոչեց «Մարշ», եւ կերպարանքների երկու շարք, փաթաթված շարֆերով, որ տարուբերվում էին քամու տակ եւ թրթռում

փուփուլներով գլխարկների վրա, սկսեցին վազել. նրանք տարբեր կողմեր էին վազում երրորդ անշարժ շարքի երկայնքով: Վազորդները, ալկոհոլից թմրած եւ ծյունից կուրացած, միմյանց վրա էին գալիս եւ ընկնում ծնաթմբերի վրա, լսելի էին ճիչերն ու ծիծաղը, շունը մի շարքից դեպի մյուսն էր սուրում եւ հուսահատ հաչում:

Վազելն անհարմար էր. թարմ թաց ծյունը փակչում էր ներբաններին, ես այնպիսի զգացողություն ունեի, որ այն ներծծվում է կոշիկներիս մեջ եւ ջանում դրանք ոտքերիցս հանել: Ես վազում էի Կոտցայի ուղղությամբ. փողոցն ամայի էր, լապտերները, իրարից միանման հեռավորության վրա՝ ամրացված տների ճակատամասերին, դալուկ լույսով լուսավորում էին ծյան նեղլիկ շերտը, երկու պատերի արանքում, որի վրա ոչ մեկի հետքը չկար: Կրպակներից, որտեղ դեռ վերջերս բրդյա բաճկոններով եւ հաստ վերարկուներով վաճառողները ցուցադրում էին իրենց ապրանքը, մնացել էին լոկ մետաղյա ծողաններով սարքված թեք կառուցվածքները: Վերջին տների միջեւ ընկած մթին անցքում առկայծում էին լուսարձակներն ավտոմեքենաների, որ ընթանում էին Մելանտրիխովյան փողոցով, եւ իրենց շողանքով կարճատեւ արթնացնում էին ծյունե ուրվականներին: Վազելով մինչեւ փողոցի մեջտեղը եւ իմ ետեւից ձայներ չլսելով, ես անհանգստացա: Մտքովս անցավ, թե մենք մոռացել ենք պայմանավորվել, թե որ տեղն է լինելու ստադիոնի վերջը եւ որտեղ է ավարտվելու Ջենոնի վազքը: Ես մտածեցի, թե մյուսներն արդեն վերադարձել են եւ որ ես վազում եմ ծյունածածկ փողոցով, մենության մեջ: Ես կանգ առա եւ ուզում էի ետ նայել, բայց այդ պահին ինձ վրա եկավ մթին փաթաթված մի կերպարանք, որ ետքիցս էր վազում: Մենք երկուսս էլ հավասարակշռությունը կորցրեցինք ու ընկանք ծյան վրա: Երբ մենք ելնում էինք, ես նկատեցի լապտերների լույսի տակ բացգույն մազերի փունջը կնգուղի տակ՝ այն աղջիկն էր, որի վրա ես ուշադրություն էի դարձրել գարեջրասրահում: Մենք միայնակ քայլում էինք փողոցով, մյուսներն արդեն հրապարակ էին վերադարձել: Այնտեղից լսվում էին խլացած ձայներն ու շան հաչոցը. երեւի ուսանողները պատրաստվում էին կրկնել էլիական վազքը. երեւի նրանք ուզում էին բեմադրել ծյունապատ փողոցներում Ջենոնի եւ մյուս պարադոքսները: Դանդաղ տեղում էին ծյան մեծ փաթիլները, մեր գլխավերեւում կամացուկ ճթճթում էր լապտերի լամպը քրքրված պատի վրա: Դատարկ Կոտցերը ձգվում էր Ածխի շուկայի եւ Մելանտրիխովյան փողոցի միջեւ, ինչպես հանդարտ քնած կիրճ: Ես զգացի վշտի դեւի կամացուկ հպումը, որ հաճախ դարանում էր ինձ մթին քաղաքային նրբանցքներում: Ի՞նչ եմ ես հիմա

անում, ի՞նչ եմ փնտրում սառնամանիքային գիշերով, դատարկ ծյունապատ փողոցում: Ինչո՞ւ չեմ տանը նստում, ի՞նչ խաղի մեջ եմ նորից մտել: Մի՞թե իմ ողջ կյանքը կլինի տարօրինակ խաղերի համատարած միահյուսում, եւ ես այն կանցկացնեմ դատարկ փողոցներում, օտար դեմքերի մեջ, որ սպրդում են խավարից եւ կրկին անհետում են այնտեղ, դեմքերի մեջ, հիասքանչ խորհրդավոր լույսի պատճառով, որ ճառաքում են նրանք, բայց ոչ ավելի իրական, քան լուսային ուրուները մթին կինոդահլիճներում:

Ընկնելիս աղջկա ուսից վար էր եկել պայուսակը եւ դրանից ինչ-որ բաներ թափվեցին: Ես արթնացա խոհածումներից եւ օգնեցի նրան դրանք հավաքել, գտա դրամապանակն ու բանալիների կաշվե պատյանը, իսկ հետո աղբամանի ստվերում ինչ-որ կամիր կայծ շողաց. ես կռացա եւ տեսա ծյան վրա ծիրանագույն մի քար, որը որսում եւ կարմիրով էր գունավորում լապտերի լույսը: Մոտակայքում՝ ծյան վրա ուրիշ քարեր էին ընկած՝ մգակապույտ, կանաչ, մանուշակագույն եւ դեղին: Ես մեկը մյուսի ետեւից բարձրացրի դրանք եւ նայեցի լույսի տակ: Ես սիրում եմ բյուրեղներ եւ հաճախ, քաղաքում թափառելիս, զննում եմ խանութների վաճառասեղանների վրա եւ կրպակներում քարերի ցրոնքը. իմ գրադարանում մի քանի հաստափոր գիրք կա հանածոների մասին՝ բազում գունավոր նկարներով, բայց այսպիսի քարեր ես երբեք եւ ոչ մի տեղ չէի տեսել: Դրանք բոլորը թափանցիկ էին. կարմիր քարի կենտրոնում թաքնված էր բյուրեղաբույլը բազում փոքրիկ բյուրեղներից՝ դրանց նայելիս թվում էր, թե նայում ես հեռավոր ֆանտաստիկ քաղաքի՝ մայրամուտի արեւի մոգական հրացոլքով պատված: Մգակապույտ քարի ներսում փայլկտում էին արծաթե թեփուկները, զսպանակ կազմող. դրանք ասես սառչել էին քարի մեջ հողմապտույտի պահին, ինչը կամ դրանց դուրս էր տանում, կամ, ընդհակառակը, պտուտակակերպ ներհյուսում էր մգակապույտ նյութի հենց կենտրոնին: Կանաչ քարը նվազ թափանցիկ էր, քան մյուսները, բայց երբ ես այն մոտ բերեցի լապտերի լույսին, ապա տեսա, որ դրա մեջտեղը նման է խորհրդավոր հորձանուտի, լի գորշագույն թարթիչ-ջրիմուռներով՝ դրանք ասես ձգտում էին իրենցով գրավել ողջ բյուրեղը, եւ դա դրանց համարյա թե հաջողվել էր. քանի դեռ ես այն պտտում էի, այն լոկ մի անգամ արձագանքեց մանուշակագույն արտացոլքով՝ շողալով թարթիչների միջեւ: Մանուշակագույն քարի ներսում ես մթին առէջքների շարք տեսա, որոնք ինչ-որ տեքստի տառեր էին հիշեցնում: Դեղին քարի մեջ կեղտականաչ թելերի միահյուսում էր: Ես քարերը տվեցի աղջկան եւ հարցրի, թե ինչպես են դրանք կոչվում:

-Սրանք արհեստական քարեր են,- ժպտաց նա,- եթե ուզում եք, կարող եք ինքներդ դրանց անուններ տալ:

Ես կրկին զննեցի քարերը. ես չէի ուզում հավատալ, թե դրանք բնության արարվածներ չեն: Ես խնդրեցի աղջկան, որպեսզի նա ինչ-որ բան պատմեր ինձ դրանց մասին:

-Ես ծանոթացա մարդու հետ, որ սարքում է դրանք, հոկտեմբերին, այդ ժամանակ ես իջնում էի Ժիժկովեի ուղղաբերձ փողոցով կենտրոնի կողմը...- այն է՝ սկսել էր պատմել նա եւ հանկարծ խոսքն ընդհատեց:- Ոչ, փորձեմ այլ կերպ: Նախանցած տարվա ապրիլին ես նստած էի Բրանիկ երկաթուղային կայարանի նստարանի վրա եւ սպասում էի Մնիշեկ գնացող գնացքին...

-Սպասեք, - ընդհատեցի ես նրան:

Շատ տարիներ ես թափառում էի քաղաքում, հանդիպում էի մարդկանց եւ լսում էի նրանց պատմությունները: Այդ ժամանակաընթացքում իմ լսողությունը մարզվել էր, առաջին իսկ խոսքից ես կարող էի կռահել դեռ ինձ չպատմած պատմության տոնայնությունը, որից դուրս էին լողում լոկ առաջին խոսքերը, դրա ընդհանուր ներդաշնակությունը՝ առանձին բառերը բովանդակում են դա իրենց մեջ, համանման այն բանին, որ առանձին իրը սփռում է սենյակի մթնոլորտը, որում այն ապրել է, մթնոլորտը, որում լուծվել են բոլոր իրադարձությունները, որ կատարվել են դրանում եւ զարմանալի կերպով այդ շնչառության մեջ պահպանված:

Աշխարհները նկատելու ունակությունը, որոնց ձայնը լսվում է ձայների դողդոջյունի մեջ, օգնում էր ինձ չմոլորվել քաղաքի լաբիրինթոսում. քաղաքը, որում մենք ապրում ենք, մեծ մասամբ ստեղծված է բառերից, ավելի քան աղյուսից ու քարից: Մակերեսները, որոնք մենք տեսնում ենք, կազմում են լոկ քաղաքի աննշան մասը. մեզ շրջապատում են բառերի մգացած այգիները, որ ծավալվում են բաց եւ տեսանելի մակերեսների, տների պատերի եւ օտար բնակարանների պահարանների դռների ետեւում, եւ դրանց միջից խորհրդավոր լուսարձակող, համանման առեղծվածային ծովային կենդանիներին, մեր կողքից լողում են նյութի հուզվող հարթության վրա կիտված բառերի դալուկ մարմինները: Մեծ մասն առարկաների, որոնց մենք հանդիպում ենք, եւ քաղաքի բնակիչների մեծ մասը՝ ուրուներ են՝ ստեղծված բառերից, շնչառության տատանումից եւ հնչյունների գույնից: Այդ վաղանցուկ ուրվականները դժգունում եւ փոխակերպվում են դեմքերը փոխվելով, ինչպես թեթեւ դիմակներով, եւ լուծվում են խավարում, ուրկից եկել են, իսկ երբեմն զարմանալի տոկունություն են

ցուցաբերում, մասնակցում են ինչ-որ համառ եւ դժվարին գործողության՝ վերադառնալով եւ ապրելով մեզ հետ մեր տարածություններում, դեռ երկար այն բանից հետո, որ նրանց կրկնակները, ստեղծված գույների եւ ձեւերի շատ ավելի իրական նյութից, հեռացել կամ մահացել են: Եւ նույնիսկ տեսանելի մակերեսները, իրական պատերն ու բաց դեմքերը, որոնց հանդիպում է մեր հայացքը, սոսկ ժամանակավորապես երեւում են լեզվի ծովից, որտեղ անցկացնում են կյանքի մեծ մասը՝ դրանք ներծծված են ջրերով, դրանցում անընդհատ բաբախում է ալիքների ռիթմը:

Աղջկա խոսքերում ես լսեցի երկար եւ զարմանալի երաժշտությունը պատմության, որում տարածվում էր օվկիանոսի հարթությունը եւ որը տանում էր անտառի ու օտար սենյակների միջով: Ես սարսափում էի, որ ցուրտն ու ձյունատեղումը կընդհատեն ճամփորդությունը բառերի աշխարհով ավելի վաղ, քան մենք կհասնենք ուղու վերջին: Ես շուրջս նայեցի եւ տեսա մոտակա տան մուտքի վերեւում ինչ-որ մի հաստատության մգացած մի ցուցանակ, որը մթության մեջ անհնար էր կարդալ. դռան կողքին լուսավորվում էր դժգույն կարմրավուն լույսով պատուհանը՝ հաստ ու անթափանց ապակուց: Ես աղջկան առաջարկեցի մի բաժակ գինի ըմպել եւ պատմել ինձ գունավոր քարերի պատմությունը ներսում, տաքության մեջ:

Մենք մտանք նեղլիկ մի շենք, աղոտ կարմիր լույսով լցված, ինչպես ֆոտոլաբորատորիայում: Սենյակն ավելի փոքր էր թվում նաեւ այն պատճառով, որ այն բաժանված էր մի քանի հատվածախցերի: Նստատեղերը պատված էին մուգ կաշվի փոխարինիչով. հատվածախցերից յուրաքանչյուրի վրա, կեղտոտ պատի վրա լույս էր տալիս աղոտ լամպիկը թաքնված լուսամփոփում՝ ճղճղված ու այրված կարմիր գործվածքից: Հատվածախցերից մեկի միջնորմի վրա երեւում էր տարեց տղամարդու հուժկու ծոծրակը, բարի կանգնակին էր հենվել բարձրահասակ ու վտիտ մատուցողը: Մենք հանեցինք ձյունապատ բաճկոններս եւ խցկվեցինք դատարկ հատվածախցերից մեկը: Աղջիկը գունավոր քարերը դրեց սեղանի վրա: Մատուցողը հանկարծ աշխուժացավ, ինչպես կինոնկարում, երբ հանկարծ սկսվում է շարժվել կանգնեցված ժապավենը, երկու քայլով հատեց շինությունը եւ մեր սեղանի մոտ քարացավ: Ես գինի պատվիրեցի: Երբ մատուցողը գինին բերեց եւ լցրեց գավաթները, աղջիկը կրկին սկսեց իր պատմությունը.

-Նախանցած տարվա ապրիլին ես Բրանիկ կայարանում սպասում էի Մնիշեկ գնացող գնացքին. շաբաթ առավոտ էր, ես գնում էի ծնողներիս

մոտ՝ ամառանոց: Ես չափազանց շուտ հասա եւ այդ պատճառով, տոմս գնելով, նստեցի նստարանին, որ թիկնակով սեղմվել էր արեւով լուսավորված ցածրիկ կայարանային շինության պատին: Նստարանի մյուս ծայրին նստած էր մոտ քառասունհինգ տարեկան նիհար մի տղամարդ, նոսր մազերով, քամուց գզգզված, եւ դեմքից չանհետացող մեղմ ժպիտով: Նրա հագին բամբակաբաճկոն էր. նա ջերմանում էր գարնանային արեւի տակ եւ ծամում խանձված երշիկը: Նստարանի կողքին պահասենյակի մուտքն էր: Ես նստել ու նայում էի արեւի տակ փայլկտող ռելսերին, բլրի վրայի դեռեւս մերկ ծառերին, բրանիցկյան գարեջրագործարանին, երբ ինչ-որ աղմուկ լսեցի պահասենյակի դռների մոտ: Ըստ էության, ոչ մի առանձնահատուկ բան չէր եղել՝ ծղոտե գլխարկով տղամարդը կորցրել էր անդորրագիրը եւ փորձում էր նկարագրել պայուսակը, որը նա պահ էր տվել, բայց պարզվեց, որ նա չգիտի, թե պայուսակն ինչ տեսք ուներ, նա նույնիսկ չէր կարող ասել, թե այն ինչ գույնի էր: Դա բարկացրեց նրան՝ չէ որ, ըստ նրա խոսքերի, նա բռնում էր այդ պայուսակը ձեռքին ամեն օր շատ տարիների ընթացքում: Ի վերջո, պայուսակն գտնվեց: Երբ նա վերջապես հանդիպեց դրան, ապա զարմանքով զննեց այն, ինչպես ինչ-որ չտեսնված կենդանու՝ երկար տարիներ նրա հետ ապրած բնակարանում եւ միայն այժմ նկատված: Ես չկարողացա զսպել ինձ եւ ծիծաղեցի, իսկ հետո տեսա, որ դիպվածը զվարճացրել էր նաեւ իմ նստարանի հարեւանին: Մենք միմյանց նայեցինք ու ժպտացինք:

«Մեր կողմից այնքան էլ լավ չէ ծիծաղել այդ շփոթահար մարդու վրա,- ասաց նա: - Այդպիսի բան կարող էր պատահել եւ մեզ հետ: Սովորաբար մենք տեսնում ենք իրերը լոկ այն պահին, երբ դրանք մտնում են մեր կյանք եւ դեռ մերը չեն: Մեզ ամենամոտ իրերը, որոնք մենք շատ տարիներ ամեն օր օգտագործում ենք, ծածկվում են առօրեականության փառով եւ անտեսանելի են դառնում, այնպես որ տարածությունը մեր մարմնի շուրջ, որտեղ բնակվում են այդ իրերը, մեզ համար մնում է ավելի առեղծվածային վայր, քան հեռավոր տարաշխարհիկ երկրները, որոնց մասին պատմվում է ամսագրերում կամ հեռուստացույցով: Իսկական ջունգլիները գտնվում են հարազատ վայրում. դրանք ջունգլիներ են, որոնց մենք երբեք չենք լքի»:

Հարեւանիս խոսքերը զարմացրին ինձ. ես կարծում էի, թե նա ավագ պահակ կամ պահեստապետ է, բայց ոչ մառանապետերը, ոչ էլ պահեստապետերը սովորաբար չեն դատում ծանոթ իրերի անտեսանելիության մա-

սին: Բայց ով էլ որ լիներ բամբակաբաճկոնով մարդը, ես ընդունեցի նրա ճշմարտացիությունը:

«Գիտե՞ք, մի ամիս առաջ ինձ հետ նմանատիպ մի դեպք պատահեց,- ասաց նա:- Լվացքատանը շփոթել էին լվացված սպիտակեղենի կույտերը. ինձ խնդրեցին նկարագրել, թե ինչ տեսք ունի սփռոցը, որի վրա ես մանկուց ճաշում եւ ընթրում եմ, եւ ես ոչ մի կերպ չէի կարողանում գլխի ընկնել, թե ինչ նախշ էր դրա վրա: Երբ սփռոցը վերջապես գտնվեց, ես զարմանքով հայտնաբերեցի, որ այն ծածկում է միանման պինգվիններով նախշը: Պինգվիններ գտնելը սփռոցի վրա նույնքան զարմանալի եւ սահմռկելի էր, ինչպես այն մոռացկոտ տղամարդու համար այլ աչքերով իր պայուսակին նայելը: Ինչպե՞ս կարող էր պատահել, որ պինգվինները բոլոր այս տարիներին անտեսանելի էին մնում»:

«Դրանք թաքնված էին ակնհայտության հարթության տակ»,- պատասխանեց բամբակաբաճկոնով տղամարդը եւ հավելեց, որ ինքն էլ զարմանալի հանդիպում է ապրել մտերմիկ իրի հետ եւ որ այդ դեպքը փոխել է իր ողջ կյանքը:

Նա ծալեց երշիկի յուղոտված թղթե ափսեն եւ այն աղբարկղը նետեց: Հետո նստեց ինձ մոտ եւ սկսեց պատմություն պատմել իր գրամեքենայի մասին: Պարզվեց, որ նա գրող է. յոթանասունական թվականներին լույս էին տեսել նրա երկու վեպերը, նա նաեւ մի հեռուստասերիալի սցենար էր գրել: Դեպքը գրամեքենայի հետ տեղի էր ունեցել այն ժամանակ, երբ նա աշխատում էր իր երրորդ, բայց անավարտ գրքի վրա: Դա միջին տարիքի մի ճարտարագետի պատմություն էր, որ կենաց ճգնաժամ էր ապրում: Նրան թվում է, թե նա լողում է հոսքով եւ դավաճանում է երիտասարդության իդեալներին, բացի այդ նրան դուր էր գալիս գիտահետազոտական ինստիտուտի, որտեղ նա աշխատում էր, երիտասարդ գործընկերուհին, եւ նրա ամուսնությունը սկսվում է քայքայվել. ի վերջո, ամեն ինչ պիտի լուծվեր իմաստուն պապի թե հորեղբոր «արորից»՝ մորավյան գյուղից, եւ խճճված ճարտարագետը փախավ Պրահայից եւ որը անվերջանալի զրույցներում կներշնչեր նրան ճշմարիտ արժեքները, այնպես որ՝ մորավիացի ճարտարագետը կվերադառնար միանգամայն այլ մարդ դարձած եւ չէր լքի ընտանիքի եւ հասարակության ծոցը: Այն ժամանակ իբր այդպիսի վեպերը մոդայիկ էին: Մի հուլիսյան օր, ութսունականների սկզբներին, նա նստեց գրամեքենայի մոտ եւ ուզում էր շարունակել սկսած հիմնական գլուխը, որում պապը կամ հորեղբայրը ճարտարագետին տանում է խաղողի այգու միջով եւ խրատում նրան: Բայց վեպն այդ օրը չէր գրվում. գրելով

մի քանի նախադասություն, հեղինակը հանում էր թուղթը գրամեքենայից, ճմռթում այն եւ նետում կողովի մեջ: Հինգերրոդ անգամ դնելով մաքուր թուղթը, նա հասկացավ, որ դեռեւս ի վիճակի չէ կենտրոնանալու, եւ այդօր որոշեց այլեւս վեպով չզբաղվել: Մի քանի օր նա նեղսրտած էր եւ ուզում էր ինչ-որ բանով զբաղվել, ապա որոշեց մաքրել գրամեքենայի ստեղները: Նա հանկարծ գիտակցեց, որ ոչ մի անգամ այդ չի արել, թեեւ գրամեքենան արդեն ութ տարի իր մոտ էր եւ ինքը գրել էր դրանով բոլոր իր գրքերն ու հեռուստասցենարը:

Նա թրջեց փալասն ու սկսեց ճշտապահորեն, հերթականությամբ սրբել ստեղները: Ընդ որում՝ դրանցից յուրաքանչյուրը պահում էր ձախ ձեռքով, որպեսզի այն չընկներ եւ համապատասխան կեռիկը չդիպչեր մաքուր թղթին: Սրբելով տառերի ներքեւի շարքը, նա հասավ ձախակողմյան ստեղնին, որը նախկինում չէր նկատում, թեեւ այն այնտեղ էր բոլոր այդ տարիներին՝ երբ նա գրում էր, ստեղնը առկա էր տեսադաշտում, որովհետեւ նա ընտել էր աշխատելու երկու մատով եւ ստեղնաշարից հայացքը չկտրելով: Ստեղնի վրա նշան կար, որ բաղկացած էր վեց ուղիղ գծիկներից, որոնք հատվում էին կենտրոնում եւ այդպիսով՝ տասներկու շողերով աստղ էին կազմում: Նա դադարեց սրբել ստեղնաշարը եւ սեւեռվեց առեղծվածային ստեղնի վրա նույնպիսի զարմանքով, ինչպես ծղոտե գլխարկով պարոնն իր պայուսակի վրա, իսկ ես՝ պինգվինների վրա: Նա ձախ ցուցամատը դրեց ստեղնի վրա, կամենալով սեղմել այն, եւ ինչ-որ տարօրինակ, տհաճ զգացողություն ապրեց: Վերլուծելով իր զգացածը, նա հասկացավ, որ դա վախն է: Գրողին տագնապ եւ նույնիսկ սարսափ էր հարուցում ինչ-որ անհայտ, բայց մոտիկ վտանգ: Պարզվեց, որ իրը, որը նա լավ ծանոթ էր համարում եւ միանգամայն ձեռնասուն, ունի իր գաղտնիքներն ու անհայտ տեղերը նույնիսկ մարդկային ձեռքերին եւ հայացքին ուղղված մասում. եւ այժմ նրան թվում էր, թե գրամեքենան կարող է ինչ ասես անել, ինչը, հավանաբար, շատ տարիներ, թաքնվելով հնազանդության եւ հավատարմության դիմակի տակ, այն հարմար դիպվածի էր սպասում իր տիրոջը հարված հասցնելու համար: Ի՜նչ քիչ գիտեր նա գրամեքենան, ի՜նչ քիչ գիտեր բոլոր այն բաները, որոնք ապրում էին երկար տարիներ իր հետ բնակարանում, իրերը, որոնց վրայով սահում էր նրա հայացքը եւ որոնց փորոքներն ու ելուստները հեշտությամբ եւ առանց դիմադրության կպչում էին իր ձեռքերին շոշափման առեղծվածային աշխարհում: Եթե խորհրդավորը պատահում է հենց իրի մակերեսի եւ դիմակողմի վրա, ապա ի՞նչ է թաքցնում դրա ներքին, հակառակ կողմը: Նա մտածում էր գրամեքենայի ներք-

նամասերի մասին, որոնք փոշու կույտերի հետ բացվում էին դրա անցքերում, ստեղների միջեւ եւ տպատառային լծակների հովհարում. այնտեղից հեռացվածություն եւ անտարբերություն էր փչում: Ինչի՞ն է ներսից ամրացված ստեղնը, ի՞նչ սարք է այն շարժման մեջ դնում: Նա մտածեց՝ ավելի խելամիտ չի՞ լինի հանգիստ թողնել անծանոթ ստեղնը. նա գիտեր, որ ժամանակի ընթացքում այն կրկին կցրվի ակնհայտության մշուշում, որից այդքան անսպասելի հայտնվել էր: Նա դեռեւս չէր կարողանում ազատվել ճնշող տպավորությունից, որ ստեղնը սեղմելուց հետո գեշ բան կպատահի, որ կշրջվի եւ գլուխ կբարձրացնի մի բան, որ երկար տարիներ անշարժ հանգստանում էր՝ ծալված, փաթաթված կամ սեղմված վիճակում, գրամեքենայի ներսի խճողվածքներում, որ ինչ-որ տեղից՝ մեխանիզմի խորքից կցցվի փողալայնուկը եւ կցայտի նրա վրա արեւելյան այգիների բույրով, կամ այնտեղից կգա ափիոնային ծուխը, կամ նրան կդիպչի անտեսանելի չանչը, կխոյանա խոհրդավոր կղզու դրոշը, կհնչի Վագների երաժշտությունը, կթռչի նետը: Բայց հետո նա ամաչեց իր վախից, մտածեց, որ այդ ամենը հիմարություններ են եւ որ ոչ մի սարսափելի բան էլ չի պատահի, եւ սեղմեց ստեղնը: Հենց այդ պահին հովհարի ծախ կողմից ցցվեց սեւ լծակը՝ որքան էլ տարօրինակ է, այն ելավ սպիտակ թղթից դեպի ստեղնաշարը, այսինքն՝ հակառակ ուղղությամբ, քան մնացած լծակները: Գրամեքենան ասես մագիլով հարվածեց նրան, եւ գրողը, որին չէր լքում անհանգստությունը, վախեցավ, ճչաց եւ մատն արագ ստեղնի վրայից հեռացրեց: Մուգ լծակը դարձյալ տեղն ընկավ, գրամեքենան դրված էր նրա առջեւ՝ սեղանի վրա, ասես ոչինչ էլ չէր պատահել, անմեղ տեսքով: Գրողը կրկին ստեղնը սեղմեց, այս անգամ նա անփութկոտ սեղմում էր եւ լծակիկը բարձրանում էր աղեղով ջղակծկված եւ դանդաղ: Նա զննեց այն՝ դա բարալիկ մետաղյա խողովակիկ էր, վերեւում այն ավարտվում էր երկարավուն գլխիկով, որի մակերեսը մասամբ սեւով ներկված թիթեղից էր, մասամբ՝ կապույտ ապակուց: Գրողը նստել էր, մատը պահել ստեղնի վրա եւ խորհրդածում էր, թե ինչի համար է ծառայում լծակիկը, որը չի դիպչում թղթին: Նրա մտքով անցավ, որ լծակիկը նման է վառարանի խողովակի. նրան թվաց, որ մուգ գլխիկից՝ վերնամասում ահա-ահա կերեւա ծխի շիթը եւ գրամեքենան կգա: Գրասեղանի ետեւում պատուհան կար, որի ետեւում, խավարի մեջ թաղվում էր ցածրիկ քաղաքային բլուրը, որ հոծ մացառուտով էր պատվել: Գրողին թվաց, թե դատարկ թղթի էջի վրա, որ դրված էր գրամեքենայի մեջ, մի քանի անգամ թարթեց նվաղուն կապույտ կրակը, բայց նա մտածեց, թե դրանք փողոցային լապտերների արտացոլանքներն

են կամ էլ թե աչքերն են շաղվում: Սակայն կապույտ լույսն ավելի ու ավելի սաստիկ էր վառվում եւ ավելի երկար էր մնում էջի վրա, մինչեւ որ պարզ դարձավ, որ դա հոգնած աչքերի խաբկանք չէ եւ ոչ էլ անդրպատուհանային կրակների արտացոլքը: Ծուտով ողջ էջը շողաց մթնած սենյակում պարզ կապույտ լույսով: Միայն այդժամ զարմացած գրողը հասկացավ, որ այդ լույսի աղբյուրը գտնվում է գլխիկում վեր ելած սեւ լծակիկի ծայրին: Դրա թիթեղյա ծածկը սարքված էր այնպես, որ շողերը հիմնականում ընկնում էին թղթի վրա, իսկ ստեղնաշարը ավելի թույլ էր լուսավորվում եւ նվագախմբային փոս էր հիշեցնում վաղ լույսով լուսավորված բեմի տակ: Այսպիսով, ամեն ինչ բացահայտվեց՝ լծակիկը կամ լամպ էր, կամ էլ փոքրիկ լապտեր, կարճ ասած՝ հարմարանք, որ թույլ էր տալիս գրել գրամեքենայով մթության մեջ:

Նա խոհածեց՝ որտեղի՞ց է լամպն էներգիա վերցնում. սկզբում նրա մտքով անցավ, թե մարտկոցից, բայց հետո նա հասկացավ՝ երկար տարիներ գրամեքենայից օգտվելիս մարտկոցը վաղուց կնստեր: Նա որոշեց, որ էներգիայի աղբյուրը փոքրիկ դինամոմեքենան է, որը, թաքնված գրամեքենայի ներսում, սնվում է հենց գրելու պրոցեսի էներգիայից: Նա փորձեց հետզհետե թուլացնել ստեղնի սեղմումը՝ լծակիկը ընկավ, եւ դրա լույսն աղոտեց. իսկ երբ գրողը սեղմեց ստեղնը, ապա լծակիկը սկսեց կրկին բարձրանալ, իսկ լույսը՝ վառվել: Կապույտ շողանքը նրան դուր էր գալիս. թվում էր, թե թղթի վրա մեքենագրելը, լցված կապույտ լույսով, երեւի թե հաճելի է, եւ նա ափսոսում էր, որ ավելի վաղ չէր գտել ստեղնը: Սրտնեղում է, որ գրել կարելի էր միայն մի ձեռքով, սակայն, նա կարծում էր, որ լամպիկն ամրացնելու ինչ-որ միջոց կա: Եւ շուտով նա իսկապես հայտնաբերեց, որ բավական է սեղմել ստեղնը վերին ձայնասահմանի կողպեքի հետ, որպեսզի լծակիկը լուսավորվող գլխիկով վայր չընկնի»:

«Ի՞նչ է նշանակում վերին ձայնասահմանի կողպեքը»,- հարցրի ես:

«Վերին ձայնասահմանի կողպեքը կա յուրաքանչյուր գրամեքենայի վրա, դրա սեղմումով կարելի է ամրացնել ստեղնը, որը պատասխանատու է մեծատառերի համար: Այժմ գրողի երկու ձեռքերն ազատ էին. նա դրեց դրանք ստեղների վրա եւ հայացքը հառեց կապույտով լուսավորվող թղթի վրա: Սենյակում լրիվ մթնեց. վառ կապույտ էջը արտացոլվում էր պատուհանի ապակում՝ ասես գիշերային հարթավայրի մեջ լցվել էր կախարդական լիճը: Երբ նա գլուխը շրջեց, ապա տեսավ, որ ապակիները սենյակում միմյանց հաղորդում են ցնորական պատկեր՝ կապույտ թերթը լուսավորվում էր ապակեպատ գրապահարանում, հակադիր պատի սպասքապա-

հարանում եւ, անտառային քարանձավի հեքիաթային ծաղկի պես, հայելու խորքում շողում էր սենյակի հեռավոր մասում: Նա երկար նայում էր լուսավորվող էջին: Բերկրանքը, որ նա զգում էր, շատ ավելի մեծ բան էր, քան անսովոր լույսի աղբյուրը գտնելը: Սկզբում նա ընդհանրապես չէր հասկանում, թե ինչու է նրան այդպես հիացնում կապույտ գույնը: Հետո նա սկսեց գիտակցել, որ շատ ավելի կարեւոր հանդիպում է տեղի ունեցել, քան պատահական ստեղնի հայտնաբերումը, որը գրամեքենան երկար տարիներ թաքցնում էր: Կապույտ լույսի շնորհիվ, սովորույթի փառը ցրած, նա առաջին անգամ հանդիպեց դատարկ թերթին, որը նախկինում երբեք չէր տեսել: Միայն այդ շողանքի մեջ գրողը գիտակցեց թղթի գոյության փաստը, որը մինչ այդ նրա համար սոսկ մտքերի եւ պատկերների արտահայտման համր միջոց էր, լոկ հիմք, որն ինքը ոչինչ չէր կարող ասել եւ միայն համբերատար ու հեզորեն ընդունում էր հարվածները, որ թողնում էին նրա վրա սեւ հետքեր եւ աղտոտում դրա ճերմակությունը: Բառերը, որ պահում էր թուղթը, գալիս էին դրսից, դրանք չէին ծնվում նրա վրա. նախադասությունները, պատմություններն ու մտքերը արմատավորված չէին այդ դատարկության մեջ: Նա առաջին անգամ չէր հանդիպում դատարկությանը: Նրա հիշողության մեջ հայտնվեցին մանկության հեռավոր հիշողությունները, որոնց մասին նա վաղուց չէր հիշում, զարմանալի դողդոջուն երջանկության եւ մունջ հիացմունքի պահերը, որոնք նա ապրել էր քաղաքի ծայրամասերում, բարձր ցանկապատերը եւ գործարանների երկար պատերը տեսնելիս, նաեւ այն րոպեներին, երբ նա ծնողների գրապահարանից հին գիրք էր հանում եւ զննում դրա կազմածածկը կամ մաշված կազմը, որի պարուրածեւ նախշերն ասես տեսանելի էին դարձնում դատարկության կյանքը գոյավորող հոսանքները: Կազմերն ու կազմածածկերը նրա մեջ կախարդական արկածների մասին երազանքներ էին ծնում, նա հիշում էր, թե ինչպես հետո հիասթափվում էր գրքից, որովհետւե այն տափակ կամ ձանձրալի էր լինում համեմատած այն պատմությունների հետ, որոնք ծնվում էին դատարկության մեջ եւ որոնցում, խավարի մեջ կայծկլտում էին վիթխարի գունավոր թանկարժեք քարերը, արտասովոր քաղաքների պատերը անապատի մեջ տապ էին շնչում, իսկ ամառանոցի կիսախավարում բարալիկ կանացի մատները բացում էին կանաչ թույնով սրվակը: Ինչպես եւ այն ժամանակ, նա զգաց՝ այն, ինչ մյուսները դատարկություն էին համարում, ամենեւին դատարկ չէ. նրան թվում էր, որ կապտավուն էջի վրա բաբախում է տարօրինակ կյանքը: Նա ասես զգում էր, թե ինչպես ձգտում առ խոսքն ու ձեւը՝ նախկինում անանուն եւ անձեւ հոսան-

քը, որի կախարդական աղմուկն, անշուշտ, կհնչի ծնված նախադասությունների խորքերում եւ անկյուններում, կհնչի նույնիսկ այնժամ, երբ բառերը դարձյալ կսկսեն անհետանալ խավարում:

Դատարկ էջի վրա դողդոջում էր անտեսանելի ծնվող տեքստը. դրանք դեռ բառեր չէին, այլ սնկամարմին, որից նոր պիտի ծնվեին բառերը, բառերի փափուկ կազմերի միահյուսումը՝ սերտաճած առ դատարկություն եւ դրա ավիշներից սնվող: Նա գիտեր, որ դրանք միանգամայն այլ խոսքեր կլինեն, ոչ նրանք, որոնք նա գիտեր, թեպետ եւ դրանք բաղկացած կլինեն միեւնույն տառերից, եւ այդ տառերը կկենան միեւնույն կարգում: Նա զգում էր, որ բառերը, որ նստվածք էին տալիս դատարկության կապույտ հարթավայրերում, զարմանալիորեն ինքնուրույն են, որ դրանք ինչ-որ շրջապատի կարիք չունեն, որպեսզի ինչ-որ բան հաղորդեն, ինչ-որ բան, քանզի դրանցից յուրաքանչյուրն իր մեջ մի ամբողջ աշխարհ է կրում, սեփական կյանքով բաբախող, բայց միաժամանակ նա զգում էր, որ այդ բառերը ինչ-որ երկար տեքստի մասն են, որը էջի սահմաններից դուրս է գալիս՝ կապույտ լույսով շողացող, տեքստի, որը պարզապես հոսում է դրա միջով եւ ծորում թղթի մյուս էջերի միջով այլ սենյակներում, դրանց վրա սեւ եւ կապույտ հետքեր թողնելով: Նա դեռեւս չգիտեր առեղծվածային առասպելի մասին, որ ընտրել էր աշխարհով մեկ սփռված տասնյակ գրիչների, որպեսզի նրանք օգնեին իրեն այս աշխարհի մակերեսի վրա ելնել այն տեղերում, որտեղ թղթին է դիպչում գրչասայրը կամ էլ գրամեքենայի լծակը: Նա զգում էր, որ նախադասությունները, որոնք նոր պատրաստվում էին ծնվել, իրեն չեն պատկանում, որ նախկինում դրանք նրան անհիմաստ, անբարոյական եւ անարժան էին թվում այն բանին, որպեսզի գրառված լինեին, բայց, ընդ որում՝ դրանք տիրաբար ձգում էին նրան՝ նա չէր կարողանում սպասել այն րոպեին, երբ այդ նախադասությունների աղմուկը ձեւ կստանա, եւ նրան թվում էր, թե նա մոտիկից ծանոթ է դրանց, որովհետեւ նախկինում ապրել է դրանց հետ նույն վայրում:

Սկսված վեպը դժբախտ ճարտարագետի մասին դադարեց նրան հետաքրքրել. մտքերն այն մասին, որ նա կպղծի թղթի շողանքը բառերով, չծնված անարատ դատարկությունից, սարսափեցնում էին նրան: Հանդարտ կյանքը դատարկ էջի վրա չէր դադարում, ավելի հախուռն էր դառնում, ավելի ու ավելի հաճախ դատարկության հուզվող հարթության վրա հայտնվում եւ տեղնուտեղը ցրվում էր համարյա պատրաստի խոսքը, երբեմն դա նախադասության մի հատվածն էր, որը դեռեւս ընդհատ շնչառություն էր, որի սյուքերում լոկ ծնվում էր բառերի մասնատումը: Գրողն ավե-

լի ու ավելի մեծ լարում էր ապրում, նա դարանում էր բառերին մաքուր էջի վրա, եւ նրա մատները դողում էին ստեղների վրա, ինչպես որսաշները: Մի քանի անգամ նա տենչում էր ուղեւորվել անպարզ, խուսավարող պատկերների ետքից. գրամեքենայի վրա խոյանում էին լծակների անհանգիստ, դողդոջուն ծայրերը, երբեմն դրանք համարյա դիպչում էին թղթին, բայց վերջին պահին, ամեն անգամ քարանում էին դրա առաջ եւ կրկին ընկրկում էին առ մթին անդունդը: Գրողը վախենում էր, որ թղթի վրա խաբեությամբ, ինչպես թշնամիներ, կներթափանցեն հին խոսքերը, եւ դրանք կխախտեն էջի մաքրությունը, եւ դրանց տառերի գիծը կպատռի ծնվող տեքստի նրբին գործվածքը: Բայց հետո վրա հասավ պահը, երբ հանդարտ հուզումը շողացող թղթի վրա, ձեռքերի դողդոջյունն ու ձգումների համակարգը գրամեքենայի լծակների եւ հոդակապերի, փակվեցին օղակում, որով վազեց հոսանքը: Մատները սեղմեցին ստեղները, հնչեցին առաջին հարվածները: Այժմ նա արդեն գիտեր, որ սեւ նշանները, որոնք շաղում էին թուղթը, աճում են հենց էջի սկզբամարմնից, որ թուղթն ինքը կանչում է ստեղներին, որպեսզի դրանց հպումից հետո ծնվեն ձեւերը, որ գալիս են դատարկությունից:

Թղթի վրա պատմություն ծնվեց: Այդ պատմությունը մարդու մասին էր, փրկօղակով օվկիանոսում լողացող, նրա գլխավերեւում հուրհրատում էր դաժան արեւադարձային տապը: Երեւի, արեւով լցված, ծովի հարթության նախնական պատկերը ծագել էր դատարկ էջի կապույտ շողանքից: Փրկօղակով մարդը միակն էր, որ փրկվել էր ինքնաթիռի վթարից, ոը ծովն էր ընկել մայրցամաքների միջեւ, ափից հեռու: Ծուտով նա դադարեց փորձել լողալ որքան հնարավոր է արագ՝ հասկացավ, որ դա անօգուտ է՝ ուր էլ որ նա լողար, ամենուր կլինի ծովային հորիզոնի օղակը եւ միեւնույն պարզ երկինքը գլխավերեւում: Նա աչքերը գոցեց եւ տրվեց տաք ծովահոսանքի կամայականությանը, թեթեւակի օրորվելով ալիքների վրա եւ ողջ մարմնով զգալով արեւի կիզիչ ու բթացնող տապը: Բայց նույնիսկ նա, ով գրում էր այս պատմվածքը էջին, որի վրա տարածվել էր կապույտ լույսը, գլխի չէր ընկնում, ուր կընկնի դժբախտը, չգիտեր՝ արդյո՞ք ծովային հոսանքը նրան դուրս կբերի ավազոտ ափ, որտեղ ջրի վրա հակվում են ծանր պտուղներով արմավենիները, թե՞ քաղաքային լողափ, որի վրա հառնում են սպիտակ երկնաքերները, թե՞ հրաբխային ծագման ամայի կղզի: Նա չգիտեր՝ արդյո՞ք լողորդը կգոհվի ծարավից օկիանոսի մեջ, թե՞ նրան կպատառոտեն շնածկները: Բայց հայտնվող բառերը բնավ էլ անսպասելի կամ անծանոթ չէին՝ բառերը, արդեն թղթի վրա հայտնված, օժտված էին

իրենց աուրայով, եւ հենց դրանից էլ հետզհետե բյուրեղանում էին խոսքերը, որոնք հիմա-հիմա պիտի հայտնվեին՝ այդպես մշուշից դուրս են լողում ճանապարհի երկայնքով աճող ծառերի ուրվագծերը: Խեղճը, ում քշում էր տաք օվկիանոսը, ապրում էր Պրահայում, մեծ ու խաղաղ բնակարանում՝ Հին քաղաքում, նա աստղագետ էր, օվկիանոս ընկած ինքնաթիռով նա թռչում էր Հարավային Ամերիկա՝ գիտաժողովի: Երբեմն նա բացում էր աչքերը, բայց տեսնում էր հար միեւնույն ծովային հորիզոնը եւ նույն անամպ երկինքը: Երբ արեւը հայտնվեց զենիթում, նա ննջեց: Իսկ արթնանալով, աստղագետը զգաց, որ արեւի շողերն արդեն նախկին ուժով չեն այրում, եւ մտածեց, որ քունը մի քանի ժամ էր ձգվել եւ լուսատուն իջել էր դեպի հորիզոնը: Նրա աչքերը դեռեւս փակ էին, նա դանդաղ շրջվում էր ջրի մեջ: Երբեմն նրան թվում էր, թե ալիքների ճողփյունին միախառնվում են կամացուկ երաժշտությունն ու խլացած ձայները, նա ինքն իրեն համոզում էր, որ դրանք հալյուցինացիաներ են, ծնված հոգնությունից, ծարավից ու տապից: Հետո նա բացեց աչքերն ու զարմացավ: Նրանից ընդամենը մի քանի տասնյակ մետրի վրա, ծովից ելնում էին վիթխարի քաղաքի առաջին տները:

Նա տեսնում էր հիասքանչ շինություններն ու հարուստ պալատները՝ բարձր սյունաշարերով շրջապատված, որտեղ ճողփում էին ալիքները. բոլոր շինությունների պատերը ելնում էին հենց ջրից, շինությունների շարքերի միջեւ մայթերի փոխարեն ծածանվում էր ծովային հարթությունը, որի վրա լողում էին վառվռուն դրոշակներով պատված նավակները: Ոչ մի տեղ մայթեր, կամուրջներ, հրապարակներ չկային, բացի պատշգամբներից եւ նավերի տախտակամածներից, նա ոչ մի հաստատություն չտեսավ: Բոլոր հարթություններն ելնում էին ջրի տակից ողղահայաց, իսկ տների եւ պալատների կտուրները բարձր, վերեւում կլորացած կոների տեսք ունեին: Ծովային հոսանքը նրան տանում էր ուղիղ դեպի քաղաքային դարպասները. դրանք երկու վիթխարի քանդակներ էին, տղամարդու եւ կնոջ անդրիներ՝ հասարակ հագուստով, որ ճշտակարգ կոպիտ ծալքերով վարընկեց էր լինում նրանց ուսերից. կերպարանքները մի ձեռքով իրենց գլխավերեւում բարձրացնում էին հարթ ժայռաբեկորը, իսկ մյուսում բռնել էին ոճավորված շուշանածաղկի տեսքով լապտերը՝ հավանաբար երեկոյան լապտերները վառում էին եւ դարպասները փարոս էին ծառայում, որը ճամփա էր ցուցանում նավերին: Կինը հունական գալարազարդի ձեւի մանյակ էր կրում՝ պտտվող եւ բացվող զսպանակներով, նրա վարսերը զարդարում էր օղակապը երեք հորիզոնական ձվածեւություններով, ար-

ված կապուտակ քարից եւ ոսկե ալիքավոր գծերով: Այդ օղակապը նրան ինչ-որ բան հիշեցրեց. հանկարծ նա հասկացավ՝ զարդը նույն ձեւի էր, ինչ եւ նախշազարդ շերտը Վացլավյան հրապարակի «Թագ» պալատի աշտարակի վրա: Աստղագետին արդեն նկատել էին տների պատուհաններից, որոնց ճակատամասերը ելնում էի առ օվկիանոսային ընդարձակությունը. պատշգամբներում սկսել էին հավաքվել մարդիկ՝ երկար սպիտակ հանդերձանքներով, որոնք հռոմեական պատմուճաններ կամ արաբական բուռնուս էին հիշեցնում, եւ սկսեցին մատնացույց անել նրան: Ծուտով դարպասների արանքում հայտնվեց քթին չորս արեւառ մկանուտ թիավարողներով մի արագընթաց նավակ. մեջտեղում, արեւի հովանու տակ նստել էր ճերմակահեր մի տղամարդ: Թիերը ռիթմիկ իջնում էի ջրի մեջ, եւ ահա արդեն նավակը հասավ լողորդին, թիավարողները օգնեցին նրան տախտակամածի վրա բարձրանալ, տեղավորեցին բարձերի վրա, որ ծածկում էին նավակի հատակը, եւ փաթաթեցին վերմակների մեջ:

Ճերմակահեր մարդը կռացավ դեպի աստղագետը եւ նրան զով ջրով շիշը մեկնեց: Նա նրան ողջունեց քաղաքացիների անունից եւ ասաց, որ թագավորի խորհրդականն է եւ որ իր պարտավորությունն է՝ հոգ տանել նավաբեկյալների մասին, որոնց ալիքները երբեմն բերում են դեպի քաղաքի դարպասները: Նա հաղորդեց, որ սկզբի համար նրան կհասցնի իր պալատը, որտեղ նա կկարողանա սնվել եւ հանսգստանալ, իսկ լուսադեմին, երբ հյուրը ուժ հավաքի, նրան քաղաքը ցույց կտա: Նա նաեւ հաճույքով վաղը նրան կներկայացնի թագավորին. նա հուսով է, որ թագավորն ազատ որպե կգտնի հանդիպման համար, թեեւ վաղը քաղաքացիների համար ամենակարեւոր կրոնական տոնն է եւ պալատում ու գլխավոր տաճարում բազում իրարանցումներ են սպասվում: Ծերունին կարգադրեց թիավարողներին, եւ նավակն ուղղվեց դեպի քաղաք, լողաց դարպասների միջով եւ թեթեւ սահեց փողոցների ջրային հարթության վրայով:

Աստղագետը, գլխով հենվելով բարձերի դեզին, նայում էր տների ճակատամասերին, որոնք լողում էին նրա կողքով, սյունաշարերին, ծովից աճող վիթխարի պալատների առաջ, դեպի պատուհանների երկար շարքերը. մերթընդմերթ նրա աչքի առաջ բացվում էին ընդարձակ ծովալճակները, որոնց մեջտեղում ջրից բարձրանում էին զանգվածեղ անդրիները եւ որոնք քաղաքի բնակիչները, հավանաբար, հրապարակներ էին համարում: Երբ նավակը լողում էր պալատների բաց դռների կողքով, նա նկատում էր, որ դռների ետեւում էլ չկա ամուր հող, որ անցումները գոյավորվում են ջրանցքներով, որոնք միավորում են փողոցի հարթությունը բակե-

րի լճակներին, որ շողում են մթին կամարակապ նեղուցի վերջում:

Նրա աչքերի առաջ առկայծում էին նավակների բազմաբղետ կողերը եւ արագ խոյացող թիակները, որոնցից կաթում էր ջուրը, մակույկի կողքով լողում էին նավակները, բարձված շողշողուն ձկներով եւ դողդոջուն լանգուստներով, արագընթաց փոստային նավերը, շքեղ նավերը, զարդարված խեցգետիններ ու մեդուզաներ պատկերող գերբերով, անփութկոտ նավերը, որոնց տախտակամածերի վրա զրնգում էին սեղանի պարագաներն եւ հնչում էր զվարթ երաժշտությունը:

Մակույկի ծովածոցին մոտենալուն պես շարժումը ծովային փողոցներում ավելի աշխույժ էր դառնում, թիավարները ստիպված էին լինում խուսավարել բազում նավերի արանքում, աստղագետն իր գլխավերեւում տեսնում էր բարձրացող թիակների շարքերը, լսում էր մարդկանց բացականչություններն ու նավային զանգերի զրնգուն ձայները: Այնուհետեւ նրանց առջեւ բացվեց ընդարձակ ծովածոցը. մակույկը թեքվեց եւ լողաց պալատների շարքերի կողքով, լուսավորված արեւի մեղմ լույսով, որը շողում էր վիթխարի շինության գմբեթների միջեւ՝ ծովածոցի հակադիր կողմում: Աստղագետը մտածեց, որ դա երեւի թե թագավորական նստավայրն է, որը տանում էր դեպի ծովածոց, բաժանում էր պալատը շինության սպիտակ ճակատամասից, որն, ըստ ամենայնի, տաճար էր: Մակույկը լողաց դեպի պալատներից մեկի բաց դռները: Երբ նրանք լողում էին պաղ մթին թունելով, մեր հերոսը դրա վերջում մի փոքրիկ ջրային բակ նկատեց. դրա վերեւում խոյանում էր շատրվանը մարդաձկների կերպարանքներով, որոնք փչում էին խեցիները, որոնցից բխում էին ջրի բարալիկ շիթերը, որ հոսում էին քանդակների վրայով ետ՝ դեպի ծովը: Մակույկը թեքվեց թունելից դեպի նեղլիկ կողքի միջանցիկը, եւ այդ անցումը նույնպես ջրով ծածկված էր, մնացյալ ճյուղավորումներում հատակի փոխարեն ջրային հարթությունն էր՝ ծովը ներթափանցում էր հեռու պալատի խորքերը...«Դե, ե՞րբ վերջապես կերեւա ափը»,- մտածեց բարձրի վրա պառկած աստղագետը: Մակույկը լողում էր ջրից ելնող բարձր ծառերի երկու շարքերի միջեւ. միջանցքներն այնքան նեղ էին, որ երբեմն թիակը կրճտում էր տան ծեփի կամ փայտե դռան վրա, մթին հարթության վրա դողում էր համաչափ հեռավորության վրա կախված բյուրեղապկյա ջահերի արտացոլքը: Մի դռան մոտ թիավարողները կանգ առան, ճերմակահեր մարդը բացեց դրա երկու փեղկերը, եւ մակույկը ներս լողաց:

Աստղագետը հայտնվեց թեթեւ կահույքով կահավորված սենյակում, որը շրջանակում էր պարզ նախշը,աթոռների ծածկոցների վրա ընկած էր

ոսկեզօծ լույսը, որ ներթափանցում էր շինություն բարձր պատուհանի միջով. ջրային հարթության տատանումը վերջին թույլ արձագանքն էր օվկիանոսային ալիքների, որոնք հետզհետե քարանում եւ ննջում էին փողոցներում, տների միջանցքներում ու սենյակներում եւ վերածվում էին ահա այսպիսի հազիվ նկատելի դողի: Ջրի վրա երեւում էր հատակը՝ հին գորգով ծածկված, որի ծայրերը վար էին սահում, այնպես որ՝ ծոպերիզները ծածանվում էին ջրի մեջ, ասես ջրիմուռներ: Գորգի վրա դրված էր լայն մի մահճակալ, որի թիկնակը դրվագազարդված էր՝ ոճավորված նրբագեղ ոլորուն շոշափելիք բներով ծովային ձիուկներ եւ ութոտանիներ էին, եւ մի սեղան էր, որի շողշողուն ձվածեւ սեղանածածկի վրա աչքի էին զարնում տապակած ձկների, եփած օմարների եւ տարաշխարհիկ մրգերի կույտերով ճենապակյա ափսեները: Սեղանին էին մոտեցված բարալիկ ծռված ոտքերով փափուկ աթոռները: Հատակը տեղակայված էր հենց ջրի հարթության վրա, այնպես որ՝ բարձր ալիքները հասնում էին դրա ծայրին եւ գորգի վրա նստում էր փրփուրը: Այդ տեղերից ավելի հեռու, ուր թափանցում էր ծովը, հենց պատի մոտ, հառնում էր գրապահարանը՝ ստվար հատորների շարքերով կաշվե եւ մագաղաթյա կազմերով. հարեւան պատի վրա կախված էին ճաքերի ցանցով պատված հին նկարները: Դրանք բոլորը պատկերում էին ծովային քաղաքը հենց օրվա այն ժամին, ինչը որ հիմա կար. բոլորի վրա երկար ուղիղ փողոցներ էին, դեմ առնող հորիզոնին, որին մոտենում էր ոսկեզօծ արեւը: Նկարները աստղագետին հիշեցնում էին Կլոդ Լորենի աշխատանքները՝ միայն եւ ոչ մեկի վրա չկար նավ կամ նավահանգիստ, այլ լոկ ջրային հարթությունը, ներթափանցված լույսով, որ ողողում էր ալիքների կատարները, քիվերի փափուկ ստվերներով տների պատերը. յուրաքանչյուր նկարի վարի ծայրին՝ փոքրիկ մարդուկներով նավակներ: Աստղագետն անվստահ ոտք դրեց սենյակի ափ. մակույկը հանդարտ լողաց, դռներն անլսելի փակվեցին: Նա հանվեց եւ անկողին մտավ. նա հասցրեց մտածել այն մասին, որ վերջին անգամ ննջել էր իր անկողնում Պրահայում եւ, ընդ որում՝ լսում էր Սուրբ Յակուբի տաճարի զանգերի զրնգոցը, հետո նա գահավիժեց քնի մեջ, որում Հին քաղաքի փողոցները միահյուսվում էին ծովային ծառուղիներին մեկ տարօրինակ քաղաքում»:

Ես լսում էի աղջկա պատմածը եւ նայում էի նրա հանգիստ դեմքին կարմիր լույսի արտացոլքերում, որ անշարժ ընկած էին սփռոցի վրա՝ գունավոր քարերի կողքին: Սկզբում նա հաճախ լռում էր եւ խոսքեր էր փնտրում, իսկ հետո նրա խոսքը սահուն հոսեց. նա խոսում էր ցածրաձայն,

փոքր-ինչ միապաղաղ, ասես թեթեւակի հիպնոսային տրանսում:

-Երբ նա արթնացավ, արեւը շողում էր եւ փողոցից լսվում էին նավավարների ճիչերը եւ նավերի զանգերի զնգոցը: Նա հագավ երկար սպիտակ վերնաշապիկը, որ դրված էր մահճակալի թիկնակին, իսկ այնուհետեւ կանգնեց պատուհանի մոտ եւ նայում էր ծովածոցով լողող նավերին: Թագավորական պալատը եւ դիմացի տաճարն այժմ կուրացուցիչ շողում էին արեւի տակ, իսկ պատուհանների տակի պալատական ճակատամասերի հարթությունը թաղված էր պաղ ստվերի մեջ, որն օրվա այդ ժամին հասնում էր համարյա թե ծովածոցի կենտրոնին: Աստղագետը նստեց սեղանի մոտ եւ սկսեց ուտել. նա ուշք դարձրեց, որ, քանի դեռ ինքը քնած էր, ինչ-որ մեկն իր համար նոր կերակուրներ էր պատրաստել: Ծուտով թակոց լսվեց, դռները բացվեցին, եւ սենյակ լողաց մակույկը տանտիրոջ ու թիավարների հետ: Ճերմակահեր մարդը ողջունեց նրան եւ հարցրեց՝ արդյո՞ք նա դեռ կհանգստանա, թե՞ կկամենար քաղաքով շրջել: Աստղագետն ասաց, որ իրեն վատ չի զգում եւ որ հաճույքով աչք կածի ծովային քաղաքը: Տանտերը տեղնուտեղը նրան հաղորդեց, որ խոսել է թագավորի հետ եւ որ նա խոստացավ ընդունել աստղագետին ճաշից հետո իր պալատում: Իսկ երեկոյան աստղագետը կկարողանա պատվարժան ամբիոնից նայել կրոնական հանդիսություններին, որ կազմակերպվում էին ի պատիվ գլխավոր տոնի ծովային աստվածուհու՝ քաղաքի հովանավորուհու: Եւ աստղագետը մտավ նավակ, հարմարավետ տեղավորվեց փափուկ նստարանի վրա՝ թագավորական խորհրդատուի դիմաց եւ թույլատրեց իրեն տանել ջրային փողոցներով: Ուղեկցորդը նրան ցույց էր տալիս գլխավոր մեծատոհմիկների պալատները, թատրոնը, արդարադատության պալատը եւ ջրային ստադիոնը. նրանք լողում էին լայն ծովային ծառուղիներով եւ նեղլիկ ոլորուն փողոցներով քաղաքի հին մասում. այդ մթին նեղուցիկներից ոմանք քաղաքային շուկաներ էին՝ դրանք այնքան լեցուն էին նավերով, որոնց վրա առեւտրականները դարսել էին իրենց ծովային ապրանքը, եւ գնորդների մակույկներով, որ ջրի մակերեսը լիովին ծածկվել էր դրանց տակ: Հետո նրանք ընկան հանդարտ ծայրամասային շրջանները, որտեղ օվկիանոսից ելնում էին պատշգամբներում կախված լվացքներով քրքրված տները, եւ որտեղ նրանք համարյա թե նավ չէին տեսնում. երեւում էին միայն գլուխները երեխաների, որոնք ալիքների վրա խաղում էին գնդակով, որը յուղոտ, թթու հոտ էր արձակում: Քաղաքի ծայրամասում նրանք լողում էին հենահարթակների մոտի այգիներով, որտեղ բանջարեղեն էին աճեցնում, եւ լողացող արտադրամասերի, եւ նավանորոգարանների կող-

քով: Ծովային քաղաքի տները սովորաբար բարձրանում էին ջրային հարկի վրա՝ մեկ կամ երկու հարկ, բայց վերեւում, ինչպես բացատրեց թագավորական խորհրդականը, գտնվում էին միայն սենյակները ծառաների համար, խորդանոցներն ու մառանները, այստեղ բնակվում էին լոկ աղքատները: Քաղաքացիները սիրում էին ծովի եւ ցամաքի սահմանը եւ հնարավորինս իրենց կացարանները սարքում էին առափնյա մասերում, որ ձգվում էին տների ներսում եւ կտրատված էին փոքրիկ ծովածոցերով, այնպես որ՝ ջուրը հազարավոր լեզվակներով թափանցում էր հենց սեղանների եւ մահճակալների մոտ եւ իր հետ սենյակներ բերում ծովի բույրերը: Տները կեցած էին ստորջրյա բուստախութերի վրա եւ եւս մի քանի հարկ ունեին ծովի մակերեւույթի տակ՝ այնտեղ տեղակայվում էին բուծարանները ձկնորսության համար եւ ի հավելումն՝ ջրասույզ կացարաններում ոստրեներ կամ ջրիմուռներ էին աճեցնում:

Թագավորի խորհրդականը ճամփորդության ժամանակ պատմում էր, որ քաղաքացիները երկրպագում են ծովային աստվածուհուն: Այն նոր աստվածություն է, որ հոգ է տանում քաղաքի մասին ընդամենը յոթ տարի, մինչ այն քաղաքին իշխում էր մռայլ եւ քմահաճ աստվածը, որը սովորաբար հայտնվում էր սեւ կետաձկան տեսքով: Գալով քաղաք, աստվածուհին նրա դեմ մարտի բռնվեց մեծ ծովալճակի մեջտեղում, մարտում, որին քաղաքի բնակիչները մունջ եւ վախով հետեւում էին պալատների պատուհաններից: Նրանց մեծ մասը տարակուսանքների մեջ էր կենում՝ քաղաքացիները չգիտեին, թե ում հաղթանակ կամենան՝ հին աստծուն նրանք չէին սիրում, բայց ընտելացել էին նրան եւ նրա քմայքներին, եւ նրանց ձեռք էր տալիս, որպեսզի նա իրենց վրա ուշադրություն չդարձնի եւ չանհանգստացնի, թեեւ երբեմն, այդուհանդերձ, անիմաստ եւ նվաստացուցիչ հրամաններ էր տալիս /օրինակ, քաղաքացիները պետք է մի քանի շաբաթ վերահանդերձավորվեին թավշյա գազանների պես/: Երբ կետաձուկը զայրանում էր, նա գլխով խփում էր պալատների պատերին այնպես, որ գավաթները զնգոցով վեր էին թռչում պահարաններում, բայց նա երբեք ոչ մեկին իսկապես չէր նեղացնում, իսկ երբեմն նույնիսկ սենտիմենտալ հոգատարություն էր ցուցաբերում քաղաքացիների համար եւ պաշտպանում էր նրանց թշնամի աստվածներից ու դեւերից: Փոխարենը աստվածուհու մասին, որը հանկարծ հայտնվել էր քաղաքի ջրերում, բնակիչներն ոչինչ չգիտեին. նրանք գաղափար իսկ չունեին, թե ինչպես նա պետք է իրենց ղեկավարի եւ ինչ կուզի: Սարսափելի մարտում, որ ձգվեց երեք օր եւ երեք գիշեր, ջահել աստվածուհին հաղթեց. սեւ կետաձուկը խայտառակվելով

դուրս լողաց քաղաքից եւ այլեւս այնտեղ չվերադարձավ: Ծուտով պարզվեց, որ աստվածուհու հաղթանակը մարդկանց համար իսկական օրհնություն էր: Բոլորը նրան սիրեցին, ասում էր թագավորի խորհրդականը, նա հանդարտ եւ քնքուշ է, հոգ է տանում քաղաքի համար եւ պահպանում է այն, նախազգուշացնում է բնակիչներին փոթորիկների գալստյան մասին եւ հանդարտեցնում վտանգավոր ալիքները, քշում է քաղաքից կետածկներին եւ երբեմն բնակիչների զվարճանքի համար կազմակերպում է թագավորական ծովածոցի գիշերային ջրային հարթության վրա կենդանի պատկերներ բազմաբղետ շողշողացող մեդուզաներով. մեդուզաները, ենթարկվելով նրա հրահանգներին, տարբեր խմբեր են կազմում, եւ ջրի վրա հայտնվում է իսկական գունավոր կինոն, որը բնակիչները նայում են պատշգամբներից եւ պատուհաններից: Ընդ որում՝ աստվածուհին ենթականերից պահանջում է միայն առավոտյան եւ երեկոյան կարճատեւ աղոթք եւ, ի նշան հարգանքի, առաջին պտուղները ծովային բերքահավաքից:

Երեւում էր, որ խորհրդականն անկեղծորեն եւ խորապես աստվածավախ մարդ էր. երբ նա խոսում էր աստվածուհու մասին, նրա խոսքն ավելի վառ էր դառնում եւ ձայնը դողում էր զսպված հուզմունքից: Աստղագետը հարցուփորձում էր տանուտերին քաղաքի հիմնադրման եւ նրա պատմության մասին, բայց լսեց լոկ տափակ լեգենդներ, որոնք պատմում են շատ քաղաքների մասին. ճիշտ է՝ դրանք հարմարեցված էին ծովին: Թվում էր, թե քաղաքը ոչ մի պատմություն չունի, կյանքն այդտեղ անընդհատ միանման էր ընթանում՝ քաղաքացիներն իրենց նիստուկացը փոխելու ոչ մի անհարաժեշտություն չէին զգում: Տեղի չէր ունենում եւ որեւէ նշանակալից իրադարձություն, որ կընդհատեր ժամանակի հոսանքը, եւ միակ բանը, որ պահպանել էր, թեկուզ եւ մշուշոտ, բնակիչների հիշողությունն էր՝ դրանք հին աստվածների անկումն էր եւ նորերի գալուստը: Պարզ չէր, թե այդ իրադարձություններով սահմանափակված շրջանները տասնամյակնե՞ր էին, թե՞ հազարամյակներ. երբ աստղագետն այդ մասին հարցնում էր թագավորական խորհրդականին, պարզվում էր, որ դա նույնիսկ նրան հայտնի չէ: Սակայն երեւում էր, որ դա նրան ամենեւին չէր վշտացնում՝ քաղաքում այնքան էլ հոգ չէին տանում ժամանակագրության մասին, ինչը որ երկու սերունդների հիշողության սահմաններից դուրս էր գալիս, միատեղ էր ծուլվում եւ ժամանակը, երբ պապերն ու տատերը դեռ երեխաներ էին, թվում էր, ոչնչով չէր տարբերվում այդ աշխարհի արարման ժամանակից: Պատմության անպարզությունը խորացնում էր նաեւ այն, որ որոշ աստ-

վածներ, դատելով ըստ ամենայնի, իսկ երբեմն եւ ինչ-որ մի աստված վերածվում էր մի քանիսի: Թագավորի խորհրդականի պատմությունից կարելի էր հասկանալ, որ պատահում էին ժամանակաշրջաններ, երբ քաղաքի կրոնը դառնում էր քրիստոնեությունը կամ իսլամը, բայց եւ այդ կրոնների աստվածներն էլ վաղ թե ուշ մեկ գնում, մեկ վերադառնում էին:

Նրանք ճաշում էին գլխավոր ծովածոցից ոչ հեռու հիասքանչ ռեստորանում: Դա մի ընդարձակ սրահ էր մեծ պատուհաններով, ջրասույզ, որի վրա բարձրանում էին հաստատության փոքրիկ ու ցածրիկ հատվածները. դրանցից յուրաքանչյուրի վրա դրված էին սեղան եւ մի քանի աթոռ: Այցելուները իրենց նավակներով լողում էին ուղիղ դեպի այդ կղզյակները, իսկ մատուցողները տեղափոխվում էին խոհանոցի եւ սեղանիկների միջեւ իրենց փոքրիկ մակույկներով:

Այն պահին, երբ գրողը պատմում էր ճաշի մասին ծովային ռեստորանում, լցվեց գնացքի գվվոցը. ես նկատեցի, որ արգելափակոցը անցման տեղում՝ գարեջրագործարանի առջեւ թողլքված է: Գնացքը մինչեւ Մնիշեկ, որին ես սպասում էի, ժամանում էր կառամատույցի վրա: Գրողը ներողություն խնդրեց, որ ինձ հապաղեցրեց իր պատումով, հաջողություն մաղթեց եւ պատրաստվում էր գնալ: Բայց ինձ այնքան գրավեցին չեխ աստղագետի արկածները ծովային քաղաքում, որ ես որոշեցի հետաձգել մեկնումս ու խնդրեցի գրողին շարունակել պատմությունն իր գրքի մասին: Ի վերջո ինձ հաջողվեց համոզել նրան, եւ մենք դարձյալ վերադարձանք ծովային քաղաք:

Ճաշից հետո թագավորի խորհրդականն ու աստղագետն ուղեւորվեցին թագավորական պալատ: Նրանց նավակը լողում էր ջրային միջանցքների լաբիրինթոսով, մթին ննջարանների եւ հայելային սրահների միջով, որտեղ երկու կողմից՝ հայելիների ապակիներում ձգվում էր առ անսահմանություն խաբուսիկ հարթությունը. վերջապես նրանք հայտնվեցին առանց պատուհանների ընդարձակ դահլիճում, վարից ելնող եւ վերեւում սպիտակ սյուներով կորչող: Սյուների մոտ խարսխված էին նավակները, որոնցում անշարժ նստել էին լուռ պահակները, երբեմն խավարի մեջ փայլում էին նրանց աչքերի սպիտակուցները: Սյուների միջեւ հեռավոր լույս էր երեւում՝ այն ճառաքում էր լամպը, որը կախված էր քուղից, որ իջնում էր անտեսանելի բարձր առաստաղից փոքրիկ կղզյակի վրա, ջրից ելնող մթին դահլիճի կենտրոնում. դրա վրա թղթերով կիտված սեղան էր դրված: Սեղանի վրա սպիտակ հանդերձանքներով երկու կերպարանք էին հակվել: Ցանուտերը շշնջաց աստղագետին, որ դա թագավորն ու գերագույն

քուրմն է: Կլոր լամպն այնքան ցածր էր կախված, որ երբեմն տղամարդկանցից մեկը գլխով դիպչում էր դրան, այդժամ լամպն օրորվում էր, եւ դրա դանդաղ քարացող տատանումը ստիպում էր սյուների ստվերներին պար գալ՝ ընկած հարթության վրա, սեւ սարդոստայնի նման: Երբ մակույկը լողաց դեպի կղզյակը, արքան եւ գերագույն քուրմը ողջունեցին խորհրդականին եւ օտարականին: Նրանք հարցուփորձում էին նրան ինքնաթիռի վթարի եւ քաղաքի մասին, որտեղ նա ապրում էր: Գերագույն քուրմը հետաքրքրվում էր աստծով՝ նրա հարազատ քաղաքի հովանավորով. նա զարմացել էր այն բանից, որ ներկա ժամանակում քաղաքը ոչ մի աստված չունի, եւ մխիթարում էր աստղագետին՝ շուտով, իբր, ամեն ինչ դեպի լավը կփոխվի: Հետո թագավորը ներողություն խնդրեց աշխատանքով իր ծանրաբեռնվածության համար՝ երեկոյան հանդիսության նախապատրաստման հետ կապված եւ ասաց, որ նոր հանդիպման է սպասում, երբ նրանք կկարողանան ավելի երկար զրուցել: Գերագույն քուրմը նույնպես հրավիրեց աստղագետին իր նստավայր եւ նրան խոստացավ ցույց տալ գլխավոր տաճարը:

Այդժամ կիսամութ ռեստորանից ներս խուժեց քոքեր-սպանիելը՝ ծյան մեջ թաթախված, որը լամպերի լույսի տակ վարդագույն դարձավ, ասես ինչ-որ մեկը շանը սերուցքային ելակով էր զարդարել: Նա կանգ առավ շինության կենտրոնում եւ այնքան ուժեղ ինքն իրեն թափահարեց, որ ես զգացի խոնավ ծյունը դեմքիս: Նրա ետեւից մտավ սրածայր կնգուղով մի պատանի եւ կարճ կտրած մազերով ու կլոր ակնոցով մի ուսանողուհի՝ այդ երկուսը նստել էին մեզ հետ գարեջրատան նույն սեղանի մոտ, իսկ հետո մասնակցում էին Զենոնի վազքին: Աղջիկն ընդհատեց պատմությունն ու հարցրեց.

-Դե, ի՞նչ, ինչպե՞ս է այնտեղ էլեական ստադիոնի վիճակը:

Թեթեւ տրանսի արտահայտությունը, որը որքան ավելի շատ, այնքան նրան նետում էր իր պատմության մեջ, ակնթարթորեն անհետացավ աղջկա դեմքից:

-Մենք այդպես էլ չկարողացանք պարզել, թե Զենոնն ինչ նկատի ուներ,- ջանալով հանել ձեռքը բաճկոնի թեւքից, որում լռվել էին նրա հաստ սվիտերի ծալքերը, ասաց նա, բոլորը քարացան,- եւ մեծամասնությունը վերադարձավ գարեջրատուն: Իսկ մենք փորձեցինք պատկերել Աքիլեսին ու կրիային եւ հասանք այստեղ:

-Սարսափելի բան չկա,- մխիթարեց նրանց բացգույն մազերով աղջիկը,- անցած կիսամյակում ես զեկուցում ունեցա Պլատոնի «Պարմենիդես»

երկխոսության մասին. ուրեմն այնտեղ Սոկրատն ասում է Զենոնին, որ իր եւ Պարմենիդեսի խոսքերը հասու չեն մյուս մարդկանց բանականությանը: Զենոնն այնտեղ նույնիսկ պնդում է, որ ստեղծագործությունը, որտեղ նա շարադրում է իր ապորիաները, չարժե լուրջ ընդունել, քանի որ գրել է վաղ երիտասարդության տարիքում, ռազմատենչ անբարյացակամության մեջ, միասնական գոյի մասին ուսմունքի հակառակորդների դեմ: Նա նույնիսկ կարծես թե չէր ուզում այն հրապարակել, բայց ինչ-որ մեկն իրենից այդ ստեղծագործությունը գողացավ:

Ես մտածեցի՝ զարմանալի է, չէ՞ որ եթե հյուսիսային Իտալիայում չպատահեր այդ վաղեմի կողոպուտը, մենք այսօր չէինք վազի Անկյունային շուկայով, որպեսզի կենդանացնեինք սխեման, որը նկարել էր աֆրոսիադեսցի Ալեքսանդրն եգիպտական այգիներում, եւ ես չէի նստի այս կիսախավար սենյակում եւ չէի լսի պատմությունը ծովային քաղաքի մասին: Ես վախենում էի, որ պատանին ու աղջիկը կուզենան նստել մեզ մոտ եւ կրկին կսկսեն խոսել Զենոն Էլեացու մասին: Ես սիրում էի Զենոնին, ինձ դուր էր գալիս տարօրինակ գծային եւ միաուղղված լաբիրինթոսներ գտնելու նրա ունակությունը նույնիսկ ամենակարճ եւ, թվում էր՝ մեր ուղիների ամենապարզ հատվածներում. ես գնահատում էի միայն շողշողացող եւ զարմանալի գոյության հետ հանդիպում նախապատրաստելու այդ խաբեպատիր միջոցը, բայց հիմա ուզում էի լսել ծովային քաղաքի մասին պատմության վերջը: Բարեբախտաբար, աղջկա համակուրսեցիները նստեցին հաջորդ հատվածախցում, որտեղ նրանք չէին երեւում: Ծունը պառկեց, գլուխը դրեց հատակին ու աչքերը փակեց:

-Երեկոյան, տոնախմբությունից առաջ աստղագետը հանգստանում էր իր սենյակում թագավորական խորհրդականի տանը,- շարունակում էր պատմությունն աղջիկը, եւ նրա ձայնի մեջ դարձյալ լսվում էին միեւնույն հանգիստն ու միապաղաղությունը, որ հնչում էին նախկինում:- Նա պառկած էր անկողնում եւ ոչնչի մասին չէր մտածում, նա գիտակցությանը թույլատրեց վերականգնել պատկերները, որ տեսել էր ինքն այդ օրը եւ որոնք միախառնվել էին Պրահայում անցկացրած վերջին օրերի պատկերներին: Դանդաղ մթնում էր, մթնշաղային սենյակի պատին արտացոլվում էին լույսի արտացոլքերը ծովային հարթությունից: Հետո նա դռան թակոց լսեց, եւ սենյակ լողաց նրա տանտերը՝ տոնի գնալու ժամն էր: Նրաք լողում էին ծովալճակով, որի վրա օրորվում էին տոնական հրավառությամբ նավերը: Թագավորական պալատի սյուներին, դեպի տաճար տանող կողմից, ծանր շղթաներով ամրացված էր լողացող ամբիոնը, որի աստիճանների վրա նս-

տած էին ոսկե զարդերով պճնված սպիտակ վերնաշապիկներով տղամարդիկ եւ կանայք, մեջտեղում իրենց տեղերն էին գրավել թագավորն ու գերագույն քուրմը: Դեպի խորհրդականն ու աստղագետը լողաց կարգադրիչը եւ ուղեկցում էր նրանց իրենց հատկացված տեղերը: Բոլորը նայում էին տաճարի հավասար, սպիտակ ճակատամասին: Ամբիոնի եւ տաճարի միջեւ ընկած ծովային հարթությունը միակ տեղն էր, որտեղ նավ չէր կարող լողալ, այդ վայրում լողում էին սպիտակ լողազգեստներով տասներկու պարմանուհի, դրանցից յուրաքանչյուրը ձեռքերի մեջ ինչ-որ փակ տարա էր կրում: Իսկ աստղագետը նստած էր թագավորից ոչ հեռու, նա նկատեց, որ թագավորի առաջ սեղանին դրված է մեդուզայի ռելիեֆային պատկերը՝ բազում կծկված եւ միահյուսված շոշափելիքներով: Ռելիեֆի ետնամասից ջրի տակ էին ձգվում ինչ-որ պարաններ:

Լսվեց շեփորների ձայնն ու ամեն ինչ լռեց: Աստղագետը տեսավ, թե ինչպես թագավորը դիպավ շոշափելիքներից մեկին. հանկարծ ծովից երեւաց բարձրադիր մետաղական ոտքի վրա մի լապտեր եւ վեր բարձրացավ, շուտով դրանում կապույտ լույս վառվեց, որի շողերն ընկնում էին տաճարի ճակատամասի վրա: Լարված լռության մեջ լսելի էր լոկ ջրի ճողփյունը: Թագավորը ռելիեֆը հանձնեց քահանայապետին, եւ նա սկսեց սեղմել զանազան շոշափելիքների ծայրերին: Երբ նա դիպչում էր շոշափելիքին, ամբիոնի եւ տաճարի միջեւ ընկած ծովային խորքերից դուրս էր լողում որոշակի տեղում բարալիկ քարե սյան խոյակը. դրանից կախվում էին ջրիմուռների երկար փնջերը, որոնցից ջուր էր հոսում: Աղջիկը, որ ամենից մոտն էր գտնվում հերթական խոյակին, արագ լողում եւ մագլցում էր դրա վրա. քանի դեռ սյունը բարձրանում էր, նա այն մաքրում էր ջրիմուռներից ու խխունջներից, իսկ հետո բացում էր սափորի կափարիչը եւ խոյակը ցողում սեւ հեղուկով: Սովորաբար աղջիկները հասցնում էին ավարտել իրենց աշխատանքը միայն այն ժամանակ, երբ ծայրը ուրվագծում էր համարյա ողջ աղեղը, որով բարձրանում էր, եւ համարյա դիպչում էր տաճարի պատին: Դա բավական վտանգավոր էր՝ աղջիկներին կարող էր ծեփել պատին, բայց նրանցից յուրաքանչյուրին հաջողվում էր նետվել ծովը: Ուժեղ հարված էր լսվում՝ խոյակը խփվում էր տաճարի պատին, եւ տեղնուտեղը ճողփյուն էր լսվում՝ աղջիկն ընկնում էր ջուրը: Խոյակը նորից պոկվում էր պատից, եւ սյունը ետ դեպի ծովն էր վերադառնում: Պատի վրա սեւ դրոշմ էր մնում՝ գալարվող գծի տեսքով անհասկանալի նշան: Սեւ սիմվոլներն այնքան բարդ էին, որ աստղագետին անհնարին էր թվում դրանք միմյանցից տարբերելը: Այսպես հետզհետե տաճարի ճակատա-

մասի վրա ծնվում էր տեքստը, եւ շուտով այդ անպարզ հաղորդագրությունը գրավել էր արդեն ողջ պատը: Թագավորի խորհրդականը կռացավ դեպի աստղագետն ու նրան շշնջաց, որ տեքստը ծածկագրով է գրված, որից գլուխ են հանում միայն թագավորը, գերագույն քուրմն ու աստվածուհին: նա ասաց, որ գրությունը մուսսոնների ժամանակ անծրեւները կջնջեն եւ, մինչեւ որ վրա հասնի նոր տոնի ժամանակը, պատը դարձյալ մաքուր կլինի: Աստղագետը հարցրեց՝ ինչի մասին է այդ տեքստը, բայց թագավորի խորհրդականն ասաց, որ մարդիկ միայն կարող են գլխի ընկնել դրա մասին. ոմանք ասում են, որ դա հայտնութենական երգ է առ այն, թե ինչպես մի առավոտ հորիզոնում կերեւան սեւ քարե ամպերը, որ տանում են վիթխարի ոսկե անդրիները հրեշտակների՝ վեր պարզած թրերով, որ կուրացուցիչ շողում են արեւի տակ. մյուսները համարում են, որ այդ տեքստը վաղնջական ներբող է մոռացված հին աստվածությանը, որն ապրում է ծովի հատակին՝ ստորրջրյա լեռների ստորոտներին եւ հասուն մարդու չափի ահագին ծովապուտի տեսք ունի:

Երբ բոլոր սյուներն իջան ծովային հարթության տակ եւ կապույտ լապտերը մարեց եւ նույնպես թաղվեց ջրի մեջ, աղջիկները լողալով հեռացան: Գերագույն քուրմը իջավ ծովի ափ, նստեց պատրաստված նավի մեջ եւ ուղեւորվեց դեպի դատարկ ծովալճակի կենտրոնը: Վրա հասած լռության մեջ լսելի էր լոկ ջրի մեջ թաղվող թիակների ճողփյունը, իսկ երբեմն՝ ոսկե զարդերի զրնգոցը: Ծովային խորքերում մանուշկագույն լույս վառվեց, որն անընդմեջ սաստկանում էր, հետո ջրի միջից դուրս լողացին երիտասարդ աղջկա գլուխը եւ ուսերը: Աղջիկը բռնեց նավակի ծայրից. նրա վրա ծալքավոր գորշավարդագույն զգեստ էր, որը տարուբերում էր ջուրը, նրա մանյակն ու ապարանջանները երկու ձեռքերի վրա մանուշակագույն շողանք էին տարածում: Քուրմը ծնկի իջավ եւ նրան փոքրիկ մի տուփ մեկնեց՝ զարդարված թանկարժեք քարերով: Աստղագետը շշնջոցով հարցրեց խորհրդականին՝ արդյոք՞ դա աստվածուհի չէ: Նա գլխով արեց եւ մատը դրեց շուրթերին: Քուրմն ու աստվածուհին մոտ քառորդ ժամ զրուցում էին, հետո աղջիկն անհետացավ ջրի տակ. մանուշակագույն լույսն ավելի ու ավելի աղոտանում էր, մինչեւ որ լրիվ կորավ խորքում: Սկսվեց համատարած հրճվանքը, եւ երաժշտություն հնչեց, տոնը տարածվեց ծովալճակով եւ ծովային փողոցներով մեկ: Երբ աստղագետը պառկում էր քնելու իր անկողնում, պատուհանի տակ դեռ երաժշտության ու բերկրալի ձայներ էին հնչում:

Գրողը ողջ գիշեր աշխատում էր: Երբ նա նկարագրում էր տոնակատա-

ությունը, արդեն սկսում էր լուսանալ եւ լամպի կապույտ կրակը համարյա կորել էր պաղ առավոտյան լույսի մեջ: Նա բաց թողեց կարգավորիչի կողպեքը, թույլ տվեց լամպին վերադառնալ իր տեղը եւ գրամեքենայից հանեց էջը: Գրողը հայացք նետեց պատուհանին՝ ժանգոտած ավտոտնակների շարքին, որոնք կեցած էին բլրի ստորոտին՝ ամայի փողոցի մյուս կողմում: Ինչ-որ թռչուն գնում-գալիս էր պատուհանի տակ, մեկ ինչ-որ բան էր ճչում, մեկ էլ լռում էր: Գրողը աթոռից ելավ, ատամները մաքրեց եւ անկողին մտավ: Նա արթնացավ կեսօրից հետո, փակ աչքերով պառկած, խորհրդածեց խաղողի այգում մորավիացի քեռու հետ ճարտարագետի խոսակցության մասին եւ հանկարծ հիշեց, որ երեկ նոր աշխարհ էր մտել եւ սկսել նոր գիրք գրել: Նա սառնարանից հանեց կարագը, իր համար բուտերբրոդ սարքեց եւ թունդ սուրճ սարքեց: Մինչեւ երեկո նա քայլում էր սենյակում, ի վիճակի չլինելով որեւէ բանի վրա կենտրոնանալ՝ չէր կարողանում սպասել մթությանը, երբ նա կրկին կկարողանա սեղմել ստեղնը, որ բարձրացնում էր կապույտ լապտերիկը, եւ շարունակել ջրային վեպը: Մի քանի անգամ նա նստում էր գրամեքենայի մոտ եւ ուզում էր գրել ցերեկային լույսի ներքո, բայց վախենում էր, որ ընտել լուսավորության տակ էջին նայելիս նա կդադարի ընկալել դատարկության ներգործությունը, որին հանդիպել էր երեկ՝ առաջին անգամ մանկությունից հետո, եւ դարձյալ տրվում էր թուղթը օտար, նախօրոք պատրաստած բառերով լցնելու գայթակղությանը: Եւ նա սպասեց երեկոյին եւ մեկեն, հենց որ արեւը թաքնվեց ծառերի ետեւում, նստեց գրամեքենայի մոտ, վառեց կապույտ լույսը եւ մատները դրեց ստեղների վրա:

Աստղագետը պառկել էր անկողնում եւ չէր կարողանում քնել: Նա նայում էր խավարին եւ լսում ծովալճակում ավարտվող տոնի վերջին արձագանքներն ու ջրի կամացուկ ճողփյունը սենյակի պատերի մոտ: Հանկարծ նա տեսավ, որ մոտակայքում, գրապահարանի խորքից ելնում է մանուշակագույն լույսը: Լույսն ավելի ու ավելի էր պայծառանում. նրան համակեց վախը, նա նստեց մահճակալի վրա եւ նայում էր շողշողացող ջրի հարթությանը սենյակի անկյունում: Ջրից դուրս պրծավ աղջկա գլուխը եւ շողացող մանյակը, գորգի վրա ընկան երկու փայլկտող ապարանջաններով ձեռքերը: Գորշավարդագույն զգեստով աղջիկը թեթեւորեն թռավ սենյակի ափ, բոկոտն կամացուկ անցավ գորգի վրայով եւ նստեց անկողնու ծայրին:

Նա ժպտաց նրան: «Քուրմը հաղորդեց ինձ, որ քաղաքում Պրահայից արտասահմանցի է հայտնվել,- ասաց նա եւ տեսնելով, որ աստղագետը

վախեցած է նրա այցից, հանգստացրեց նրան.- Պետք չէ վախենալ, ես եկել եմ քեզ հետ զրուցելու: Մինչեւ աստվածուհի դառնալը ես էլ Պրահայում էի ապրում, հաճախ եմ մտածում նրա մասին եւ շատ կարոտում եմ: Երբ ես լողում եմ իմ պալատի սենյակներով ծովի հատակին, շողշողացող մեդուզան կամ սիպեն երբեմն ինձ հիշեցնում են քաղաքի կրակները պատուհանի ետեւում՝ լուսարձակները դատարկ գիշերային խաչմերուկում, թարթող կրակները անցումներում, ավտոմեքենաների լապտերիկները մայթի վրա: Ես փակում եմ աչքերս եւ պատկերացնում եմ, որ կրկին զբոսնում եմ Պրահայում: Ես մտածում եմ տեղերի մասին, որոնք սիրում էի՝ Գլուբոչենում բարձր քարե ուղեկամուրջների մասին, Նոյյայի մեծ ներքնաբակերի մասին, որոնց մի կողմը կազմում է երկաթուղային հողաթումբը՝ փոշոտ մացառուտով պատված, դատարկված զբոսայգիների մասին, տրամվայի վերջնականգառների կրպակների մասին, սմիխովյան եւ ռադլիցկյյան խոտածածկ սանդուղքների մասին, ընդարձակ կայարանային սրահների մասին»:

Նրանք երկար խոսում էին Պրահայի մասին. նա ապշում էր այն բանից, թե ինչպես աստվածուհու փոփոխված հիշողությունը պահպանել էր քաղաքի բոլոր մանրամասները՝ մակագրություններն ու կավճով արված բոլոր գրությունները պատերի վրա, նախշերի կորանքները տների վրա, սալահատակի գետաքարերի ուվագծերը: Նա նայում էր նրան եւ լսում էր նրա ձայնը. նա քսանամյա աղջկա տեսք ուներ եւ խոսում էր բնական ու աշխույժ, ասես ուսանողուհի լիներ, որը բլբլում է ընկերոջ հետ սրճարանում, միաժամանակ նրա ձայնի մեջ ինչ-որ առանձնահատուկ պայծառություն էր զգում, ասես թե բառերը ծնվում էին հնչյունների ինչ-որ մաքուր աղբյուրում, բայց նրա ձայնի մեջ լսվում էին մթին ծովային խորքերի տոնայնությունները: «Մի բարկացիր,- ասաց նա,- բայց ինչպե՞ս է հնարավոր մահկանացու մարդուց վերածվել աստվածուհու»: «Դա կարող է պատահել յուրաքանչյուրի հետ, ով սահմանը կանցնի,- բացատրեց նա:- Իրականում ամեն մարդ մոտ է այդպիսի փոփոխության, սակայն նրանք, որ նկատում են սահմանը, շատ քիչ են, թեպետ եւ այն գտնվում է երկար ձեռքի հեռավորության վրա, իսկ նրանք, որ խիզախում են անցնել այն, ավելի քիչ են: Դուռն ու խորհրդավոր սենյակը փակ չեն, այն լոկ լցված է գործիքներով ու նկարներով, հնոտիով, որ բոլորը քարշ են տալիս իրենց ետեւից. մարդիկ վախենում են այն դեն նետել, գլխի ընկնելով, որ դրանց պատկերը կցրվի ոսկե հոսքում եւ իրենց անունը կխառնվի նախնական աղմուկին: Սովորաբար դրան պիտի օգնի դիպվածն անդինի աշխարհից: Ես գիտակցեցի, որ

մոտիկ այլ աշխարհ կա, երբ մի անգամ Լիբենի գործարանային պահեստում տեսա ծռմռված մետաղական լարերից ժանգոտ մի կառուցվածք. դա առավոտյան ժամը յոթին էր, շոգ օրվա ամենասկզբում, մետաղական կառուցվածքն անսպասելի հառնեց իմ առջեւ, ինչպես տիեզերքի գաղտնիքները բացահայտող հիերոգլիֆը տեքստում: Զարմանքով ես հիշեցի, որ այդ հիերոգլիֆն ինձ ծանոթ է դեռեւս այն ժամանակներից, երբ ես այստեղ չէի ապրում, այլ ինչ-որ մոռացված հայրենիքում, եւ ես, ասես քնից արթնանալով, մտա բաց դռնից»:

Նա հարցրեց նրան, թե ընդամենը քանի աստված գոյություն ունի:

«Երկրի երեսին մենք տասնյոթն ենք,- ասաց նա,- իսկ Տիեզերքում՝ ութսունինը: Մեզնից ոմանք գնացին տիեզերք եւ թափառում են աստղեաստղ. երբեմն պատահում է, որ Երկիր է իջնում ինչ-որ այլ գալակտիկայից աստված եւ պատմում է թանկարժեք քարերից աստղերի մասին, եւ որոնց վրա ցոլցլում են բազմագույն արեւները, եւ աստղերի մասին, որոնց հիասքանչ բնակիչները ապրում են հրի մեջ, որը հուրհրատում է աստղի ողջ մակերեւույթով մեկ, մոլորակների մասին, որ ծածկված են ջունգլիներով, սպիտակ ապարանքի լաբիրինթոսների մասին, որ կառուցել է մելամաղձոտ ու վայրի ազնվական ցեղը գիսաստղի վրա, որ սլանում է Տիեզերքով: Կարծում եմ, որ երբեւէ ես էլ կգնամ Տիեզերք, ես կուզենայի ճանաչել բոլոր աստղերը եւ ասուպները, որոնց մասին ինձ պատմում էին, բայց դրա համար դեռ ժամանակ կա, ես շատ ժամանակ ունեմ...»:

«Իսկ աստվա՞ծը, որ իշխում էր այստեղ մինչեւ քո գալը: Ես ինչ-որ բան եմ լսել սեւ կետածկան մասին:

«Դա սոսկ դեւ էր, թեպետ եւ զորեղ, մարդիկ դրանից շատ գլուխ չեն հանում: Դեւերը շատ են, դրանք շատ ավելին են, քան աստվածները: Դրանցից ոմանք մարդկանց, կենդանիների կամ իրերի կերպարանք են առնում: Երբ ես լքում էի Պրահան, այնտեղ երեք դեւեր էին ապրում, որ իրերի տեսք ունեին: Դա Կրժիժիկովյան փողոցի վրայի աղբատուփն էր, Յան Գուսի հուշարձանը եւ Ազգային թատրոնը: Իմ կերպարանափոխությունից հետո ես ընկերացա Գուսի հուշարձանի հետ: Դա դեւ է քնքուշ ու երկչոտ հոգով, որը տրվում է մեղմ երազների Ստարոմեստյան հրապարակի վրա եւ հիշում աստղերի մասին, որոնց վրա նա ապրել է նախկինում: Այն ժամանակ այդ էակն ինձ ամենամոտն էր, իմ միակ ընկերն էր: Ես նրան շատ եմ կարոտում եւ սպասում եմ, որ նա կայցելի ինձ իմ ստորջրյա ապարանքում եւ փոքր-ինչ կհյուրընկալվի այստեղ»:

Աստղագետը զարմացավ՝ ինչպես կարող է հուշարձանը հայտնվել ծո-

վում. աստվածուհին պատասխանեց, որ դեւերը կարողանում են բավական արագ տեղաշարժվել ցանկացած կերպարանքով, բայց չեն սիրում շարժվել եւ այդ պատճառով կանգնում են տեղում:

«Գուսի հուշարձանից մի շաբաթ կպահանջվեր, որպեսզի վազեր մինչեւ Պորտուգալիա,- հաշվարկում էր նա,- իսկ հետո եւս երկու շաբաթ նա կհասներ ինձ ծովային հատակով՝ չէ՞ որ ջրի տակ ավելի դանդաղ ես շարժվում»:

Աստղագետին տարօրինակ թվաց, որ Պրահայի դեւերը որպես պատյան ընտրել էին իրերը, որոնք մարդիկ էին սարքել:

«Դեւերը սիրում են բուն դնել առարկաների, շինությունների կամ արվեստի ստեղծագործությունների մեջ,- բացատրում էր աստվածուհին:- Նրանք ուղղորդում են վարպետի կամ արվեստագետի ձեռքը եւ այդպիսով իրենք են ստեղծում մարմինը, որը նրանց ձեռք է տալիս: Այդպիսի մարմինը սովորաբար նման է իսկական կերպարանքի: Իմ ընկեր դեւը, որ հիմա դարձել է Գուսի հուշարձանը, երկար հարյուրամյակներ մեծ մեդուզա էր, ապրում էր այդպես հարյուր հազար տարի Տիեզերքի հեռավոր մոլորակի վրա, լիովին ծածկված սառած օվկիանոսով, որի մակերեսին չէր ելնում եւ ոչ մի մայր ցամաք, եւ ոչ մի կղզի: Դեւը միակ բնակիչն էր այդ մոլորակի, նա լողում էր պաղ օվկիանոսի սառույցի տակ, ասես գնդակների հետ, խաղում էր հատակի քարերով եւ երկար պատմություններ էր մոգոնում հորինած ընկերների եւ ընտանիքի մասին. միայն կարճատեւ ամռան ընթացքում, որը վրա էր հասնում հարյուր տարին մեկ, պատահում էր, որ սառչած օվկիանոսը ինչ-որ տեղերում հալչում էր՝ այդժամ դեւը դուրս էր լողում դրանց միջով, պառկում էր սառույցի վրա եւ նայում կապույտ արեւով լուսավորված անծայրածիր հարթավայրին: Ահա թե ինչու հուշարձանի հարթ պատվանդանը մեդուզայի վերնամաս է հիշեցնում, իսկ ուղղահայաց կերպարանքները՝ նրա շոշափելիքները: Երբեմն պատահում է, որ դեւերը չեն կարողանում ընտելանալ նոր մարմնին եւ փորձում են նախկին կերպարանքը ստանալ: Լիովին հնարավոր է, որ հուշարձանը Գուսին գիշերները վերածում է նույնպիսի գալարվող շոշափելիքներով մեծ ուսանողական մեդուզայի, որ պառկած է Ստարոմեստյան հրապարակի վրա»:

Աստղագետը հարցուփորձում էր նրան իր կյանքի մասին մինչեւ այն պահը, երբ նա աստվածուհի էր դարձել: Պարզվեց, որ նա իրենից երկու տարով փոքր է եւ մինչեւ իր կերպարանափոխությունը ապրել է Պրահայում: Նա լսել էր նրա հոր մասին, որը բավական հայտնի մարքսիստ փիլիսոփա էր: Երբ աստվածուհին դեռ մահկանացու աղջիկ էր, նա եւ աստղա-

գետը հաճախում էին Հին քաղաքի միեւնույն գարեջրատները՝ ճիշտ նույնպես, ինչպես եւ նա, աղջիկը սիրում էր «Կոլումբիա» սրճարանը Հին քաղաքի կամարասրահում եւ «Կանաչ լորենու մոտ»-ը Մելատրիխովյան փողոցի վրա, նրանք այցելում էի միեւնույն համերգներն ու ցուցահանդեսները: Նրանք նույնիսկ ընդհանուր ընկերներ ունեին, դա դեռ քիչ է, մի ինչ-որ ընթացք աստղագետը հանդիպում էր նրա զարմուհու հետ: Աղջիկն աստվածուհի էր դարձել 1974 թվականին, այն ժամանակ, երբ սովորում էր իրավաբանական ֆակուլտետում: Նա նրան հարցրեց՝ արդյո՞ք միանգամից նա լքեց Պրահան այն բանից հետո, երբ փոխվեց:

«Ոչ, ես դեռ որոշ ժամանակ ապրում էի իմ սենյակում, ծնողներիս բնակարանում,- պատասխանեց նա,- բայց դա տանջալի էր եւ բոլորին տառապանք էր պատճառում: Ես չեմ սիրում հիշել այդ ժամանակը: Ես այն ժամանակ մի տղայի էի հանդիպում, երբ ես փոխվեցի, չէի կամենում մեկից նրան ասել այդ մասին, բայց նա ինքն այդ հասկացավ: Մենք զբոսնում էինք Լգոտկայում, քայլում էինք ցանկապատերի երկայնքով, որոնց ետեւում այգիներ էին աճում, ծառերից թափվում էին առաջին խունացած տերեւները: Մենք երկար լռում էինք, հետո նա շրջվեց դեպի ինձ եւ ձայնի մեջ անձկությամբ ասաց, որ գլխի է ընկնում ինձ հետ տեղի ունեցածի մասին: Երկուսիս համար էլ ծանր էր. ես զգում էի՝ ինչպես է նրա սերը իմ մեջ փնտրում թուլացող արձագանքները մարդկային էության եւ ինչպես էին դրա ալիքները, մարդուն չգտնելով, հուսահատ եւ խառնիխուռն դեսուդեն նետվում խավարի եւ դատակության մեջ: Նրա համար դա կրկնակի ծանր էր, որովհետեւ նա կաթոլիկ էր: Եւ ծնողների հետ էլ հեշտ չէր: Նրանք չգիտեին, թե ինչպես վարվեին ինձ հետ, եւ երբ մենք ընթրիքի էինք նստում, սենյակում տանջալի լռություն էր տիրում, որ խախտվում էր լոկ սպասքի պարագաների ափսեներին դիպչելով: Հենց կեսգիշերին ես գնում էի տնից, եւ մայրս, ըստ սովորության՝ հարցնում էր, թե ուր եմ ես պատրաստվում գնալ, բայց կես խոսքից կարկամում էր եւ արագ թաքնվում խոհանոցում: Ընդ որում՝ հայրս այն ժամանակ փիլիսոփայության ինստիտուտի տեղակալն էր եւ աշխատում էր «Մատերիալիզմ եւ էմպիրիոկրիտիցիզմ»-ի նոր թարգմանության վրա, երեւում էր, թե ինչպես է նա վախենում, որ բոլորը կիմանան ինձ հետ պատահածի մասին»:

Նա փոքր-ինչ տխրեց եւ մտորմունքի մեջ ընկավ, ինչ-որ մի ընթացք սենյակում լուռ էր, նույնիսկ ծովալճակից ձայներ չէին հասնում: Ծուտով աստվածուհին գլուխը բարձրացրեց, նայեց աստղագետին եւ կրկին ժպտաց: Նրա ձեռքը բռնեց ու ասաց.

«Գնանք, ես քեզ ինչ-որ բան ցույց կտամ»:

Նա ելավ անկողնու վրայից եւ թույլատրեց իրեն տանել մինչեւ մթին ծովային հարթությունը սենյակի անկյունում: Աստվածուհին անհետացավ ջրի տակ. հետո գորգի ծայրին դարձյալ հայտնվեց նրա դեմքը: Նա հարցրեց.

«Դե, ո՞ւր ես դու: Մի վախեցիր եւ արի իմ ետեւից»:

«Դու մոռացել ես, որ ես չեմ կարող քայլել ջրի տակ, ինչպես դու»,- առարկեց նա:

«Մի անհանգստացիր, եթե դու ինձ հետ լինես, քեզ հետ ոչինչ չի պատահի: Թեեւ աստվածները եւ ամենազոր չեն, նրանց ուժը չի պատի, օրինակ, կանգնեցնել Տիեզերքի անընդհատական ահագնացումը կամ խախտել վեճի օրենքի գործողությունը, բայց սրանք մեզ համար դատարկ բաներ են»:

Եւ այդժամ նա գիշերանոցով գնաց ջրի տակ: Աստվածուհին կրկին բռնեց նրա ձեռքը, նրանք միասին լողացին բուստախութերի միջով, որ հենք էին ծառայում տների եւ պալատների հիմքերի համար, որոնց վերնահարկերը բարձրանում էին հարթության վրա. խորքերի մթության վրա լուսավորվում էին մանյակներն ու ապարանջանները, դրանց դալուկ շողանքում ջղաձիգ լողում էին վառվռուն ձկները, դողում էին մեդուզաներն ու տարուբերվում ծովապուտերի շոշափելիքները: Հետո նա հեռվում տեսավ անկարգ ծածանվող ջրիմուռների միջեւ անհաստատ լույսը: Երբ նրանք ավելի մոտ լողացին, պարզվեց, որ լույսը ելնում է առաջին հարկի պատուհաններից մի տարօրինակ շինության, որ կանգնած էր ծովի հատակին՝ խորը ջրի տակ: Դա մի մռայլ աղյուսե տուն էր, անցած դարի կեղծ պատմական ոճով, որպիսին կարելի է տեսնել Պրահայում Ժիժկովի վրա, Միխլյայում եւ Սմիխովի վրա, սակայն այդ շինությունը կառուցված էր տարբեր չափսերի եւ երանգների մարգարիտներից: Աստղագետը զարմանքով նայում էր քիվերին, կեղծ ռենեսանսյան ուռուցիկ նախշերին, օշինդրով պատշգամբային թաղարներին պատուհաններից անդին եւ գազի ջեռուցման խողովակներին, որ կազմված էին մարգարիտներից: Պատուհաններն ապակիներ չունեին, եւ դրանցից մեկով նա ներս լողաց առաջին հարկի սենյակներից մեկը: Այդ սենյակի պատերը եւ ողջ կահավորանքը նույնպես մարգարտից էր՝ նա լողում էր երկարավուն մարգարտյա, երկար մարգարտյա ոտքերով սեղանիկների վրայով, բարի մարգարտյա կանգնակի վրայով, մարգարտյա կեսլիտրանոց գարեջրի թերխմված գավերով, որոնց մեջ բնավորվել էին փոքրիկ ծովախեցգետինները, եւ լվացարանով, որի հատակը միաց-

նում էր ծորակին ջրի բարալիկ մարգարտյա շիթը: Որոշ ժամանակ նա զարմացած զննում էր գարեջրի ծորակի կողքի տափակ առարկաները, որոնք նույնպես մարգարիտներից էին սարքված, իսկ հետո հանկարծ հասկացավ, թե ինչ են պատկերում տարօրինակ մարգարտյա քանդակները՝ դրանք տարբեր աղցաններով ուտեստներ էին: Հիմա, երբ նա ուներ այդ ձեւերի բանալին, նա նույնիսկ կարող էր տարբերել կարտոֆիլի աղցանը ձկնաաղցանից եւ վինեգրետից: Մարգարտյա աղցանների կողքին նա հայտնաբերեց ծովատառեխի ռուլետների եւ բուտերբրոդների ընդօրինակությունները եփած ձկների կտորներով եւ երշիկի փաթաթված օղակներով, հոգածո արված մանրիկ մարգարիտներից: Հետո նա բարձրացրեց գլուխն ու տեսավ, որ դժգույն լույսը, որ ընկել է աղցանների եւ բուտերբրոդների մարգարտյա մակերեսի վրա, սերում է շողշողացող մեդուզաների վտառից, որոնք բաբախում էին շինության առաստաղի մոտ, ինչպես կենդանի լամպեր: Ակրատների մարգարտյա կաղապարվածքների վրա լողում էին խայտաբղետ ձկները եւ երբեմն հանգստանում էին դրանցից ոմանց վրա: Այն, ինչ նա տեսնում էր իր շուրջը, աղոտ նրան ծանոթ էր, նա ասես հայտնվել էր քնից փոխված ծանոթ սենյակում: Նա շուրջբոլորն էր նայում, ջանալով լուծել առեղծվածը:

«Դու հասկացա՞ր՝ որտեղ ենք մենք»,- հարցրեց աստվածուհին ժպտալով:

Աստղագետը նայում էր մարգարտյա գարեջրատանը, աղցաններին ու գավերին, որոնց մարգարիտների մեջ արտացոլվում էին մեդուզաների անհանգիստ լույսը եւ աստվածուհու զարդարանքների վսեմ շողանքը, եւ հանկարծ հիշեց: Նա հմայված հոգոց հանց. «Խորտկարանը Օտակարովյան եւ Բելգրադյան փողոցների անկյունում՝ Նուսլյայում»:

Աստվածուհին ուրախացավ, որ նա ճանաչեց այդ վայրը: Նա ասաց, որ սովորել է մոտակայքի միջնակարգ դպրոցում եւ որ դասերից հետո ընկերուհիների հետ հաճախ էր այնտեղ ճաշում. կանգնած սեղանիկի մոտ գարեջրի փոքրիկ գավաթով՝ բարձր դասարանցիները վիճում էին այն ժամանակվա փիլիսոփաների մասին: Երբ նա մի անգամ կարոտ քաշեց իր ստորջրյա ապարանքում, նա մտադրվեց բուստախութերից, խեցիներից ու մարգարիտներից Պրահայի անկյուններից ինչ-որ մեկը կառուցել, որը նա սիրում էր: Սկզբում նա տատանվում էր երկաթուղային կամրջի, Բոգդալցի կամ սմիխովյան կայարանի միջեւ, բայց հետո հիշեց Նուսլյայի սրճարանի մասին: Կատարյալ հիշողության շնորհիվ, որը նա ձեռք էր բերել կերպարանափոխությունից հետո, նրան հաջողվեց նրբագույն ընդօրինա-

կություն անել՝ հենց այդպիսի տեսք ուներ հաստատությունը 1972 թվականի մայիսի քսանի առավոտյան տասնմեկին, երբ նա այն տեսավ վերջին անգամ: Աստղագետն ասաց աստվածուհուն, որ ինքն էլ լավ գիտի այդ սրճարանը, որովհետեւ հաճախում էր այնտեղ նույն ընթացքում, ինչ որ եւ նա՝ հնարավոր է, որ այնտեղ նրանք կողք կողքի էին կանգնում, ինչպես հիմա մարգարտային ստորջրյա ընդօրինակության մեջ: Նա ուզում էր զննել մարգարտային տունը դրսից, եւ այդ պատճառով դուրս լողաց պատուհանից եւ սկսեց բարձրանալ ճակատամասի երկայնքով. նա ձեռքերով շոշափում էր մարգարտային նախշերն ու մարգարտային խորդենու տերեւները: Մարգարտային եզրաշերտով մեկ տարածվել էր մանուշակագույն շողանքը՝ նրա ետեւից լողալով եկել էր աստվածուհին, նա վերցրեց նրա ձեռքն ու ուղեւորվեց դեպի ջրիմուռների մոտակա մացառուտները: Տարուբերվող ջրիմուռների միջեւ փայլկտաց մեղմ լույսը, որ արթնացրել էին սադափով զարդերը:

«Կներես, այստեղ ամեն ինչ մոլախոտերով է պատվել»,- ներողություն խնդրեց աստվածուհին:

Ջրիմուռների մեջ կանգնել էր մարգարիտներով տրամվայը, նրանք լողալով անցան երկու վագոնների միջով՝ դատարկ նստատեղերի շարքերի երկայնքով: Աստղագետը նստեց վարորդի տեղը, բռնեց մարգարտյա բռնակից եւ նայում էր իր առջեւի խավարին: Եթե աստվածուհին սարքած չլիներ մի ամբողջ ստորջրյա Պրահա, մտածեց նա, ապա այժմ իր առջեւ կլինեին Բոտիչով անցնող կամուրջը, ցածրիկ ուղեկամուրջը եւ փոքր-ինչ հեռու՝ Նուսելյան սանդուղքը: Որոշ ժամանակ նրան թվում էր, թե տրամվայը պատրաստ է ուղեւորվել առ խավար, որ ինքն այն կանի մարգարտյա պատերի երկայնքով, շողշողուն մեդուզաների լույսից, որ ճանապարհի վերջում կհանգստանան Պետրշինայի վրայի մարգարտյա սանդուղքի տակ կամ կսավառնեն Սուրբ Վիտայի մարգարտյա տաճարի կամարների տակ: Սակայն տրամվայը չէր շարժվում: Աստվածուհին ձեռքը դրեց նրա ուսին:

«Ես ստիպված եմ այստեղ քաղհանել,- ասաց նա,- որ ավելի լուսավոր դարձնեմ, որպեսզի տրամվայը երեւա սրճարանի պատուհաններից»:

Հետո նրանք վերադարձան տուն, կանգնեցին դեպի մարգարտյա սեղանիկը, որի վրայով անվստահ առաջ էր գնում փոքրիկ խեցգետինը, եւ սկսեցին զրուցել Նուսլյայի եւ Պրահայի մասին: Աստվածուհին հպարտ է իր կառույցից եւ աստղագետին խոստովանեց, որ դա դեռ ամբողջը չէ:

«Ես կուզենայի տներ կառուցել Օտակարյան փողոցի հակադիր կողմե-

րում եւ ստեղծել Բոտիչ վտակն իր երկու ափերով: Ես չեմ համբերում կառուցել հիասքանչ մի ֆաբրիկա գետի մյուս ափին, դրա դյութիչ պատուհանները ջարդված ապակիներով, խոտածածկ բակը եւ աղյուսե խողովակը: Գուցե թե, ես կսարքեմ նաեւ երկաթուղային կայարանի հողաթումբը՝ մացառուտներով պատված, իսկ ռելսերի վրա՝ վագոնաքարշով եւ վագոն-ռեստորանով գնացքը, որտեղ սեղանիկի վրա դրված կլինի մի գավաթ սուրճը, իսկ նստատեղի վրա՝ ընկած կլինեն թերթերը՝ բացված եւ միջանցահովիկից կծկված: Բայց հետո ես կկամենայի ճամփա ընկնել տիեզերք, ես կուզենայի տեսնել բոլոր հրաշքները, որի մասին խոսում էին օտար աստվածները՝ թափանցիկ աստղերն ու դողդոջուն աստղերը դոնդողից, մետաղական համաստեղությունները, որոնց աստղերը միավորված են կամուրջներով, շրջանակված հուրհրատող ջահերով վիթխարի քանդակներով. ես կուզենայի լողալ շողշողացող բազմագույն մրրիկներով, որոնցից միլիոնավոր տարիներ հետո նոր գալակտիկա կծնվի, հայել մենության մեջ մարմարյա աստղի հարթ մակերեսի վրա: Գուցե թե, ինձ կհաջողվի տարալուծել այնտեղ սեփական գիտակցության պաղած բյուրեղները եւ հալչել տիեզերքի շնչառության ռիթմերում՝ այդժամ ես կլինեմ առաջինը աստվածների մեջ, Տիեզերքի գերագույն աստվածությունը»:

Սենյակ լողաց մի ութոտանի, զննեց նրանց դեմքերը մեծ եւ անշարժ կարճատես աչքերով, հետո նստեց մարգարտյա գարեջրի ծորակի վրա եւ շոշափելիքները վար կախեց: Աստղագետը աստվածուհուն հարցրեց, թե արդյո՞ք նա կուզենա Պրահա վերադառնալ, եթե այդպես կարոտում է:

«Ոչ,- ժպտաց նա,- թեպետ եւ երբեմն կարոտում եմ, բայց ես սիրում եմ իմ ստորջրյա պալատը, սիրում եմ իմ հիասքանչ մենությունը եւ մթին ծովախորքերը. ես ինձ երջանիկ եմ զգում իմ երկար ճամփորդություններում դեպի ստորջրյա լեռները: Ես չէի կարողանա ձեր մեջ ապրել, ինձ բավ են հիշողություններն ու մարգարտյա քանդակները: Բացի այդ, ես պատասխանատվություն եմ զգում ծովային քաղաքի բնակիչների համար, ես չեմ կարող նրանց այստեղ միայնակ թողնել»:

«Ես նկատեցի, որ այստեղ քեզ բոլորը սիրում են,- ասաց նա:- Երեւի նրանք քո կարիքը կզգան»:

Նրանցից շատ բարձր՝ խավարի մեջ հայտնվեց վարդագույն լույսի անհաստատ բիծը:

«Ջրի վրա ելնում է արեւը,- ասաց աստվածուհին,-քո վերադառնալու ժամանակն է»:

Նա նրան ուղեկցեց մինչեւ սենյակ, հրաժեշտ տվեց եւ խոստացավ, որ

դարձյալ կգա նրա ետեւից եւ նրան ցույց կտա իր պալատը:

Երբ գրողը գրում էր այս տողերը, Պրահայում նույնպես լուսանում էր: Նա բաց թողեց ստեղնը եւ թույլատրեց կապույտ լույսին թաքնվել գրամեքենայի կմախքի տակ, որտեղ այն դանդաղ մարեց:

Գրողը գոցեց գիշերային լարվածությունից հոգնած աչքերը: Ավարտվում էր լոկ աշխատանքի երկրորդ գիշերը նոր գրքի վրա: Եւ այդուհանդերձ, ժամանակը, երբ նա գրում էր չհավասարակշռված ճարտարագետի խնդիրների մասին,նրան հեռավոր անցյալ էր թվում կամ նույնիսկ տարօրինակ երազ: Այժմ նա գիտեր, որ ստեղծագործությունը, որ երեկ էր սկսել, դեռ երկար կգրի: Նրա ողջ մարմինը ներթափանցված էր բերկրանքով, ինչը որ մինչ այժմ նա չգիտեր, որը բերում էր աշխատանքը տեքստի վրա, որի իմաստը նա բացարձակապես չէր հասկանում եւ ինչը, հավանաբար, որեւէ իմաստ չուներ: Հրճվանքը, որ համակել էր նրան, երբ կապույտ լույսով լուսավորված էջի վրա նա առաջին անգամ երկար ժամանակաընթացքում հանդիպեց դատարկությանը ու դրա համառ շշնջոցին, ձգվեց եւ վերածվեց մեղմ երանության, որ լուսավորում էր նրա կյանքի յուրաքանչյուր ակնթարթը, եւ րոպեները, երբ նա չէր գրում, եւ ժամանակի աղոտ խորշերը, որտեղ նախկինում իշխում էր ձանձրույթը: Ծնվող ստեղծագործությանը չէր լքում հաստատուն ձեւը, նա լեզուն մասնատելու եւ խոշտանգելու անհրաժեշտություն չէր զգում, երկար նախադասությունները կապույտ լույսի ներքո բաժանվում էին բազում երկրորդական նախադասությունների եւ միատեսակ անդամների. դրանք հոսում էին, ասես օվկիանոս ծովային քաղաքի փողոցներով, մայթերով ու սենյակներով, եւ համանման այն բանին՝ ինչպես բյուրավոր տարբեր ծովածոցերում իշխում էր մեկ ալեբախության ռիթմը, նախադասությունների հեռավոր մասերը կապված էին միմյանց նրբին ներդաշնակություններով եւ աննշմար համաչափություններով: Սակայն նա գիտեր, որ ձեւերի այդ հանգիստ շողանքի թագավորությունը, այդ անհավանական ծովային կլասիցիզմը տարածվում է խելագարության մթին եւ գարշահոտ վիհի վրա եւ առանձնացված է դրանից լոկ բարալիկ թաղանթով. պատահում էր, որ նա նկատում էր լրիվ մոտիկ բառերի միջեւ ընկած արանքներում հրեշների երախաբաց մռութները: Նա գիտեր նաեւ այն, որ դրանք երբ ասես կարող են ներխուժել իր աշխարհ եւ պատառոտել ընտել ձեւերը. եւ այդուհանդերձ, նրան դարանակալած վտանգավոր ուրվականները նրա համար սարսափելի չէին, նա ժպիտով սպասում էր դրանց գալստյանը:

Ճարտարագետի մասին անավարտ վեպը նա խցկեց սեղանի արկղի

մեջ եւ այդպես էլ չանդրադարձավ դրան: Ամեն երեկո նա նստում էր գրամեքենայի մոտ եւ կապույտ լույսով լուսավորված էջի վրա թույլատրում էր ծնվել պատմություններ մարդու մասին, ով փրկվել էր օվկիանոսի վրա ինքնաթիռի վթարից հետո. նա գրում էր ստորջրյա պալատի իր այցելությունների մասին եւ աստվածուհու հետ երկար զրույցների մասին, նրա մոտից վերադառնալու մասին, երբ առավոտյան ցրտի մեջ նա լողում էր դեռ քնած քաղաքի դատարկ ջրային փողոցներով, եւ ծփանքով ծածկված հարթության վրա շողում էր օվկիանոսի վրա ելնող արեւի նարնջագույն լույսը: Նա գրում էր հին քաղաքի փողոցներով իր երկար զբոսանքների մասին, թագավորի եւ իմաստունների հետ խոսակցությունների մասին, ծովի վրայի զբոսախնջույքների մասին, թատրոն հաճախելու մասին, որտեղ հնաոճ ծովային ողբերգություններ էին խաղում, թագավորական ճարտարապետի աղջկա հանդեպ տածած աստղագետի սիրո մասին, այն մասին, թե ինչպես էր գրկում նրան քաղաքի ծայրի անդորրավետ պալատի սենյակում, որի պատուհանից երեւում էր միայն օվկանոսային հարթությունը: Կեսօրին գրողը սովորաբար քայլում էր Պրահայում, եւ երբեմն պատահում էր, որ երեկոյան եւ գիշերը նրա ցերեկային հանդիպումները մտահնար փոխված տեսքով հայտնվում էին վեպում: Այդպես միհարկանի գյուղական տնակների շարքը, որ նա գտել էր Զաբեգլիցում, վերածվեց ծովային քաղաքի հեռավոր մասի փողոցի, որտեղ ջրային բակում ձկնաբուծարաններ կան, որ ճագարների վանդակներ էին հիշեցնում, աստղագետը հանդիպեց նախանցած աստծո ծեր քրմին, եւ նեխահոտ մթին վերնասենյակում, որ փտած ծառ էր հոտում, նա լսում էր պատմություններն աստվածության մասին, որը գնացել էր եւ որին արդեն քաղաքում ոչ մեկը չի հիշում: Թոշակային ապահովագրական դրամարկղի շինությունը Սմիխովում վերածվել էր ընդարձակ տան, որտեղ գտնվում էր թագավորական հարկային տեսչությունը, տուն, որի հեղձուցիչ գրասենյակներում առաջին անգամ հայտնվեց սուր ատամներով գիշատիչ ձուկը, որ կարող էր ելնել մի քանի մետր բարձրություն ունեցող քանդակի վրա: Մի որոշ ժամանակ այդ ձուկը վախեցնում էր ծովային քաղաքի բնակիչներին. նավահանգստի սրճարանի փայտախուցը երկաթուղային կամրջի տակ դարձել էր բիստրո լողացող տախտակամածի վրա՝ ծովային քաղաքի ծայրամասում, որտեղ աստղագետը մի ժամանակ նստում էր համարյա ամեն օր, ծովային թարթիչներից գարեջուր էր խմում եւ նայում մայրամուտին: Երբեմն իրերը, գործող անձինք եւ իրադարձությունները ծնվում էին վրիպակից, որը հայտնվում էր թղթի վրա: Տարօրինակ էր, որ բոլոր այդ պատահական

անձնական փորձի վերածումները վեպի հյուսվածքում ընդհանրապես չէին զգացվում որպես հակասող այն փաստի գիտակցմանը, որ նա ինքը՝ ընդամենը լոկ գործիք է պատմության ծագման համար, որ ապրում է նրանից դուրս իր սեփական կյանքով, ընդհակառակը, պատահական հանդիպումներն ու տառերի չկանխատեսված կուտակումներն ասես անցքեր էին բացում, որոնք հնարավորություն էին տալիս տեսնել այդ խորհրդավոր գրքի էջերի միջից, որը նա պիտի գրեր իր գրամեքենայով:

Որոշ ժամանակ նա նամակներ էր ստանում Գրողների միությունից, նա հանդիպումների հրավերներ էր ստանում, իսկ գրական ամսագիրը հիշեցնում էր նոր վեպի խոստացած հատվածի մասին: Նա նամակներին չէր պատասխանում, եւ քանի որ դա չէր օգնում, խմբագրություն ուղարկեց ծովային վեպի մի գլուխը՝ հատվածն առ այն, թե ինչպես աստվածուհին աստղագետին տարավ ճամփորդության դեպի հեռավոր ստորջրյա լեռները, որտեղ նրանք այցելեցին հինավուրց աստվածությանը՝ դա հենց այն մեծ ծովապուտն էր, որի մասին խոսվում էր տաճարի պատին. աստվածություն-ծովապուտը բացատրվում էր տարուբերվող շոշափելիքների օգնությամբ, մեկ կրճատելով, մեկ ձգելով դրանք, եւ պատմեց նրանց այդ եւ անցյալ Տիեզերքների էության ու քաոսի զմայլիչ գեղեցկության մասին: Ինչպես եւ նա ենթադրում էր, ոչ խմբագրությունը, ոչ էլ Գրողների միությունն ալեւս չէին անհանգստացնում:

Երբ հեռուստասերիալի եւ նրա վեպերից մեկի բուլղարերեն թարգմանության հոնորարները վերջացան, նա պահակ տեղավորվեց սղոցանյութերի պահեստում, Բրանիկ կայարանից ոչ հեռու: Այդ ժամանակ նրան արդեն պետք չէր կապույտ լամպը, որպեսզի հանդիպեր նախնական դատարկությանը եւ դրանում տեսներ ծնվող բառերի տատանումը: Նա հաճախ գրում էր ցերեկային լույսի տակ, բայց, այդուհանդերձ, գերադասում էր, որպեսզի թղթի վրա ընկներ կապույտ շողանքը: Նա հաճախ էր գիշերային հերթապահություններ ունենում. այդ ժամանակ նա բերում էր գրամեքենան աշխատանքի եւ գրում էր իր խցում, իսկ նրա ոտքերի մոտ ննջում էր ծառայողական գամփռը: Ինչպես հեռու հեռվից, հասնում էր ծովային քաղաքից, որտեղ նա գտնվում էր, կայարան եկող վագոնների աղմուկը: Մերթընդմերթ նա դադարում էր գրել եւ շան հետ գնում էր շրջայցի, կանգնում էր մետաղալարերով պատված ցանկապատի մոտ, եւ նայում էր գիշերային կայարանի կրակներին, հետո վերադառնում էր իր խուցը, նստում սեղանի մոտ եւ դարձյալ տեղափոխվում էր ծովային քաղաք:

-Հիշում եմ՝ մի անգամ գիշերը ես գնում էի ավտոբուսով Գոդկվիչկի եւ

բրանիցկյան գարեջրագործարանի դիմացի փոքրիկ տան մթին պատուհաններում նկատեցի տարօրինակ կապույտ լույս,- ասացի ես:

-Երբ ես նախանցած տարի գարնանը հանդիպեցի գրողին, նա արդեն տասնչորս տարի գրում էր իր վեպը եւ այդ ընթացքում հազարավոր էջեր էր գրոտել: Ընդ որում՝ վեպում սյուժե չկար, իսկ որոշ մասերում ընդհանրապես ոչինչ տեղի չէր ունենում. երբեմն հարյուրավոր էջերի վրա պատմվում էր մի անաշխույժ առավոտվա մասին, երբ աստղագետը պառկել էր անկողնում, լսում էր ալիքների ճողփյունն ու զննում էր, թե ինչպես է զարմանազան պաստառների վայով դանդաղ շարժվում արեւի շողը: Հազար ինն հարյուր ութսունվեցից մինչեւ ութսունութը նա երկար մի գլուխ էր գրում ծովային քաղաքի գրադարանի մասին: Անձրեւային եղանակների սկզբում աստղագետն ընկավ արեւադարձային տեղատարափի տակ. դա պատահեց հենց այն ժամանակ, երբ նա լողում էր թեթեւ մակույկով ընդարձակ, բայց ամայի ծայրամասային փողոցներից մեկով: Նա թիավարեց մինչեւ մոտակա ետնաբակն ու նավակից նայում էր ջրի հոսքերին, որոնք տարուբերվում էին հարթության վրա, ֆանտաստիկ թափանցիկ ջունգլիների նման: Անձրեւը չէր մեղմանում, եւ աստղագետը, շուրջբոլորը նայելով, գտավ մթին ջրային միջանցքի գետաբերանը. դրա հեռավոր ծայրին ջրի վրա էր ընկնում լույսի թեք շողը բացված դռներից: Մթին միջանցքով նա լողաց դեպի այդ դուռն ու նայեց այնտեղ՝ ներսում ընդարձակ շինություն էր, դասավորված բարձրացող գրապահարաններով: Նա լողում էր գետագալարներով գրքերի պատերի միջով՝ դարակները գնում էին խորը ջրի տակ. ժամանակ առ ժամանակ նա ձեռքը վար էր տանում, ինչ-որ գիրք էր հանում եւ թերթում մի քանի էջ, որոնք սարքված էին անջրանցիկ նյութից, իսկ հետո տեղն էր դնում: Գրապատերից մեկի ետեւում՝ ջրային հարթության վրա նավակ էր օրորվում, իսկ դրա վրա կանգնած էր խնամված մորուքով մի մարդ եւ հավասարեցնում էր գրադարակի վրայի հատորները: Այդպես աստղագետը ծանոթացավ քաղաքային գրադարանավարի հետ: Նա հոգ էր տանում գրադարանի մասին միայնակ, եւ ընդ որում՝ աշխատանքով ծանրաբեռնված էր, ծովային քաղաքի բնակիչները կրքոտ ընթերցասերներ չէին, նրանք գնահատում էին ներկան, սիրում էին ալիքների աղմուկը սենյակներում եւ լույսի խաղը ջրի վրա եւ ընթերցանությանը նայում էին որպես տարօրինակ, թեպետ եւ անվնաս ժամանցի: Ծովային քաղաքում անցկացրած տարիների ընթացքում աստղագետը սովորել էր բերկրանք զգալ լույսի խաղից ջրային հարթության վրա եւ ալիքների շշնջոցից, նրան դուր եկավ ժամանակի աղմկոտ հոսքին հետեւելը, որ

իրադարձություններով մշուշված չեն, բայց նրան չէր լքում ծովային քաղաքի անցյալի մասին ավելին իմանալու ցանկությունը: Եւ նա սկսեց գնալ գրադարան եւ այնտեղ գրքեր վերցնել, եւ գրողը պահակախցում, բրանիցկյան սղոցանյութերի պահեստում վերապատմում էր հատորների բովանդակությունը, որոնք աստղագետը կարդում էր իր սենյակում: Նա արտագրում էր երկար ծովային էպոսները, երկրաչափության մասին փիլիսոփայական տրակտատներն ու խորհրդածությունները, երաժշտական ստեղծագործությունների պարտիտուրները, բարդ սահմանումները մաթեմատիկական գրքերից եւ գրավիչ ծովային արկածները, ինչպես նաեւ հին աղոթագրքեր՝ կոչեր աստվածներին, որոնք վաղուց անհետացել են եւ որոնց անունները կամ մոռացվել, կամ անցել են մանկական հեքիաթների հերոսներին. գործածությունից դուրս եկած այդ աղոթագրքերը պահպանվում էին հիմնականում ամենաներքեւի դարակներում՝ խորունկ ջրի տակ, այնտեղ, որտեղ գրադարակների ստորոտը հանգրվանում էր բուստախութերի վրա՝ տարուբերվող ծովապուտերի եւ սպունգների մեջ: Երբ գրողը Բրանիկում արտագրում էր գրքերի բովանդակությունը, որոնք կարդում էր իր սենյակում աստղագետը, նա ամեն անգամ չէր մոռանում նկարագրել լույսը, որ ընկնում էր գրքի բացված էջերի վրա, գրքի բույրի, դարչնավուն բծերի ձեւի վրա, որ հայտնվում էին էջերի վրա՝ ասես թե նա ինքն ապրում էր ծովային քաղաքում եւ բնակիչներից փոխառել էր սերն առ մակերեսների թրթիռն ու շնչառությունը: Երբեմն փայտով բեռնատարը գալիս էր պահեստ ուշ երեկոյան, եւ հարկ էր ստորագրել ապրանքագիրը. այդժամ գրողը ընդհատում էր իր գրառումները գրքի մասին, որ կարդում էր աստղագետը, եւ կարգի էր բերում բոլոր գործերը, իսկ հետո կրկին վերադառնում էր՝ սկզբում աստղագետի սենյակ պալատում, իսկ այնուհետեւ գրքի ավելի հեռավոր աշխարհը, որը աստղագետն էր կարդում, ծնկներին դրած: Դրանցից մեկը կոչվում էր «Քոչվորների թագավորը»: Գործողությունը տեղի էր ունենում ծովային քաղաքում՝ բայց արդյո՞ք դա այլ ծովային քաղաք էր, այլ ոչ թե այն, որտեղ ապրում էր աստղագետը, կամ էլ հենց այն, բայց հեղինակային երեւակայությամբ փոխակերպված, անհնար էր հասկանալ: Այդ երկրորդ ծովային քաղաքը կառուցված էր մգագույն քարից, դրա ջրային հրապարակների մեջ բարձրանում էին ոչ թե քանդակները, այլ բարձր սլացիկ կոթողները, կոնաձեւ կտուրները ոչ թե կորնթարդ էին, այլ՝ գոգավոր, բայց կար գլխավոր տարբերությունը քաղաքից, որտեղ ապրում էր աստղագետը, այն էր, որ մերթընդմերթ նրան այցելում էին նոմադները՝ ծովային քոչվորները. դա մի ժողովուրդ էր, որ ապրում էր փոքրիկ լողա-

ցող կացարաններում: Երբեմն քաղաքացիներն ամիսներով չէին տեսնում քոչվորներին, բայց մի հիասքանչ առավոտ նրանց նավերը հայտնվում էին քաղաքի ծայրամասերում, նրանք նավակներով լողում էին շուկաներ եւ այնտեղ հազվագյուտ ձուկ էին վաճառում, մարջանից ու խեցիներից սարքած մանր զարդարանքներ, ինչպես նաեւ ջրիմուռներից պատրաստված գործվածքներ, որոնք նրանք չորացնում էին իրենց լողացող հյուղակների հարթ կտուրներին: Գիրքը պատմում էր մարդու մասին, որը շատ տարիներ էր անցկացրել ծովային քոչվորների մոտ եւ դարձել նրանց առաջնորդը, թեեւ ծնունդով քաղաքից էր եւ մինչեւ քսանութ տարեկանն այնտեղ էր ապրել: Նա ջրային երգեհոնի լարող էր աշխատում. ամեն օր իր նավակի մեջ դեղին ձկնիկ-կամերտոնով ակվարիում էր դնում եւ շրջում տներով, ուր որ իրեն կանչում էին. նա լարում էր այդ հաիասքանչ, զարմանալի հնչող գործիքները, որ բերկրանք էին պատճառում ոչ միայն իրենց հնչյուններով, ասես ծնված ծովային խորքերում, այլեւ այն բանով, որ շոգ օրերին դրանք թարմացնում էին ունկնդիրներին ջրի շիթերով, որ շաղում էին խոզովակներով ծայրերը: Աշխատանքից հետո լարողը հանգստանում էր իր սենյակում, նեղլիկ փողոցում, որը ամեն առավոտ վերածվում էր շուկայի. երեկոյան կողմ տների միջեւ ընկած լուսաշերտերում հայտնվում էր արեւը, եւ այդժամ նա ծածկում էր պատուհանը սպիտակ վարագույրով, բայց սենյակում միեւնույն է՝ հեղձուկ էր ու խոնավ: Նա նստում էր, կուչուկծկվելով խորունկ բազկաթոռի մեջ, եւ նայում էր ստվերներին, որոնք ցածրիկ արեւը երեւակում էր սպիտակ վարագույրի վրա՝ ապրանքներ ընտրող գնորդների ստվերները, որ ցուցադրված էին նավակների վրա, եւ վաճառականների աշխույժ ձեռածող ստվերները, նա լսում էր նախադասությունների պատառիկները եւ ներշնչում նեխիչ հոտերի խառնուրդը: Ջրի դանդաղ հոսքը աղբը բերում էր շուկայից իր տուն. նույնիսկ գիշերը, երբ առեւտուրը դադարում էր, նրա տան պատի մոտ օրորվում էր մրգակեղեւը եւ ճմռթած յուղաթուղթը, եւ քաղցրավուն գարշահոտը վրա էր հասնում նրան քնի մեջ: Վարագույրի վրայի ստվերների խաղում նա երբեմն տեսնում էր քոչվորների սուր գլխարկների ուրվագծերը եւ լսում կտրուկ շեշտը, որոնցով տարբերվում էր նրանց խոսակցությունը: Նրա համար նոմադները գունագեղ տիկնիկներ էին ստվերների թատրոնից. նա գլխի չէր ընկնում, որ ճակատագրի գրքերում, որ պահված էին ծովահատակին՝ վարդագույն մարջաններով դարակում, գրված է, թե իբր նա կապրի նրանց մոտ քառասուն տարի եւ կդառնա նրանց թագավորը:

Մի անգամ նա եկավ լարելու երգեհոնը մի վիթխարի պերճաշուք տա-

նը: Հյուրասենյակում նա ելավ նավակից եւ սկսեց սպասել տանտիրոջը: Որպեսզի ժամանակը կարճեր, նա սկսեց զննել պատերի վրայի ծովանկարներն ու բրոնզե արձանիկները, իսկ հետո բացեց կանաչ կազմով հաստ գիրքը, որ դրված էր ցածրիկ սեղանիկի վրա, կարդաց դրա մի քանի տողերը՝ դրանցում խոսվում էր ինչ-որ կնոջ մասին, որը հայելու մոտ ներկում էր կոպերը մանուշակագույն ստվերներով, եւ մի կողմ դրեց: Ծուտով հյուրասենյակ հարուստ զարդարված նավակով լողաց կանաչ թանկագին քարերով մատանիով եւ սեւ մազերի մեջ կանաչ ծովաքարեր կրող հերակալով մի աղջիկ, վարսերի ծայրերը դողում էին միջանցահովիկի տակ, որը շրջում էր վիթխարի տան բոլոր սենյակներում: Դա աղջիկն էր բարձրաստիճան թագավորական ծառայողի, որին էլ պատկանում էր շինությունը, եւ գրքի ողջ մնացած մասը նկարագրում էր լարողի տանջալից սերը դեպի այդ պաղ ու դաժան աղջիկը՝ նրա թափառումները ծովային փողոցներով, գիշերային պանդոկներում հուսահատությունը գինու մեջ խեղդելու նրա անհույս փորձերը, որտեղ բարի բարձրադիր աթոռները աճում էին մթին ջրից՝ դրա վրա խաղացող լույսի բազմաբղետ բծերով: Բայց դա վեպի ամենաթույլ մասն էր՝ հեղինակն այդտեղ շատ էր սենտիմենտալություն անում եւ բացի այդ գերջանադրություն էր ցուցաբերել ծովային փոխաբերություններում եւ գունագեղ համեմատություններում, որոնցում բարդ նախադասությունները միահյուսվում եւ խճճվում էին, ինչպես ջրիմուռները: Եվ աստղագետը պարզապես թերթեց գրքի այդ մասը, եւ ուշադիր սկսեց կարդալ լոկ այն ժամանակ, երբ հասավ մի շոգ կեսօրի նկարագրությանը՝ դույզն ինչ քամի չկար, եւ ծանր ու տաք օդն ընկած էր քաղաքի վրա, ասես այրող խյուս, եւ հուսահատ ու նվաստացած լարողը աննպատակ լողում էր քաղաքի ամայի փողոցներով եւ երկար, ուղիղ պողոտայի հեռանկարում հանկարծ տեսավ հեռվում ծովի վրա տարուբերվող մի քանի մթին կետ: Դրանք նոմադների կացարաններն էին, որոնք հերթական անգամ ուղեւորվում էին քաղաք: Նա դատարկ փողոցով լողաց նրանց մոտ, շրջանցեց քաղաքի վերջին տներն ու որոշ ժամանակ անց հայտնվեց լողացող կղզյակների մոտ, որոնք նախկինում երբեք մոտիկից չէր տեսել. նա նայում էր արեւառ երեխաներին, որ խաղում էին դարավանդների վրա, հաստաբեստ տղամարդկանց, որոնք ծխում էին դարավանդների ստվերում: Դռան մթին բացվածքում նա ճակատի վրա, իջեցրած խայտաբղետ գլխաշորի տակ մի կանացի դեմք նշմարեց: Նա լողաց տներից մեկի մոտ եւ ողջունեց, տղամարդը՝ ամբողջովին դաջվածքներով, վիթխարի բեղերով եւ ոսկե ականջօղով՝ ի պատասխան գլխով արեց: Այդ

ժամանակից ի վեր ծովային երգեհոններ լարողը բնակվեց նոմադների մոտ եւ քսան տարի անց դարձավ նրանց պարագլուխը, ծովային շեյխը: Երբ նրանք խարիսխ էին նետում քաղաքի մոտ, նա երեկոյան նստում էր ծածկապատշգամբում եւ նայում հեռավոր դողացող կրակներին. երբեմն նա ուղեւորվում էր փողոցներով ճամփորդության, լողում էր այն տեղերով, որտեղ քսանութ տարի էր անցկացրել եւ որտեղ իրեն հիմա օտար էր զգում, եւ նորից վերադառնում էր դեպի իր լողացող կացարանը: Գիրքը վերջաբան ուներ, որում հեղինակը փորձում էր ապացուցել, որ վեպը պետք է հասկանալ որպես միստիկական այլաբանություն. լարողը, իբր, մարդկային հոգու սիմվոլն է, քաղաքը ներակայացնում է իմաստի աշխարհը, իսկ նոմադների բնակավայրը՝ գաղափարների կայսրությունը, սակայն այդ բացատրությունը աստղագետին ձգձգված ու անհամոզիչ էր թվում: Գրողը սովորաբար տանը կամ պահակախցում գրած էջերը չէր վերընթերցում. նրա համար բավական էր ծովային քաղաքում վայելել այն ժամերը, որոնք նա անցկացնում էր գրամեքենայի մոտ, երբ հերոսներն ու արարքները ծնվում էին դատարկության շնչառությունից, լեփլեցուն դեմքերով, շարժումներով եւ պատմութուններով: Ավելի հազվադեպ նա վերադառնում էր գրված էջերին, որպեսզի այնտեղ ուղղումներ մտցներ: Բայց երբ նա ավարտեց վեպի իր նկարագրությունը եւ զբաղվեց հաջորդ գրքով ծովային քաղաքի գրադարանից՝ գրքով, որը բովանդակում էր «Ծովահրեշը» օպերային լիբրետոն, որը շատ ավելի հետաքրքիր էր, քան երկրորդ կարգի վեպիկը լարողի մասին, ապա տարօրինակ անհանգստություն զգաց եւ ոչ մի կերպ չէր կարողանում կենտրոնանալ աշխատանքի վրա: Ինչ-որ բան նրան ստիպում էր անդրադառնալ արդեն գրված տեքստին: Եվ մի օգոստոսյան օր նա գրասեղանի արկղիկից հանեց պահեստախցում գրառած էջերը, որ նա գրել էր անցած օրերի ընթացքում. դրանք տնտղելով, նա ուշադրություն դարձրեց հյուրասենյակի տեսարանի վրա՝ լարողը ահա-ահա առաջին անգամ կտեսնի աղջկան, որի պատճառով հետագայում կլողա դեպի ծովային հեռաստան: Նա հասկացավ, որ իրեն անհանգստացնում եւ ձգում է դեպի իրեն հիշատակումը մի քանի տողերի մասին, որոնք լարողը կարդացել էր հյուրասենյակի սեղանիկի վրայի գրքում, տողեր, որոնցում խոսվում էր կնոջ մասին, որ մանուշակագույն ստվերներով ներկում էր կոպերը եւ, ընդ որում՝ նայում էր հայելուն, որ դրված էր արդուզարդի սեղանիկի վրա: Հայելու առաջ դարսված էր շշիկների եւ անոթների շարքը, այստեղ էին նաեւ ոսկե ժամացույցը, ապարանջանը ինչ-որ կարմիր քարերից եւ փակ սեւ մի տուփ: Տուփը ծածկված էր մա-

նուշակագույն թավիշով եւ իր մեջ թաքցնում էր մետաղազարդն արծվի տեսքով, որի տարածած թեւերով մարմինը ոսկով շրջանակված փիրուզից էր: Հայելու մեջ, բացի սրվակների նիստերից, երեւում էր նաեւ քաղաքը պատուհանի ետեւում, շնորհիվ հեռվի եւ մոտիկի հանդիպմանը հայելու հարթության վրա ապակյա շշիկները տարօրինակ ու բազմաբղետ ամրոցների տեսք ունեին, որ ելնում էին տների արանքից: Քաղաքը կանգնեցվել էր լեռներում, ռելիեֆով եւ մակարդակով միանման ալպերի հետ, այդ լեռնապարանոցի վրա եւ ոչ մի փոքրիկ հրապարակ չկար, որտեղ տներ չէին կառուցված կամ որը ծածկված չէր մայթերի եւ հրապարակների գորշավուն սալարկով. նույնիսկ ուղղաբերձ ժայռերը պատված էին մարդկային կացարաններով: Ամայի ընդարձակ փողոցների վրա անցնում էին ցածրամած մթին ստվերները: Գրքի էջերին, որոնց աչք նետեց երգեհոն լարողը, ընկնում էր թույլ լույսը պատուհանից, որ ելնում էր դեպի փոքրիկ ներքնաբակը, պատուհանների վարագույրները տարուբերվում էին միջանցահովիկից: «Նոմադների թագավորը» գրքի էջի վրա, որտեղ նկարագրված է հյուրանոցի տեսարանը, այն պահին, երբ աստղագետը կարդում էր այն իր սենյակում, ընկած էր մեղմ երեկոյի վարդագունոտ արտացոլքը բուստալճակի. էջը, որ պատմում էր այն մասին, թե ինչպես է աստղագետը կարդում լարողի մասին, որ սպասում էր հյուրասենյակում, եւ կրկին ընթերցված գրողի կողմից Բրանիկում, շողում էր վառ լույսի ներքո, եւ արեւը կեցած էր երկնակամարում, բորանդովյան բարձր բլրի վրա:

Լարողի թռուցիկ հայացքը, որ նա նետել էր անհայտ գրքի էջի վրա, ծովային նոմադների պատմության մեջ որեւէ դեր չէր խաղացել՝ այլեւս նրա մասին ոչ մեկը չէր հիշում, եւ այն սյուժեի հետ կապված չէր, այնպես որ միակ պատճառը, որով վեպում հայտնվեց այդ հատվածը, ծովային քաղաքի բնակիչների ուշադրությունն էր անիմաստ մանրամասներին, որը դրսեւորվում էր նաեւ գրականության մեջ: Բայց գրողը հար վերադառնում էր բրանիկյան իր խցում այդ մի քանի տողերին, անընդհատ վերընթերցում եւ վերընթերցում էր դրանք: Նրան թվում էր, որ փիրուզե արծիվն անբաժան է տարօրինակ, խորհրդավոր արկածներից, նենգադավությունից, ճակատագրական պատահականություններից եւ ճարտար սատանայական ծրագրերից՝ կծկվանքները գնացքների գիշերային կուպեներում, թանկարժեք քարերը, որ շողում էին խավարի մեջ, անպարզ խոսակցությունները մետաֆիզիկայի մասին՝ գեղեցիկ լրտեսուհիներով սպիտակ ամառանոցների լողավազանների մոտ, փոխհրաձգությունները առագաստանավերի միջեւ աստղալից երկնքի տակ, գիշերային ծովի վրա: Գրողը հան-

կարծ մոլեգին կամեցավ լքել ծովային քաղաքը, սահել բացված սողանցքով դեպի նոր աշխարհ եւ լեռների ստորոտներին տարիներով գրել վեպը քաղաքի մասին: Նրա գլուխը պտտվեց: Այն ընթացքում, որ նա գրում էր իր վեպը, ծովային քաղաքը նրա համար ավելի մտերմիկ դարձավ, քան Պրահան. դե, ինչպե՞ս նա կգնա այստեղից: Արդյո՞ք կկարողանա դարձյալ վերադառնալ այնտեղ, երբ կամբողջանա կանաչակազմ գրքի բովանդակությունը, երբ գործողությունը կավարտվի, երբ առեւանգված ադամանդները կգտնվեն արկղերի խորքում, իսկ երեկոյան սենյակներում դաշույնով հարվածների վրեժը կլուծվի: Կամ էլ թե մնա լեռնային քաղաքում, որի բնակիչները գլխի չեն ընկնում, որ իրենք ընդամենը գրքի հերոսներ են, հիշատակված այլ գրքում: Կամ էլ նա կշարունակի իր դեգերումները, իր ճամփորդություններն այլ աշխարհնե՞ր: Չէ՞ որ լեռնային քաղաքում երեւի թե կան գրադարաններ, իսկ դրանցում՝ նոր գրքեր նոր քաղաքներով եւ երկրներով, նոր մոլորակներով, անհայտ Տիեզերքներով, որոնցում եւս կան շատ գրքեր ոսկյա, շողշողացող, սլկուն, դողացող, բաբախող, ցցվող եւ դողդոջուն տառերով, տառերով ջրից եւ ծխից, աճող եւ նեխող տառերով: Արդյո՞ք տեքստում նորից չի հայտնվի Պրահան: Երեւի դա փոքր-ինչ այլ Պրահա կլինի, օրինակ, Վացլավյան հրապարակի վրա սուրբ Վացլավի հուշարձանի փոխարեն կհայտնվի բազմագույն քարերից կառուցված քանդակը հերոսի՝ հրեշի դեմ մարտնչող, իսկ ինքը քաղաքը կկանգնի բարձր սարի գագաթին, բարձրանալով ամպերի վրա: Իսկ գուցե գործողությունը տեղի կունենա Բրանիկի պահակի խցում, իսկ ինքն էլ գործող անձ կդառնա, իր հորինած այլ գործող անձանց կողմի՞ց: Եւ արդյո՞ք չի հայտնվի տեքստի շատ ավելի հեռավոր խորքերում, չի բազմապատկվի՞ արդյոք, ինչպես այն անդադրում հոլանդացի գեղջկուհին մեր մանկությունից, որ նկարված է կակաոյի բանկայի վրա եւ ձեռքին ճիշտ նույնպիսի բանկա է բռնել, ինչպես նա, որի վրա նա նկարված է: Արդյո՞ք կշողա տիեզերքներից որեւէ մեկում սպիտակ աստղը, որի առջեւ կարելի կլինի կանգ առնել եւ մոռանալ բոլոր քաղաքների մասին՝ ծովի վրա բարձրացող եւ շողշողացող լեռների բարձրունքներին, մոռանալ քաղաքի մասին, մոռանալ Պրահայի մասի՞ն: Արդյոք նա կգտնի՞, իջնելով խորքերը, մաքուր լույսը, նույնքան պարզ, որքան դատարկ էջի կապույտ շողանքը, լույսը, որի շողերում կարելի կլինի սահման դնել երկար ճամփորդությանը բառերի եւ պատկերների լաբիրինթոսում, որ նա ոտք դրեց կապույտ լույսի դարպասի միջով շատ տարիներ առաջ: Արդյոք նա կմոռանա՞ լույսի փոփոխությունների հերթագայության մեջ իր անունը, արդոյք կմոռանա՞ իրերի

անունները: Արդյոք կիանդիպի՞ գերագույն Բուդդային, որը կսովորեցնի նրան տրվել այդ լաբիրինթոսի կամքին, բաղկացած լաբիրինթոսներից, եւ հնարավոր է, կուսուցանի լսել ընդհանրական ռիթմը, հնչող տիեզերքից հայտնվող ամենքի մեղեդիում: Նա նստել էր իր խցում եւ նայում էր Բարանդովյան բլրի ամառանոցներին, պատուհանի տակ ծղրտում էր սղոցը եւ լսվում էին սկլադսկյան աշխատավորների ձայները: Նա դեռեւս տատանվում էր՝ որ ուղին ընտրել: Ի վերջո նա հիշեց հրավառությամբ ծովային տոնի մասին, որը պատրաստվում էր ծովային քաղաքում, որպեսզի նորանոր պատմություններ գրեր...

Ես մտածեցի խաղավտոմատի մասին գյուղական գարեջրատանը, որի մասին պատմում էր հնագետը գետափին, նկարների պատկերների մասին. ես խոհածում էի՝ արդյո՞ք պատահում են որեւէ տեղ, անսահմանության մեջ այդ շարքերը երկու պատումների, որդյո՞ք դրանք մի ակունքից են սնվում, արդյո՞ք խաչաձեւվում են մեկ կամ մի քանի կետերում, թե՞ ընդմիշտ բաժանվում են, հյուսվում են միմյանց մեջ խավարում՝ երբեք չիպվելով...

-Աստվածուհին դեռ մի քանի տարի կառուցում էր մարգարտից ստորջրյա Նուսլին, բայց ժամանակի ընթացքում նա ավելի ու ավելի էր մոռանում Պրահան, նա պաղել էր իր զավակի հանդեպ եւ ընդմիշտ թողել կառուցումը. բայց չէ՞ որ այդ պահին համարյա թե ավարտված էր գործարանի շինությունը Բոտիչի աջ ափին եւ դրա խողովակը կիսով չափ պատրաստ էր: Աստվածուհին դադարել էր հետաքրքրվել քաղաքի գործերով, մտածելով միայն տիեզերք իր ճամփորդության մասին: Նա ինքնամփոփ է դարձել, աստղագետի մոտ ավելի ու ավելի հազվադեպ էր անցնում, իսկ հետո ընդհանրապես դադարեցրեց իր այցելությունները: Բայց այն գիշեր, երբ նա թռչում էր դեպի երկնքում բարձր շողացող Լիրայի համաստեղությունը, նա եկավ նրա սենյակ, որպեսզի հրաժեշտ տար: Տոնակատարությունները ծովալճակում ավարտվել էին, քաղաքն ապրում էր հիշողություններով եւ նոր աստծու սպասումով, ապրում էր հույսի եւ վախի մեջ: Աստղագետը պահպանել էր ջրի տակ շնչելու ընդունակությունը, եւ երբեմն նա ուղեւորվում էր ստորջրյա Նուսլի եւ զբոսնում Բոտիչի ափին կամ էլ թե նստում էր մարգարտյա ծառերով մարգարտյա նստարանին եւ զննում լողացող ձկնիկներին:

Աստվածուհու՝ տիեզերք մեկնելու մասին պահակը գրում էր 1989 թվականին: Երբ աշնանը վարչակարգը փոխվեց, նա պահակ մնաց եւ շարունակում էր գրել: Ընդ որում՝ նա նույնիսկ չէր էլ փորձում հրապարակել վե-

պը կամ թեկուզ հատվածներ դրանից: Ես նրան ասացի, որ հայրս Պրահայի մի հրատարակչության խմբագիր է, եւ սկսեցի համոզել, որպեսզի նա ինձ բերի իր գործը, բայց գրողը միայն ժպտում էր, նա բոլորովին անտարբեր էր, թե արդյո՞ք որեւէ մեկը կկարդա իր ստեղծագործությունը:

Մի առավոտ մարդիկ, որ ապրում էին ծովային քաղաքի ծայրամասում, հորիզոնում տեսան սեւ լողացող կղզի: Հետո այդ կղզին երկար ամիսներ լրտեսում էր քաղաքը, լողալով դրա շուրջը եւ գիշերներն այն լցնելով իր լուսարձակների վառ լույսով: Ոչ մեկը չգիտեր, թե ինչ էին մտմտում դրա բնակիչները: Հայտնվեցին նշաններ այն բանի, որ քաղաք են ներթափանցել կղզիաբնակների լրտեսները, մարդիկ դադարեցին միմյանց հավատալ, յուրաքանչյուրի մեջ կասկածելով լողացող կղզու լրտեսի: Աստղագետին կանչեցին հարցաքննության, նրան մանրամասն հարցուփորձում էին ինքնաթիռի վթարի եւ Պրահայում անցկացրած կյանքի մասին: Հենց այն ժամանակ, երբ գրողը պատմում էր ծովային քաղաքի այդ տխուր շրջանի մասին, կառամատույցին մոտեցավ Մսիշեկ գնացող գնացքը: Ես այլեւս չէի կարող հապաղել եւ այդու շնորհակալություն հայտնեցի գրողին, հրաժեշտ տվեցի նրան եւ գնացք նստեցի:

Ես նայում էի պատուհանի ետեւում առկայծող բնապատկերին եւ խոհածում էի գրողի պատմած պատմության մասին: Կայարանում ես լարված ունկնդրում էի նրան, ինչպես արկածային վեպ, տարօրինակ պատում Ժյուլ Վեռնի ոգով, բայց, մյուս կողմից, հետաքրքրությանը միախառնվում էր որոշակի անջատում: Չգիտեմ՝ արդյո՞ք ես կուզենայի այդպիսի գիրք կարդալ, թե՞ ոչ:

-Ձեզ դուր չէր գալիս իրադարձությունների ֆանտաստիկությո՞ւնը:

Աղջիկը մտորեց եւ պատասխանեց.

-Ոչ, արտասովոր հորինվածն ինձ չի տագնապեցնում. այն իր տեղն ունի մեր աշխարհում, եւ այն ստեղծում են մեզ ծանոթ ուժերը: Բայց պատմության մեջ, որ պատմում էր գրողը, բացի աստվածուհուց, դեւ-կետածկից ու եւս մի քանի տարօրինակություններից, ասենք Գուսի վազող հուշարձանից, ոչ մի ֆանտաստիկ բան չկար, դրանում մասնակցություն չունեին հրեշները, խոսացող գազանները կամ դրանց նման ինչ-որ մեկը: Քաղաքը, որ նկարագրում էր գրողը, երեւի թե գոյություն չունի, բայց այն ավելի ֆանտաստիկ չէ, քան արաբական ժայռափոր քաղաքները կամ լողացող ավազաները Անդերի կղզիներում: Թեեւ պատմությունը տարօրինակ կերպով ձգում էր ինձ, ես չէի հասկանում, թե ինչու է այն ծնվել, չէի հասկանում տարօրինակ խառնուրդը ֆանտազիաներից եւ հանդարտ

նկարագրություններից, ոչ էլ ակներեւ տրամաբանական կապերը ամբողջի մասերի միջեւ, ինչն ինքնին անտրամաբանական եւ անիմաստ էր: Նաեւ իմ մեջ զգացողություն կար, թե հեղինակին չեն հետաքրքրում մարդիկ, կամ այլ կերպ՝ որ նրանց ճակատագրերը նրան ավելի շատ չեն հետաքրքրում, քան ծփանքը ջրային հարթության վրա եւ ծխի պարույրները, որ թե այս եւ թե այն նրա համար, ըստ էության՝ անիմաստ տեղաշարժեր են տարածության մեջ: Ինձ թվում էր, թե այն, որ վեպում մարդիկ էին գործում՝ պատահականություն կամ տուրք է հին սովորույթին, որ բոլոր այս տարիների ընթացքում գրողը կարող էր նույն հաջողությամբ նկարագրել վարագույրների ծածանումը դատարկ սենյակում կամ լույսի խաղը ջրային հարթության վրա:

-Ես հաճույքով հազար էջանոց վեպ կկարդայի սպիտակ վարագույրների ծածանման մասին,- պատասխանեց նա:- Գուցե թե, այդ գրքի էջերում մեզ անսպասելի մարդ կպատահի, գուցե թե, նա կհանդիպի մեզ լոկ այնժամ, երբ մենք կդադարենք բաժանել նրա դեմքը մակերեսների կյանքից, որի ֆոնի վրա այն մեզ ներկայանում է: Ես կռահում եմ, որ անորսալի ձեւերի եւ շարժումների այդ աշխարհում մենք կարող էինք սովորել լեզուն, որի օգնությամբ մարդկանց մարմիններն ու ձայները մեզ են հաղորդում ամենակարեւորը, որից էլ ծագել են բոլոր մնացած լեզուները:

-Ես դրան չեմ հավատում. ես կարծում եմ, որ ով ուղեւորվում է շրշացող եւ սրսփուն լաբիրինթոսը, այլեւս երբեք չի վերադառնա, կկործանվի դրա տրտում հաճույքների մեջ, կկորչի հոգնած դրախտում եւ չի կարողանա որեւէ մեկի հետ պայմանավորվել, որովհետեւ նրա խոսքերը կտարալուծվեն միատեսակ աղմուկում: Ճարտարագետի պատմությունը, որ գրողը հորինում էր մի քանի տարի առաջ, հնարավոր է՝ միամիտ, տափակ եւ հիմար էր, բայց դրանում գոնե կար իսկական հարցերի արտացոլքը, որոնք ծնվում են մարդկանց աշխարհում, թեկուզ եւ կենդանի ցավի ու բերկրանքի հեռավոր արձագանքը, այնինչ ծովային վեպը դարձավ առ անդեմության վիճակին վերադառնալու խելագար ձգտման արտահայտությունը, առ Տիեզերքի սկիզբը, կամ դե գոնե մեր աշխարհում դրա միապաղաղության մնացուկները գտնելը:

-Ինձ, այդուհանդերձ, ավելի շատ կհետաքրքրեր էպոսը ծածանվող վարագույրների մասին, քան վեպը ճարտարագետի կամ նրա ճգնաժամի մասին,- պատասխանեցի ես:

Բայց ես դրանում բացարձակապես վստահ չէի: Ես լավ հասկանում էի աղջկա վախն ու ինքս էլ այն փոքր-ինչ զգում էի, բայց միաժամանակ մթին

քաոսի հետ հանդիպմանը, որը սպառնում է նրան, ես վաղուց ընտել էի քաոսի կողմը կանգնել: Ես մտքում ասում էի ինքս ինձ, որ դրանով պաշտպանում եմ փխրուն ծեւերը, քաոսից ծնվող, որոնք կարգն ուզում է վերացնել, բայց արդյո՞ք այդ դիրքորշումը քաոսով որպես այդպիսին տարվելու արտահայտություն չէր եւ վաղեմի ատելությունն առ նրանց, որ դասավորվել էին կարգում, ինչպես անվտանգ տանը: Սակայն ես այլեւս չէի ուզում վերլուծությամբ զբաղվել: Ես փութում էի իմանալ վերջապես բազմերանգ քարերի մասին, որոնց պատճառով մենք եկել էինք այստեղ եւ որոնք կայծկլտում էին իմ առջեւ սփռոցի վրա, եւ ես աղջկան հիշեցրի դրանց մասին:

-Իմ պատմությունը շարունակություն ունի,- ասաց նա:- Ես համալսարանում ուսումնասիրում եմ փիլիսոփայության պատմություն ու պատմություն, իսկ անցյալ տարի գնում էի հնագիտության վերաբերյալ դասախոսությունների: Դա իմ սիրած առարկաներից մեկն էր: Պրոֆեսորը, որ կարդում էր դրանք, հենց Հնդկաստանից էր վերադարձել, նա ղեկավարն էր արշավախմբի, որը հետազոտում էր մի հետաքրքրական հինավուրց քաղաքակրթության մնացուկները: Նա գրավիչ պատմում էր պալատների ավերակների մասին, ջունգլիներով պատված, քանդակների մասին, որոնց շուրջ փաթաթվել էին լիանաները, տարօրինակ խեցեքարե գրերի մասին, որ գտել ու վերծանել էին նրա խմբի երկու անդամները: Մի անգամ նա եկավ դասախոսության եւ մեկեն սկսեց պատմել Հյուսիսային Չեխիայում տարօրինակ գտածոյի մասին՝ Լանդշտեյնի եւ Սլավոնիցայի միջեւ Ինջիրվիխուվա Գրադեցի շրջանում: Այնտեղ աշխատում էին երկրաբանները, եւ վիթխարի քարի տակ, անտառային բլրի բարձունքին նրանք, ի զարմանս իրենց, վիթխարի քարե ձեռք էին հայտնաբերել, որը ներքեւից բռնել էր այդ գլաքարը: Երկրաբանները պատմեցին հնագետներին գյուտի մասին. նրանք տեղնուտեղը ուղեւորվեցին լանդշտեյնյան անտառ եւ մինչեւ ուսը փորեցին ձեռքը: Ծուտով հողի տակից երեւաց վիթխարի քարե գլուխը: Դա կնոջ գլուխ էր վարսերով, ամրացված ճակատի զարդով՝ հորիզոնական ծվածեւությունների երեք շարքերի տեսքով, բաժանված ոսկյա ալիքավոր գծերով: Գյուտը մեծ իրարանցում հարուցեց, որովհետեւ քանդակի արտաքին տեսքը չէր հիշեցնում հայտնի ոճերից եւ ոչ մեկը, եւ մասնագետներից ոչ մեկը չէր կարողանում որոշել, թե երբ է այդ քանդակը ստեղծվել եւ որ մշակութային դարաշրջանին է պատկանում: Լանդշտեյն եկան առաջատար հնագետներն ու արվեստաբանները. ոմանք դեմքի մեջ շումերական գծեր էին գտնում, մյուսները խոսում էին Պարսկաստանի

մասին, այլք՝ Եգիպտոսի, բայց, ի վերջո, նրանք շփոթահար սկսվում էին քարե ձեռքի եւ գլխի առաջ:

Լսելով հողում թաղված Լանդշեյնյան քանդակի մասին, ես ավելի շատ ապշեցի, քան հնագետները, որովհետեւ հիշեցի ծովային քաղաքի դարպասը, որի մասին պատմում էր գրողը կայարանում: Ես չդիմացա եւ հարցրի՝ որդյո՞ք քանդակի կրծքի վրա մանյակ չկար, հյուսված պարույրներից, եւ արդյո՞ք նա մյուս ձեռքում շուշանատեսք աշտանակ չէր բռնել: Պրոֆեսորն ասաց, որ նրա վզի վրա իրոք պարուրաձեւ զարդ կար, իսկ լապտերի մասին նա ոչինչ չգիտեր, քանի որ մյուս ձեռքը դեռ թաղված էր հողի տակ: Երեւի նա կարծում էր, թե ես իմացել էի զարդի մասին նրանցից մեկից, որ մասնակցություն էր ունեցել պեղումներին: Բայց մի քանի օր հետո հնագետները հանեցին երկրորդ ձեռքը, եւ պարզվեց, որ այնտեղ շուշանակերպ աշտանակն է: Եւ երբ պրոֆեսորը եկավ հաջորդ դասախոսությանը, ապա ուղիղ դռներից ուղղվեց դեպի այն շարքը, որտեղ նստած էի ես, եւ սկսեց հարցուփորձել, թե որտեղից է ինձ հայտնի ստորգետնյա լապտերի մասին: Ես նրան պատմեցի գրողի հետ հանդիպման եւ նրա ծովային վեպի մասին: Պրոֆեսորը կարծում էր, որ դա պատահական համընկնում է, բայց, այդուհանդերձ, որոշեց հնագետներին խորհուրդ տալ վիթխարի քարի մյուս կողմում փնտրել երկրորդ քանդակը: Ծուտով այնտեղ հայտնաբերեցին մյուս կերպարանքի ձեռքը: Պրոֆեսորը մասնակցում էր այդ աշխատանքներին. վերադառնալով Պրահա, նա միանգամից զանգեց ինձ եւ խնդրեց անցնել իր մոտ՝ ֆակուլտետ: Մենք մնացինք այնտեղ մինչեւ հաստատությունը փակելը, իսկ հետո մինչեւ ուշ գիշեր նստել էինք «Քաղաքային գրադարանի մոտ» ռեստորանիկում եւ հուսահատ փորձում էինք գտնել այս պատմության լուծումը:

Մենք մի քանի հնարավորություն դիտարկեցինք: Ամենից առաջ կարող էր պարզվել, որ գրքում նկարագրվածը համընկել էր հնագիտական գյուտերի հետ զուտ պատահականությամբ: Սակայն ավելի ճշմարտանման էր թվում ինչ-որ հինավուրց ձեռագրի գոյությունը՝ լանդշտեյնյան քանդակների մասին հիշատակող, ինչ-որ աղբյուր, որի մասին գրողը գիտեր եւ ինչն օգտագործել էր իր ստեղծագործության մեջ,- նա ինքն ասում էր, որ ստեղծագործության մեջ հենվում է իրական աշխարհի փորձի վրա: Ընդ որում՝ փոխակերպումը գրական մոտիվի կարող էր անգիտակցական լինել՝ ստեղծագործական գործընթացում հիշողության հատակից դուրս լողաց մոռացված հիշողությունը ինչ-որ հոդվածի մասին կամ հատված գրքից, որը նա կարդացել էր, եւ գրողն այդ պահին կարող էր որոշել, թե դա իր

երեւակայության ծնունդն է: Բայց զարմացնում էր, որ գրողը, որ ակնհայտորեն մասնագետ չէր հնագիտության ոլորտում, գիտեր աղբյուրը՝ միանգամայն անհայտ բոլոր հայրենական եւ արտասահմանյան մասնագետներին. այդ ընթացքում տեղեկությունը քանդակի մասին հասավ արտասահման: Նաեւ հնարավոր էր, որ լանդշտեյնյան քանդակները ընդօրինակումներ էին, իսկ գրողն ինչ-որ տեղ տեսել էր բնօրինակը, կամ էլ ընդհակառակը, լանդշտեյնյան քանդակները բնօրինակն էին, իսկ գրողն ինչ-որ տեղ տեսել էր ընդօրինակումները: Բայց ինչ-որ տեղ այդ քանդակների գոյությունը, պատմաբաններից եւ արվեստաբաններից եւ ոչ մեկին հայտնի, թվում էր՝ էլ ավել ճշմարտանման, քան ենթադրությունը, թե գրողն օգտվել էր անհայտ հինավուրց աղբյուրից:

Կար մի բացատրություն եւս, որը կօգներ լուծել այդ հանելուկը, մտածեցի ես. հնարավոր է, քանդակներն ընդհանրապես չկան, ինչպես գոյություն չուներ եւ գրողը, եւ գրամեքենան կապույտ լույսով, եւ ծովային քաղաքի ձեռագիրը: Աղջիկը կարող էր այդ ամենը հորինել: Ինձ մեկեն կասկածելի թվաց, թե նա կարող է վերապատմել պատմությունը, լսված համարյա երկու տարի առաջ, դե, այն էլ մանրագույն մանրամասնություններով, տարօրինակ թվաց նրա հակվածությունը ծովային հեքիաթները վերապատմելուն: Գուցե թե, ամենը, ինչ նա ասում է, նկարագրված է հենց իր վեպում, եւ հիմա նա զվարճանքի համար պատմում է այն ինձ որպես իրական դեպք: Իսկ գուցե, նա պատմությունը գլխում է պահում. ես հիշեցի, որ նրա տարիքում քնից առաջ ինքս ինձ համար շարունակելի երկար վեպեր էի հորինում, որոնցից եւ ոչ մի տող չէի գրառել եւ որոնք հետո մոռացել էի: Նաեւ ինձ կասկածելի թվաց, որ ծովային աստվածուհին, ինչպես եւ նա, սովորել էր Պարահայի համալսարանում: Արդյո՞ք նա հերոսուհուն չէր վերագրել իր սեփական առասպելները: Մյուս կողմից, պատմության ճշմարտացիության մասին վկայում էր այն, որ ես իրոք տեսել էի կապույտ լույսը պատուհանում բրանիսկյան գարեջրագործարանի դիմաց: Այդ ինքնին ոչինչ չէր ապացուցում՝ աղջիկը կարող էր տեսնել կապույտ լույսն ավտոբուսից, եւ այն նրա համար ելակետ էր ծառայել ֆաբուլայի զարգացման համար: Նրա պատմության ճշմարտանմանությունը հաստատում էր նաեւ դրանում հնագիտության պրոֆեսորի առկայությունը՝ հավանաբար հենց նա էր ղեկավարույմ այն արշավը, որի մասին ինձ պատմում էր առափնյա հնագետը: Բայց այդ էլ համոզիչ ապացույց չէր: Ես մտածում էի այն մասին, թե ինչ դժվար է գտնել իրականությունը քաղաքում, որտեղ առարկաների եւ հերոսների մեծամասնությունը ստեղծված են բառերից եւ որտեղ

ողջ գոյողը՝ լոկ տեսիլք է: Այդ պահին ինձ թվաց, որ Պրահան ավելի իրական չէ, քան ծովային քաղաքը, եւ որ քանդակները տների ճակատամասերին՝ մեր գլխավերեւում նույնքան անիրական են, ինչպես եւ քարե կերպարանքները՝ հանգչող հողում, անտառի մեջ:

Լուծումը մենք կարող էինք իմանալ միայն գրողից: Ես խոստացա պրոֆեսորին գտնել նրան եւ հաջորդ օրն ուղեւորվեցի Բրանիկ: Բայց այնտեղ ես իմացա, որ սղոցանյութերի պահեստը մի քանի տարի առաջ փակվել էր, եւ ֆիրման, որին այն պատկանում էր, սնանկացել էր: Հողն ու շինություններն այժմ այլ տեր ունեին, եւ նախկին աշխատողներից ոչ մեկը չէր մնացել: Ես փորձեցի ինչ-որ բան իմանալ անհետացած ֆիրմայի մասին կամ էլ աշխատակիցներից որեւէ մեկին գտնել, բայց, ինչպես հաճախ լինում է նմանատիպ դեպքերում, ֆիրման անհետ կորել էր: Ես քայլում էի զանազան հաստատություններով, բայց ինձ ցույց էին տալիս միայն մի բոլուկ պաշտոնական թղթեր, որոնք հղում էին անում միմյանց: Իմ երկար որոնումները ավարտվեցին ոչնչով՝ ինձ նույնիսկ չհաջողվեց պարզել գրողի անունը: Պրոֆեսորը հիշեց, որ ես նրան պատմում էի անծանոթի գրական ստեղծագործության սկզբի մասին, եւ սկսեցի փնտրել նրան Գրողների միության եւ չեխական գրականության ինստիտուտի միջոցով, բայց նույնպես հաջողության չհասա: Այդ ընթացքում քանդակների պեղումներն անտառում դադարեցրել էին՝ անհրաժեշտ էր ստորոտն ամրացնել, թե չէ հողը կարող էր շարժվել, իսկ քարը՝ գլորվել: Եվ անտառի մեջ այդպես էլ մնացին առեղծվածային ծովային քանդակների հատվածները:

-Ես փորձում եմ պատկերացնել, թե ինչ տեսք ունեն դրանք:

-Մի անգամ ես դրանք տեսել եմ: Արձակուրդներին մենք ընկերներով ճամփորդում էինք Հարավային Չեխիայով: Մի առավոտ մենք ելանք Նոր Բիստիցիյից եւ ամբողջ օրը թափառում էինք ավստրիական սահմանի մոտի անտառում: Երեկոյան անտառը ետ քաշվեց, եւ մի քանի շինություններ երեւացին, որոնց վրա՝ ծառերի բների միջեւ բարձրանում էր հզոր քառանիստ աշտարակի՝ միջնադարյան ամրոցի մնացուկները: Գյուղական տան բակում մենք բաց ռեստորանիկ գտանք: Երբ մենք նստել էինք սեղանի մոտ, ինչ-որ մեկը մատուցողից հարցրեց, թե ինչպես է կոչվում ամրոցը, որի աշտարակին մենք նայում ենք: Նա ասաց, որ դա Լանդշտեյնն է, եւ ես տեղնուտեղը հիշեցի՝ ինչ-որ տեղ մոտակայքում պիտի լինեն անտառային քանդակները: Ես դրանց մասին հարցրի մատուցողին, եւ նա սեղանին դնելով դատարկ բաժակները, որոնք ձեռքերում էր բռնել, մեր գլխավերեւում մատնացույց արեց անտառը: Նա ասաց, որ քանդակներն այստեղից

կես ժամվա ճանապարհի վրա են եւ որ դրանք հեշտ է գտնելը, քանի որ դրանց կողքով անցնում է հատուկ նշված տուրիստական արահետը: Ես ուզում էի տեսնել քանդակները եւ սկսեցի մյուսներին համոզել՝ անհապաղ ուղեւորվել անտառ: Ոչ մեկը չէր ուզում գնալ, բայց երբ ես պատմեցի քանդակների գաղտնիքի մասին, ապա իմ ուղեկիցներին էլ հետաքրքրեց, եւ ընթրիքից հետո մենք խորացանք անտառի մեջ. արագ էր մթնում, եւ նշաններ բների վրա մենք ստիպված էինք լինում փնտրել գրպանի լապտերիկների օգնությամբ: Լույսի կոնաձեւ կորվածքներում թաղվում էին, որպեսզի տեղնուտեղն անհետանային խավարում, ծառերն ու վիթխարի գորշ քարերը: Իսկ հետո մենք հանկարծ տեսանք քանդակները: Բլրի գագաթին, խիտ աճած եղեւնիներով, ընկած էր մեծ մթին քարը, որ հսկայական կրիա էր հիշեցնում, իսկ դրա տակ տակից երկու կերպարանք էին ելնում: Մի կողմից քարը ձեռքով մի կին էր պահում, գլխազարդով եւ խիստ պղտոր ապակի ունեցող լապտերով: Կինը հեռուն էր նայում. ինձ թվում էր, որ այդ հայացքը նա ուղղում էր դեպի ծովային հարթության վրայի հեռավոր հորիզոնը: Մյուս կողմից, քարի տակ փոքրիկ փոս էր փորված, որը շատ հիշեցնում էր ինչ-որ կենդանու որջ. դրանում երեւում էր լոկ բարձրացրած մկանուտ ձեռք, որ ափով քարի էր հենվել:

Մենք փռեցինք քնապարկերը փոքրիկ մարգագետնում՝ բլրի տակ: Ինչ-որ մեկը մտածեց վառել լապտերը, որ ձեռքին բռնած էր քարե կինը: Մենք բացեցինք ապակյա դռնակը եւ լապտերը կոներով ու ճյուղերով լցրինք, իսկ հետո ներսում վառված թուղթ դրինք եւ կրկին դռնակը փակեցինք: Կրակը երկար վառվում էր: Ընկերներս շոտով քնեցին, իսկ ես դեռ պառկած էի պարկով փաթաթված, եւ նայում էի անտառային փարոսին: Դրա անհանգիստ լույսից ծառերի եւ քարե մեծաբեկորների ստվերները տատանվում էին: Ես դեռ քնած չէի, երբ լապտերի հատակին մնացել էր միայն մարմրող ածուխների շերտը. դրանք լուսավորում էին թույլ կարմրավուն լույսով քանդակի դեմքի մի կեսը, իսկ անտառը թաղվել էր խավարում: Հանկարծ ինձ թվաց, որ կարմրավուն լույսով լցված դեմքի մասում տարածվում է ծովային հարթությունը, որի վրա երեւում էին տների վերնահարկերը, անտառի աղմուկը վերածվեց հանդարտ ծովի կամացուկ ձայնի. ինձ պատկերանում էր, որ ահա-ահա խավարից կսպրդի լույսի շողը նավի քթին: Այդ պահին ես պատրաստ էի հավատալու, որ քաղաքն ինչ-որ տեղ օվկիանոսի մեջ իրոք գոյություն ունի եւ որ ինչ-որ մեկը ինչ-որ խորհրդավոր պատճառով գաղտնի տեղափոխել էր նրա դարպասը սլավոնիցկյան անտառներ եւ թողել այն այնտեղ:

Արձակուրդներից հետո հնագիտությանը նվիրված դասախոսություններ այլեւ չկային: Ես հանդիպեցի պրոֆեսորին ֆակուլտետի միջանցքում, եւ մենք փոքր-ինչ խոսեցինք քանդակների մասին. նա արդեն դադարել էր հավատալ, որ կգտնի գրողին: Եւ ես էլ դրան չէի հավատում: Հոկտեմբերի վերջում ես այցելում էի ընկերոջս Ժիժկովի վրա: Երեկոյան վերադառնում էի տուն, իջնում էի քրքրված տների երկայնքով եւ ուղղաձիգ ու ամայի փողոցներով՝ լայն ետնաբակերի մոտով, որոնցից հասնում էր գայլիկոնների կոկիչ հաստոցների ճղճղոցը: Պատահաբար նայելով փողոցի հակադիր կողմին, ես առաջին հարկում, պատուհանի ներքնամասում վառ կապույտ լույս տեսա: Ծողը լայն չէր, իսկ սենյակի մնացած մասը թաղված էր խավարում: Տեղնուտեղը մտքովս անցավ, որ դա գրամեքենայի լույսն է, եւ որ ես վերջապես կլուծեմ անտառային քանդակների գաղտնիքը: Ես հատեցի փողոցը, բացեցի դռան ծանր փեղկն ու տուն մտա: Բարձրացա հախճասալիկներով պատված պատերի կողքի մի քանի աստիճաններով, եւ հայտնվեցի մթին հարթակում, բնակարանի դռան առաջ. միայն երկաթյա լարերով ճարտարորեն միահյուսված բազրիքով աստիճանների վրա, որոնք տանում էին հաջորդ հարկ, վերից՝ ինչ-որ անտեսանելի պատուհանից ընկնում էր պաղ լույսի շողը: Տանտիրոջ ազգանունը գրված էր դռան մետաղյա աղյուսակի վրա, բայց մթության մեջ ես այն կարողացա կարդալ: Ես սեղմեցի զանգի կոճակը: Քայլեր լսվեցին: Հետո դուռը բացվեց, եւ ես տեսա մոտ երեսուն տարեկան դժգույն մարդու՝ ակնոցով, երկար, ետ սանրած սեւ մազերով: Նրա վրա բացգույն, կարմրադարչնավուն բծերով վերնաշապիկ էր. սկզբում ես վախեցա, դրանք չորացած արյան տեղ դնելով, բայց հետո նրա թեւքերի վրա այլ գույների բծեր նկատեցի, եւ մտքովս անցավ, որ նա, երեւի թե, նկարիչ է, ու ես խանգարեցի արարել: Նախասենյակում կիսախավար էր. հակադիր պատին կախիչի վրա գորշագույն մի պիջակ էր, որի ճմռթած թեւքը դիպչում էր քրքրված, բաց դեղնավուն դռանը, դրա վերին մեկ երրորդական մասում երեւում էր փայլատ ապակի, մթին ուղղանկյան մեջ փայլկտում էին շաղված կապույտ լույսի կաթիլները: Ես փոքր-ինչ խառնիխուռն բացատրեցի դուռը բացած տղամարդուն, որ փնտրում եմ գրողին, որն աշխատում է կապույտ լույսով գրամեքենայի վրա: Տղամարդու տեսքն էլ շփոթահար էր, դատելով ըստ ամենայնի, նա հյուրերի չէր սպասել: Նա սկսեց ինձ համոզել, որ այդպիսի գրամեքենա ինքը չունի, եւ որ, բացի իրենից, բնակարանում ոչ մեկը չի ապրում: Եվ ասես կամենալով ապացուցել, որ ինձնից չի թաքցնում ոչ գրամեքենան, ոչ էլ հենց գրողին, նա բացեց փայլատ ապա-

կիով դուռն ու ինձ ներս թողեց: Սենյակում, ուր տանում էր դուռը, կիսախավար էր, միայն պատուհանի առաջ շողում էր կապույտ ծվածեւությունը, որ ինչ-որ տարօրինակ, սեղանի վրա դրված կառուցվածքի մասն էր: Ինձ հետաքրքրեց, թե ինչ է դա, եւ ես մտա մթին սենյակը: Պոլիէթիլենով ծածկված սեղանի վրա բարձր սարք էր գտնվում, որ բաղկացած էր տարատեսակ բազում ապակյա անոթներից. դրանցից ոմանք ամրացված էին մետաղական ամրակալաներով եւ փակցված միմյանց ապակյա խողովակիկներով: Կապտավուն առկայծում էր հեղուկը, որը լցրել էր բարձր ծվածեւ տարան, հաստատված ամրակալի վրա, մոտավորապես երեք քառորդ մետրով սեղանի հարթության վրա. դրա վերնամասից տասը խողովակիկներ էին ելնում: Դրանցից ութը բարձրանում էին զառիկող աղեղով, հետո փոքր-ինչ իջնում եւ կրկին բարձրանում էին: Երկու խողովակիկները մնացածներից ավելի երկար էին, դրանք կորվում էին ուղղաձիգ աղեղով եւ մնացածի ուրվագծած շրջանի սահմաններից անդին էին ելնում: Հենց այդ երկար խողովակիկների ելանցքների տակ ցածրիկ պատվանդանների վրա երկու ծվածեւ կեղտականաչ առարկա էին կանգնած, շրջված սուր ծայրով դեպի վար: Դրանց միջեւ, մետաղական ամրակալանների վրա թիթեղյա թանթ էր ամրացված, դրա մի ծայրը գտնվում էր բաց ապակյա գլանային տարայի վրա, որը լցված էր մուգ մանուշակագույն հեղուկով, որի մակերեսը ծածկում էր կեղտադեղին փառը, որ նման էր թթված սերուցքի: Ապակյա գլանը կեցած էր մետաղական կրկնատակի վրա, մի կողմից նեղացված այլ ապակյա տարայով, որը փոքր-ինչ վար էր դրված, խորանարդի ձեւ ուներ եւ դատարկ էր: Ես մտորեցի, թե ինչի է պետք այդ անոթների, ամրակալների, խողովակիկների եւ թիթեղների խճողվածքը: Արդյո՞ք ես գաղտնի ալքիմիկոսի սենյակ էի ընկել կամ հայտնվել էի խելագար գիտնականի որջում, որը ահա-ահա կթմրեցնի ինձ եւ ինձ վրա կփորձարկի իր սարսափելի փորձերը: Բայց ակնոցավոր տղամարդը սարսափազդու չէր երեւում, նա նույնիսկ գիտնականի էլ նման չէր, իսկ ալքիմիկոսի կամ մոգի ընդհանրապես չէր հիշեցնում:

Ես շուրջբոլորս նայեցի: Կապտավուն կիսախավարից երեւում էին ծանր կոկած պահարանները կլորացված անկյուններով, որոնք պատրաստում էին երեսնական թվականներին, անջատված ծողաջահը փայլփլուն մետաղական ոտքի վրա կորանում էր ցածրիկ կլոր սեղանիկին, որ տեղավորված էր երկու բազկաթոռների միջեւ, դրանց մաշված սեւ կաշվի վրա ծակեր էին երեւում. պահարանի պատուհանի ետեւում կուտակված էին կենդանիների ապակյա կերպարանքներ. պատից յուղաներկով արված

նկար էր կախված, որ պատկերում էր սլովակյան հանդերձանքով մի գեղջկուհու: Ես մտածեցի, որ բնակարանը ժառանգություն էր մնացել տղամարդուն ծնողներից կամ էլ բարեկամներից եւ տարածությունը, որում նա ապրում է, նրան այնքան քիչ է հետաքրքրում, որ նա չի ուզում ժամանակ ծախսել դրա մասին հոգ տանելու վրա կամ էլ ինչ-որ փոխոխությունների վրա: Բայց ինչպե՞ս էր այդ նեխահոտ փչող մռայլ սենյակի մեջ ընկել ապարատը, որի տեղն ավելի շուտ քիմիական լաբորատորիայում էր: Ես շրջվեցի դեպի ակնոցավոր տղամարդը եւ ուզում էի հարցնել նրան, բայց նա շարժումով իմ ուշադրությունը գրավեց դեպի սարքը: Տարայի մեջ, որտեղ փայլում էր կապույտ հեղուկը, սկսեց ինչ-որ բան կատարվել: Փայլող հեղուկի ծավալը դանդաղ ավելանում էր, այն տարտամ բարձրանում էր խողովակիկներով, իսկ վերեւին հասնելով, այն կրկին վար սողաց: Ծուտով բոլոր տասը խողովակիկները մինչեւ պռունկը հեղուկով էին լցված: Ինձ թվաց, թե խողովակիկներով բանկան մթին սենյակում շոշափելիքներով շողացող մեդուզայի տեսք ուներ, որոնցից երկուսը՝ նրանք, որ ձգվում էի դեպի ավարը, մյուսներից ավելի եկար ու բարակ էին: Խողովակիկների սուր ծայրերը ծածկված էին ապակյա խցաներով, եւ հեղուկը չէր կարող դուրս թափվել: Սակայն շուտով դրա ճնշումը այնքան ահագնացավ, որ խցաններն ընկնում էին եւ մեկը մյուսի ետքից թույլ զնգոցով սկսեցին ընկնել մետաղյա թանթի վրա: Կարճ խողովակիկների ծայրերից հոսեցին շողացող հեղուկի բարալիկ շիթերը եւ ընկան հենց ութանկյան ութ ծայրերի մեջ, որը, ինչպես ես հենց տեղնուտեղը նկատեցի, փորագրված էր թանթի մակերեսի վրա: Եվ մեկեն տարայի մեջ հեղուկը մարեց: Մեդուզայի կերպարանքը, որ ելնում էր ծովի խորքերից, խամրեց. այժմ ինձ թվում էր, թե ես նայում եմ գիշերային այգու ութ շողշողացող սյուներով առեղծվածային տաղավարին, որ հենվում էին ֆանտաստիկ ձեւի կտուրին: Խողովակիկներով իր ճամփորդության ընթացքում հեղուկը նկատելի հոծացել էր, ավելին՝ այն շարունակում էր հոծանալ եւ այն բանից հետո, որ ելավ խողովակիկների ելուստներից, այնպես որ՝ այն պահին, որ դրա շիթերը դիպան մետաղական թիթեղաթանթին, այն արդեն այնքան խիտ էր, որ չէր ծորում, եւ այդ պատճառով ութանկյան անկյուններում մեր աչքի առաջ աճում էին փայլկտող կապույտ պտկաքարերը: Մենք երկուսս էլ լռում էինք եւ կիսախավարում նայում կապույտ գծերին. հարեւան բնակարանից, որտեղ միացված էր ռադիոն, փողային նվագախմբի ձայներ էին հասնում: Հեղուկն ավելի ու ավելի խտանում էր, մինչեւ որ շիթերը լրիվ քարացան. տաղավարի նեոնե սյունիկները տեղի տվեցին ու պայթեցին, իսկ խողովա-

կիկների անցքերից ջղածիգ ցատկերով սկսեց դուրս հորդել կապույտ փայլող կպչուն խմորը, որը երբեմն հավաքվում էր խողովակիկների ծայրերին ավելի ու ավելի մեծացող գնդերի, իսկ հետո արագ ընկնում էր, ինչպես առձիգ ռետինի վրա: Կապույտ գլանների ութ երկարացած սայրերի վրա, որ բարձրանում էին մետաղական թանթի վրա, մեկ ձգվում, մեկ կրկին կարճանում էին, չդիպչելով դրանց, կապույտ խմորի կտորները: Այդ ընթացքում հեղուկը դուրս մղեց խցանները երկու երկար խողովակիկների ծայրերին, դրա առաջին կաթիլներն ընկան կանաչ ծավալներին: Դրանց մակերսի վրա տեղնուտեղը հայտնվեց բացգույն ճաքերի ցանցը: Թշշոց լսվեց, եւ ճաքերի արանքից սկսեց բարձրանալ սպիտակ գոլորշին: Թվում էր, որ կապույտով փայլող պտկաքարերը ինչ-որ ձեւով քաշում են դրանց՝ գոլորշին հոսում էր առ դրանք երկու կողմերից, պարույրով պտտվում էր դրանց շուրջը եւ հետզհետե վերածվում սպիտակ գոլորշու: Այժմ հեղուկը մարեց խողովակիկներում, այնպես որ՝ ապակյա կառուցվածքը կախվում էր սեղանածածկի վրա, ինչպես մեծ ու մթին սարդ: Պտկաքարերը, որ աճում էին մետաղական թանթի վրա, նույնպես սկսեցին մարել, եւ ինչ-որ ժամանակ միակ լույսի աղբյուրը սենյակում, փողոցի լապտերի արտացոլքից բացի, պահարանների կլորացված անկյունների վրա. սպիտակ մշուշում կապույտ լույսով փայլող պտկաքարերի ծայրերն էին: Մշուշոտ գունդն ավելի ու ավելի դանդաղ էր պտտվում, մինչեւ որ վերջնականապես քարացավ: Այն վերածվում էր սառնորակ զանգվածի, որն ավելի ու ավելի հոծ ու անթափանց էր դառնում, կապույտ լույսը դրա ներսում համարյա թե արդեն չէր երեւում: Ես ուզում էի մեկ անգամ էլ նայել դրան եւ այդ պատճառով կռացա ու նայեցի գլանների փայլող ծայրերի մակարդակին. ես տեսա պղտոր կապույտ կրակների շարքը, որոնց անհաստատ լույսն ինձ հիշեցրեց «Պրահա-Սմիխով» նեռնե գրությունը սմիխովյան կայարանում: Վերջապես լույսը կորավ, թեպետ ես գիտեի, որ այն դեռեւս փայլում է սպիտակ անճիշտ գնդի ներսում, ուր վերածվել էր գոլորշու եւ ելնում էր անցքերից: Կորան վերջին կապույտ արտացոլքերը ապակիների եւ կահույքի կոկած մակերեսի վրա, այժմ սենյակը լուսավորում էր լոկ փողոցայի լապտերի թույլ լույսը:

Հոծանալով՝ սպիտակ գունդը գոլորշուց ավելի ու ավելի էր ծանրանում: Ամրակալի ուսը, որի վրա կեցած էր սպիտակ գունդը, թեքվել էր, եւ կաթնագույն առձիգ մարմինը սահում էր մետաղական թանթի վրայով. այն ցատկերով իջնում էր վար, եւ միաժամանակ քարանալով, ամեն անգամ դոնդողանման թրթռում էր: Պարզ էր, որ ուր որ է կհասներ թանթի ծայրին,

կգլորվի դրա վրայով եւ կընկնի մանուշակագույն հեղուկի մեջ: Ես անհանգիստ նայեցի ակնոցավոր տղամարդուն, բայց նա զննում էր դողդողացող սպիտակ կտորը միանգամայն անտարբեր, միայն մեղմորեն ինձ ձեռքով հեռացրեց սարքից ավելի հեռու: Մի վայրկյանից դողդողացող դոնդողը իրոք հասավ թանթի ծայրին, գլորվեց դրա վրայով եւ ընկավ անոթի մեջ: Մանուշակագույն հեղուկը ցայտեց բոլոր կողմերի վրա եւ մի կես մետր վեր: Ընդ որում՝ ինչ-որ զարմանալի բան տեղի ունեցավ: Հեղուկը ետ չվերադարձավ անոթի մեջ եւ հատակի վրա չթափվեց, որովհետեւ վայրկենապես ամրացավ: Դա ակնհայտորեն ինչ-որ նյութ էր, որն օդի հետ շփվելիս արտասովոր արագ վերածվում էր պինդ վիճակի. եւ դեղին կեղեւը, որ ընկած էր հեղուկի մակերեսի վրա, իսկ այժմ հոսել էր պոլիէթիլենի ժապավենի վրա եւ կեղտոտել էր մանրահատակը, հավանաբար, ծառայում էր այն բանի համար, որպեսզի խանգարեր դրա վաղաժամ շփումն օդին: Հեղուկը, ցայտելու պահին կարծրացած, տարօրինակ ձեւ էր ընդունել՝ դա ինչ-որ հրեշավոր ծովապուտ էր թափանցիկ ապակետեսք զանգվածից, դրա բարալիկ շոշափելիքները ցցվել էին տարբեր կողմերի վրա, իսկ դրա մեջտեղում՝ այնտեղ, ուր ընկել էր գունդը՝ պղպջակ էր գոյացել: Կաթիլները, որոնք դեռ կարելի էր տարբերել, ընկել էին սեղանի ու հատակի վրա արդեն որպես պինդ գնդիկներ՝ ասես ցրված փոքրիկ հուլունքահատեր էին: Հանկարծական ճայթյունից եւ կամացուկ թակոցից հետո կարծրացած կաթիլների, որոնք ընկնում էին մանրահատակի վրա, նորից լռություն տիրեց, որում լսվում էր լոկ պատի ետեւի խլացած ռադիոերաժշտությունը: Ես նայում էի թափանցիկ մանուշակագույն բույսին, որն անսպասելի աճել էր իմ առաջ: Այն բարձրանում էր պատուհանի ֆոնի վրա, ամբողջովին ծածկված դիմացի տան ճակատամասով: Ապակյա բույսի ներսում դեռեւս երեւում էր սպիտակ մարմինը, որի շնորհիվ այն հայտնվել էր եւ որ այժմ ամուր սերտաճել ապակետեսք զանգվածի: Ծուտով սպիտակ գնդի մակերեսի վրա մեկը մյուսի ետեւից սկսեցին հայտնվել կապույտ վառ կետեր, դրանք ձգվեցին փայլող թարթիչների պես, բայց աճման մեջ կանգ չառան, այլ երկարում ու երկարում էին: Սպիտակ մարմնի անտեսանելի խորքերում ինչ-որ բան էր տեղի ունենում, փայլող սայրերը սկսեցին ընձյուղվել սպիտակ զանգվածի միջով, եւ երբ այդ կապույտ փայլող միջներակները հասան գնդի մակերեսին, ես տեսա դրանք անհավանական ծովապուտի թափանցիկ նյութի միջով: Հետո ես կարող էի զննել դրանց շարժումը. կապույտով փայլկտող միջներակները ձգվում էին դեպի ծայրերը, միահյուսվում եւ անսահմանորեն ճյուղավորվում էին, գոյավորելով

ավելի ու ավելի նեղ մազախողովակներ՝ այդպես դրանք նյարդային հյուսվածք հիշեցնող ցանց էին կազմում: Ընդ որում՝ դրանց լույսը տարածվում էր մանուշակագույն նյութի վրայով, եւ ծովապուտը թույլ շողում էր իր բոլոր բարալիկ երկարագծերով:

Աղջկա ընկերները գնում էին, նրանք կանգ առան մեր սեղանի մոտ, թեեւ վզակապով շունը անհամբեր նրանց դռան մոտ էր քարշ տալիս, եւ պայմանավորվեցին վաղն առավոտյան հանդիպել համալսարանի գրադարանի ընթերցասրահում: Զենոնի մասին այլեւս ոչ մեկը չէր հիշատակում: Երբ նրանք հեռացան, աղջիկը վերադարձավ Ժիժկովի վրայի իր բնակարանը:

-Զննելով ապակյա ծովապուտի մեջ տեղի ունեցածը, ես տարօրինակ հոտ զգացի: Այն ինձ հիշեցրեց այն հոտը, որը մենք զգում ենք, երբ շոգ ամառային օրը աչք ենք ածում գյուղական գարեջրատան դռնից, որի ետեւում գտնվում է դատարկ սրահը, որտեղ ծմռանը որսորդական խնջույքներ են լինում: Ես շուրջբոլորս նայեցի, որպեսզի գտնեի հոտի աղբյուրը, եւ տեսա, որ զանգվածը կանաչ ծավալների ներսում սկսեց կարմիրով փայլել. ճաքերի միջից այժմ հոսում էր կարմիր, թույլ առկայծող գոլորշին: Բայց շուտով այդ կարմիր շնչառությունը հանկարծ ընդհատվեց, եւ ծվանման առարկաները մարեցին: Կարմիրով փայլող ամպիկները սկսեցին շարժվել: Մեկը վեր բարձրացավ, լուսավորեց աշխարհագրական քարտեզի նմանվող խոնավ բծերը առաստաղի վրա, սվաղից ընկրկեց, իջավ դեպի հատակը եւ թաքնվեց մահճակալի տակ, որտեղից հետո կարմիրով էր փայլկտում: Իսկ մյուս ամպիկը լողաց սպասքապահարանի մոտով՝ արծանիկները մի պահ վառվեցին կամիր կրակներով՝ պատի երկայնքով, որտեղ դրա լույսի ներքո դուրս էին ելնում խաթարված պատի նախշերը, վաղուց արված ինչ-որ գլանիկով, եւ լուսավորեց նկարի վրայի գեղջկուհու դեմքը: Երբ ամպիկը կրկին մոտեցավ մեզ, ակնոցավոր մարդը ձեռքի թափահարումներով քշեց այն դեպի մանուշակագույն ծովապուտը: Ամպիկը դիպավ դրան, հետո կողմ լողաց եւ քարացավ սենյակի անկյունում: Ծուտով այն տեղից, որտեղ ամպիկը դիպել էր ծովապուտին, շաղվեց մանրիկ փոշին. այդ պրոցեսը տարածվում էր ծովապուտի ողջ մարմնով մեկ, ինչպես ցան, մեղմ շրշյունով այն ամբողջովին շաղվում ու շաղվում էր, մինչեւ որ պատուհանի առաջ մնաց միայն միահյուսված եւ ճյուղավորվող կապույտ միջներակների մերկացած հյուսվածքը, որ նման էր փայլող թփի, որում հայտնվում է ինչ-որ անհասկանալի կամ խելագար աստված: Լույսը բարձրանում եւ ընդ որում՝ բաբախում էր, բայց հետո ես

տեսա, որ մացառուտի ճյուղերը սկսեցին կծկվել, կոտրվել եւ ընկնել մանուշակագույն փոշու մեջ, որին վերածվեց ապակետեսք նյութը: Փոշին սկսեց փրփրել, ինչպես ջրով խառնված փրփրաըմպելիք, հոծ փրփուրը հոսում էր ցածրիկ կրկնատակով, որի վրա կեցած էր անոթը, եւ փողրակով լցվում էր խորանարդաձեւ տարայի մեջ, որտեղ վերածվում էր հեղուկի եւ փայլում թույլ կապտավուն լույսով:

Որոշ ժամանակ անց հեղուկը սկսեց պնդանալ, ինչ-որ տարօրինակ մթին ձեւեր ստեղծելով: Անոթի քառակուսի պատիկը, որի ներսում աղոտ շողում էր կապտավուն հեղուկը, փոքր-ինչ հեռուստացույցի էկրան էր հիշեցնում. ինձ թվում էր, թե ես ինչ-որ անհասկանալի հեռուստաալիքի հաղորդում եմ նայում: Ես տեսնում էի՝ ինչպես են ծնվում ձեւերը, որոնց համար անուն գոյություն չունի: Ուրվագծերից, սկզբում պարփակված իրենց մեջ, հետզհետե սկսեցին ուռչել եւ ձգվել ելուստները, եւ երբ դրանք հասնում էին այլ ձեւի, ապա պարուրում էին այն եւ սերտաճում դրան: Պատահում էր, որ ինչ-որ ելուստ առանձնանում էր մարմնից, որից այն աճել էր, իսկ հետո շրջապատում եւ կլլում էր այն. պատահում էր նույնիսկ, որ այն հարձակվում էր մարմնի վրա, որի հետ դեռեւս կապված էր: Այդ մունջ գործողություններն ինձ երաժշտություն էին թվում, որտեղ փոփոխվող ձեւերը օգտագործված են տոների փոխարեն: Հետո բոլոր ձեւերը լուծվեցին եւ գոյավորում էին անոթի հատակին փռված ժապավենը: Դրանում սկսեց բյորեղանալ տարօրինակ հարթ երկրաչափական օբյեկտը: Սկզբում հայտնվեց սպիտակ հավասարակողմ եռանկյունին, այնուհետեւ դրա երեք կողմերը ահագնացան այն կերպով, որ կենտրոնում եւս մեկն աճեց. արդյունքում հայտնվեց վեցթեյան աստղը: Գծի վերափոխումը, որ աստղ էր արարում, հար շարունակվում էր. նորից կողմերից յորաքանչյուրի մեջ, որոնք այժմ տասներկուսն էին, աճեց հավասարակողմ եռանկյունին, որի երկարությունը կազմում էր նախնական կողմի երկարության մեկ երրորդը, եւ հետո կերպարանքի այս կերպ առաջացած քառասունութ կողմերով տեղի ունեցավ միենույնը...Մարմինն ավելի ու ավելի էր փաթիլ հիշեցնում, ընդ որում՝ վերափոխումների պրոցեսը մշտապես արագանում էր եւ սպիտակ գիծը բարակում էր: Զննելով այդ տարօրինակ աստղը, ես հանկարծ գիտակցեցի, որ տարայի՝ մեզ անտեսանելի հատակին ծնվում է ձեւը, որի պարագիծը անսահման կլինի. եթե մտովի ձգես գիծը, այն կանցնի ողջ տիեզերքով: Սակայն շուտով այդ աստղը չքացավ, եւ կարճատեւ ընդմիջումից հետո անոթի մեջ սկսվեց ներկայացման երրորդ գործողությունը: Դրանում կրկին ծնվում էին ձեւերը, որոնք խաբուսիկ տպավորություն էին

ստեղծում, իբր թե դրանք կյանքով են լեցուն: Սակայն այս անգամ սա միանգամայն այլ աշխարհ էր, քան մյուս գործողությունների ժամանակ ծնվածները: Ծագող ծեւերը ամենից շատ հիշեցնում էին ֆանտաստիկ բույսեր, տարայի մեջ մտահնար մացառուտներ էին հայտնվում, ընդ որում՝ բույսերից յուրաքանչյուրը ապրում էր մեկուսացված կյանքով եւ չէր արձագանքում իր հարեւաններին. հետո այդ կախարդական այգու ճյուղերի մեջ սկսեցին վառվել եւ դանդաղ մարել կարմիր, դեղին ու կապույտ կրակները: Պրոցեսը բավական երկար էր տեւում, բայց այնուհետեւ այդ ծեւերը եւս չքացան, եւ հեղուկն անոթում մգացավ, այնպես որ՝ չէր երեւում, արդյո՞ք այնտեղ ինչ-որ բան է կատարվում: Ակնոցավոր մարդը վառեց կաշեպատ բազկաթոռների միջեւ դրված ծողաջահը: Քառակուսի անոթում սեւ կեղտ էր, որն արագ չորանում էր, ընդ որում՝ ամռանը հին թաղամասերի շնչառություն հիշեցնող հոտ արձակելով, եւ շուտով վերածվեց սեւ փոշու: Ակնոցավոր մարդը դրա մեջ թաղեց եռքը, փոքր-ինչ տնտղեց խորքում եւ հերթականությամբ հինգ գունավոր քար հանեց:

«Ինչ գեղեցիկ են»,- բացականչեց նա, տեսնելով դրանք: Ես նրան հարցրի, թե ինչի համար են օգտագործվում այդ քարերը: Թե՞ դրանք արվում են միայն գեղեցկության համար: Նա պատասխանեց, որ քարերը պրոցեսի կողմնակի արտադրանքն են, իսկ նյութը, որը պիտի ստացվի եւ հանուն որի տեղի է ունենում ողջ գործողությունը՝ սեւ փոշին է: Նրա հորեղբայրը, որը հայտնաբերել էր այդ քիմիական ռեակցիան, քարերը աղբարկղն էր նետում:

«Իսկ ինչի՞ն պետք սեւ փոշին»,- հարցրի ես:

«Ամենատարատեսակ նպատակների համար,- անվստահ պատասխանեց նա:- Օրինակ, ամերիկյան սուզանավերի օդորակիչների աշխատանքի համար, կանացի սպիտակեղենի արտադրության համար, հինավուրց կրետական գրի վերծանման եւ ավստրալիական թռչունների որսի համար»:

Ես հարցրի, թե ինչու է նա քմծիծաղում ինձ վրա: Նա նստեց ծողաջահի տակի բազկաթոռին, քարերը դրեց կլորիկ սեղանիկի ապակյա ծածկի վրա եւ ինձ հրավիրեց նստելու մյուս բազկաթոռին: Իսկ հետո սկսեց պատմել ինձ իր հորեղբայր-քիմիկոսի մասին: Վաթսունականների կեսերին հորեղբայրը գաղթել եւ ապրում էր ինչ-որ տեղ՝ մեկ Գերմանիայում, մեկ Ֆրանսիայում, մեկ Միացյալ Նահանգներում: Երբ նա գնում էր, զարմիկը տասը տարեկան էր, երբեմն նամակագրություն էին ունենում, բայց հորեղբոր մասին նա շատ քիչ բան գիտեր, սոսկ այն, որ նա աշխատում է

ինչ-որ խոշոր միջազգային ընկերության հետազոտական լաբորատորիաներում: Իննսուներկու թվականին հորեղբայրը վերադարձավ Պրահա: Նա մինչեւ մեկնելն էլ ընկերներ չուներ, եւ արտասահմանում էլ նա ինքնամփոփ կյանք էր վարում, զբաղվելով միայն իր գործով: Նրա զարմիկը այդ ընթացքում միայնակ մնաց Ժիժկովի վրայի իր տանը, որովհետեւ ծնողները, որոնց հետ մանկուց նա ապրում էր այդ բնակարանում, ութսունական թվականներին մահացել էին, եւ երբ հորեղբայրը եկավ Պրահա, երիտասարդն առաջարկեց նրան բնակվել սենյակներից մեկում: Հորեղբայրը բնակարան բերեց իր քիմիական սարքերը, օրերով նստում էր՝ փակված իր սենյակում, եւ ինչ-որ փորձեր էր անում: Ակնոցավոր մարդը ջրարգելակի պահակ էր աշխատում Պրահայի կղզիներից մեկում, հաճախ գնում էր գիշերային հերթափոխի, իսկ ցերեկը քունն էր առնում: Եվ հետո նրանք հանդիպում էին, որպես կանոն, խոհանոցում նախաճաշին կամ ընթրիքին, դե, եւ այդ ժամանակ էլ հիմնականում լռում էին: Երբ ջրարգելակի պահակը ելնում էր նախասրահ, ապա համարյա միշտ տեսնում էր հորեղբոր սենյակի դռնատակի անցքերից բազմաբղետ լույսի արտացոլանքները՝ հաճախ այնտեղից բլթբլթոց ու թշշոց էր լսվում եւ բնակարանով մեկ տարօրինակ հոտեր էին ընկնում՝ հիասքանչ եւ նողկալի: Այդ ամենը չափազանց հիշեցնում էր փախուկ ամերիկացի գյուտարարների կոմիքսների եւ կինոկատակերգությունների պատմությունները, որոնք միշտ ավարտվում են այն բանով, որ պայթյուն է հնչում եւ ծխի ամպի տակից հայտնվում է դժբախտ գյուտարարը ճղճղված կոստյումով եւ զվարճալիորեն մրով պատված դեմքով: Մի օր նա զգուշորեն հարցրեց հորեղբորը՝ արդյո՞ք նրա փորձերն իրոք անվտանգ են: Հորեղբայրը ժպտաց, մտավ իր սենյակ եւ վերադարձավ նամակների տրցակով: Այնտեղ նամակներ էին ֆրանսիացի ակադեմիկոսներից, ամերիկացի եւ ճապոնացի նոբելյան մրցանակի թեկնածուներից, նրանք բոլորը հիանում էին նրա աշխատանքներով եւ հետաքրքրվում նրա կարծիքով տարատեսակ հատուկ հարցերի մասին:

Նա հասկացավ, թե իրականում ինչքան քիչ բան գիտի հորեղբոր մասին: Մի կիրակի առավոտ, նախաճաշի ժամանակ նա փորձեց հարցուփորձել, թե ինչու է հորեղբայն ապրում այն ամենով, ինչ կուտակել էր արտասահմանում, եւ ինչու է աշխատում դեպի դուրս նայող հասարակ սարքերով՝ ժիժկովյան մթին սենյակում: Հորեղբայրը բեկոնով ձվածեղի վրայից բարձրացրեց հայացքը եւ ասաց, որ արտասահմանում նա գտել էր զարմանալի սեւ փոշու արտադրության միջոցը: Այդ հայտնագործությունը, ասաց նա, հեղաշրջում կբերի գիտության մեջ եւ լայն կիրառում կստանա

ամենատարբեր ոլորտներում: Նա արդեն փորձարկել էր սեւ փոշին տարատեսակ խնդիրների համար եւ արդյունքները գերազանցել էին ամենահամարձակ սպասումները: Այժմ նրան պետք է լոկ որոշ մանրամասներ մշակել, իսկ դրա համար բավական է փոքրիկ սարքը: Մեկուսացումը ժիժկովում նրան օգնում է չշեղվել եւ երաշխավորում է, որ միառժամանակ նրա աշխատանքը գաղտնի կմնա: Հետո նա զարմիկին ասաց, որ հասկանում է, թե ինքն ինչ անհանգիստ ու ծանր հարեւան է, եւ ուզում է փոխհատուցել այդ, նրան իր գործընկերը դարձնելով: Նա ասում էր, որ իր իսկ համար հայտնագործությունը հետաքրքիր է միայն գիտական տեսանկյունից, բայց նա երեւի թե գիտի, որ այն միլիոններ է խոստանում:

Զարմիկը հարցրեց նրան, թե ինչպես է սեւ փոշին գործածվում բոլոր այդ ոլորտներում, եւ հորեղբայրը պատասխանեց, որ մի քանի գործողություններ են պետք, որոնք ինքնին բարդ չեն, բայց դրանք դժվար է բացատրել, եւ խոստացավ ամեն ինչ բացատրել, երբ նա ավելի շատ ազատ ժամանակ ունենա: Այուս շաբաթ ժամանակ չգտնվեց՝ հորեղբայրս ինչ-որ մանրուքներ էր անում-պրծնում եւ իր սենյակը չէր լքում: Պահակը այդ շաբաթն ապրեց ասես երազում: Նա երբեք չէր ծգտում հարստության, նրա մտքով իսկ չէր անցնում կարիերա անել, սակայն նա մանկուց երազում էր ճամփորդել տարաշխարհիկ երկրներով: Այժմ, երբ նա լսեց միլիոնների մասին, նրա գիտակցության մեջ սկսեցին հայտնվել պատկերները, որ ննջում էին մանկական տարիներից ի վեր՝ ափերն արմավենիներով, աղմկոտ շուկաները արեւից շիկացած կավե պատերի մոտ, հյուրանոցների խաղաղ միջանցքները, դարավանդները ծովի վրա եւ լեռնատնակների ապակեպատ ծածկապատշգամբները: Հետո վրա հասավ հաջորդ շաբաթը. հորեղբայրը անցավ նրա մոտ եւ հաղորդեց, որ վերջապես ավերտել է իր աշխատանքը եւ կգնա զբոսնելու: Մեկ ժամից հնչեց հեռախոսազանգը, եւ անծանոթ ձայնն ասաց, որ փողոցն անցնելիս հորեղբայրը մեքենայի տակ էր ընկել եւ մահացավ «Ծտապ օգնության» մեքենայում, որը նրան հիվանդանոց էր տանում:

Ուշքի գալով բաեկամի մահից հետո եւ կրկին ընտելանալով դատարկ բնակարանին, պահակը սկսեց աչքի անցկացնել հորեղբոր գրառումները, որպեսզի ինչ-որ բան իմանար նրա հայտնագործության մասին: Պարզվեց, որ քիմիկոսը մանրամասն փաստագրել էր արտադրության պրոցեսը եւ ըստ նրա գրառումների դժվար չէ կրկնելն ու սեւ փոշի ստանալը: Բայց հորեղբայրը մի բան մոռացել էր՝ գրել, թե հատկապես ինչպես է օգտագործվում սեւ փոշին, այսինքն՝ ինչ է պետք դրա հետ անել,որպեսզի հաս-

նես բոլոր այդ զարմանալի արդյունքներին: Հորեղբոր թղթերում ոչ մի հիշատակություն չգտնելով, պահակը սկսեց հարցուփորձել այդ մասին մասնագետներին, բայց նրանք ի պատասխան միայն ուսերն էին թոթվում:

Ընդ որում պարզվեց, որ փոշին իրոք էլ համակողմանի է: Պահակը հորեղբոր իրերի մեջ գտավ նամակագրության թղթապանակները, որը վերաբերում էր այն մի քանի դեպքերին, երբ հորեղբայրը օգտագործել էր փոշու ներգործությունը: Այնտեղ նամակներ էին ամերիկյան ռազմա-ծովային նավատորմիղի Գլխավոր շտաբից, որտեղ ինչ-որ ծովակալ գովում էր հորեղբոր հրահանգը սուզանավերում օդորակիչների մասին, «Քրիստիան Դիոր» ֆիրմայի տնօրենի նամակը, որ հետաքրքրվում էր արհեստական բամբակով կանացի գուլպաների մասին, որի նմուշը հորեղբայրս, հավանաբար, ուղարկել էր ֆիրմային, նամակի սեւագիրն Օքսֆորդի պրոֆոսորին, որտեղ հորեղբայրը հաղորդում էր, որ կարող է իրբ գյուտի օգնությամբ վերծանել կրետական գիրը, եւ ուղերձը, որտեղ նախարարության ավստրալացի աշխատակիցը երախտապարտ էր լինում հորեղբորն այն բաի համար, որ իրեն հաջողվեց բռնել թռչունին, որին մինչեւ այժմ ոչ մեկը չէր կարողանում բռնել: Պարզ էր, որ թռչուն որսալիս էլ ինչ-որ ձեւով գնել էր սեւ փոշին: Ֆրարգելակի պահակը գլուխ էր ջարդում այն բանի վրա, թե ինչ ընդհանուր բան կար բոլոր այդ նամակների միջեւ, ինչով էին հատկապես կապված սուզանավը, կանացի գուլպաները, ավստրալական թռչունը եւ կրետական պատկերագրությունը, բայց այդպես էլ ոչինչ չմտածեց՝ նրա գիտակցության մեջ բոլոր այդ բաները մռայլ քարացել էին իրար կողքի, ինչպես Մագրիտի նկարում:

Ես կարեկցում էի նրա տխրությանը, հուսահատությանն ու բարկությանը, բայց ամբողջ պատմությունից ինձ հատկապես հետաքրքրեց ավստրալական թռչունը, որին անհնար էր որսալ, եւ ես հարցրի, թե ինչ գիտի դրա մասին: Նա ասաց, որ այն նման է կիվի թռչնակին, թեպետ եւ նրանք հարազատ տեսակների չեն պատկանում՝ ընդհանրականը նրանց մոտ այն է, որ նրանց փետուրները վերածվում էին մորթի պես մի բանի եւ նրանք երկուսն էլ լավ վազում են, թեեւ, ի տարբերություն կիվիի, պահպանվել էին անհայտ թռչունի թերզարգացած թեւերը եւ թռչելու փոքրիկ ունակությունը: Ճրջաններում, որտեղ այն հայտնվում է, նրան սնունդ հայթայթելու զարմանալի միջոցի պատճառով կոչում են garden party bird/պարտեզի երեկույթի թռչուն/: Այդ թռչունները իրենց կյանքի որոշակի շրջանում ուղեւորվում են անտառային թավուտներից դեպի քաղաքների ծայրամասերը եւ այնտեղ տաք երեկոներին ունկ են դնում ցանկապատի

ետեւում զբոսախնջույքների գվվոցին: Նրանք զարմանալի ունակություն ունեն ոչ միայն լավ հիշելու այդ ձայները, այլ նաեւ կատարելապես վերարտադրել դրանք եւ, վերադառնալով անտառ, կիրառում են այդ հմտությունը սնունդ փնտրելիս: Garden party birds կոչված թռչունները սովորաբար որս են անում կազմակերպված երամով: Թռչուններից մեկը թաքնվում է մացառուտում կամ ճանապարհամերձ բարձր խոտերի մեջ, այնտեղ ցցում է երկար կտուցով գլուխը եւ ուշադիր զննում ճանապարհը: Մարդ մոտենալու դեպքում նա թաքնվում է եւ սկսում արձակել հիշողության մեջ պահպանված ձայները: Անցորդը, որն ամայի հարթավայրի մեջ հանկարծ լսում է գավերի չխկոց, խոսակցությունների պատառիկներ, ծիծաղ, շամպայնի խցանների թրխկոց, երաժշտություն եւ ջրի ճողփյուն լողավազանում, զարմանում է եւ, որպես կանոն, որոշում է նայել, թե որտեղից են գալիս ձայները: Թռչունը, դեռեւս խոտի մեջ պահ մտած, ընկրկում է, շարունակելով արձակել այգու խնջույքի ձայները. ի վերջո նա շփոթահար անցորդին բերում է դեպի այն տեղը, որտեղ նրան սպասում են մնացած թռչունները: Նրանք համերաշխ նետվում են մարդու վրագնրանց մի մասը սպառնում է նրան սուր կտուցներով, որպեսզի շեղի նրա ուշադրությունը, իսկ մնացածները կտցահարում են մախաղը կամ պայուսակը եւ այնտեղից հանում են ողջ ուտելիքը: Իսկ որսալ նրանց անհնար է, որովհետեւ որսի այդ վայրերում երամը կառուցում է ստորգետնյա որջերի բարդ ցանց՝ բազում քողարկված ելքերով, այնպես որ՝ թռչուններին ամեն անգամ հաջողվում է հեռանալ հետապնդումից:

Այդ անհավանական բաները նա ինձ պատմում էր միանգամայն լուրջ տեսքով: Չդիմանալով, ես հարցրի՝ արդյո՞ք նա ինքը դրան հավատում է, երեւի թե այդտեղ հորեղբոր կատակն է կամ խաբեությունը: Պատասխանի փոխարեն ջրարգելակի պահակը ելավ, բացեց նախասենյակի դուռը, բղավեց՝ «Սամյուել», իսկ հետո կրկին նստեց բազկաթոռին եւ սկսեց սպասել: Նախասենյակում իրարանցում սկսվեց, ես արագ դռփյուն լսեցի, եւ շուտով սենյակում հավի մեծությամբ գզուզ մի թռչուն հայտնվեց, երկար ծռված կտուցով եւ հզոր մագիլներով, ակնհայտորեն նախատեսված հող փորելու համար: Թռչունը մոտեցավ մեզ եւ կանգ առավ: «Հորեղբայրս մի թռչուն էր բերել Ավստրալիայից, եւ այն ինձ մոտ մնաց,- ասաց ակնոցավոր մարդը:- Մի վախեցեք, այն ձեռնասուն է»: Թռչունը գլուխը կողմ հակեց, եւ նրա կտուցից կլկլան ձայն հնչեց, հեռավոր երաժշտություն եւ կանացի ծիծաղ:

«Բավական է, Սամյուել»,- ասաց թռչնին ջրարգելակի պահակը: Տեղ-

նուտեղը լռելով, Սամյուելը մոտեցավ բազկաթոռին, որտեղ նստած էր նրա տերը, եւ, անճարտար թեւերը թափահարեով, մագլցեց նրա ծնկների վրա, կատվի պես կուչուկծկվելով: Ակնոցավոր մարդը շարունակում էր պատմությունը՝ շոյելով թռչնի մեջքը: Ոչնչի չհասնելով քիմիկոսներից եւ ոչ մի կապ չգտնելով առանձին դեպքերի միջեւ, երբ հորեղբայրը հաջող կիրառում էր սեւ փոշին, նա մտածեց, որ փոշու գաղտնիքը թաքնված է դրա ստեղծման միջոցի մեջ, որն էլ կարող է հուշել, թե ինչպես պետք է այն գործածել: Նա նորիցնոր կրկնում էր քիմիական պրոցեսը: Նա հորեղբոր ապարատը տեղափոխել էր հյուրասենյակ եւ զննում էր գոլորշիացող եւ կծկվող, ծավալվող եւ խտացող, փայլկտող եւ մարմրող նյութերը, ասես թե կարդում էր միեւնույն նախադասությունը, գրված անհասկանալի առկայծող տառերով, եւ փորձում էր այն հասկանալ: Սակայն փայլկտող գրերը համր էին մնում: Լինում էին րոպեներ, երբ նա զգում էր, որ հաջորդ ակնթարթին ամեն ինչ կհասկանա, բայց ուժերի հուսահատ լարվածությունը ոչնչի չէր հանգեցնում, եւ փայլող տեքստը մնում էր նույնքան անհասկանալի: Երբ նա զննում էր քիմիական պրոցեսը, նրա հիշողության մեջ մշտապես հայտնվում էին օտար քաղաքների, մերձափնյա ծառուղիների եւ արմավենիների միջեւ հյուրանոցների սպիտակ ծածկապատշգամբների պատկերները: Եւ ավելի ու ավելի հստակ էր գիտակցում, որ այդ ամենից նա, երեւի թե, չի հաջողի տեսնել արթմնի, որ նա ստիպված չի լինի հետմիջօրյա սիեստայի ժամանակ հանգստանալ սենյակում, որտեղ շերտավարագույրները գծավոր ստվեր են նետում եւ որտեղ լսվում է մերձափնյա միապաղաղ աղմուկը, կամ էլ իրեն չի հաջողվի սուրճ ըմպել կիսախավար սրճարանում, որի բաց դռնից երեւում է փոքրիկ հրապարակը, լցված վառ արեւով եւ փայտյա սեղաններով, սառցե փշուրքում ընկած փայլկտուն ծովային ձկներով: Նրա մեջ ահագնանում էր սարսափն այն բանի գիտակցումից, որ նա կանցկացնի կյանքի մնացուկը Ժիժկովի վրայի հին տան բնակարանում: Երբ նա հերթական անգամ երեկոյան նստած էր քառակուսի անոթի մոտ եւ զննում էր անանուն ձեւերի փոխակերպությունները, նա հանկարծ հասկացավ, որ երբեք չի կռահի փայլկտող նախադասությունը, երբեք հասու չի լինի ողջ տեղի ունեցածի իմաստին, չի գտնի շարունակությունը, որը կմիավորի նրան մյուս գործողություններին եւ կներառի մեր աշխարհի հյուսվածքի մեջ:

Այդ պահին նա շատ ավելի վատ բան ապրեց, քան տխրությունն այն բանից, որ հեռավոր հողերն այդպես էլ անհայտ կմնան: Բազմագույն կրակները եւ ծածանվող ձեւերը բացվեցին նրան դրանց բացարձակ ինք-

նամփոփության մեջ, տարրական առկայության իրենց հրեշային ողջ մերկությամբ, գոյություն հենց իսկ գոյության համար: Նրան թվում էր, թե նա ընկել է վիհի հատակը, որ ավելի վար ընկնելու այլեւս տեղ չկա: Բայց, ըստ նրա խոսքերի, սարսափը համակեց նրան ոչ սարքի անոթներում նողկալի ձեւերի հանդիպումից, որ անուն եւ տեղ չունեին մեր աշխարհում: Ամենից շատ նրան վախեցրեց նրա գիտակցումն այն բանի, որ նա առաջին անգամ տեսավ անտարբեր մատերիան, որը սովորաբար թաքնվում է ձեւերի, անունների եւ շարահյուսական կառուցվածքների տակ, ամուր համակցված մեր կյանքին, մատերիային, որից արարված է ամեն ինչը՝ բոլոր իրերն ու բոլոր էակները: Սեղանի վրա տեղի ունեցածը վերածվեց տիեզերքով մեկ տարածված մոլախոտի: Նա տեսավ, որ անուններն ու ձեւերը՝ այդ մատերիայի սոսկ պատահական երազներն են, որ ձեւերը ծնվել են լոկ դրա անտարբեր փոթորկումից եւ ուռչումից եւ որ դրանք նորից կցնդեն, որ անուններն ինչ-որ անպարզ աղմուկի արձագանքներ են: Յուրաքանչյուր էակ եւ յուրաքանչյուր իր դարձավ ինչ-որ շատ ավելի հրեշային ու նողկալի, քան այն հրեշալի ու նողկալի միջատը, որ նա տեսել էր ֆանտաստիկ ֆիլմում: Նա դեռ չէր ելել իմաստի աշխարհից՝ այժմ, սակայն ինքնին իմաստը նրան անիմաստ էր թվում, ավելի ճիշտ՝ նույնիսկ շատ ավելի սարսափելի, քան անիմաստությունը, քանզի իմաստի համար չկա եւ չի կարող անուն լինել: Մարդն իրեն փակված զգաց տիեզերքի նեղ տեռարիումում, որը մինչեւ վերջին անկյունը լցված է լպրծուն զեռուններով. դա դեռ քիչ է՝ նա ինքն էլ վերածվել է նույնպիսի տիեզերական հրեշի: Եւ օդը, որ շրջապատում էր նրան եւ ներթափանցում թոքերի մեջ, այդ նողկալի մատերիայի ձեւերից մեկն էր, ներշնչելով՝ նա ավելի շատ նողկանք էր զգում, քան եթե նրա բերանի մեջ բռնի խցկեին նեխող եւ քայքայվող լեշը: Նա գիտեր, որ պոկվել տիեզերքի սահմռկելի երազից չի օգնի նույնիսկ ինքնասպանությունը, քանզի մարդու ինքնաոչնչացումը ոչ մի կերպ չի փոխի այն փաստը, որ սարսափելի, կպչուն գոյության օվկիանոսը գոյություն ունի, եւ որ չկա եւ չի կարող այլ բան լինել: Բայց պահակը տեղնուտեղը նշեց, որ ինչ-որ տեղ՝ իր սարսափի եւ նողկանքի հատակին ինչ-որ այլ զգացողություն է ծնվում, եւ շուտով զարմանքով գիտակցեց այն ինչպես ինչ-որ տարօրինակ, մինչ այժմ չապրված երջանկություն: Այն հետզհետե աճում էր, եւ վերջապես հրճվանքի հար սաստկացող ալիքները թաղեցին նրա ողջ գիտակցությունն ու մարմինը եւ նույնիսկ ներթափանցեցին մաշկի միջով շրջակա տարածության մեջ. բոլոր իրերը, որոնց նա տեսնում էր, ցնցվում էին այդ երանելի իրագործման ռիթմում: Նա հասկացավ՝ այդ

տարօրինակ հաճույքը ծնվել էր այն պահին, երբ նա գայթեց սարսափի տարածությունում ավելի ցածր, թեեւ նախկինում նրան թվում էր, որ դա անհնար է: Մինչեւ այդ պահը նա միահյուսված էր հարաբերությունների ցանցին, որոնք աշխարհը միասնական էին դարձնում, նա վախի մեջ ճանկում էր ծակոտիներն ու զննում միակ գոյողի շրջպտույտը: Սարսափի հանկարծական հոսքը նրան ստիպեց ձեռքերը բաց թողնել եւ ընկնել ուղիղ ալիքների մեջ: Սկսելով խեղդվել, նա զգաց դրանց ռիթմը, թեթեւակի հանգստացավ, թույլատրեց ալիքներին տանել իրեն եւ հանկարծ հասկացավ, որ աշխարհակարգի չափաբերված ռիթմը, որ իմաստ է հաղորդում բոլոր իրերին եւ իրադարձություններին՝ ընդամենը լոկ այդ տարօրինակ ռիթմերի արձագանքն է, հասկացավ, որ այդ ռիթմերը արտացոլանքն են ինչ-որ այլ բանի, իսկ դրանց իմաստավորությունը կամ անիմաստավորությունը բացարձակապես ոչնչի հետ չես կարող համաչափել: Քաոսը բացվեց նրան ինչպես ցանկացած կարգի աղբյուր, եւ հենց դրանով՝ ինչպես ամենակատարյալ եւ անխախտ կարգ: Այն, ինչ մի րոպե առաջ ավելի անիմաստ էր, քան ինքն անիմաստությունը, իմաստ ձեռք չբերեց, բայց վերածվեց հիվանդագին այրող շողանքի, որում իմաստն ու անիմաստությունն անհետանում էին, ինչպես անհետանում է տարբերությունը գույների միջեւ, երբ մենք հեռացնում ենք լույսի մաքուր աղբյուրից ապակյա հատվածակողմը, որ ճերմակ գույնը քայքայում է ծիածանի գույները: Իսկ քանի որ բոլոր ձեւերը լոկ պատահական բաժնեգծեր դուրս եկան, ողողված հենց մատերիայի հոսքով, այդ լույսը լուսավորեց ողջ գոյողը, եւ ողջ տիեզերքը բաբախում էր դեպի հաճույք տանող մեկ ռիթմում: Հրեշալի եւ նողկալի համընդհանուր անիմաստության զգացողությունը վերածվեց վիթխարի երջանկության զգացողության: Ափսոսանքն առ այն, որ նա չի տեսնի հեռավոր երկրները, անհետացավ: Այժմ նա գիտեր, որ անունից ազատված ձեւերում նրան ամեն քայլափոխի կբացվի անիմանալիի տարածությունը, որտեղ ավելի առեղծվածայինն ու հրաշալին է, քան տարաշխարհիկ ափերն ու Ասիայում կորած քաղաքների խորհրդավոր անկյուններն են. նա գիտեր, որ ցանկացած պահի կարող է լողանալ առավել կուրացուցիչ շողանքում, քան հարավի արեւն է: Դա զարմանալի փոփոխություն էր: Եթե նույնիսկ գիշերվա ընթացքում ժիժկովյան բլրի վրա հառնել էր վիթխարի ոսկյա ապարանքը, վագրերով պահպանվող, որ թափառում էին սյուների միջեւ, այս եւ այն պակաս զարմանալի կլիներ: Երազանքները արկածների եւ անսպասելի հանդիպումների մասին ապշեցուցիչ կերպով իրականացան: Նրա առաջ բացվեցին ջունգլիները, թաքնված մեր

տարածություններում, այժմ նա կարող է ճամփորդել սեփական սենյակում, տների փոշոտ ճակատամասերի վրայով, որոնք երեւում էին պատուհանից: Մերթընդմերթ նա վերադառնում էր հորեղբոր սարքին եւ կրկնում էր քիմիական պրոցեսը՝ ոչ այն բանի համար, որպեսզի բացահայտեր սեւ փոշու գաղտնիքը, այլ որպեսզի այդ ծեսի օգնությամբ հիշեցներ իրեն պահը, երբ նա դարձավ այլ տիեզերքի բնակիչը:

Քանի դեռ նա պատմում էր, Սամյուելը դժվարությամբ հաղթահարեց մեր բազկաթոռների միջեւ եղած տարածությունը, մագլցեց իմ ուսին, ավելի հարմար տեղավորվեց այնտեղ եւ երկար կտուցով սկսեց տնտղել մազերիս մեջ: Ես հիշում էի այն մասին, թե ինչպես գրողը Բրանիկի կայարանում պատմում էր ինձ դատարկության հայտնվելու մասին: Ինձ թվում էր, որ հանդիպումները, որոնք եղել էին այդ երկու մարդկանց միջեւ եւ որոնք միշտ ուղեկցվում էի կապույտ լույսով, ինչ-որ ընդհանուր բան ունեին: Եվ ես կարճ պատմեցի ակնոցավոր տղամարդուն կապույտ լույսի եւ ծովային քաղաքի ծննդյան մասին: Նա ուշադիր լսում էր, բայց չհամաձայնվեց, որ իրենց դեպքերը նման էին: Գաղափարն այն մասին, որ անհրաժեշտ է օգնել բառերի ծնունդին, որ հայտնվում են դատարկության թրթիռից, նրան վրդովեցուցիչ էր թվում, նա դա դավաճանություն էր համարում այն պատվիրանին, որը մեզ ներշնչում է դատարկությունը: Տարբերությունը բառերի միջեւ, որոնցով մարդիկ ծածկում են դատարկության խորաբացությունը, եւ բառերով, ծնված այդ դատարկության մեջ, նրան նշանակալի չէր թվում: Երկու դեպքում էլ, կարծում էր նա, անձեւին վերաբերվում են ինչպես ինչ-որ բանի, որ կարող է ձեւ ձեռք բերել, իսկ լռությանը՝ սոսկ որպես բառերի նախագուշակի: Դատարկ էջի շողանքը, ասում էր նա, միշտ ավելի արբեցնող կլինի, քան պատմությունները, որ կարող են ծնվել դրա վրա. ապարանքները ջունգլիներում, ծովային քաղաքները եւ այգիներն անապատում, որոնք իրենց անուշաբույրն են տալիս մաքուր էջին, շատ ավելի հիասքանչ են, քան նրանք, որոնց ուրվագծերը հառնում են բառերից: Նա չէր հասկանում՝ ինչպես կարող էր գրողը շատ տարիներ նվիրել իրեն բացված դատարկության նախնական շողանքի վերացմանը, դրանք բառերի վերածելով: Պահակը պնդում էր, որ իր սեփական փորձը հակառակ է այն բանին, որ տեղի է ունեցել գրողի հետ: Գրողը դարձավ վկան այն բանի, երբ նա ինքը բախվեց դրանց կործանմանը: Տառերը դադարեցին տարբերվել բծերի այլ տեսակներից, որ ծածկում էին իրերի մակերեսը, իսկ բառերի հնչյունները միաձուլվեցին քաղաքի բոլոր այլ ձայներին, որոնք նա լսում էր իր սենյակում՝ ինչ-որ գործիքի ղժժոցով բակի ար-

հեստանոցում, ավտոմեքենաների աղմուկին, տան խորքում կոյուղային քլքլթոցին, վարագույրների շրշյունին: Ծուրջբոլորը տարածվեց անվերջանալի համր տեքստը առանց որեւէ արանքի, տեքստ, որին բանալի գոյություն չուներ եւ որը հաղորդում էր ընդհանրական լույսով լոկ սեփական, կատարելության հասած անիմաստությունը:

Սամյուելը կտուցով բռնեց ականջաբլթակս եւ սկսեց տարուբերել այն, եւ այդժամ ես թռչունին ուսիցս հանեցի եւ նստեցրի ծնկներիս: Ես նայում էի ջրագելակի պահակին, ով իր պատմության ընթացքում մատի վրա էր փաթաթում եւ ոլորում երկար մազերի խոպոպները: Ինձ շփոթեցնում էր այն հանգամանքը, որ նա ծայրաստիճան լարված էր: Իսկ ես մտածում էի, թե հանդիպումը մատերիայի շողանքին, որը չի կարող դիմակավորել եւ ոչ մի ձեւ, նրա մեջ կծնի ստեղծման խորագույն հանգստությունը, ընդմիշտ նպատակի եւ արդեն բավարարման հասած եւ ոչ մի տեղ փութալու չպարտական: Նա ասես գլխի ընկավ, թե ինչի մասին եմ ես մտածում, եւ խոսեց այն բանի մասին, թե ինչպես արբեցուցիչ վիճակի մի քանի օրից հետո, երբ նա լողում էր ճերմակ շողանքում, որ սերում էր բոլոր առարկաներից, այդ երանելի վիճակը՝ նույնքան անսպասելի, ինչպես որ եկել էր, կրկին փոխարինվեց նողկանքի եւ սարսափի նախկին զգացողությամբ: Այդ պահից նրա կյանքը դարձավ համագրավ բերկրանքի ակնթարթների հերթագայություն, երբ նա հիացումից ցնցվում է տիեզերական բաբախման, մթին սարսափի ակնթարթների ռիթմում, երբ նա խորտակվում է գոյության զազրելի մատերիայում, հոսող ցանակացած ձեւից, իմաստից եւ արժեքից: Նա այլեւս ոչինչ չգիտեր այդ երկու վիճակից բացի, եւ դրանք փոխարինում էին միմյանց հանկարծական եւ կտրուկ: Նա ասաց, որ վերջին մի քանի շաբաթն ապրում է խավարում եւ որ փոփոխությունը, որ նա, անհամբերությունից պարտասած, սպասում է, հար ոչ մի կերպ վրա չի հասնում: Ու թեպետ նա գիտեր, որ ինքը չի կարող ազդել իր վիճակներից եւ ոչ մեկի վրա, այդ օրը նա, այդուհանդերձ, վերադարձավ հորեղբոր սարքին երանություն զգալու ակնկալիքով, զննելով միեւնույն պրոցեսը, ինչը եւ այն ժամանակ, երբ առաջին անգամ էր այն ապրել: Նա ասաց, որ չի կարող այդպես գոյություն ունենալ, ինչպես մյուս մարդիկ, եթե նույնիսկ կամենար, մինչեւ կյանքի վերջ նա անդադար կանցնի մթին սարսափից էքստատիկ երջանկությանը, եւ ընդհակառակը: Ես հարցրի՝ արդյո՞ք նա կվերադառնար նախկին կյանքին, եթե նրա համար ետդարձի ճամփա լիներ: Նա փոքր-ինչ մտածեց, իսկ հետո պատասխանեց, որ կընտրեր այժմյան կյանքը: Ճաշակելով այդ դրախտն ու դժոխքը, նա չէր ուզում վերադառնալ:

Ես չգիտեի՝ ինչ ասեմ նրան, կարեկցե՞մ, թե՞ նախանձեմ. ես չգիտեի՝ արդյո՞ք համոզեմ նրան վերադառնալ մեր աշխարհ կամ թե համոզել մնալ տարօրինակ վայրերում, որտեղ նա բնակվել էր: Մենք երկուսս էլ փոքր-ինչ լռեցինք, եւ Սամյուելը հանգիստ, անշարժ պառկել էր ծնկներիս վրա. թվում էր՝ նա ննջել էր: Արդեն համարյա գիշերվա մեկն էր, եւ ես զգույշ թռչնին դրեցի կլոր սեղանիկի վրա՝ քարերի կողքին, ելա եւ ասացի, որ գնալուս ժամանակն է: Ֆրարգելակի պահակը ինձ ի հիշատակ գունագեղ քարեր նվիրեց եւ ուղեկցեց նախասրահ: Սամյուելն արթնացավ եւ եկավ մեր ետեւից: Ոնց որ թե նա ուզում էր մեկ անգամ եւս պարծենալ իր ունակություններով, եւ մթին նախասենյակում նա պատկերեց հյուրերի բերկրալի ճիչերը, որ լողավազան էին ընկնում, ջրի ճողփյունն ու տերեւուքի աղմուկը գիշերային քամու տակ: Միջանցահովիկը անկյունից քշեց կարմիր լամպը. այն լողաց բաց դռան միջով նախասենյակ եւ հետո, երբ ես ելնում էի բնակարանից, սահեց գլխիս վրայով դեպի հարթակ: Ես հրաժեշտ տվեցի պահակին եւ թռչունին. դուռը փակվեց: Ես մնացի մթության մեջ: Դռներից մեկի ետեւում աշխատում էր հեռուստացույցը՝ հաղորդում էին լուրերի թողարկումը: Կարմիր ամպիկը ճամփորդում էր պատի երկայնքով, իսկ հետո լողաց աստիճաններով վեր եւ թաքնվեց: Ես ելա տնից եւ վազեցի տրամվայի կանգառ:

Աղջիկը լռեց:

-Իսկ ի՞նչ եղավ գրողի եւ քանդակների հետ,- հարցրի ես:

Նա ուսերը թոթվեց:

-Գրողին մենք այդպես էլ չգտանք, իսկ քանդակները կանգնած են ինչպես կանգնած էին, կիսով չափ ազատագրված հողից, Լանդշտայնի մոտի անտառում, դուք կարող եք դրանք այնտեղ տեսնել:

Ծշի հատակին փոքր-ինչ գինի էր մնացել, ես այն լցրի գավաթների մեջ: Աղջիկը խմեց եւ ասաց.

-Արդեն ուշ է: Վաղը չէ մյուս օրը ես քննության եմ, վաղը ստիպված կլինեմ ավելի վաղ արթնանալ եւ ամբողջ օրը պարապել:

-Հասկանում եմ,- ժպտացի ես:- Զենոնի պարադոքսները:

Մենք հագանք վերարկուները, դեռեւս խոնավ էր հալչած ձյունից, եւ ելանք առ սառնամանիք: Ձյունատեղումը դադարել էր, երկրի վրա ընկած էր թարմ, անարատ ձյունը: Ես բարձրացրի գլուխս եւ երկրի նեղլիկ հատվածում, մթին տների երկու շարքերի արանքում մի քանի աստղ տեսա: Մենք ուղեւորվեցինք Մելանտրիխովյան փողոցի կողմը, որտեղ երիտասարդ ամերիկացիները ձնագնդիկ էին խաղում, հավանաբար, հենց նոր

բարից ելած: Մենք լուռ քայլում էինք: Փողոցի վերջում Մուսկուի վրա թարթում էին ծնահավաք մեքենաների նարնջագույն լույսերը: Կեսգիշերն արդեն անցել էր, մի քանի րոպեից ուղեւորվում է մետրոյի վերջին գնացքը, եւ այդ պատճառով Վացլավյան հրապարակի վրա աղջիկը փութով հրաժեշտ տվեց ինձ եւ աստիճաններով վազեց գետնատակ, որ լցված էր պաղ էլեկտրական լույսով: Ես ուղեւորվեցի վեր ծյունապատ հրապարակով, շարունակելով ուղին, որից շեղվել էի երեկոյան, երբ թեքվեցի դեպի դարբասատակ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի առաջաբանը 5

Այլ քաղաք 7

Զենոնի պարադոքսները 141

Միխայլ ԱՅՎԱԶ

ԱՅԼ ՔԱՂԱՔ
ԶԵՆՈՆԻ ՊԱՐԱԴՈՔՄՆԵՐԸ

Թարգմանությունը ռուսերենից՝
Վարդան ՖԵՐԵՇԵԹՅԱՆԻ

Չեխերենից ռուսերեն թարգմանությունը՝
Եկատերինա ԲՈԲՐԱԿՈՎԱ-ՏԻՄՈՇԿԻՆԱՅԻ

Ստեփանակերտ 2021

Հրատ. խմբագիր՝ Հ. Ալեքսանյան
Սրբագրիչ՝ Ա. Գրիգորյան
Էջադրումը՝ Թ. Հարությունյանի
Կազմի ձեւավորումը՝ Ա.Խաչատրյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 14 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 500:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
ԼՂՀ, Ստեփանակերտ, Հ. Հակոբյան 25

«ԳԵՂarm» հանդեսի մատենաշարով լույս են տեսել

«Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից» - 2010
Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաչյունը» - 2011
Մ. Բախտին. «Դոստոեւսկու պոետիկայի խնդիրները» - 2012
«Սիրիուսի սրնգահարները»/Վ.Խլեբնիկով, Ն.Գումիլյով,
Վ.Խոդասեւիչ/ - 2012
Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը» - 2012
Յուրի Լոտման. «Միֆ.Անուն.Մշակույթ» - 2012
Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ»- 2012
Ժարկո Միլենիչ. «Լեոնը՝ հրաշագործի աշակերտը»- 2013
Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014
Ռուս կոնցեպտուալ պոեզիա/ Դ.Պրիգով, Վ.Նեկրասով,
Լ.Ռուբինշտեյն/ - 2014
Հենրիխ Սապգիր. «Ջուգահեռ մարդը» - 2014
Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014
«Կամուրջների խռովությունը.
մետամետաֆորիստներ» - 2015
Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կալվածքը»- 2015
Անդրեյ Պլատոնով. «Չեւենգուր. Գուբը.
Պատմվածքներ» - 2015
Արդի ռուսական վերլիբռ (անթոլոգիա) - 2015
Չինաստանի մշակույթի քրեստոմատիա - 2015
Ջիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր» - 2015
Մա Քայ. «Սրտի արձագանքներ» - 2015
Եվգենի Վոդոլազկին. «Լավր» - 2015

Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» - 2015
Ռուս այլախոհական պոեզիա (անթոլոգիա) - 2015
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 1) - 2016
Յու Ջիան. «Անձրեւից պատսպարվող թռչունը» - 2016
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ.
Փախուստ դրախտից» - 2016
Չժան Ցզի-յան. «Երազ ծովի մասին» - 2016
Վան Ջենչկի. «Երիտասարդ վանականի սիրո
պատմությունը» - 2016
Լյուդմիլա Պետրուշեւսկայա. «Սեր. երջանկություն.
ռեքվիեմ» - 2016
Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» - 2016
«Դիկոռոսներ. Անհայտ պոետների ապաստան»
(անթոլոգիա) - 2016
Ռուս մինիմալիստներ (անթոլոգիա) - 2016
Իձյե Թան. «Կոնֆուցիականությունը, ուղղայականությունը,
դաոսիզմը, քրիստոնեությունը եւ չինական
մշակույթը» - 2016
Սյուն Շի-ի. «Երկնային կամուրջը» - 2016
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 2 եւ 3) - 2016
Դոնգ Քիանգ. «Ամուսնություն» - 2017
Դոնգ Քիանգ. «Կացարաններ» - 2017
Ինգեբորգ Բախման. «30-րդ տարին» - 2017
Ջիղի Մաջիա. «Ընձառյուծից մինչեւ Մայակովսկի» - 2017
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 4) - 2017

Անդրեյ Վոլոս. «Վերադարձ Փանջիռուդ» - 2017
Դոնգ Քիանգ. «Թաղում» - 2017
Դոնգ Քիանգ. «Փառատոներ» - 2017
Դոնգ Քիանգ. «Ուտեստներ» - 2017

Սյաո Ցյան. «Վիշապի մորուքներն ընդդեմ նախագծերի» - 2017
Ուան Ցուոլիան. «Մերձակցության աստիճաններ» - 2017
Ֆյոդոր Սոլոգուբ. «Ընչադեւը» - 2018
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ (հատոր 5) - 2018
Ու Չուն. «Չինական մշակույթ. փիլիսոփայություն» -2018
Ուեյսին Սյուրն, Սյուն Ճու. «Չինաստանի յուրահատկությունները: Չինաստանի համաշխարհային ժառանգությունը»- 2018
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ (հատոր 6) - 2018
Աղի ձայնը (20-րդ դարի հետուբսունական թվականների սերնդի չին գրողների պատմվածքներ) -2019
20-րդ դարի ռուսական պատմվածք (անթոլոգիա) - 2019
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ (հատոր 7) - 2019
Գվինեթ Լյուիս. «Քաոսի հրեշտակները» - 2020
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ. Ազատ մարդը» - 2020
Ցերինգ Նորբու. «Փրկված գառը» - 2020
Չժան Յավեն. «Դարերի կանչը» (Մտորումներ Հոնկոնգի մասին. իրական պատմություն) - 2020
Կոնֆուցիոս. «Զրույցներ» - 2020

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 8) - 2021
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 9) - 2021
Մարիա Գրեչ Գանադո. «Երիզվածք» - 2021
Էլիզաբեթ Քրիստին Յոկուլսդոտիր. «Սեր, նյարդերի քայքայում.
ոչ մի պար ձուկ-քարի վրա» - 2021
Ալեքսեյ Վառլամով. «Մտագայլը» - 2021

www.vogi-nairi.am
Էլ. հասցե՝ vogi.nairi@mail.ru
հեռ.: +374 97252323, +374 94259161